



ԵՐԵՎԱՆԻ Վ.ՔՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԻԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՄՆ-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԼԻՆԳՎԱ
2014

ՀՏԴ 970(07)
ԳՄԴ 63.3 (7 ԱՄՆ) Գ7
Գ 479

Տպագրվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝

Վահան Տեր-Ղևոնդյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող

Գևորգյան Ռ.

Գ 479 ԱՄՆ-ի պատմությունը: Ուսումնական ձեռնարկ/Ռ.
Գևորգյան; Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարան. – Եր.: Լինգվա, 2014. –
196 էջ:

Ձեռնարկում համառոտ շարադրված է ԱՄՆ քաղաքական և
սոցիալ-տնտեսական պատմությունը մինչև 21-րդ դարի սկիզբը: Այն
համապատասխանում է ուսումնական պլանով նախատեսված
համապատասխան դասընթացին ներկայացվող պահանջներին և
օգտակար կլինի բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են
ԱՄՆ պատմությամբ:

ՀՏԴ 970(07)
ԳՄԴ 63.3 (7 ԱՄՆ) Գ7

ISBN 978-9939-56-111-0

© Գևորգյան Ռ., 2014
© Լինգվա, 2014

Նվիրվում է ծնողներին

ՄԱՍ 1

ԱՄՆ 16-րդ դ. մինչև Քաղաքացիական պատերազմը (1861թ.)

Թեմա 1.1. Ամերիկայի վաղ շրջանի պատմությունը (մինչև 1775թ.)

Ամերիկայի առաջին հայտնաբերողները

Քրիստափոր Կոլումբոս (1451-1508)

Ջոն Քեբոթ (Ջովաննի Կաբոտ (1450-1499)

Ամերիգո Վեսպուչի (1454-1512)

Հյուսիսային Ամերիկայի առաջին բնակիչներն էին տեղաբնիկ ցեղերը, որոնց կոչում էին հնդկացիներ և էսկիմոսներ: Նրանք դարեր շարունակ գտնվում էին հասարակական զարգացման ցածր մակարդակի վրա: Իսկ, օրինակ, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում բնակվող հնդկացիների (ացտեկներ, մայաներ, ինկաներ) սոցիալական և մշակութային մակարդակն անհամեմատ ավելի բարձր էր: Ամերիկյան պատմության մեջ հետք թողած ամենահայտնի հնդկացիական ցեղերն են՝ արեականեր, մոհիկաններ, դելավարներ, նարագանսետներ, իրոկեզներ, չիկասոներ, չերոկիներ, պուեբլոներ: Ժամանակակից ԱՄՆ և Կանադայի տարածքում բնակվող հնդկացիների ընդհանուր թվաքանակը մինչև 1492թ. կազմում էր մոտ 1 մլն. մարդ (Հարավային և Կենտրոնական Ամերիկայում՝ 15 մլն):

Ըստ նորվեգական սագաների 1000թ-ին Գրենլանդիայի ծովահեն Լեյֆ Էրիկսոնն («Շիկակարմիր Էրիկ») իր մարդկանց հետ անսպասելի հայտնվում է Ամերիկայի ափերին: Հայտնագործած երկիրը նրանք անվանեցին Վինլանդ՝ Խաղողի երկիր: Այս պատմությունը մեզ հասանելի է դառնում միայն 20-րդ դ. երկրորդ կեսին:

Ամերիկայի հայտնաբերումը և գաղութացումը եվրոպացիների կողմից

Պաշտոնապես Ամերիկան հայտնագործեցին իսպանացիները 15-րդ դ. վերջին – 16-րդ դ. սկզբին: Չորս ծովային ուղևորությունների

արդյունքում, որոնք տեղի ունեցան 1492-1504թթ., Քրիստափոր Կոլումբոսը հայտնաբերեց մի քանի կղզիներ Կենտրոնական Ամերիկայում, չհասկանալով սակայն, որ հայտնաբերել է նոր մայրցամաք, այլ ոչ թե Հնդկաստանը: Բացի Կոլումբոսից Ամերիկայի հայտնաբերման և հետազոտման մեջ մեծ դեր են ունեցել Անգլիայի թագավոր Հենրի VII մոտ ծառայության մեջ գտնվող իտալացի Ջովաննի Կաբոտը (Ջոն Քեբոթը), որը 1497թ. հայտնաբերեց Նյուֆաունդլենդից մինչև այսօրվա Վիրջինիա և Մերիլենդ նահանգների միջև ընկած տարածքը, ինչպես նաև Ամերիգո Վեսպուչին, որի անունով էլ անվանվեց ամբողջ մայրցամաքը:

Միևնույն ժամանակ իսպանացիներն սկսում են յուրացնել Մեքսիկական ծովածոցի ափը, ինչպես նաև ժամանակակից ԱՄՆ տարածքում գտնվող Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների ափերը: 1513-1521թթ. իսպանացի կոնկիստադոր Խուան Պոնսե դե Լեոնը հայտնաբերում է Ֆլորիդա թերակղզին, որտեղ 1565թ. ստեղծվեց առաջին մշտական եվրոպական գաղութը և կառուցվեց Հյուսիսային Ամերիկայի ամենահին քաղաքը՝ Սենթ-Աուգուստինը (Saint-Augustine): Արդյունքում, արդեն 1570թ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը հսկայական տարածքներ է ձեռք բերում Ամերիկայում: Իսպանիան հասնում է իր ծաղկման գագաթնակետին և, Ամերիկայի թալանման միջոցով, դառնում է նաև Եվրոպայի ամենահարուստ պետությունը: Իսպանիայի հզորությունը աստիճանաբար սկսում է նվազել 1588թ-ից հետո, երբ նրանց «Անպարտելի Արմադա» անունը կրող նավատորմը պարտվում է անգլիացիներից: Այդ հաղթանակը մեծ պատմական նշանակություն ունեցավ ոչ միայն Անգլիայի, այլև ողջ Եվրոպայի համար: Տնտեսական և քաղաքական պայքարն Իսպանիայի և Անգլիայի միջև ավարտվում է վերջինիս փայլուն հաղթանակով, որից հետո Անգլիան աստիճանաբար դառնում է ծովային մեծ երկիր և սկսում է վարել նվաճողական, գաղութատիրական քաղաքականություն:

Ֆրանսիացիների հետախուզական արշավախմբերը Հյուսիսային Ամերիկայում սկսում են գործել դեռ 16-րդ դ., երբ իտալացի Ջովանի Վերրացցանոն, որը ծառայության մեջ էր գտնվում Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ I-ի մոտ, հայտնագործում է այսօրվա Նյու-Յորքի նավահանգիստը (1524թ.): 1682թ. ֆրանսիացիները գաղութի հիմք են դնում, որը հետագայում, Լուի (կամ Լյուդովիկոս) XIV թագավորի անունով կոչվում է՝ Լուիզիանա: 17-րդ դ. սկզբից ֆրանսիացիները սկսում են գաղութացնել ժամանակակից Կանադան: 1608թ. նրանք հիմնադրում են Քվեբեկ գաղութը, Հյուսիսային Ամերիկայում ֆրանսիական ազդեցության հենակետը:

Առաջին անգլիական գաղութը Հյուսիսային Ամերիկայում համարվում է Վիրջինիան, իսկ առաջին բնակավայրը հիմնվեց 1607թ.

և ստացավ Ջեյմսթաուն անվանումը: Առաջին տարիներին Ջեյմսթաունի բնակիչները ենթարկվեցին մեծ աղետների՝ հիվանդություններ, սով, ինչպես նաև հնդկացիների հարձակումներ, որոնց արդյունքում մահացան ավելի քան 4000 նորաբնակներ: Սակայն արդեն մի քանի տարի անց, շնորհիվ ծխախոտի պլանտացիաների, Ջեյմսթաունն սկսում է ծաղկել: Շուտով ծխախոտը դառնում է նորաբնակների եկամտի հիմնական աղբյուրը: Ծխախոտի արտահանումն Անգլիա 1618թ. բերեց 20.000 \$. ստ. եկամուտ, իսկ 1627թ. այն հասավ 500.000 \$. ստեղծվեցին: Գաղութաբնակների թիվն սկսում է աճել, դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ փոքր վարձավճարով հնարավորություն էր տրվում ձեռք բերել 50 ակր (20 հեկտար) հողատարածություն: Արդեն 1620թ. Ջեյմսթաունի բնակչությունը կազմում էր մոտ 1000 մարդ, իսկ ամբողջ Վիրջինիայում՝ մոտ 2000:

Ամերիկյան եվրոպացիներին գրավում էր իր հարուստ բնական պաշարներով, որոնց շահագործումը արագ հարստանալու հույս էր ներշնչում, բայց միևնույն ժամանակ ներգաղթողների մեջ մեծ թիվ էին կազմում նրանք, ովքեր իրենց հայրենիքը լքում էին քաղաքական և կրոնական պատճառներով (բողոքականներ, պուրիտաններ): Հիմնականում դրանք անգլիացիներ էին, ինչպես նաև իռլանդացիներ, ֆրանսիացիներ և նույնիսկ գերմանացիներ: Դեպի Ամերիկա նրանց տեղափոխում էին մասնավոր ընկերություններ և այդ բիզնեսն սկսում է մեծ եկամուտներ բերել, որովհետև ներգաղթողների թիվն աստիճանաբար աճում էր: Վերջիններս տեղափոխվում էին Ամերիկա ընտանիքներով և նույնիսկ համայնքներով: Ներգաղթողների զգալի մասը կազմում էին երիտասարդ կանայք, ինչը մեծ ոգևորությամբ էր ընդունվում գաղութների ամուրի տղամարդկանց կողմից, որոնք նույնիսկ պատրաստ էին վճարել այդ կանանց տեղափոխման համար (120 ֆունտ ծխախոտ մի “գլխի” համար):

1619թ. օգոստոսի վերջին հոլանդական առևտրային մի նավ Աֆրիկայից Վիրջինիա հասցրեց առաջին սևամորթներին, որոնք շուտով դարձան ցմահ ստրուկներ, իսկ 17-րդ դ. 60-ական թթ-ին ստրուկի կարգավիճակը Վիրջինիայում և Մերիլենդում դարձավ ժառանգական: Ստրուկների թիվն սկսում է կտրուկ աճել: Բերենք մի քանի թվեր, որոնք բնութագրում են սպիտակամորթ գաղութաբնակների և սևամորթ ստրուկների հարաբերակցությունը.

- 1630թ. - 4646 և 60
- 1660թ. - 75058 և 2920
- 1700թ. - 331711 և 44866
- 1780թ. - 2780369 և 575420

Ստրուկների ճնշող մեծամասնությունը կենտրոնացած էր հարավային գաղութներում, իսկ նրանց համարյա կեսը՝ Վիրջինիայում:

1620թ. դեկտեմբերին տեղի ունեցավ մի իրադարձություն, որն Ամերիկայի պատմության մեջ մտավ, որպես անգլիացիների կողմից մայրցամաքի գաղութացման նպատակասլաց սկիզբ. Մասսաչուսեթսի Ատլանտյան ափ ժամանեց “Մեյֆլաուեր” (“Mayflower”) նավը, որն Ամերիկա բերեց 102 պուրիտան-կալվինիստների: Նոր մայրցամաք տեղափոխումը միակ հնարավորությունն էր այդ մարդկանց համար պահպանելու իրենց կրոնը: Նրանք իրենց անվանում էին պիլգրիմներ (իտալ. pellegrino-օտարական, տարաշխարհիկ անձ, ուխտավոր): Դեռ օվկիանոսում, գտնվելով նավի վրա, նրանք իրար մեջ համաձայնագիր են կնքում, որն անվանվեց Մեյֆլաուերյան համաձայնագիր (Mayflower Compact): Այդ համաձայնագրի մեջ արտացոլվեցին ամերիկյան առաջին գաղութաբնակների գաղափարները դեմոկրատիայի, ինքնակառավարման և քաղաքացիական ազատությունների մասին: Հետագայում այդ գաղափարներն ունեցան իրենց զարգացումը նույնատիպ համաձայնագրերի մեջ, որոնք կնքվել էին Քոննեկտիկուտի, Նյու-Հեմփշիրի և Ռոդ-Այլենդի գաղութաբնակների միջև, ինչպես նաև ավելի ուշ ամերիկյան կարևորագույն պատմական փաստաթղթերի՝ Անկախության Հռչակագրի և ԱՄՆ Սահմանադրության մեջ: ԱՄՆ-ում պուրիտան-պիլգրիմներին պաշտում են որպես ամերիկյան դեմոկրատիայի և ժողովրդական ինքնավարության հիմնադիրների: Իզուր չէ, որ կարևոր իրադարձությունները, որոնք կապված են պիլգրիմների գործունեության հետ, ԱՄՆ-ում նշվում են որպես ազգային տոներ: Այսպես, **դեկտեմբերի 22-ը**, երբ պիլգրիմներն ափ իջան, նշվում է որպես **Նախահայրերի կամ Հայր-պիլգրիմների օր**, իսկ **նոյեմբերի չորրորդ հինգշաբթին**, երբ հավաքվեց առաջին բերքը (1621թ.), 1863թ-ից դառնում է ԱՄՆ-ի համազգային տոն՝ **Գոհաբանության օր (Thanksgiving Day)**.

1607թ-ից հետո 75 տարիների ընթացքում ժամանակակից ԱՄՆ տարածքում բացի Վիրջինիայից ստեղծվեցին ևս 12 գաղութներ՝ Նյու-Հեմփշիր, Մասսաչուսեթս, Ռոդ-Այլենդ, Քոննեկտիկուտ, Նյու-Յորք, Նյու-Ջերսի, Պենսիլվանիա, Դելավեր, Մերիլենդ, Հյուսիսային Կարոլինա, Հարավային Կարոլինա և Ջորջիա: Սակայն միշտ չէ որ անգլիացիներն էին հիմնադրում գաղութները: Այսպես, 1624թ. Մանհետեն կղզու վրա, Հուդզոնյան ծովածոցում (հայտնաբերել է 1609թ. հոլանդական ծառայության մեջ գտնվող անգլիացի նավապետ Հուդզոնը (Հադսոն)) հոլանդացի առևտրականները հիմնադրեցին մի գաղութ, որն ստացավ Նոր Նիդեռլանդներ անվանումը, իսկ կենտրոնը կոչվեց Նոր Ամստերդամ: Հողը, որի վրա կառուցվեց այդ քաղաքը, մի հոլանդացի գաղութաբնակ գնեց հնդկացիներից 1626թ-ին ընդամենը 24 դոլարով: Սակայն հոլանդացիներին այդպես էլ չհաջողվեց սոցիալ-տնտեսական առումով զարգացնել իրենց միակ գաղութն Ամերիկայում: Շուտով Անգլիայի և

Հոլանդիայի միջև սկսվում է կատաղի տնտեսական պայքար, որը վերածվում է ռազմական գործողությունների: 1648թ-ից մինչև 1674թ. Անգլիայի և Հոլանդիայի միջև տեղի ունեցան երեք պատերազմներ: 1664թ. անգլիական զորքերը թագավորի եղբոր, Յորքի հերցոգի գլխավորությամբ կարողանում են գրավել Նոր Ամստերդամը, որը վերանվանում է Նոր Յորք (Նյու-Յորք): Այսպիսով, կարելի է ասել, որ բացի Կանադայից, համարյա ամբողջ Հյուսիսային Ամերիկայում ծածանվում էր Մեծ Բրիտանիայի պետական “Յունիոն Ջեկ” դրոշը:

Անգլիական գաղութների հասարակա-քաղաքական դրվածքի յուրահատկությունները

Հյուսիսային Ամերիկայի առաջին գաղութաբնակները տարբերվում էին իրենց կրոնական գաղափարներով և սոցիալական կարգավիճակով: Ինչպես նշվեց “Մեյֆլաուերի” պիլիգրիմները կալվինիստ¹ էին, իսկ Պենսիլվանիան հիմնադրեցին անգլիացի կվակերներն² Ուիլյամ Պենի գլխավորությամբ, սակայն ամերիկյան հեղափոխության նախօրյակին գաղութի բնակիչների համարյա 1/3-ը կազմում էին արդեն գերմանացի լութերականները³: Մերիլենդում բնակվում էին հիմնականում անգլիացի կաթոլիկները, Հարավային և Հյուսիսային Կարոլինաներում շատ էին ֆրանսիացի հուգենոտները (այդպես էին կոչվում Ֆրանսիայի բողոքականները), որոնք 1718թ. հիմնադրեցին Նյու-Օռլեան քաղաքը: Շվեդները բնակվեցին Դելավերում, իսկ լեհ, գերմանացի և իտալացի արհեստավորները նախընտրեցին Վիրջինիան:

Չնայած որ անգլիական գաղութների բնակիչներն զգալի չափով իրարից տարբերվում էին թե մշակույթով և թե ազգային ավանդույթներով, այնուամենայնիվ, նրանց միավորում էին ընդհանուր օրենքները և անգլերենը: Գաղութաբնակները զգալի չափով իրարից տարբերվում էին աշխատանքային գործունեությամբ, ինչը պայմանավորված էր գաղութների կլիմայական և բնական առանձնահատկություններով: Հարավային գաղութներում (Մերիլենդ, Վիրջինիա, Հարավային և Հյուսիսային Կարոլինա և Ջորջիա) հսկայական պլանտացիաների վրա աճեցնում էին բրինձ, ծխախոտ, բամբակ, որոնց պահանջարկը մեծ էր

¹ Կալվինիզմ /կամ Կալվինականություն/-բողոքականության ուղղություն է: Առաջացել է 16դ. Ռեֆորմացիայի շրջանում Շոշվեյցարիայում/Ժնև/ և հիմնադիրը եղել է Ժան Կալվինը:

² Կվակերներ/quakers՝ցնցվողներ/-առաջացել է 17դ. կեսին Անգլիայում որպես բողոքական աղանդ:

³ Լութերականներ-Ռեֆորմացիայի/Բողոքականության/ հիմնադրող գերմանացի Մարտին Լութերի հետևորդներն են:

մետրոպոլիայում: Այդ հողատարածքների տերերը՝ խոշոր պլանտատորները, իսկ հետագայում և ստրկատերերը աստիճանաբար դառնում էին հզոր տնտեսական և քաղաքական ուժ, որը, սակայն, միևնույն ժամանակ, կախվածություն ուներ մետրոպոլիայից:

Կենտրոնական գաղութներում (Նյու-Յորք, Նյու-Ջերսի, Դելավեր, Պենսիլվանիա), որոնք գտնվում են Ատլանտյան օվկիանոսի ափին, ծաղկում էին մանր ֆերմերային տնտեսությունները, իսկ 17-րդ դ. երկրորդ կեսից սկսվում է մանուֆակտուրաների աճը:

Նոր Անգլիայի (մայրցամաքի հյուսիս-արևելյան մասի) քարտեզն առաջինը 1614թ.-ին կազմեց նավապետ Ջ. Սմիթը: Այդ տարածքը նա անվանեց «Նոր Անգլիա»: Հյուսիս-արևելյան գաղութներում (Նյու-Հեմփշիր, Մասսաչուսեթս, Ռոդ-Այլենդ, Քոննեկտիկուտ) աճեցնում էին կարտոֆիլ, ցորեն, եգիպտացորեն, վարսակ, աշորա, գարի: Այս գաղութներում ծնունդ առավ ամերիկյան արդյունաբերությունը, որի հիմքը նավաշինությունն էր: Դա թույլ է տալիս զարգացնել ամերիկյան արտաքին և միջգաղութային առևտուրը, որը կատարվում էր այդ գաղութներում արտադրված նավերի միջոցով: Այստեղ աստիճանաբար սկսում է ձևավորվել ամերիկյան խոշոր բուրժուազիան: Վերջինս իրեն քաղաքական առումով համեմատաբար անկախ էր զգում Լոնդոնից, չնայած նրա տնտեսական հաջողությունները կախված էին բրիտանական մետրոպոլիայից:

Գաղութները շատ լուրջ էին վերաբերվում կրթությանը: Արդեն 1620թ. Վիրջինիայում բացվում է առաջին հանրային գրադարանը: 1635թ. Բոստոնում հիմնադրվեց առաջին լատինական դպրոցը, իսկ հետագայում նույնատիպ տասնյակ դպրոցներ ստեղծվեցին ուրիշ քաղաքներում և գաղութներում: **1636թ. նույն Բոստոնում**, որն արագ դառնում էր ամբողջ հյուսիս-արևելքի մշակութային և գործարար կենտրոն, գաղութաբնակների և, առաջին հերթին, քահանա Ջ. Հարվարդի կտակած միջոցներով **հիմնադրվեց Ամերիկայում առաջին մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Հարվարդի քոլեջը:** Ամերիկյան հեղափոխության նախօրյակին անգլիական հյուսիսամերիկյան գաղութներում գործում էին արդեն ինը քոլեջներ, այդ թվում այսօր համաշխարհային ճանաչում ունեցող քոլեջները Յեյլում և Պրինստոնում: Բոլորից շատ կրթության գործում հաջողության էին հասել Նոր Անգլիայի գաղութները: Համաձայն եղած տեղեկությունների գրագիտության մակարդակն այնտեղի բնակիչների մոտ 1640-1700թթ. հասնում էր մինչև 95%-ի, իսկ, օրինակ, Վիրջինիայում՝ 60%-ի:

Գաղութների զարգացումն ուղեկցվում էր չընդհատվող պատերազմներով հնդկացիների հետ, որոնք կատաղի դիմադրություն էին ցույց տալիս գաղութաբնակների առաջխաղացմանը դեպի մայրցամաքի խորքը: Այդ պատերազմները շարունակվեցին մինչև 19-րդ դ.

վերջը և ավարտվեցին միայն այն բանից հետո, երբ ընդունվեցին հատուկ օրենքներ, որով հնդկացիների բնակվելու համար ամբողջ ԱՄՆ տարածքում ստեղծվեցին հատուկ ռեզերվացիաներ:

Գաղութներն իրարից տարբերվում էին նաև քաղաքական կառուցվածքով և մետրոպոլիայի հետ հարաբերություններով: Այսպես, օրինակ, Նյու-Յորքը, Նյու-Հեմփշիրը, Նյու-Ջերսին անմիջականորեն ենթարկվում էին Լոնդոնին և ղեկավարվում էին նրա կողմից նշանակված նահանգապետի կողմից: Մերիլենդը և Պենսիլվանիան պատկանում էին սեփականատիրական ձևի գաղութների շարքին, որովհետև նրանց նահանգապետերը մասնավոր անձիք էին և այդ տարածքների սեփականության իրավունքի պատենտն ստանում էին թագավորի ձեռքից: Ամենադեմոկրատական քաղաքական կառուցվածքն ունեին Ռոդ-Այլենդը և Քոննեկտիկուտը: Նրանք միակն էին, որոնք ինքնուրույն ընտրում էին օրենսդիր մարմինները և նահանգապետին: Բոլոր գաղութներում գործում էին օրենսդրական ժողովներ՝ ասամբլեաներ, որոնց անդամներն ընտրվում էին արական սեռից և ունեին համապատասխան գույքային ցենզ: Ռեալ իշխանությունն ասամբլեաներում պատկանում էր հարուստ խավի ներկայացուցիչներին, իսկ կարևոր վարչական պաշտոնները տրվում էին թագավորական նահանգապետերի կամ գաղութների տերերի դրածոներին:

Ամերիկյան Հարավի գաղութներում (Վիրջինիա, Հյուսիսային և Հարավային Կարոլինա) ամբողջ իշխանությունը, փաստորեն, գտնվում էր խոշոր պլանտատորների և ստրկատերերի ձեռքում: Հողատարածք չունեցող անձը զրկվում էր ձայն ունենալու իրավունքից: Ստրկատիրության զարգացումը հարավային գաղութները վերածեց յուրահատուկ մի հասարակության, ինչը, իր հերթին, նպաստում էր անջատողական գաղափարների տարածմանը և ժամանակի ընթացքում ամերիկյան Հարավը վերածեց յուրահատուկ «պետություն պետության մեջ» տարածաշրջանի:

1688թ. «Փառավոր հեղափոխությունն» Անգլիայում վերջնականապես վերացրեց երկրում ֆեոդալական կարգերի մնացորդները, սկիզբ դրեց կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացմանը, ինչը չէր կարող չանդրադառնալ հյուսիսամերիկյան գաղութների տնտեսական և քաղաքական վիճակի վրա:

Առևտրա-տնտեսական հարաբերությունների զարգացումը

Երկար ժամանակ հյուսիսամերիկյան գաղութների և Եվրոպայի միջև առևտրային հարաբերություններում Հոլանդիան միջնորդի դեր էր կատարում, ինչը դժգոհություն էր առաջացնում Անգլիայում: Սկսած 1651թ-ից (1660, 1663, 1672, 1696թթ. և ուշ) անգլիական պառլամենտը

ընդունում է մի շարք օրենքներ, որոնք պատմության մեջ մտան որպես «Ծովագնացության մասին օրենքներ» (Navigation Acts) անվանումով, որոնց նպատակն էր լիակատար հսկողություն հաստատել ամերիկյան գաղութների առևտրային գործնեության վրա: Ըստ այդ օրենքների, նրանք զրկվում էին մյուս երկրների հետ անմիջական առևտուր անելու իրավունքից: Նրանց թույլ էր տրվում առևտուր անել միայն Անգլիայի միջնորդությամբ, արտահանել ապրանքները միայն անգլիական առևտրային նավերի և բրիտանական նավահանգիստների միջոցով: Ապրանքների ներմուծումը նույնպես պետք է կատարվեր միայն անգլիական նավերի միջոցով: Այն բանից հետո, երբ անգլո-հոլանդական պատերազմներն (1649-1674թթ.) ավարտվեցին Հոլանդիայի պարտությամբ և Անգլիան հաստատեց իր գերիշխանությունը ծովերում, մետրոպոլիայի հսկողությունը գաղութների արտաքին առևտրի վրա ավելի ուժեղացավ: Այսպես, արդեն 1660թ-ին կազմվեց այն ապրանքների ցանկը, որոնք արտահանվելու իրավունք ունեին միայն Անգլիա (ծխախոտ, շաքար, ինդիգո): Այդ ցանկն աստիճանաբար ընդլայնվում էր:

17-րդ դ. վերջին – 18-րդ դ. առաջին կեսին Անգլիայում շարունակում էին ընդունել ամերիկյան գաղութների տնտեսական շահերի հետագա սահմանափակման մասին օրենքներ, նրանց դարձնելով մետրոպոլիայի կցորդ: Օրինակ, 1699թ. անգլիական պառլամենտը ընդունում է «Բրդի և բրդյա արտադրանքի մասին օրենք» (Wool Act), որով ամերիկյան գաղութներին արգելվում էր արտադրել և արտահանել բուրդ և բրդյա արտադրանք: 1732թ. ընդունվում է «Գլխարկների մասին օրենք» (Hat Act), որով արգելվում էր ամերիկյան մորթուց պատրաստված գլխարկների արտահանումը: Լուրջ կորուստներով էին աշխատում ծխախոտ արտադրողները: Համաձայն Ծովագնացության մասին օրենքի գաղութներում արտադրված ծխախոտը (մոտ 100 մլն. ֆունտ) պետք է արտահանվեր Անգլիա, իսկ վերջինս, թողնելով իր մոտ միայն 4 մլն., մնացածը վաճառում էր ուրիշ երկրներին ստանալով հսկայական եկամուտ, որից գաղութներին (այսինքն, արտադրողներին) բաժին չէր հասնում: Անգլիայի կողմից գաղութների նկատմամբ վարած այդպիսի խտրական քաղաքականության արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասորդը Մեծ Բրիտանիայի և նրա ամերիկյան գաղութների միջև 1700-1773թթ-ին հասնում է հսկայական գումարի՝ ավելի քան 20 մլն. ֆ. ստ.:

Ամերիկյան հեղափոխության նախօրյակին գաղութների բնակչության թիվը հասնում էր մինչև 2,5 մլն., որի մոտ 90%-ը ներգրավված էր գյուղատնտեսության մեջ:

Ամերիկյան հեղափոխության նախադրյալները

Գաղութների կողմից անկախության ձեռքբերման գործընթացը հեշտացվում էր նրանով, որ մետրոպոլիան անկարողություն էր ցուցաբերում վերահսկելու օվկիանոսից այն կողմ գտնվող տարածքներում ծավալվող գործընթացները: Այդ թուլության առաջին նախանշանները երևացին արդեն Անգլիական բուրժուական հեղափոխության տարիներին, երբ Բրիտանիան զբաղված էր ներքին խնդիրների լուծումով: Հեղափոխության ավարտից հետո արդեն Անգլիայի պաշտոնական ներկայացուցիչները՝ նահանգապետերը և գաղութային վարչությունների ղեկավարները, չէին կարողանում, նաև միշտ չէ, որ ցանկանում էին ղեկավարվել Լոնդոնից ստացած ցուցումներով: Նրանց անձնական շահերն արդեն շատ դեպքերում չէին համընկնում Լոնդոնի շահերի հետ: Նրանց մեծ մասը, բացառությամբ Վիրջինիայի, Հյուսիսային Կարոլինայի և Ջորջիայի նահանգապետերի, իրենց աշխատավարձն ստանում էին տեղական օրենսդրական ասամբլեաներից, որոնք, միևնույն ժամանակ, հսկում էին նրանց կողմից կատարվող ֆինանսական և հարկային գործունեությանը:

Գաղութների տնտեսական զարգացումը պահանջում էր նաև նրանց տարածքային ընդլայնումը: Այդ խնդրի լուծման միակ ճանապարհն էր՝ շարունակել հողերի բռնագրավումը հնդկացիներից: Վերջիններս հետևողականորեն մղվում էին դեպի մայրցամաքի խորքը, ենթարկվելով անողոք բնաջնջման: Մյուս կողմից, Անգլիան և Ֆրանսիան փորձում էին օգտագործել հնդկացիներին իրենց տնտեսական և ռազմաքաղաքական վեճերում: 1756-1763թթ. Եվրոպայում տեղի է ունենում Յոթնամյա պատերազմը, որին մասնակցեցին նաև Անգլիան և Ֆրանսիան: Ամերիկայում այդ պատերազմը հայտնի է որպես Պատերազմ ֆրանսիացիների և հնդկացիների հետ: Պատերազմի նախաբանը համարվում է 1754թ., երբ սկսվում են բախումներ երկու պետությունների միջև, որոնց մեջ ամեն մեկը ներգրավում էր նաև իր դաշնակից հնդկացիներին (անգլիացիները՝ իրոկեզներին, ֆրանսիացիները՝ ալգոնկիններին): Պատերազմական գործողություններին մասնակցում էին ամերիկյան գաղութաբնակները, որոնք, ի վերջո, բոլորից շատ օգուտ քաղեցին այդ պատերազմի արդյունքներից: Համաձայն Փարիզյան հաշտության պայմանագրի Ֆրանսիան զիջում էր Մեծ Բրիտանիային Կանադան և դրանով, փաստորեն, ավարտվում է նրա ներկայությունը Հյուսիսային Ամերիկայում: Իսկ իրոկեզները և ալգոնկինները, բացի հսկայական մարդկային կորուստներից, ոչինչ չստացան:

Ամերիկացիների և Անգլիայի միջև հարաբերություններն ավելի սրվեցին Յոթնամյա պատերազմից հետո: Այսպես, 1763թ. բրիտանական պառլամենտն ընդունեց օրենք, որով գաղութների բնակիչներին

արգելվում էր վերաբնակվել Ալեհանյան սարերից այն կողմ, այսինքն, թույլ չէր տրվում գաղութացնել հսկայական խոպան տարածքները: 1765թ. ընդունվում է Հարկադրման մասին օրենքը (Դրոշմահավաք, Stamp Act), որով բոլոր գործարքները Հյուսիսային Ամերիկայում հարկվում էին: Այդ երկու օրենքները գայրոյթ առաջացրեցին ամերիկացիների մոտ: Առաջին հերթին գաղութների համար անընդունելի էր այն հանգամանքը, որ օրենքներն ընդունվում էին անգլիական պառլամենտում, որտեղ ամերիկացիները ներկայացված չէին: Իսկ դրանով, ըստ նրանց, խախտվում էր ազատ հասարակության հիմնական օրենքը՝ ոչ մի հարկ առանց ներկայացուցչության: Ամերիկացիները, ցույց տալով բուրժուական գիտակցության հասունությունը, կազմակերպեցին բողոքի զանգվածային ցույցեր, ստիպելով Լոնդոնին 1766թ. չեղյալ համարել սկզբից Stamp Act-ը, իսկ 1770թ. «Թաունշենդի օրենքները» (Townshend Acts., ընդունվել էին 1767թ.), որով ամերիկացիներից հարկեր էին վերցվում ներմուծվող թեյի, ապակու, թղթի, ներկերի համար: Գաղութների համար դա մեծ հաղթանակ էր, սակայն, միևնույն ժամանակ, Լոնդոնը 1766թ. մարտին (Stamp Act-ի չեղյալ համարելու օրը) ընդունում է «Դեկլարատիվ օրենք» (Declaratory Act), որով հաստատվում էր բրիտանական պառլամենտի կողմից ամերիկյան գաղութներին պարտադրող յուրաքանչյուր օրենքի ընդունման իրավունքը:

Գաղութների բնակչությունը սկսում է համախմբվել մետրոպոլիայի դեմ մղվող պայքարում: Դրան, մեծ չափով, նպաստում էր գաղութային մամուլը, որը, փաստորեն, դառնում է ռեալ հասարակական-քաղաքական ուժ մինչև ամերիկյան պետության ձևավորումը: **Առաջին ամերիկյան թերթը «Քոստոն նյուզթերթը»** լույս տեսավ **1704թ.** ապրիլին, իսկ ամերիկյան հեղափոխության նախօրյակին գաղութներում հրատարակվում էր արդեն 37 թերթ, որոնք մեծ դեր ունեցան հակաանգլիական քարոզչության և ամերիկյան գաղութների անջատման գաղափարի տարածման գործում: Պետք է նշել նաև, որ հրատարակիչների շրջանակից դուրս եկավ հայտնի փիլիսոփա, գիտնական և դիվանագետ, ամերիկյան պետության «հիմնադիր հայրերից» մեկը **Քենջամին Ֆրանկլինը**, որը 1743թ. ստեղծում է ամերիկյան առաջին գիտական ընկերությունը՝ Ամերիկյան փիլիսոփայական ընկերությունը և 1769թ. դառնում է նրա նախագահը:

Նշենք, որ 18-րդ դ. երկրորդ կեսում ապրող ամերիկացիները շատ քիչ բանով էին նման Վիրջինիայի և Պիմնուտի առաջին գաղութաբնակներին: Նրանցից արդեն ոչ բոլորն էին անգլիացիներ: Օրինակ, միայն Պենսիլվանիայում ապրում էին մոտ 100.000 գերմանացիներ: 2,5 մլն. ամերիկացիներից (1776թ. տվյալներով) մոտ 20%-ը պատկանում էին անգլիական եկեղեցուն, մոտ 40%-ը կալվինիստ էին, մոտ 25.000-ը՝ կաթոլիկներ, մոտ 2.000-ը՝ հրեաներ, շատ էր նաև

կվակերների, մենոնիտների, բապտիստների, մետոդիստների, լութերականների թիվը: Ի տարբերություն առաջին գաղութաբնակների, 17-րդ դ. երկրորդ կեսում ապրող ամերիկացիներն արդեն աղքատ քսոտականներ չէին, այլ մարդիկ, որոնք տարիների ընթացքում ձեռք էին բերել Ամերիկայում սեփականություն, ստացել կրթություն և, ամենագլխավորը՝ ազատություն, որը չունեին նրանց նախնիները: Նրանք իրենց արդեն համարում էին մայրցամաքի լիարժեք բնակիչներ և բոլոր իրենց հաջողությունները կապում էին Ամերիկայի՝ նրա ազատ ապագայի հետ:

Ամերիկյան հեղափոխության նախաբանն է համարվում 1773թ. դեկտեմբերի 16-ին Բոստոնում տեղի ունեցած իրադարձությունը, որն ամերիկյան պատմության մեջ մտավ որպես **«Բոստոնյան թեյախմություն» (Boston Tea Party):** «Ազատության որդիներ» (Sons of Liberty) գաղտնի կազմակերպության անդամները Ս. Ադամսի գլխավորությամբ, հնդկացիների հագուստ հագած, անգլիական Օստ-Հնդկական ընկերությանը պատկանող նավերից ծովը թափեցին 342 արկղ թեյ: Լոնդոնը դիմեց պատասխան քայլի: 1774թ. ընդունվեցին Պատժիչ օրենքներ (Coercive Acts), որով փակվում էր բոստոնյան նավահանգիստը, քաղաք էին մտցվում անգլիական զորքեր, իսկ տեղական իշխանություններին կարգադրվում էր Օստ-Հնդկական կամպանիային վճարել 10.000 ֆ. ստ. փոխհատուցում: Այդ օրենքների կատարումը «բոստոնյան խռովարարների» նկատմամբ հանձնարարվեց Մասսաչուսեթսի նոր նահանգապետին՝ գեներալ Թ. Հեյջին: Գիտակցելով, որ իրենք էլ կարող են արժանանալ Մասսաչուսեթսի ճակատագրին հյուսիսամերիկյան մյուս գաղութները ևս միավորվեցին Մեծ Բրիտանիայի դեմ պայքարելու համար:

Առաջին Մայրցամաքային կոնգրեսը

1774թ. սեպտեմբերի 5-ին Ֆիլադելֆիայում իր աշխատանքն է սկսում Առաջին Մայրցամաքային կոնգրեսը: Մասնակցում էին 56 ներկայացուցիչներ բոլոր գաղութներից, բացառությամբ Ջորջիայի: Վիրջինիայի յոթ պատգամավորներից մեկը՝ Ջորջ Վաշինգտոնն էր: Կոնգրեսի աշխատանքը շարունակվեց մինչև հոկտեմբերի 26-ը և արդյունքում ընդունվեց «Իրավունքների հռչակագիր», որտեղ ներկայացված էին ամերիկյան գաղութների «կյանքի, ազատության և սեփականության» իրավունքները: Ընդունվեց անգլիական ապրանքների բոյկոտը շարունակելու մասին որոշում այն դեպքում, եթե Բրիտանիան զիջումներ չկատարի իր ֆինանսատնտեսական քաղաքականության մեջ: Վերջում ասվում էր, որ եթե Լոնդոնը հրաժարվի կատարել կոնգրեսի ներկայացրած պահանջները, ապա 1775թ. մայիսի 10-ին կհրավիրվի նոր

Կոնգրես: Սակայն զիջումների մասին Բրիտանիան լսել անգամ չէր ուզում: Անգլիական նավատորմը հրաման ստացավ շրջափակել Ամերիկյան մայրցամաքի հյուսիս-արևելյան մասը, իսկ գեներալ Հեյջը՝ ճնշել «խռովությունը» և ապահովել «Պատժիչ օրենքների» կատարումը, նույնիսկ, անհրաժեշտության դեպքում, դիմելով ուժային գործողությունների: Լոնդոնի պատասխանը ցույց տվեց ամերիկացիներին, որ նրանք կկարողանան դիմադրել մետրոպոլիսային միայն միասնական ուժերով և այլևս պետք չէ հույսը դնել Բրիտանիայի բարյացակամության վրա:

Թեմա 1.2. Պատերազմ անկախության համար (1775-1783)

Ամերիկյան պատմության գործիչները

Ջորջ Վաշինգտոն (1732-1799)
Բենջամին Ֆրանկլին (1706-1790)
Թոմաս Փեյն (1737-1809)
Սեմյուել Ադամս (1722-1803)

Ռազմական գործողությունների սկիզբը: Անկախության հռչակագրի ընդունումը

1775թ. փետրվարի 1-ին Մասսաչուսեթսի նահանգային կոնգրեսը որոշում է ընդունում ստեղծել ժողովրդական աշխարհագոր՝ միլիցիա: Գաղութներում անգլիական զորքերի հրամանատար Թ. Հեյջը, ցանկանալով կանխել այն, ապրիլի 19-ին փորձ է անում շրջափակել գաղութի մատակարարման հիմնական կենտրոնը՝ Կոնկորդը, որը գտնվում էր Բոստոնից 21 մղոն հեռավորության վրա, և ոչնչացնել այնտեղ գտնվող սննդամթերքի և ռազմամթերքի պահեստները: Ամերիկյան պատմության մեջ մտավ հայրենասեր Փոլ Ռեվիրը, որն անգլիացիների հարձակման մասին լուրը առաջինը հասցրեց Լեքսինգթոն (Բոստոնի արվարձան): Հենց այստեղ տեղի ունեցավ անկախության համար պատերազմի առաջին ճակատամարտը: Նույն օրը տեղի ունեցավ նաև ճակատամարտ Կոնկորդի մոտ: Արդյունքում, առաջին ճակատամարտերում գաղութային միլիցիայի հետ անգլիացիները մեծ կորուստներ են կրում՝ 73 սպանված և 174 վիրավոր: Անգլիացիներն ստիպված եղան նահանջել Բոստոն: Առաջին ճակատամարտերի մասին լուրը շատ արագ տարածվեց բոլոր գաղութներում:

Մայիսի 10-ին Ֆիլադելֆիայում իր աշխատանքն է սկսում Երկրորդ Մայրցամաքային կոնգրեսը, որը հայտարարեց բոլոր գաղութները շրջապատման մեջ և կոչ արեց նրանց ընդունել սեփական սահմանադրություններ (1776-1780թթ. ընթացքում սեփական սահմանադրություններ ընդունեցին բոլոր գաղութները): Մինչև 1781թ. կոնգրեսը կատարում էր գաղութների բարձրագույն վարչական մարմնի պարտականությունը:

Առաջնահերթ խնդիրներից մեկը գաղութների ընդհանուր կանոնավոր ռազմական ուժերի՝ Մայրցամաքային բանակի ստեղծումն էր: Կոնգրեսի որոշմամբ բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց 43-ամյա գնդապետ **Ջորջ Վաշինգտոնը**, հարուստ պլանտատոր և ստրկատեր, որը հայտնի էր դարձել դեռ Յոթնամյա պատերազմի

ժամանակ: Նոր գլխավոր հրամանատարը, հրաժարվելով վարձատրումից և ստանալով գեներալի կոչում, միանգամից անցնում է կանոնավոր ռազմական ուժերի ստեղծմանը:

Շատ կարևոր և դժվար խնդիրներից էր նաև դաշնակիցների որոնումը: Այդ նպատակով կոնգրեսին կից ստեղծվում է Գաղտնի նամակագրության կոմիտեն (Committee of Secret Correspondence), որին հանձնարարված էր գտնել Եվրոպայում ռազմական և ֆինանսական օգնության աղբյուրներ: Այդ բախտորոշ խնդրի լուծմանը նվիրվեցին հեղափոխության այնպիսի հռչակավոր գործիչներ, ինչպիսիք էին Բ. Ֆրանկլինը (Ֆրանսիայում), Ջոն Ջեյը (Իսպանիայում), Ջոն Ադամսը (Հոլանդիայում): Մեծ Բրիտանիան նույնպես փնտրում էր քաղաքական և ռազմական աջակցություն, որովհետև նրա տրամադրության տակ չկար մեծ ցամաքային բանակ օվկիանոսից այն կողմ պատերազմ վարելու համար: Բայց եվրոպական մեծ պետությունները՝ Ֆրանսիան, Իսպանիան, Ռուսաստանն, ունենալով Բրիտանիայի հետ բազմաթիվ տնտեսական և քաղաքական տարածայնություններ, մտադրություն չունեին նրան օգնելու: Միայն գերմանական մի քանի պետություններ իրենց համար շահավետ ֆինանսական պայմանների դիմաց համաձայնվեցին օգնել Անգլիային: Բոլորից շատ թագավոր Ջորջ III-ին (Ջորջ III-ը գերմանական Հաննովերյան դինաստիայի ներկայացուցիչն էր, այդ թագավորը պատմության մեջ մտավ որպես «թագավոր, որը կորցրեց Ամերիկան») օգնեց Հեսսեն իշխանությունը, տրամադրելով 30.000 զինվոր: Բայց ապագա ռազմական գործողությունները ցույց տվեցին, որ հեսսենցիներն այդքան էլ հուսալի զինվորներ չէին, պարտվելով մեծ կարևորություն ունեցող ճակատամարտերում (օրինակ, Տրենտոնի մոտ 1776թ.): Բացի այդ, մոտ 5.000 հեսսենցիներ անցան ամերիկացիների կողմը: Ինչ վերաբերվում է հնդկացիներին, ապա նրանց մեծ մասը կռվում էին անփառանքների հետ միասին գաղութաբնակների դեմ:

Առաջին խոշոր ճակատամարտը կողմերի միջև տեղի ունեցավ Բանկեր-Հիլի մոտ (Բոստոնից ոչ հեռու) 1775թ. հունիսի 17-ին: Ծանր կորուստների գնով (2000-ից զոհվեցին համարյա կեսը) անգլիացիներին, այնուամենայնիվ, հաջողվում է հաղթանակ տանել Ջ. Վաշինգտոնի նկատմամբ: Ոգևորվելով այդ հաջողությամբ, անգլիացիները մերժում են Երկրորդ Մայրցամաքային կոնգրեսի կողմից ընդունված փոխզիջման հնարավորության մասին առաջարկը: Ջորջ III թագավորը հրաժարվեց նույնիսկ ծանոթանալ իրեն ուղղված նամակի բովանդակությանը: Պատասխան քայլում կոնգրեսը բոլոր գաղութների անունից հայտարարեց, որ Ամերիկայի քաղաքացիները պատրաստ են մեռնել որպես ազատ մարդիկ, քան ապրել ստրկության մեջ:

Շուտով ամերիկյան դիվանագիտությունը հասնում է մեծ հաջողության: 1777թ. մայիսի սկզբին Բ.Ֆրանկլինի ջանքերով

Ֆրանսիայի թագավոր Լուի XVI-ը ամերիկյան գաղութներին մեծ քանակությամբ ռազմամթերք տրամադրելու որոշում ընդունեց: Ֆրանսիայի օրինակին հետևում է նաև նրա դաշնակից Իսպանիան:

Խոսելով ամերիկյան հեղափոխության մասին չի կարելի անտեսել մի իրադարձություն, որը տեղի ունեցավ 1776թ. հունվարին, երբ Ֆիլադելֆիայում լույս է տեսնում «Առողջ դատողություն» պարսավագիրը (պամֆլետ), որի հեղինակն էր Թոմաս Փեյնը: Նա, փաստորեն, կասկածի տակ է դնում միապետական համակարգի անհրաժեշտությունը, իսկ Ջորջ III թագավորին անվանում է «վեհապանձ հրեշ», որն անձնական պատասխանատվություն է կրում պատերազմի համար: Փեյնի խոսքերը մեծ արձագանք գտան ամերիկացիների մոտ: Պարսավագիրը դառնում է գաղութների համար Անգլիայի դեմ պայքարում հիմնական քարոզչական զենքը:

1776թ. մայիսի 25-ին Ս.Ադամսի նախաձեռնությամբ Մայրցամաքային կոնգրեսը հռչակում է գաղութները որպես Մեծ Բրիտանիայից անկախ հանրապետություններ՝ նահանգներ: **Հուլիսի 2-ին** պատգամավորները պաշտոնապես անկախության կողմ քվեարկեցին, իսկ **1776թ. հուլիսի 4-ին** ընդունեցին Ամերիկյան հեղափոխության հիմնական փաստաթուղթը՝ Անկախության Հռչակագիրը: Այդ օրն ընդունված է համարել ամերիկյան անկախ պետության ծնունդ: Հռչակագրում, որի գլխավոր հեղինակն է համարվում Թոմաս Ջեֆֆերսոնը, ժողովրդական ինքնավարությունը, հռչակվում էր որպես պետական համակարգի սկզբունք: Պաշտոնապես հաստատվում էր 13 գաղութների անջատումը բրիտանական մետրոպոլիայից և Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծումը: «Բոլոր մարդկանց, - ասվում էր փաստաթղթի մեջ - Աստված ստեղծել է հավասար և պարզել է նրանց անբաժանելի իրավունքներ, այդ թվում նաև կյանքի, ազատության, երջանկության... և եթե որևիցե պետական համակարգ խախտում է այդ իրավունքները, ապա ժողովուրդն իրավունք է ձեռք բերում փոխել կամ վերացնել այդ համակարգը և հաստատել նորը... այն սկզբունքների հիման վրա, որոնք պետք է ապահովեն ժողովրդի անվտանգությունը և բարեկեցությունը...»

1776-1782թթ. ռազմական գործողությունները: Համադաշնակցության Հողածների ընդունումը: Պատերազմի ավարտը

1776-1777թթ. ընթացքում տեղի ունեցան մի քանի կարևոր ճակատամարտեր: Այսպես 1776թ. օգոստոսին ամերիկյան բանակը պարտություն է կրում Նյու-Յորքի մոտ, ինչն ստիպում է Վաշինգտոնին նահանջել: Ամերիկյան բանակը հակահարված է հասցնում հակառակորդին 1776թ. դեկտեմբերի վերջին Նյու-Ջերսիում,

պարտության մատնելով անգլիացիների վարձկաններին՝ հեսսենցիներին Տրենտոնի մոտ, իսկ քիչ անց՝ Պրինսթոնի մոտ: Պետք է նշել, որ այդ ժամանակ ամերիկյան բանակում սկսում են ծառայել տասնյակ կամավորներ տարբեր եվրոպական երկրներից, որոնցից շատերը դառնում են Ամերիկայի հերոսներ: Դրանցից էին ֆրանսիացի մարկիզ և ամերիկյան գեներալ Պոլ դը Լաֆայետը, բավարացի և ամերիկյան գեներալ Յոհանն դե Կալբը, Լեհաստանի ազգային հերոս և ամերիկյան ինժեներ-գնդապետ Թադեուշ Կոստյուշկոն, պրուսական շտաբի սպա և ամերիկյան գեներալ բարոն Ֆրիդրիխ Վիլհելմ ֆոն Շթոյբեն, լեհական բանակի սպա և ամերիկյան գեներալ Կազիմեժ Պուլասկին, իսպանական Լուիզիանայի նահանգապետ Բերնարդո դե Գալվեսը, որը պատերազմի ամբողջ ընթացքում ակտիվ ռազմական գործողություններ էր վարում անգլիացիների դեմ, մեծապես օգնելով Վաշինգտոնի բանակին: Շատերի ազգանունները պահպանվել են ժամանակակից ամերիկյան քաղաքների, փողոցների և ինժեներական կառույցների անվանումների մեջ: Ամերիկյան տարբեր նահանգներում կան Լաֆայետ անունով քաղաքներ, Օհայո նահանգում՝ Շթոյբենվիլ քաղաքը, Նյու Յորքի կամուրջներից մեկը կոչվում է Կոստյուշկո, իսկ ի պատիվ Գալվեսի ԱՄՆ-ում Տեխաս նահանգում անվանվել է քաղաք (Գալվեստոն), նրա արձանները դրված են Գալվեստոնում, Նյու-Օրլեանում և Վաշինգտոնում:

1777թ. ամռանը և աշնանը տեղի ունեցան մի քանի իրադարձություններ, որոնք մեծ քաղաքական նշանակություն ունեին երիտասարդ ամերիկյան պետության համար: **Հունիսի 14-ին Մայրցամաքային կոնգրեսի կողմից հաստատվում է ԱՄՆ-ի պետական դրոշը, իսկ նոյեմբերի 15-ին, մեկ տարվա բանակցություններից հետո, ընդունվեց Համադաշնակցության (Կոնֆեդերացիայի) Հոդվածները՝ ապագա Սահմանադրության նախատիպը:** Այդ պատմական փաստաթուղթն ամրապնդեց ամերիկացիների հեղափոխական նվաճումները, հայտարարեց հանրապետական կարգերի հաստատման մասին և հռչակեց Մայրցամաքային կոնգրեսը որպես ամերիկյան պետության լիարժեք կառավարություն: Համադաշնակցության (Կոնֆեդերացիայի) Հոդվածները սահմանեցին միապալատ Կոնգրես, որտեղ ամեն մի նահանգ ուներ մեկ ձայն: Երկրորդական հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ էր ընդամենը ձայների մեծամասնություն, իսկ կարևորագույն հարցերի՝ ձայների 2/3-ը: Ամեն մի փոփոխություն Համադաշնակցության (Կոնֆեդերացիայի) Հոդվածներում պահանջում էր բոլոր 13 նահանգների համաձայնությունը:

Ռազմաճակատում նույնպես տեղի ունեցավ բեկումնային կարևորություն ունեցող իրադարձություն: 1777թ. հոկտեմբերի 7-ին ամերիկյան բանակը խոշոր հաղթանակ տարավ Սարատոգայի մոտ:

Ամերիկացիների հաղթանակն ունեցավ ոչ միայն ռազմական, այլև քաղաքական նշանակություն: Ֆրանսիան, վերջապես, հավատալով ամերիկացիների վերջնական հաղթանակին, դեկտեմբերի 17-ին ճանաչում է Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութների անկախությունը, իսկ 1778թ. փետրվարին ԱՄՆ-ի հետ ստորագրում է երկու կարևոր պայմանագրեր՝ 1. Բարեկամության և առևտրի մասին և 2. Դաշնակցության մասին (այն նախատեսում էր ռազմական համագործակցություն երկու պետությունների միջև): Բացի Բ. Ֆրանկլինից ֆրանս-ամերիկյան համագործակցության մեջ մեծ դեր խաղաց ֆրանսիացի հայտնի թատերագիր և բանաստեղծ, «Ֆիգարոյի ամուսնությունը» և «Սեվիլյան սափրիչ» պիեսների հեղինակ՝ Պիեռ դը Բոմարշեն: Նրա անմիջական մասնակցությամբ Ֆրանսիայում ստեղծվում է առևտրային կազմակերպություն, որի միջոցով Ֆրանսիայի և Իսպանիայի կառավարություններն ամերիկացիներին մատակարարում էին ռազմամթերք:

1777-78թթ. ձմեռը շատ ծանր նստեց ամերիկյան բանակի վրա: Այն անցկացրեց Վելլի-Ֆորջում (Ֆիլադելֆիայի մոտ) և ձմեռվա ընթացքում հիվանդություններից, ցրտից և սովից մահացավ մոտավորապես 2, 5 հազար մարդ:

1778թ. սկզբին անգլիացիները փորձ են անում ռազմական գործողությունների մեջ ներքաշել իրոկեզ ցեղին պատկանող հնդկացիներին: Վերջինները հարձակվում և ավերում են Քոբլսքիլ քաղաքը (Նյու-Յորքի նահանգ), սպանելով տասնյակ մարդկանց: Այդ սարսափելի արշավանքներից հետո ԱՄՆ-ում սկսում են օգտագործել «լավ իրոկեզը՝ մեռած իրոկեզն է» արտահայտությունը, որը հետագայում տարածվում է բոլոր հնդկացիների վրա:

1778թ. հուլիսի 10-ին Ֆրանսիան Մեծ Բրիտանիային պաշտոնապես պատերազմ է: հայտարարում: Իսպանիան, որը 1761թ-ից կապված էր Ֆրանսիայի հետ դաշնակցային պայմանագրով, ստիպված եղավ 1779թ. հունիսին նույնպես Անգլիային պատերազմ հայտարարել, հույս ունենալով վերադարձնել կորցրած տարածքները (Ջիբրալթար, Մինորկա): Սակայն, միևնույն ժամանակ, Իսպանիան նպատակահարմար չգտավ ռազմական և քաղաքական դաշինքի մեջ մտնել ԱՄՆ-ի հետ: Իսպանիան հրաժարվում էր ճանաչել ԱՄՆ-ի անկախությունը, վախենալով, որ ամերիկացիների պայքարն անկախության համար «վատ» օրինակ կձառայի նրա հարավամերիկյան գաղութների համար:

Ռազմական գործողությունները կրում էին փոփոխական բնույթ: 1779թ. հոկտեմբերին և 1780թ. սկզբին ամերիկյան բանակը կրում է երկու լուրջ պարտություններ համապատասխան Սավաննայի և Չարլստոնի մոտ: Բայց հետո ամերիկացիներին հաջողվում է համոզիչ հաղթանակներ տանել 1780թ. հունիսին Սպրինգֆիլդի մոտ (Նյու-Ջերսի), 1780թ.

հոկտեմբերին Հյուսիսային Կարոլինայում և 1781թ. հունվարին Հարավ. Կարոլինայում: Անկախության համար պատերազմի ավարտի սկիզբն է համարվում անգլիացիների պարտությունը **1781թ. հոկտեմբերին Յորքթաունի մոտ**: Այդ ճակատամարտում ամերիկացիների հաղթանակի մեջ մեծ դեր խաղաց 8000 զինվորներից բաղկացած ֆրանսիական բանակը գեներալ կոմս Ռոշամբոյի գլխավորությամբ: Այդ պարտությունից հետո բրիտանական պառլամենտը, որը գտնվում էր Երկրի հասարակական կարծիքի հսկայական ճնշման տակ, կողմ քվեարկեց պատերազմն ավարտելուն: Վերջին ռազմական գործողություններն ԱՄՆ-ի տարածքում տեղի ունեցան 1782թ. աշնանը Հարավ. Կարոլինայում և Օհայոյում: 1782թ. նոյեմբերի 30-ին Փարիզում ստորագրվում է հաշտության պայմանագրի նախնական տարբերակը, որով Մեծ Բրիտանիան ճանաչում էր ԱՄՆ-ի անկախությունը: **Վերջնական հաշտության պայմանագիրն ստորագրվեց 1783թ. սեպտեմբերի 3-ին: Կոնգրեսի կողմից այդ պայմանագրի վավերացումը տեղի ունեցավ 1784թ. հունվարի 14-ին: ԱՄՆ-ում այդ պայմանագիրը հայտնի է, որպես Փարիզյան հաշտության պայմանագիր:**

Ամերիկյան հեղափոխությունը մեծ ազդեցություն ունեցավ համաշխարհային պատմության ընթացքի վրա: Այդ պատերազմի հեղափոխական փորձն օգտագործվեց 1789-1794թթ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխության տարիներին, իսկ Անկախության Հռչակագրի մեջ ընդգրկված գաղափարները տարածվեցին ամբողջ Եվրոպայում:

Թեմա 1.3. Ամերիկյան պետության ձևավորումը (1783-1789)

Ամերիկյան նշանավոր պետական գործիչները

Ալեքսանդր Համիլթոն (1755-1804)

Ջոն Զեյ (1745-1829)

ԱՄՆ առաջին 13 նահանգները

1. Դելավեր (1787)
2. Պենսիլվանիա (1787)
3. Նյու-Ջերսի (1787)
4. Ջորջիա (1788)
5. Քոննեկտիկուտ (1788)
6. Մասսաչուսեթս (1788)
7. Մերիլենդ (1788)
8. Հարավային Կարոլինա (1788)
9. Նյու-Հեմփշիր (1788)
10. Վիրջինիա (1788)
11. Նյու-Յորք (1788)
12. Հյուսիսային Կարոլինա (1789)
13. Ռոդ-Այլենդ /1790/

Միջազգային և ներքին դրությունը Փարիզյան հաշտության պայմանագրից հետո

Ամերիկյան պետության կազմավորումն ուղեկցվում էր նրա միջազգային դրության ամրապնդմամբ: Մյուս կողմից, ԱՄՆ-ի և նրա եվրոպական դաշնակիցների միջև տարածայնություններն սկսվեցին արդեն Փարիզյան հաշտության պայմանագրի կնքման ընթացքում և շարունակվեցին հետպատերազմյան առաջին տարիներին: ԱՄՆ և Իսպանիայի միջև հիմնական տարածայնությունը վերաբերում էր Իսպանիայի կողմից տարածքային պահանջներին (օրինակ, իսպանացիները պահանջում էին տարածքներ, որոնք ընկնում էին 31 զուգահեռականից դեպի հյուսիս, ինչը հակասում էր Փարիզյան պայմանագրի կետերին): Բացի այդ, Միսիսիպի գետը մասամբ հոսում էր Իսպանիային պատկանող տարածքով և դա նավագնացության հետ կապված վեճ է առաջացնում երկու պետությունների միջև: Սակայն, հաշվի առնելով ԱՄՆ-ի բնակչության աճը, ինչպես նաև Իսպանիայի շարունակվող տնտեսական և քաղաքական թուլացումը միջազգային

ասպարեզում, աստիճանաբար փոքրանում էր հավանականությունը, որ ամերիկացիները կգիջեն Իսպանիային:

Իր ամենահավատարիմ ռազմական դաշնակցի՝ Ֆրանսիայի հետ, ևս ԱՄՆ հարաբերությունները գերազանց չէին: Ամերիկացիների տնտեսական հաջողությունները Ֆրանսիան լարված ուշադրությամբ էր ընդունում, որովհետև նախընտրում էր ԱՄՆ պահել իրենից կախյալ վիճակում: Ամերիկացիների ձգտումն ստեղծել ուժեղ կենտրոնական իշխանություն դրական էր ընդունվում Փարիզի կողմից, սակայն Ֆրանսիան պատրաստ չէր զիջումներ կատարել իր նախկին դաշնակցին: Ամերիկացիներին տրվեց միայն շատ սահմանափակ հնարավորություն գործարարությամբ զբաղվելու ֆրանսիական Վեստ-Ինդիայում: Բացի այդ, Ֆրանսիայի տնտեսական և ռազմական օգնության դիմաց ամերիկացիների պատերազմի տարիներին կուտակած պարտքը, էլ ավելի էր ուժեղացնում Փարիզի խտրական վերաբերմունքը ԱՄՆ նկատմամբ:

ԱՄՆ հարաբերություններն իր նախկին մետրոպոլիայի հետ կարելի է անվանել սառը: Լոնդոնը չէր ցանկանում ԱՄՆ-ի հետ ստորագրել առևտրային պայմանագիր, պատճառաբանելով, որ նորաստեղծ հանրապետությունում կենտրոնական իշխանությունը թույլ է, իսկ այդ դեպքում դժվար կլինի ապահովել միջպետական պայմանագրի մեջ գրված կետերի իրականացումը: Բացի այդ, Բրիտանիան համոզված էր, որ նման պայմանագիր ստորագրելու անհրաժեշտություն էլ չկա, որովհետև առևտրատնտեսական հարաբերությունները երկու պետությունների միջև մասնավոր մակարդակի վրա բուռն զարգացում էին ապրում: Անգլիայի ֆինանսիստները և բանկիրները պատրաստ էին ամերիկացի ձեռներեցներին տրամադրել երկարաժամկետ վարկեր, իսկ ամերիկացիներն, իրենց հերթին, շարունակում էին նախընտրել անգլիական ապրանքները: Մեծ Բրիտանիայի կառավարությունը պատրաստ չէր ԱՄՆ-ին առևտրային արտոնություններ տրամադրել Վեստ-Ինդիայում: Սակայն ամերիկացիները վաղուց էին սովորել շրջանցել անգլիական օրենքներն այդ տարածաշրջանում, զբաղվելով մաքսանենգությամբ, ինչը չէր կարող չսրել հարաբերությունները երկու պետությունների միջև: Միևնույն ժամանակ, ամերիկացի առևտրականներն իրենց ապրանքների համար սկսում են գտնել սպառման նոր շուկաներ: Այսպես, 19-րդ դ. սկզբին նրանց հաջողվում է ներխուժել չինական շուկա, որն արդեն վաղուց զբաղեցված էր անգլիացիների կողմից: Այսպես, անգլիացիները մի կողմից, փակեցին ամերիկացիների ճանապարհը դեպի Վեստ-Ինդիա, մյուս կողմից, փաստորեն, բացեցին նրանց համար ասիական շուկան:

Երկրի ներսում ևս դրությունը բոլորովին կայուն չէր: Նահանգները ձգտում էին անկախանալ, իսկ կենտրոնական իշխանությունն այնքան

թույլ էր, որ չէր կարող դրան խոչընդոտել: Արդյունքում, Մայրցամաքային Կոնգրեսը ֆինանսավորման հարցում լիովին կախման մեջ էր նահանգներից: Նրա իրավասության տակ էին մնում միջազգային պայմանագրերի կնքումը, ռազմական ուժերի ստեղծումը և պատերազմ հայտարարելու իրավունքը: Ստացվում էր, որ երիտասարդ պետության քաղաքական գործիչները նախընտրում էին տալիս իրենց սեփական նահանգների խնդիրների լուծմանը, երկրորդական համարելով համազգային շահերը: Հարաբերությունները նահանգների միջև սրված էին, իսկ Կոնգրեսը ռեալ իշխանություն չունեի այդ վիճակը շտկելու համար: Ամերիկյան պատմության հայտնի քաղաքական գործիչ Ա. Համիլթոնը, քննադատելով նահանգների միջև այդպիսի թույլ համադաշնակցային կապերը, համոզմունք էր հայտնում, որ ամերիկյան պետությունը երբեք չի դառնա հզոր, եթե իր գործունեության մեջ շարունակի ղեկավարվել 13 նահանգների գավառական շահերով:

Դրան հատելու օրենքի համաձայն (Coinage Act) **1792թ-ին դոլարը** դառնում է ԱՄՆ հիմնական դրամական միջոցը: Այսօրվա դրությամբ գոյություն ունեն մետաղադրամեր 1, 5, 10, 25, 50 ցենտ և 1 դոլար արժեքով և 1, 2, 5, 10, 20, 50, 100, 500, 1000, 5.000 և 100.000 արժեք ունեցող թղթադրամեր: Սակայն 500, 1000, 5.000 և 100.000 արժեք ունեցող թղթադրամերը շրջանառության մեջ չեն օգտագործվում և հանդիպում են միայն բանկային հաշվարկներում:

ԱՄՆ Սահմանադրությունը

1787թ. մայիսի 14-ին Ֆիլադելֆիայում 12 նահանգների ներկայացուցիչների մասնակցությամբ և Ջ. Վաշինգտոնի նախագահությամբ իր աշխատանքն է սկսում Սահմանադրական Կոնվենտը: Կոնվենտի աշխատանքներին մասնակցում էին սպիտակամորթ արական սեռի 55 պատգամավորներ: Պատգամավորների մեծ մասն ունեին իրավաբանական կրթություն և նահանգների օրենսդրական ժողովներում աշխատանքի փորձ: Մեծ հեղինակություն էր վայելում, իհարկե, 82-ամյա Բենջամին Ֆրանկլինը: Կոնվենտի աշխատանքներին չկարողացան մասնակցել Ջ. Ադամսը և Թ. Ջեֆֆերսոնը, որոնք այդ ժամանակ զբաղեցնում էին դիվանագիտական պաշտոններ արտասահմանում և արտաքին գործերի նախարար Ջ. Ջեյր, որը գտնվում էր Նյու-Յորքում (1789թ. արտաքին գործերի նախարարությունը անվանվեց ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտ, իսկ նրա ղեկավարը՝ ԱՄՆ-ի Պետական քարտուղար): Պատգամավորները երդում էին տվել գաղտնի պահել քննարկումների մանրամասները, վախենալով, որ իրենց գործունեությունը կարող է համարվել Համադաշնակցության Հոդվածների դեմ ուղղված դավադրություն:

Կոնվենտի աշխատանքի ընթացքում մեծ ուշադրություն էր դարձվում տարբեր նահանգների միջև փոխզիջումային համաձայնության գալու խնդրին: Փոքր նահանգների պատգամավորները (Դելավեր, Նյու-Ջերսի) գտնում էին, որ եթե ընդունվի այն առաջարկությունը, որով դաշնային օրենսդիր ժողովներում ներկայացուցչությունը պետք է լինի ըստ նահանգի բնակչության թվի, կամ նրա ֆինանսական հնարավորության, ապա այդ դեպքում վտանգ կառաջանա, որ փոքր նահանգների շահերը ոտնահարվեն խոշոր նահանգների կողմից: Արդյունքում ընդունվեցին Բ. Ֆրանկլինի առաջարկությունները, որով Սենատում նահանգները պետք է ունենային հավասար ներկայացուցչություն, իսկ Ներկայացուցիչների պալատում՝ ըստ նահանգների բնակչության համամասնական ներկայացուցչության (այսօրվա դրությամբ ամերիկյան 26 փոքր և միջին նահանգները ներկայացնող 52 սենատորներ, որոնց բնակչության թիվը կազմում է ԱՄՆ բնակչության թվի մոտավորապես 20%-ը կարող են մերժել ցանկացած որոշում, որն ընդունվել է Ներկայացուցիչների պալատի մեծամասնության կամ ԱՄՆ բնակչության մոտավորապես 80%-ի կողմից: Պատգամավորների մեծ մասը համոզված էր, որ այն անձինք, որոնք հավակնելու են պետության բարձրագույն պաշտոնների, ինչպես նաև դատավորների համար պետք է հաստատել գույքի (սեփականության) ցենզ: Սակայն այդ հարցը որոշվեց թողնել նահանգների հայեցողությանը (չի բացառվում, որ այստեղ յուրահատուկ դեր խաղացին Բ. Ֆրանկլինի այն խոսքերը, որ նրա կյանքում հանդիպած բոլոր սրիկաներից հարուստներն՝ ամենաերդյալ սրիկաներն էին):

Կոնվենտն ապագա սահմանադրության մեջ չի ներառնում երկրի քաղաքացիների իրավունքների մասին հոդվածներ, խոստանալով, որ դրա մշակումն ապագա կառավարության համար կլինի կարևորագույն խնդիրներից մեկը: Հետագայում այդ հոդվածները դառնում են ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին ուղղումները, որոնք պատմության մեջ մտան, որպես «Իրավունքների մասին օրինագիծ» անվանումով:

1787թ. սեպտեմբերի 17-ին (չորս ամիս անց) վերջին նիստին ներկա գտնվող 40 պատգամավորներից 39-ը իրենց ստորագրությունները դրեցին ԱՄՆ-ի Սահմանադրության տակ: Պատգամավորներից շատերը հասկանում էին երկրի Հիմնական օրենքի անկատարությունը, սակայն համաձայնվեցին Բ. Ֆրանկլինի այն կարծիքին, որ տվյալ իրավիճակում խիստ անհրաժեշտ է ստեղծել ազգային կառավարություն, որպեսզի իրականություն չդառնան անկախության թշնամիների հույսերը և երկիրը չմասնատվի բաժանվելով 13 թույլ պետությունների:

Շուտով նահանգներն սկսում են Կոնվենտի առաջարկած սահմանադրական հոդվածների քննարկումները, որոնք վերածվում են բանավեճերի: Հիմնական վիճելի հարցերը վերաբերում էին առևտրին,

ստրկությանը, նախագահին և ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների ընտրության սկզբունքին: Նահանգների ներկայացուցիչները բանակցությունների արդյունքում վիճելի հարցերի շուրջ կարողացան հանգել փոխզիջման: Օրինակ, «ստրուկներ» բառը փոխարինվեց «ուրիշ անձեր» արտահայտությամբ, երկրի նախագահ ընտրելու համար մտցվեց Ընտրիչների կոլեգիայի համակարգը և այլն: Երկիրը, փաստորեն, բաժանվեց երկու մասի՝ Ֆեդերալիստների (ղեկավարերն էին Ա. Համիլթոնը, Ջ. Մեդիսոնը, Ջ. Ջեյը), որոնք ներկայացնում էին արդյունաբերական հյուսիսային նահանգների շահերը և ուժեղ կենտրոնական իշխանության կողմնակից էին, և հակաֆեդերալիստների (ղեկավար՝ Թ. Ջեֆֆերսոն), որոնք նահանգներին մեծ իրավունքներ տրամադրելու կողմնակից էին և պաշտպանում էին գյուղատնտեսական հարավային նահանգների շահերը: Սկզբունքային վեճն այդ երկու ուղղությունների միջև սկսվում է նույնիսկ մամուլում և շարունակվում է մոտ 1 տարի՝ 1787-1788թթ.: Ֆեդերալիստների կողմից գրված հոդվածները հետագայում միացվեցին և դուրս եկան առանձին երկու հատորներով «Ֆեդերալիստի նշումներ» (the Federalist papers) անվանումով: Այդ հոդվածները սահմանադրության ընդունման գործում ունեցան շատ մեծ դրական նշանակություն: **1788թ. հուլիսի 2-ին**, երբ 13 նահանգներից իններորդը՝ Նյու-Հեմփշիրն ընդունեց սահմանադրությունը, այդ պահից Սահմանադրությունը դարձավ երկրի Հիմնական օրենքը (Ռոդ-Այլենդը վերջին նահանգն էր, որն ընդունեց Սահմանադրությունը 1790թ. մայիսին): Ամերիկյան Սահմանադրությունը մերժում է ցանկացած թելադրանք՝ արտաքին, թե ներքին: Այդ պատճառով երկրի պետական կառուցվածքի հիմքում ընկած է **«զսպումների և հակակշիռների» (checks and balances) քաղաքականության սկզբունքը**, որը մինչև այսօր իրեն լիովին արդարացնում է: Սենատին տրվում էին իրավասություններ, որով նա հնարավորություն էր ստանում հսկել Ներկայացուցիչների պալատի գործունեությունը: Կոնգրեսի երկու պալատներն, իրենց հերթին, հսկելու էին գործադիր իշխանության աշխատանքն ԱՄՆ-ի նախագահի գլխավորությամբ: Երկրի օրենքների պաշտպանման իրավունքը տրվում էր Գերագույն դատարանին: Ներկայացուցիչների պալատի պատգամավորները պետք է ընտրվեին համաժողովրդական քվեարկության հիման վրա:

Նախագահի պաշտոնն աշխարհի ոչ մի երկրում դեռևս գոյություն չունի և, այդ պատճառով, նույնպես բազմաթիվ վեճերի առիթ դարձավ: Ա. Համիլթոնը, որն այդ պաշտոնի հաստատման ջերմ կողմնակիցն էր, հակաճառելով իր հակառակորդներին, որոնք նախագահի պաշտոնը համեմատում էին միապետի հետ, ասում էր, որ, ի տարբերություն բրիտանական միապետի, ամերիկյան պետության նախագահի իշխանության ժամկետը սահմանափակ է: Վերջ ի վերջո այդ պաշտոնը

հաստատվեց: ԱՄՆ նախագահին ընտրվում էր չորս տարի ժամկետով, մեկ անգամ ևս վերընտրվելու իրավունքով: Ըստ Սահմանադրության, երկրի նախագահին կարելի էր պաշտոնազրկել իմփիչմենթի միջոցով: **1789թ. փետրվարի 4-ին** տեղի ունեցան երկրի նախագահի առաջին ընտրությունները: 13 նահանգների բոլոր 69 Ընտրիչներն իրենց ձայնը տվեցին Ջորջ Վաշինգտոնին: Ամեն մի Ընտրիչ ուներ երկու ձայն, նրանց «երկրորդ ձայնը» նախատեսված էր փոխնախագահի ընտրության համար և բաժանվում էր այդ պաշտոնին հավակնորդ 10 թեկնածուների միջև: Փոխնախագահ դարձավ Ջոն Ադամսը, որն իր պաշտոնի վերաբերյալ ասաց. «Մարդկային երևակայությամբ ստեղծված բոլոր պաշտոններից սա ամենաաննշանն է»:

Թեմա 1.4. ԱՄՆ ձևավորման գործընթացը (1789-1801)

ԱՄՆ Նախագահները



Ջորջ Վաշինգտոն (1732-1799), ԱՄՆ 1-ին նախագահը (1789-1797)



Ջոն Ադամս (1735-1826), ԱՄՆ 2-րդ նախագահը (1797-1801)

Ջ. Վաշինգտոնի վարչակազմի ներքին քաղաքականությունը

Երիտասարդ ամերիկյան պետությունը դեռ չուներ քաղաքական ավանդույթներ: Նախագահական պաշտոնը գոյություն չունեի աշխարհի ոչ մի պետությունում և այդ պատճառով դժվար էր պատկերացնել, թե ինչպես են դասավորվելու հարաբերություններն օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև, ինչպես են տարանջատվելու նրանց պարտականությունները:

ԱՄՆ առաջին կառավարությունը ձևավորվեց 1789թ. սեպտեմբերին, այսինքն, երդմնակալությունից համարյա վեց ամիս անց: Կառավարությունը կազմված էր հինգ անդամներից, որոնք գլխավորեցին չորս նախարարություններ (դեպարտամենտներ)՝ արտաքին գործեր, (Պետ. դեպարտամենտ) գլխավորեց Թ. Ջեֆֆերսոնը, Ֆինանսներ, (Ա. Համիլթոն), Ռազմական և արդարադատության, և, վերջապես, Գերագույն փոստապետ: Պետական ծառայողների ողջ հաստիքացուցակը կազմում էր ընդամենը 350 մարդ: Գերագույն դատարանի կազմի մեջ մտան վեց դատավորներ:

Նախագահության առաջին տարիներին Ջ. Վաշինգտոնը, փաստորեն, չէր միջամտում կառավարության գործունեությանը, դա վերաբերվում էր նույնիսկ արտաքին և ֆինանսական քաղաքականությանը: Սակայն այդ վիճակը երկար շարունակվել չէր

կարող և նախագահը իր վրա պետք է վերցնել երկրի կարևորագույն խնդիրների լուծումը:

Դրանցից էր, օրինակ, պետական ապարատի կազմավորումը և նրա աշխատանքի համար ֆինանսական միջոցների հայթայթումը: ԱՄՆ հետպատերազմյան պետական պարտքը կազմում էր 54 մլն. դոլար, ևս 25 մլն. պարտք ունեին նահանգները: Ներքին պարտքը, հիմնականում, կազմված էր այն գումարներից, որոնք պետք է վճարվեին անկախության համար պատերազմի վետերաններին, ինչպես նաև առևտրականներին, որոնք իրենց ապրանքներով աջակցեցին հեղափոխությանը: Նոր պարտատերերը վախենում էին ֆինանսական միջոցներ ներդնել ամերիկյան տնտեսության մեջ մինչև երկիրը չմարեր հին պարտքերը: Այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր վարել նոր հարկային քաղաքականություն: Դեռ 1780թ., երբ պատերազմը հեռու էր ավարտից, Ա. Համիլթոնը «կենտրոնական կառավարության հիմնական թերություն» անվանեց այն որ կոնգրեսը չունի իշխանություն և, մասնավորապես, այն որ անկարող է նահանգների նկատմամբ ուղիղ հարկում կիրառել: 1789թ. զբաղեցնելով ֆինանսների նախարարի պաշտոնը՝ նա շատ լավ գիտակցում էր, որ առանց արտակարգ միջոցառումների հնարավոր չի լինի շտկել ֆինանսական ծանր վիճակը: Համիլթոնն առաջարկում էր, որ ֆեդերալ կառավարությունն իր վրա վերցնի նահանգների պարտքերը, փոխարենը նրանց վրա լրացուցիչ հարկեր դնելով: Նա համարում էր, որ պետական պարտքի մարումը և պարտատերերի մոտ վստահության վերականգնումն այն կարևորագույն խնդիրներն են, որոնց լուծումը խիստ անհրաժեշտ է երիտասարդ երկրի համար: Բացի այդ, Համիլթոնը, տնտեսության և ֆինանսների կայունության համար առաջարկում էր ստեղծել ԱՄՆ-ի ազգային բանկ: Այդ բոլոր հարցերի շուրջ սկսվում է նոր պայքար ֆեդերալիստների և հակաֆեդերալիստների միջև, այսինքն, Համիլթոնի և Ջեֆֆերսոնի միջև, ինչն ավելի է բարդացնում նրանց անձնական հարաբերությունները: Ի վերջո, փոխզիջման արդյունքում, Համիլթոնին հաջողվում է առաջ քաշել սկզբունքային նշանակություն ունեցող հարցերը: Այսպես, 1791թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը համաձայնվում է Համիլթոնի առաջարկությանը և հաստատում ազգային բանկի ստեղծումը 20 տարի ժամկետով: Բացի այդ, մտցվեցին բարձր մաքսատուրքեր, հիմնականում, Անգլիայից ներմուծվող արդյունաբերական ապրանքների վրա, ինչը թույլ տվեց ինչ-որ չափով պաշտպանել երիտասարդ ամերիկյան արդյունաբերությունը:

Ֆեդերալիստներ և հակաֆեդերալիստներ: Քաղաքական կուսակցությունների ստեղծումը

ԱՄՆ առաջին կառավարությունը ձևավորվել էր անկուսակցականության սկզբունքի հիման վրա: Սակայն, փաստորեն, Կոնգրեսի աշխատանքի հենց սկզբից սկսվում է երկու քաղաքական ֆրակցիաների կազմավորումը, իսկ նախագահ Վաշինգտոնը կառավարությունում երկու կարևոր պաշտոնների նշանակում է ապագա քաղաքական կուսակցությունների ստեղծողներին՝ 34-ամյա Ա. Համիլթոնին (ֆինանսների նախարար) և 46-ամյա Թ. Ջեֆֆերսոնին (պետ. քարտուղար): **Համիլթոնը գլխավորեց Ֆեդերալիստական կուսակցությունը, իսկ Ջեֆֆերսոնը՝ Հանրապետական - դեմոկրատական (հակաֆեդերալիստական):** Այդ երկու կուսակցությունների և նրանց առաջնորդների մրցակցությունը ցույց էր տալիս, որ ամերիկյան էլիտայի շարքերում գոյություն ունեին լուրջ տարածայնություններ կապված ամերիկյան հասարակության հետագա զարգացման ճանապարհների հետ: Սահմանադրությունն ընդունելուց անմիջապես հետո սկսվում է ընդհարում առևտրա-ֆինանսական և ագրարային խմբերի միջև, որոնք ունեին տարբեր սոցիալ-տնտեսական շահեր: 1787թ. ֆեդերալիզմի տարբերակն սկսվում է ամրապնդվել, իսկ ամերիկյան կառավարությունում առաջատարի դերն աստիճանաբար անցնում է Համիլթոնին, որն իր ֆեդերալիստական կուսակցության հետ միասին պաշտպանում էր հյուսիս-արևելյան կապիտալի շահերը: Հիմնականում հարավի և գյուղատնտեսության (ագրարային) շահերի արտահայտողը դառնում է Հանրապետական-դեմոկրատական կուսակցությունը, որը գլխավորեցին Ջեֆֆերսոնը և Մեդիսոնը, բայց առաջատարը, իհարկե, Ջեֆֆերսոնն էր:

Համիլթոնը խոշոր մանուֆակտուրաների ստեղծման կողմնակից էր: Ընդդիմությունը գտնում էր, որ դա անել հնարավոր չէ, քանի որ երկրում գոյություն ունի աշխատանքային ուժի պակաս և չկան խոշոր ձեռներեցներ: Պատասխանելով ընդդիմախոսներին, Համիլթոնն ապացուցում էր, որ նոր տեխնոլոգիաների ներդրումը մանուֆակտուրաներում կարճ ժամանակվա ընթացքում կվերացնի աշխատուժի պակասը, իսկ ինչ վերաբերում է խոշոր ձեռներեցներին և սեփականատերերին, ապա այդ խնդիրը հեշտությամբ կարելի է լուծել Ազգային բանկի ստեղծման օգնությամբ, որն անհրաժեշտ գումարներ կտրամադրի այն բազմաթիվ մարդկանց, ովքեր ցանկանում էին զբաղվել ձեռներեցությամբ: Համիլթոնի առաջարկություններն աջակցություն ստացան օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից:

Ջեֆֆերսոնը և նրա կողմնակիցները դեմ էին դուրս գալիս ԱՄՆ արդյունաբերականացման ծրագրին, ինչը, իրենց կարծիքով,

կհանգեցնեն երկրի բնակչության զանգվածային ունեզրկման, սոցիալական կտրուկ շերտավորմանը՝ աղքատների և հարուստների, կաշառակերության տարածմանը և, արդյունքում, ֆինանսական օլիգարխիայի գերիշխանությանը: Ըստ Ջեֆֆերսոնի և նրա կողմնակիցների ծրագրի, կառավարությունը պետք է օգտագործի ԱՄՆ բնական առավելությունը Հին Աշխարհի նկատմամբ, այն է հսկայական ազատ հողատարածքների առկայությունը, ինչը հնարավորություն է տալիս մեծ թվով քաղաքացիների դարձնել առաքինի և ապահով ֆերմերներ: Հանրապետության և դեմոկրատիայի համար այսպիսի ֆերմերները կլինեն միակ հուսալի հենարանը:

Պետք է նշել շատ կարևոր մի հանգամանք. երկու կուսակցությունների միջև պայքարը ընթանում էր Սահմանադրության շրջանակներում: Ջեֆֆերսոնի ընտրած քաղաքական ընդդիմության ձևը հիմք դրեց ԱՄՆ-ում երկկուսակցական համակարգին և, այսպես կոչված, քաղաքական կոնսենսուսին, որի էությունը երկու կուսակցությունների նվիրվածությունն էր երկրի ֆեդերալ-հանրապետական համակարգին, 1787թ. Սահմանադրությանը, շուկայական տնտեսությանը: Իսկ գլխավոր (սկզբունքային) տարբերությունը կուսակցությունների միջև կայանում էր նրանց կողմից երկրի հետագա տնտեսական զարգացման տարբեր մոտեցումների մեջ: Ֆեդերալիստները երկրի ապագան տեսնում էին արդյունաբերականացման մեջ, իսկ հանրապետական-դեմոկրատներն՝ ագրարային քաղաքականության զարգացման մեջ: Սակայն, հետագայում, ինչպես կտեսնենք, նույնիսկ իշխանության գալով, ոչ Ջեֆֆերսոնին, ոչ էլ Մեդիսոնին չի հաջողվում վերացնել այն միտումները երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ, որոնց հիմքը դրել էր Համիլթոնը: Ջեֆֆերսոնը և նրա հաջորդները ցուցաբերեցին ռեալիստական մոտեցում, ընդունելով իրենց քաղաքականության մեջ համիլթոնյան այն նախաձեռնությունները, որոնք թույլ տվեցին ԱՄՆ-ին գնալ զարգացման ճանապարհով և զբաղեցնել աշխարհում պատվավոր տեղ:

1791 թ. սեպտեմբերի 25-ին Կոնգրեսն ընդունում է ԱՄՆ Սահմանադրությունում առաջին տասն ուղղումները (խղճի, մամուլի, խոսքի, ցույցերի, ժողովների ազատություններ, զենք կրելու իրավունք և այլն), որոնք դառնում են ԱՄՆ Սահմանադրության բաղկացուցիչ մասը «Իրավունքների մասին օրինագիծ» անվանումով:

Ջ.Վաշինգտոնի առաջին վարչակազմի արտաքին քաղաքականությունը: Երկրորդ նախագահությունը

Ջ. Վաշինգտոնի առաջին նախագահության ժամանակ տեղի է ունենում ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը (1789-1794), որը մեծ արձագանք ունեցավ ԱՄՆ-ում: Հանրապետական-դեմոկրատները

(հակաֆեդերալիստները) բացահայտորեն պաշտպանեցին հեղափոխական Ֆրանսիային ամերիկյան հասարակության կողմից սկզբնական շրջանում ստանալով մեծ աջակցություն: Զանգվածային ցույցերն ապացուցում էին, որ ամերիկացիները չեն մոռացել անկախության պատերազմի տարիներին ֆրանսիացիների ցույց տված օգնության մասին: Միապետական կարգերի տապալման և 1792թ. օգոստոսին Ֆրանսիական Հանրապետության հռչակման մասին լուրն ԱՄՆ-ում ընդունվեց մեծ ոգևորությամբ: Սակայն այդ ոգևորությունը զգալի չափով նվազեց, երբ Ֆրանսիայում հաստատվեց յակոբինյան դիկտատուրան և երկրի ներսում սկսվեց քաղաքական ահաբեկչությունը:

Զ. Վաշինգտոնի նախագահության ժամկետը մոտենում էր ավարտին, իսկ ֆեդերալիստների հեղինակությունն (Վաշինգտոն, Ադամս, Համիլթոն) այնքան մեծ էր երկրում, որ ոչ ոք չէր կասկածում նախագահի նոր հաղթանակին: Այդպես էլ եղավ: 1792թ. նոյեմբերի 6-ին Զ. Վաշինգտոնի թեկնածությունն ստանում է միաձայն աջակցություն Ընտրիչների կողմից, իսկ Զ. Ադամսը նորից ընտրվում է փոխնախագահ: Զ. Վաշինգտոնի երկրորդ երդմնակալությունը տեղի ունեցավ Ֆիլադելֆիայում: Մինչ այդ, երկու կուսակցությունների միջև բուռն վեճեր էին ընթանում նոր մայրաքաղաքի հռչակման վերաբերյալ: Ջեֆֆերսոնը և նրա կողմնակիցները պնդում էին, որ երկրի մայրաքաղաքը պետք է լինի Հարավում, իսկ Համիլթոնի կողմնակիցները՝ Հյուսիսում: Թե որտեղ է լինելու ֆեդերալ մայրաքաղաքը՝ հյուսիսի արդյունաբերական զարգացած նահանգներից մեկում, թե ագրարային հարավի որևիցե նահանգում, կախված էր պետական քաղաքականության վրա ազդելու հնարավորությունը: Այդ վեճերին վերջ դրեց Զ. Վաշինգտոնը, ընդունելով «սողոմոնյան» որոշում՝ կառուցել մայրաքաղաքը Հյուսիսի և Հարավի «միջև», իսկ մինչ այդ, մոտակա 10 տարիներին ԱՄՆ մայրաքաղաքը լինելու էր Ֆիլադելֆիան: 1792թ. սկսվում է նախագահական նստավայրի կառուցումը, որը հետագայում հայտնի է դառնում **Սպիտակ տուն անվանումով:**

Ջեֆֆերսոնը և Համիլթոնը նոր վարչակազմում մնացին իրենց պաշտոններում: Նրանք գտնում էին որ ԱՄՆ պետք է հայտարարի եվրոպական պատերազմում իր չեզոք դիրքի մասին:⁴

Համիլթոնը, որը հակաֆրանսիական դիրք էր բռնել, առաջարկում էր չեղյալ համարել Ֆրանսիայի հետ կնքված բոլոր պայմանագրերը:

⁴ Եվրոպական պատերազմները տևեցին 1792-1815թթ. և բաժանվում են երկու փուլի: Սկզբից, դա հեղափոխական Ֆրանսիայի պաշտպանողական պատերազմներն էին եվրոպական կոալիցիաների դեմ, իսկ հետո, սկսվեցին այսպես կոչված, «նապոլեոնյան պատերազմները», երբ Ֆրանսիան արդեն վարում էր նվաճողական քաղաքականություն:

Ինչպես նշվեց, յակոբինների վարած ահաբեկչական քաղաքականությունը սեփական ժողովրդի նկատմամբ, դժգույն հետք թողեց ամերիկյան հասարակության մեջ: Հակաֆրանսիական տրամադրություններն ավելի ուժեղացան կապված, այսպես կոչված, «Ժենեյի գործի» հետ: Է. Ժենեն, որը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարն էր, գտնվելով ԱՄՆ-ում, կոչ է անում ամերիկացիներին միանալ հեղափոխական Ֆրանսիային, հայտարարել «պատերազմ բոլոր ժողովուրդների բոլոր թագավորներին» և հարձակվել անգլիական առևտրային նավերի վրա: Այդ հայտարարություններն ամերիկյան կառավարության կողմից գնահատվեցին որպես սադրանք: 1793թ. ապրիլի 22-ին Ջ. Վաշինգտոնը հայտարարում է եվրոպական կոալիցիայի և հեղափոխական Ֆրանսիայի միջև պատերազմում ԱՄՆ-ի ընտրած չեզոք դիրքի մասին: Այս դիրքորոշումը դժգոհություն է առաջացնում ֆրանսամետ Ջեֆֆերսոնի և նրա կողմնակիցների մոտ: Երկու կուսակցությունների միջև պայքարն այս հարցի շուրջ ավարտվում է ֆեդերալիստների հաղթանակով, իսկ Ջեֆֆերսոնի հեղինակությունը կառավարությունում անկում է ապրում: Արդյունքում 1793թ. դեկտեմբերի 31-ին Ջեֆֆերսոնը հրաժարական է տալիս: 1794թ. հունիսին Կոնգրեսն ընդունում է «չեզոքության մասին օրենքը»:

Ջ. Վաշինգտոնի երկրորդ նախագահությունը մոտենում էր ավարտին: Նա հրաժարվեց երրորդ անգամ առաջադրել իր թեկնածությունը, և երկիրը պետք է ընտրեր իր երկրորդ նախագահին: Ընտրությունների արդյունքում նախագահ դարձավ ֆեդերալիստ Ջ. Ադամսը (Ընտրիչների 138 ձայներից նրան տրվեց 71-ը), իսկ փոխնախագահ՝ հանրապետական-դեմոկրատ (հակաֆեդերալիստ) Թ. Ջեֆֆերսոնը: Արդյունքում ԱՄՆ երկրորդ վարչակազմը բնութագրվում է որպես «կոալիցիոն», որտեղ վարչական երկու բարձրագույն պաշտոնները զբաղեցրին երկու տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ:

Ջ. Ադամսի նախագահությունը

1797 թ. մարտի 4-ին Ջ. Ադամսը պաշտոնապես դառնում է ԱՄՆ երկրորդ նախագահը: Նա հայտնի քաղաքական գործիչ էր, իրավաբան, ավարտել էր Հարվարդը, մեծ դեր էր խաղացել ամերիկյան հեղափոխության ժամանակ, փորձառու դիվանագետ էր, մասնակցել էր տարբեր միջազգային հանդիպումների, պաշտպանել էր իր երկրի շահերը Փարիզում, Լոնդոնում, Ամստերդամում: Կարծես թե նա ուներ բոլոր անհրաժեշտ հատկանիշները “ազգի հայր” Վաշինգտոնին փոխարինելու համար:

Կարևորագույն խնդիրներից մեկը, որ կանգնած էր Ջ. Ադամսի վարչակազմի առջև կապված էր ֆրանս-ամերիկյան հարաբերությունների

հետ: Ֆրանսիական կառավարությունը խիստ բացասաբար ընդունեց ԱՄՆ կողմից այսպես կոչված, “Ջեյի պայմանագրի” կնքումը (1794թ. հունիս) Անգլիայի հետ, որով փորձ էր արվում երկու պետությունների միջև լուծում տալ քաղաքական և տնտեսական մի շարք կարևոր հարցերի: Ֆրանսիան դա ընդունեց որպես ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի միջև բարեկամական հարաբերությունների հաստատում և ֆրանս-ամերիկյան պայմանագրերի խախտում: Ֆրանսիան հրաժարվեց ընդունել ԱՄՆ նոր դեսպանին և դիվանագիտական հարաբերությունները երկու պետությունների միջև խզվեցին: Փորձելով շտկել իրավիճակը, Ադամսը Փարիզ է ուղարկում իր երեք ներկայացուցիչներին, որոնք լիազորված էին բանակցություններ վարել ֆրանսիական կառավարության հետ բարեկամության և առևտրի պայմանագրի կնքելու վերաբերյալ: Սակայն Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Շ. Թալեյրանը գիտակցաբար ձգձգում էր հանդիպումն ամերիկացիների հետ: Այն, ինչ որ տեղի ունեցավ 1797թ. հոկտեմբերին, պատմության մեջ մտավ որպես “գործ XYZ” անվանումով և էլ ավելի սրեց ֆրանս-ամերիկյան հարաբերությունները: Թալեյրանի հանձնարարությամբ, նրա կողմից ուղարկված երեք ներկայացուցիչները (նրանց ազգանունները պաշտոնական նամակագրությունում ծածկագրված էին որպես XYZ, բայց իսկական անունները հայտնի էին ամերիկյան կողմին), առաջարկում են ամերիկացիներին պայմանագիրը ստորագրելու դիմաց 250.000 դոլար կաշառք տալ նախարարին և 10 մլն. դոլար պետական փոխառություն: Կտրականապես հրաժարվելով այդ գործարքից, ամերիկյան ներկայացուցիչները հեռացան Փարիզից: Շուտով այդ պատմությունը հայտնի է դառնում ԱՄՆ-ում և ուժեղացնում հակաֆրանսիական ելույթները: Երկրի քաղաքական շրջանակներում սկսում են լուրջ խոսակցություններ պատերազմի մասին, իսկ Կոնգրեսը չեղյալ համարեց Ֆրանսիայի հետ կնքված բոլոր պայմանագրերը, ինչը մեծ ոգևորությամբ ընդունեցին ֆեդերալիստները և զայրոյթով՝ հանրապետական-դեմոկրատները Ջեֆֆերսոնի գլխավորությամբ, որոնց համար անընդունելի էր Անգլիայի հետ համաձայնության գալու միտքն անգամ: Ստացվում էր, որ երկիրը պատրաստ էր Ֆրանսիայի հետ պատերազմի համար ծախսել միլիոնավոր դոլարներ և հրաժարվում էր “կաշառքի համար” տրամադրել նույնիսկ մեկ ցենտ:

Նախագահ Ջ. Ադամսը չէր ցանկանում թույլ տալ, որ զգացմունքները հաղթեն բանականությանը: Նա դեմ էր պատերազմական գործողություններին և միանգամայն բավարար էր համարում Ֆրանսիային ցուցադրել Ամերիկայի վճռականությունը սկզբունքային հարցերում: Ֆրանս-ամերիկյան հարաբերությունների ճգնաժամը առիթ դարձավ ֆեդերալիստների համար Կոնգրեսի միջոցով անցկացնելու մի քանի օրենքներ, որոնք Ջեֆֆերսոնը և նրա

կողմնակիցները բնութագրեցին որպես քաղաքացիական իրավունքների և ազատությունների խախտում (“Օտարերկրացիների և սադրանք^a խռովություն բարձրացնելու նպատակով օրենք” Alien and Sedition Acts”), Հպատակագրման մասին օրենք^a (“Naturalization Act”): Օգտագործելով առաջին օրենքը, նախագահի հրամանով կալանքի տակ են վերցվում հանրապետական թերթերի 24 խմբագիրներ, որոնցից մի քանիսը բանտ են նետվում: Արդյունքում, այդ օրենքների ընդունումը և հանրապետական թերթերի, նրանց խմբագիրների կալանավորումը բացասական ազդեցություն ունեցան նախագահի և ֆեդերալիստների համար, բարձրացնելով, մյուս կողմից, Ջեֆֆերսոնի հեղինակությունը, որը գլխավորել էր պայքարն այդ օրենքների դեմ և ղեկավարում էր ամբողջ հակաֆեդերալիստական պրոպագանդան:⁵

Համոզված լինելով, որ ԱՄՆ պատրաստ չէ Ֆրանսիայի հետ պատերազմին և հաշվի չառնելով հակաֆրանսիական տրամադրությունները սեփական վարչակազմում և ամերիկյան հասարակության լայն զանգվածներում, նախագահ Ջ. Ադամսը 1800թ. մարտին Փարիզ է ուղարկում նոր պատվիրակություն, որը ֆրանս-ամերիկյան ճգնաժամը հաղթահարելու համար պետք է բանակցությունների մեջ մտներ Նապոլեոն Բոնապարտի հետ: Բանակցությունները հաջողությամբ ավարտվեցին և 1800թ. հոկտեմբերին երկու պետությունների միջև ստորագրվում է Մորֆոնթեյնի պայմանագիրը, որը վերջ է դնում ճգնաժամին: Այդ, հաշտության պայմանագիրը միանշանակ չընդունվեց ԱՄՆ-ում, որի արդյունքում ֆեդերալիստական կուսակցությունը տրոհվեց և, ինչպես համարում են ամերիկյան պատմաբաններից շատերը, դարձավ Ջ. Ադամսի 1800թ-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում կրած պարտության հիմնական պատճառը:

Ինքը՝ Ջ. Ադամսը համարում էր, որ Ֆրանսիայի հետ պայմանագրի ստորագրումը նրա քաղաքական գործնեության մեջ ամենամեծ նվաճումներից մեկն էր, որովհետև այն թույլ տվեց ԱՄՆ-ին խուսափել պատերազմից, որին նա պատրաստ չէր: Այնուամենայնիվ, 1800թ-ին

⁵ Անձնական հարաբերությունները Ադամսի և Ջեֆֆերսոնի միջև այնքան էին սրվել, որ նախագահության վերջում Ադամսը նույնիսկ դադարեց խոսել իր փոխնախագահի հետ: Թշնամության վերջը տրվեց միայն 11 տարի անց, երբ երկուսն էլ արդեն հեռացել էին քաղաքական կյանքից: Նրանց միջև երկար տարիներ շարունակ հաստատվում է նամակագրություն: Բայց թաքնված մրցակցությունն իրեն նորից զգացնել տվեց Ադամսի կյանքի վերջին թուրքերին: Մահանալով, նա ասաց. “Իսկ Ջեֆֆերսոնն ինձանից ավելի երկար ապրեց”: Նա այդպես էլ չիմացավ, որ Թոմաս Ջեֆֆերսոնը մահացել էր մի քանի ժամ առաջ, նույն օրը^a 1826թ. հուլիսի 4-ին:

տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում ֆեդերալիստ Ջ. Ադամսը, ինչպես արդեն նշվեց, պարտություն է կրում, հաղթում է հանրապետական-դեմոկրատ Թ. Ջեֆֆերսոնը:

18-րդ դ. 90-ական թթ-ին ԱՄՆ-ում սկսվում է տնտեսական աճ, բնակչության թիվը 1800թ. հասնում է 5 մլն.: Ստեղծվում էին բազմաթիվ նոր արդյունաբերական ձեռնարկություններ, տրանսպորտային ընկերություններ և բանկեր: Տնտեսական զարգացման հետ զուգահեռ առաջընթաց է արձանագրվում ամերիկացիների ընդհանուր կրթական և մշակութային զարգացման ասպարեզում: Այսպես, 1783-1800թթ. ընթացքում բացվեցին ևս 17 քոլեջ, մեծ թվով դպրոցներ, գրադարաններ, ուսումնական հաստատություններ կանանց համար, ինչպես նաև գրական, պատմագիտական և փիլիսոփայական ընկերություններ:

**Թեմա 1.5. Հանրապետականների իշխանության
ժամանակաշրջանը (1801-1825)**

ԱՄՆ Նախագահները



Թոմաս Ջեֆֆերսոն (1743-1826), ԱՄՆ 3-րդ նախագահը (1801-1809)



Ջեյմս Մեդիսոն (1751-1836), ԱՄՆ-ի 4-րդ նախագահը (1809-1817)



Ջեյմս Մոնրո (1758-1831), ԱՄՆ-ի 5-րդ նախագահը (1817-1825)

Թ. Ջեֆֆերսոնի ներքին և արտաքին քաղաքականությունն առաջին և երկրորդ նախագահությունների ժամանակաշրջանում/1801-1809/

1799թ. դեկտեմբերին մահանում է “ազգի հայր” Ջ. Վաշինգտոնը: ԱՄՆ-ի Կոնգրեսը որոշում է ընդունում նոր մայրաքաղաքն անվանել Վաշինգտոն: Հենց այստեղ էլ տեղի է ունենում Թ. Ջեֆֆերսոնի երդմնակալությունը, չնայած որ դեռ անավարտ էին Սպիտակ տան և Կոնգրեսի (Կապիտոլիում) շենքերը: Իր ճառում Թ. Ջեֆֆերսոնը կոչ արեց բոլոր ամերիկացիներին համախմբվել: Ուշագրավ էին նրա խոսքերը այն

մասին, որ “մենք բոլորս հանրապետականներ ենք, մենք բոլորս ֆեդերալիստներ ենք”, նրա ճառում չկար ոչ մի հեղափոխականություն, ինչից այդքան վախենում էին նրա հակառակորդները: Ութ տարվա իր նախագահության ընթացքում Ջեֆֆերսոնը ցուցաբերեց իրատես և պրագմատիկ մարդու հատկանիշներ, որը նույնիսկ հանրապետական նպատակներին հասնելու համար կարող էր օգտագործել ֆեդերալիստական գաղափարները: Նա ուներ բազմաթիվ հակառակորդներ, որոնք սակայն ընդունում էին քաղաքական գործչի նրա տաղանդը:

Գալով իշխանության գլուխ, Ջեֆֆերսոնն առաջին հերթին ներում շնորհեց բոլոր այն լրագրողներին, որոնք մեղադրվել էին “Օտարերկրացիների և սադրանք՝ խռովություն բարձրացնելու նպատակով” օրենքով: Նոր վարչակազմի մեջ ֆեդերալիստները ներկայացուցիչ չունեին, ինչն ապահովեց գործադիր իշխանության միասնությունը, մի բան, որը բացակայում էր նախորդ տարիներին:

Զարմանալի չէ, որ, ԱՄՆ նախկին պետ. քարտուղար Թ. Ջեֆֆերսոնը, մեծ ուշադրություն էր դարձնում արտաքին քաղաքականությանը, սակայն երիտասարդ ամերիկյան պետությունը դեռ հնարավորություն չունեի զգալի չափով ազդել միջազգային խնդիրների լուծման վրա: Մյուս կողմից, ԱՄՆ-ին անհրաժեշտ էր մոտակա ժամանակներում կարգավորել երկրի համար մեծ կարևորություն ունեցող բոլոր հարցերը հարևան տարածքներում: Այսպես, Լուիզիանայի հսկայական տարածքները պատկանում էին Ֆրանսիային, իսկ Ֆլորիդան՝ Իսպանիային: Ֆրանսիան փակել էր Նյու-Օրլեանի նավահանգիստն ամերիկյան առևտրային նավերի համար, ինչը մեծ վնաս էր հասցնում Հարավի ֆերմերներին և ԱՄՆ զարգացող արևմտյան տարածքների արդյունաբերողներին, որոնք հնարավորություն չունեին արտահանելու իրենց արտադրանքը: Բացի այդ, Լուիզիանայից և Ֆլորիդայից չէին դադարում հնդկացիների և ավազակային խմբերի հարձակումներն ամերիկյան տարածքների վրա: ԱՄՆ կառավարությունը փորձում է գնել Ֆլորիդան և Լուիզիանան: Իսպանիան չի համաձայնվում վաճառել Ֆլորիդան, սակայն Նապոլեոն Բոնապարտը, որի ուշադրության կենտրոնում առաջին հերթին, եվրոպական խնդիրներն էին, համաձայնվեց վաճառել 2,6 մլն. քառ. կմ տարածքը 15 մլն. դոլարով: **Արդյունքում, ստանալով Լուիզիանան, ԱՄՆ տարածքն ավելացավ համարյա երկու անգամ:** Լուիզիանայի ձեռքբերումը միանշանակ չընդունվեց երկրի ներսում: Հյուսիս-արևելյան նահանգների ֆեդերալիստները վախենում էին, որ նոր՝ հարավ-արևմտյան նահանգների ստեղծումը կհանգեցնի իրենց քաղաքական ազդեցության թուլացմանը: Գործը հասավ նրան, որ 1803-1804թթ. ֆեդերալիստները նախատեսում էին Անգլիայի օգնությամբ ստեղծել Հյուսիսային

Նահանգների Համադաշնակցություն (Northern Confederacy), որի կազմի մեջ պետք է մտնեին Նյու-Ջերսին, Նյու-Յորքը, ամբողջ Նոր Անգլիան և Կանադան:

Փաստորեն Լուիզիանայի վաճառքից անմիջապես հետո Եվրոպայում սկսվում են, այսպես կոչված, նապոլեոնյան պատերազմները, որոնք շարունակվեցին մինչև 1815թ.: Պայքարը հիմնականում ընթանում էր Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև Եվրոպայում և ամբողջ աշխարհում գերիշխանություն հաստատելու համար: Յամաքային պատերազմում բացահայտ առավելությունը Նապոլեոնի կողմն էր, իսկ ծովում՝ Բրիտանիայի: ԱՄՆ, ինչպես նշվեց, չեզոք դիրք էր բռնել, սակայն պատերազմը երկրի արտաքին առևտրին և տնտեսությանը մեծ վնաս էր բերում:

1804թ. կայացան նախագահական նոր ընտրություններ: Համաձայն ԱՄՆ Սահմանադրության 12-րդ ուղղումի նախագահի և փոխնախագահի պաշտոնների համար ընտրություններն այսուհետև պետք է անցկացվեին առանձին: Ջեֆֆերսոնը փայլուն հաղթանակ է տանում, ստանալով ձայների ավելի քան 92%-ը (176 Ընտրիչներից՝ 162 ձայն): Երկրորդ նախագահության ժամանակ Ջեֆֆերսոնը շարունակեց վարել նախկին քաղաքականությունը: Արտաքին հարաբերություններում ԱՄՆ բռնած չեզոք դիրքը եվրոպական պատերազմների և առաջին հերթին անգլոֆրանսիական հակամարտության նկատմամբ հաջողությամբ շարունակվեց, չնայած երկիրը կրում էր մեծ տնտեսական վնաս, որի համար ամերիկացիները մեղադրում էին հիմնականում անգլիացիներին: Երկրի ներսում հաջողվեց կրճատել պետական պարտքը: 1804-1806թթ. նախագահի ցուցումով դեպի մայրցամաքի արևմուտք ուղարկվեց արշավախումբ կապիտան Մ. Լյուիսի և լեյտենանտ Ու. Կլարկի գլխավորությամբ, որի նպատակն էր հետազոտել այդ տարածքները: Այդ արշավախմբի նյութերը էական նշանակություն ունեցան հետագայում, երբ հարց բարձրացվեց ԱՄՆ տարածքի ընդլայնման մասին Հյուսիսային Ամերիկայի արևմտյան հողերի հաշվին:

Թ. Ջեֆֆերսոնը, ինչպես և Ջ. Վաշինգտոնը, հրաժարվում է երրորդ անգամ առաջադրվել, լիովին բավարար համարելով երկու ժամկետները:

Մեդիսոնի նախագահությունը: Պատերազմ Մեծ Բրիտանիայի դեմ (1812-1815)

Նախագահական ընտրությունների արդյունքում կրկին հաղթանակ են տանում հանրապետական-դեմոկրատները: ԱՄՆ 4-րդ նախագահ է դառնում Ջեյմս Մեդիսոնը, որը Ջեֆֆերսոնի վարչակազմում զբաղեցնում էր պետ. քարտուղարի պաշտոնը: Իր երդմնակալության ճառում նա մեղադրում է Անգլիային ամերիկյան առևտրային նավերի և ամերիկյան քաղաքացիների դեմ անօրինական գործողությունների,

ինչպես նաև հարևան Կանադայի տարածքից հնդկացիների միջոցով ամերիկյան հողերի վրա պարբերական հարձակումների համար: Կոնգրեսում պատգամավորներից շատերը համարում էին, որ այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է նվաճել Կանադան, ինչը, վերջ տալու համար հնդկացիների հարձակումներին և մաքսանենգությանը, որը մեծ վնաս էր հասցնում ազգային առևտրի զարգացմանը: Վերջապես, դա թույլ կտար ձեռք բերել նոր տարածքներ:

1810թ-ին Կոնգրեսը “հարաբերությունների ընդհատման մասին” օրենքը (Non-Intercourse Act) փոխարինում է “Մեյսոնի #2” (Macon’s Bill #2) օրենքով, որով վերականգնվում էր առևտուրը Ֆրանսիայի և Անգլիայի հետ: Սակայն արտաքին առևտրի լիարժեք վերականգնումը հնարավոր էր միայն այն դեպքում, եթե Անգլիան և Ֆրանսիան կատարեին ԱՄՆ-ի պահանջը՝ ճանաչել նրա չեզոք կարգավիճակը և վերջ տալ ծովում ամերիկյան առևտրային նավերի դեմ բոլոր անօրինական գործողություններին: Եթե այդպիսի որոշում ընդունվեր հիշյալ պետություններից որևէ մեկի կողմից, ապա ԱՄՆ խոսք էր տալիս խզել բոլոր առևտրական հարաբերությունները մյուսի հետ: Այդ վերապահությունից օգտվում է Ֆրանսիան և հայտարարում, որ հանում է բոլոր սահմանափակումները ամերիկյան արտաքին առևտրի համար: Կատարելով իր խոստումը, 1811թ. սկզբին, ԱՄՆ խզում է իր առևտրական հարաբերությունները Անգլիայի հետ:

1812թ. հունիսի 19-ին ԱՄՆ պատերազմ է հայտարարում Մեծ Բրիտանիային, որը պատմության մեջ հայտնի է նաև որպես “անկախության համար երկրորդ պատերազմ” անվանումով: Դիմելով այսպիսի համարձակ քայլի, ԱՄՆ կառավարությունը և Կոնգրեսը համոզված էին, որ ռազմական գործողությունները հիմնականում ընթանալու էին ցամաքում, որտեղ ամերիկյան բանակը (մոտ 10.000 զինվոր) նահանգների միլիցիայի աջակցությամբ մեծ առավելություն կունենար անգլիական ֆորտերում գտնվող փոքրաթիվ կայազորների նկատմամբ: Բացի այդ բրիտանական զորքերի հիմնական մասը ներգրավված էր եվրոպական պատերազմում: Սակայն պատերազմի սկիզբն անհաջող էր ամերիկացիների համար: Կանադայի սահմանի մոտ նրանք պարտություն կրեցին, 1812թ. ամռանն անգլիացիները գրավեցին Դետրոյթ քաղաքը: Երկրի համար տնտեսական և քաղաքական այդ ծանր վիճակում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որտեղ մեծ դժվարությամբ (միայն մեկ ձայնի առավելությամբ) նորից հաղթանակ տարավ Մեդիսոնը: 1814թ. սեպտեմբերին անգլիական զորքերը գրավեցին ԱՄՆ-ի հյուսիս-արևելյան նահանգները (Մեն, Քոննեկտիկուտ, Վիրջինիա, Մերիլենդ):

1814թ. օգոստոսին անգլիացիները գրավում են Վաշինգտոնը, այրում և կողպատում Սպիտակ տունը և Կոնգրեսի շենքը: Սակայն

աստիճանաբար պատերազմը ստանում էր ձգձգված բնույթ, ինչը ձեռնտու էր առաջին հերթին անգլիացիներին, քանի որ Նապոլեոնի նկատմամբ հաղթանակը (1814թ. ապրիլ) հսկայական նյութական և ֆինանսական միջոցներ էր խլել և նոր, երկարատև պատերազմի Անգլիան պատրաստ չէր: Բացի այդ ամերիկացիները համառ դիմադրություն էին ցույց տալիս: Այսպես, 1815թ. հունվարին ամերիկյան բանակը գեներալ Է. Ջեքսոնի գլխավորությամբ պարտության է մատնում անգլիացիներին Նյու-Օրլեանի մոտ: Ամերիկյան պատմության մեջ մտավ նաև Մաքհենրի ֆորտի պաշտպանությունը Բալթիմորի մոտ: Հիացած պաշտպանվողների հերոսությամբ, երիտասարդ պոետ **Ֆրենսիս Բ. Քին նրանց պատվին գրեց “աստղերով սփռված դրոշը” (Star Spangled Banner) բանաստեղծությունը, որը 1931թ-ին դառնում է ԱՄՆ-ի ազգային հիմնը:**

1814թ. դեկտեմբերին Գենտ քաղաքում (Ֆլանդրիա) ստորագրվում է հաշտության պայմանագիր, որը վերջ է դնում անգլո-ամերիկյան երկրորդ պատերազմին: Խաղաղությունը վերականգնվեց status quo bellum (լատին.՝ դրություն, որը գոյություն ունի մինչև պատերազմը) պայմաններով: Անհրաժեշտ է նշել, որ 1812-1815թթ. անգլո-ամերիկյան պատերազմը անկախության համար պատերազմի շարունակությունն էր և դրա ավարտը, որն ամրապնդեց հյուսիսամերիկյան նախկին գաղութների նվաճած անկախությունը: Բացի այդ, պատերազմից հետո, կորցնելով անգլիացիների աջակցությունը, հնդկացիները այլևս հնարավորություն չունեին հարձակվելու ամերիկյան բնակավայրերի վրա և ստիպված էին հետզհետե ԱՄՆ-ի կառավարությանը զիջել իրենց տարածքները (Օհայո, Ալաբամա):

Պատերազմից հետո երկրում գրանցվում է զգալի տնտեսական աճ: Նախագահ Ջ. Մեդիսոնի, ինչպես նաև նրա կուսակցության, հեղինակությունն անչափ բարձրանում են: Մոտենում էին հերթական նախագահական ընտրությունները: Ոչ ոք չէր կասկածում, որ նոր նախագահը կլինի հանրապետական-դեմոկրատական կուսակցությունից: Այդպես էլ եղավ. Հաղթեց Ջեյմս Մոնրոն՝ անկախության համար պատերազմի մասնակիցը, Վիրջինիայի նախկին նահանգապետը, ԱՄՆ փորձառու քաղաքական գործիչներից մեկը, որը Մեդիսոնի վարչակազմում զբաղեցնում էր ռազմական նախարարի պաշտոնը: Միակ “խոչընդոտն” այն էր, որ Մոնրոն, ինչպես Վաշինգտոնը, Ջեֆֆերսոնը և Մեդիսոնը, Վիրջինիայից էր, ինչը շատերի մոտ սկսում էր արդեն դժգոհություն առաջացնել: Այնուամենայնիվ, Ընտրիչների ճնշող մեծնամասնությունը իրենց ձայները տվեցին Մոնրոյին:

**ԱՄՆ Մոնրոյի նախագահության տարիներին: Տնտեսական
զարգացումը: Ֆլորիդայի ձեռքբերումը**

1812-1815թթ. պատերազմից հետո ԱՄՆ տնտեսությունը բուռն զարգացում է ապրում: Այն շարունակվեց նաև (բացառությամբ 1819թ.) Մոնրոյի նախագահության տարիներին: 1816թ. երկրում արդեն կային ~100.000 գործարանային բանվորներ, որոնք տարեկան 41 մլն. դոլարի արտադրանք էին տալիս: Կապիտալի ներդրումը շաքարի, մանածագործության և արդյունաբերության մյուս ճյուղերի մեջ կազմեց մոտ 100 մլն. դոլար: Առավել արագ էր զարգանում բամբակի արտադրությունը: 1820թ. բամբակը դառնում է հիմնական ապրանքը ամերիկյան ամբողջ արտահանման մեջ, իսկ 1830թ. ԱՄՆ բամբակի արտադրության ծավալով դառնում է աշխարհում երկրորդ երկիրը: Մեծ առաջադիմություն էր նկատվում երկաթուղագծերի և ջրանցքների շինարարության ասպարեզում, ինչը դրական նշանակություն ունեցավ երկրի արդյունաբերական զարգացման, առաջին հերթին, մետալուրգիայի համար: 1820թ. ԱՄՆ Կոնգրեսը պետական վաճառվող հողատարածքների մակերեսի կրճատման մասին որոշում է ընդունում (320 ակրից մինչև 80 ակր; 1 ակր՝ 4047 ք.մ.), նպատակ ունենալով հեշտացնել դրա մշակումը մի ընտանիքի ուժերով: Միաժամանակ իջեցվեց վաճառքի մինիմալ գինը 2 դոլարից մինչև 1.25, ինչը թույլ տվեց անհատ ֆերմերի ընտանիքին ընդամենը 100 դոլարով ձեռք բերել 80 ակր (32 հեկտար) մակերես ունեցող հողատարածք: 1820-ից մինչև 1830թ. պետությունը ֆերմերներին վաճառեց տարեկան մոտ 1 մլն. ակր հողատարածքներ:

Իր երդմնակալության ճառում Մոնրոն հայտարարեց, որ երկիրը, վերջապես, ազատվեց քաղաքական տրոհման “անեծքից”: Նախագահը նկատի ուներ այն հանգամանքը, որ ֆեդերալիստները, նույնիսկ հյուսիսային նահանգներում, կորցրել էին իրենց հեղինակությունը, ինչպես նաև կոշտ քաղաքական պայքար վարելու ունակությունը: Բացի այդ, ինչպես նշվեց, հանրապետական-դեմոկրատները, սկսած Ջեֆֆերսոնից, կենսագործեցին ֆեդերալիստներից վերցրած մի քանի սկզբունքային գաղափարներ: Օրինակ, հանրապետականների կողմից մշակված ԱՄՆ-ի ագրարային ճանապարհով զարգացման ծրագիրը փոխարինվեց ֆինանսա-արդյունաբերական զարգացման ծրագրով, որը մշակել էին ֆեդերալիստները: Ֆեդերալիստները մեղադրում էին հանրապետականներին “գողության” մեջ, սակայն վերջիններս պարզապես գործեցին իբրև պրագմատիկ, այլ ոչ թե դոգմատիկ հայացքներ ունեցող կուսակցություն:

Մոնրոյի նախագահության տարիներին ԱՄՆ-ին է անցնում Ֆլորիդան: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ 1817թ.

դեկտեմբերին գեներալ Է. Ջեքսոնը ռազմական գործողություններ սկսեց հնդկացիների (սեմինոլների) դեմ Ֆլորիդայում, որի արդյունքում Ֆլորիդայից հեռացավ իսպանացի նահանգապետը, իսկ 1819թ. Ադամս-Օնիսի (Adams-Onis Treaty) պայմանագրի համաձայն Ֆլորիդան փոխանցվեց ԱՄՆ-ին: Իսպանա-ամերիկյան հարաբերություններում գոյություն ունեւր ևս մեկ կարևոր հարց, կապված Հարավային և Կենտրոնական Ամերիկայում իսպանական նախկին գաղութների հետ, որոնք պայքարում էին իրենց անկախության համար: ԱՄՆ աջակցում էր նախկին իսպանական գաղութներին և Բրազիլիային (այն Պորտուգալիայի նախկին գաղութն էր), ինչը դժգոհություն էր առաջացնում թե Իսպանիայում, և թե մյուս միապետություններում (Ռուսաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Պրուսիա): Նրանք ստեղծում են, այսպես կոչված, “Սրբազան միությունը” 1815թ-ին., որն ԱՄՆ ընդունեց որպես սպառնալիք ողջ մայրցամաքի անկախության համար: Մեծ Բրիտանիան պաշտպանեց ԱՄՆ դիրքորոշումը: 1822-1826թթ. ընթացքում ԱՄՆ ճանաչում է Կոլումբիայի, Մեկսիկայի, Չիլիի, Արգենտինայի, Բրազիլիայի, Պերուի և Կենտրոնական Ամերիկայի հանրապետությունների Դաշնության անկախությունը և նրանց հետ հաստատում դիվանագիտական հարաբերություններ:

Միասուրիի փոխգիջումը

1820թ. կայացած նախագահական ընտրություններում Մոնրոն տանում է փայլուն հաղթանակ (232 Ընտրիչներից միայն մեկը դեմ քվեարկեց):

Տնտեսական վիճակը կայուն էր, միայն 1819թ-ին ստեղծվում է ճգնաժամային վիճակ, որից ԱՄՆ կարողանում է արագ դուրս գալ կառավարության ճիշտ տնտեսական քաղաքականության շնորհիվ: Ներքին քաղաքական վիճակը նույնպես կարելի է բնութագրել որպես կայուն, սակայն արդեն զգացվում էր Հարավի և Հյուսիսի միջև պառակտման սկիզբը: Բամբակի, ինչպես նաև, շաքարի և ծխախոտի պլանտացիաների ընդլայնումը դեպի արևմուտք նշանակում էր նաև ստրկատիրության գոտու ընդլայնում, քանի որ պլանտացիաներում փաստորեն միակ աշխատող ուժը, սևամորթ ստրուկներն էին: Ստրկատիրությունը, իսկ դրա հետ միասին նաև հարավային նահանգների ստրկատերերը դառնում էին լուրջ տնտեսական և քաղաքական ուժ, որոնց շահերը և նպատակները չէին կարող համընկնել բուրժուական Հյուսիսի շահերի հետ:

Կոնգրեսը ընդունում է մի շարք օրենքներ ուղղված ստրկավաճառության դեմ, բայց այդ օրենքները չէին նշանակում ստրկատիրության վերացում կամ նրա արգելում համազգային

մասշտաբով: Պարադոքսը կայանում էր նրանում, որ տնտեսական առումով ստրկատիրությունը աստիճանաբար դառնում էր ավելի շահավետ և ստացվում էր, որ այն (ստրկատիրությունը), ինչ որ առաջ համարվում էր “անհրաժեշտ չարիք”, դառնում է այնքան անհրաժեշտ, որ դադարում է չարիք լինելուց:

Հյուսիսի և Հարավի միջև եղած տարածայնություններն իրենց տրամաբանական շարունակությունն ունեցան, այսպես կոչված, “Միսսուրիի փոխզիջման մեջ”: Բանն այն էր, որ 1819թ. վերջին Միության մեջ մտնում էին 22 նահանգ (11-ը՝ ազատ, 11-ը՝ ստրկատիրական): Այդ ժամանակ հարց է բարձրացվում Միության մեջ ևս երկու նահանգների (Միսսուրի և Մեն) ընդունման մասին: Մենը պետք է ընդունվեր ազատ նահանգի կարգավիճակով, իսկ Միսսուրիի համար պայքար ծավալվեց, որովհետև նրա տարածքում մոտ 10.000 ստրուկ կար և այն պետք է որպես ստրկատիրական նահանգ մտներ Միության մեջ, սակայն հակաստրկատիրական ուժերը փորձեցին արգելել ստրուկների ներմուծումը Միսսուրի և այնտեղ ծնված բոլոր ստրուկներին ազատ համարել, ինչը հարավային նահանգների ներկայացուցիչները համարեցին ընդունված հավասարակշռությունը խախտելու փորձ: Արդյունքում որոշում ընդունվեց Մերիլենդի և Պենսիլվանիայի միջև ընկած 375 կմ. գիծը համարել հյուսիսային և հարավային նահանգների միջև պայմանական սահման: Նույնպես աշխարհագրական լայնությամբ՝ 36 աստ. և 30՝ անցկացվեց պայմանական սահմանազատման գիծ՝ դրանից հյուսիս կարող էին ստեղծվել միայն ազատ նահանգներ: Մենն ընդունվեց որպես ազատ նահանգ, իսկ Միսսուրին՝ ստրկատիրական: Այսպիսով հավասարակշռությունը չխախտվեց, սակայն “Միսսուրիի փոխզիջումը” նախադրյալներ ստեղծեց ապագա քաղաքացիական պատերազմի համար:

Մոնրոյի դոկտրինան


Ինչպես վերևում նշվեց, 1815թ-ին Եվրոպայում, ֆեոդալական, միապետական երկրներն իրենց շահերը և քաղաքական կառուցվածքը պաշտպանելու համար ստեղծեցին Սրբազան միություն, որի օգնությամբ Իսպանիան փորձ էր անում փրկել իր փլուզվող կայսրությունը: ԱՄՆ-ում համարում էին, որ Սրբազան միության կողմից ներխուժման վտանգը ամերիկյան մայրցամաք մեծ է, ուստի **1823թ. դեկտեմբերին** նախագահ Մոնրոն ուղերձով ելույթ ունեցավ Կոնգրեսում, որը հետագայում պատմության մեջ մտավ **Մոնրոյի դոկտրինա** անվանումով: Այն ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ ունեցավ շատ մեծ նշանակություն: Մոնրոն փորձեց կարգավորել հարաբերությունները Եվրոպական միապետությունների և հարավամերիկյան երկրների հետ: Ուղերձում

հստակ ասվում էր, որ ԱՄՆ թույլ չի տա ամերիկյան մայրցամաքում ստեղծել նոր գաղութներ և տարածել այստեղ եվրոպական քաղաքական համակարգերի սկզբունքները (այսինքն, միապետական կարգերը): Պահանջելով եվրոպական պետություններից չմիջամտել ամերիկյան մայրցամաքի զարգացման գործընթացներին, Մոնրոն երաշխավորում էր դեմոկրատական Ամերիկայի չմիջամտելը միապետական եվրոպայի գործերին: Մի խոսքով առաջարկվում էր փոխզիջում՝ Ամերիկյան ամերիկացիների, եվրոպան՝ եվրոպացիների համար:

1824թ-ին նախագահական ընտրությունների արդյունքում հաղթող է ճանաչվում Ջոն Բլինսփ Ադամսը ԱՄՆ-ի երկրորդ նախագահ Ջոն Ադամսի որդին: Մոնրոյի վարչակազմում նա զբաղեցնում էր պետ. քարտուղարի պաշտոնը: Սրանով ավարտվում է երեք նախագահների “Վիրջինյան դինաստիան” (Ջեֆֆերսոն, Մեդիսոն, Մոնրո), որը ղեկավարեց երկիրը 24 տարի անընդմեջ:

Թեմա 1.6. ԱՄՆ բախումների տարիներին (1825-1841)

ԱՄՆ Նախագահները



Ջոն Քուինսի Ադամս (1767-1848), ԱՄՆ 6-րդ նախագահը (1825-1829)



Հենրյու Ջեքսոն (1767-1845), ԱՄՆ 7-րդ նախագահը (1829-1837)



Մարտին Վան Բյուրեն (1782-1862), ԱՄՆ 8-րդ նախագահը (1837-1841)

Ջոն Քուինսի Ադամսի նախագահությունը (1825-1829): Վիզերը և Դեմոկրատական կուսակցության ստեղծումը

Ադամսը համարվում է “Մոնրոյի դոկտրինի” հեղինակներից մեկը, նրա ջանքերով ստորագրվեց իսպանա-ամերիկյան պայմանագիրը, որով Ֆլորիդան անցավ ԱՄՆ-ին: Նրա նախագահության տարիներին շարունակվեց երկրի դինամիկ զարգացումը: Երկրի սահմանները սարածվում էին Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոսը, իսկ բնակչության թիվը հասել էր 12 մլն.-ի:

Մյուս կողմից, Ադամսին չհաջողվեց կատարել մի քանի կարևոր խոստումներ, որ նա տվել էր նախընտրական շրջանում: Առաջին հերթին դա վերաբերվում էր համազգային հաղորդակցությունների շինարարությանը: Խոսքը երկաթուղագծերի և արհեստական ջրանցքների շինարարության մասին էր: Դրանք մեծ նշանակություն ունեին երկրի համար, որի տարածքն զգալի չափով մեծացել էր: Միջազգային հարաբերություններում Ադամսը նույնպես չհասավ որևիցե

հաջողության: Այսպես, անհաջողությամբ ավարտվեց Մեքսիկայից Տեխասը ձեռք բերելու նրա փորձը: Չհաջողվեց նրան նաև ընդլայնել ԱՄՆ առևտրա-տնտեսական կապերն անգլիական Վեսթ-Ինդիայի հետ: Պետք է նշել նաև, որ վարչակազմի ներսում չկար միասնություն, որի պատճառներից մեկը, շատերի կարծիքով, նախագահի անձնական հատկություններն էին, որոնց համար նրան համարում էին “սառը պճնամուկ”(սնոր):

1828թ. տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Դրանց արդյունքները կանխորոշվել էին նաև ընտրական համակարգի մեջ տեղի ունեցած փոփոխություններով: Այսպես, մի շարք նահանգներում վերացվեցին հարկային և գույքային ցենզը, ինչպես նաև ընտրություններին մասնակցելու իրավունքի հետ կապված բոլոր կրոնական սահմանափակումները: 1815թ-ից հետո Միության մեջ ընդգրկված բոլոր նահանգները կամ ձայնի իրավունք էին երաշխավորում արական սեռի բոլոր սպիտակամորթ քաղաքացիներին, կամ հաստատում էին ցածր հարկային ցենզ, ինչն զգալի չափով ավելացրեց ընտրություններում մասնակցող քաղաքացիների թիվը: Այդ փոփոխություններից հետո զգալի չափով ավելանում է շարքային սպիտակամորթ ընտրողների դերը, այդ թվում նաև ներգաղթողների, որոնք մինչ այդ զրկված էին ձայնի իրավունքից: Բացի այդ, եթե մինչև 1824թ. Ընտրիչների Կոլեգիայի անդամներին ընտրում էին նահանգների օրենսդիր մարմինները, ապա 1828թ-ից նրանց ընտրում էին արդեն նահանգների շարքային քաղաքացիները: Մեծ փոփոխություններ տեղի ունեցան նաև երկրի քաղաքական դաշտում: Ֆեդերալիստական կուսակցությունը, փաստորեն, վերացավ 1812-1815թթ. անգլո-ամերիկյան պատերազմից հետո, և ամերիկյան քաղաքական դաշտում հաստատվեցին ջեֆֆերսոնյան հանրապետական-դեմոկրատները: Սակայն շուտով կուսակցությունը տրոհվում է երկու ֆրակցիաների, որոնք աստիճանաբար ձևավորվում են որպես երկու առանձին կուսակցություններ: Առաջին խոշոր ֆրակցիան, որը գլխավորեցին նախագահ Ադամսը և փոխնախագահ Հենրի Կլեյը, անվանվեց “Ազգային դեմոկրատներ” կամ “**Վիգեր**”, իսկ նրանց ընդդիմախոսները, որոնք “վիգերին” համարում էին գաղափարական “վերասերվածներ”, երդվեցին, որ կվերականգնեն ջեֆֆերսոնյան իդեալները և իրենց կոչեցին “**Դեմոկրատական կուսակցություն**”: Այդ կուսակցության ստեղծողը և առաջնորդը համարվում է Էնդրյու Ջեքսոնը:

ԱՄՆ Էնդրյու Ջեքսոնի նախագահության տարիներին (1829-1837):
Դեմոկրատների և վիզերի գաղափարական հայացքները երկրի
հետագա սոցիալ-տնտեսական զարգացման հարցի վերաբերյալ

1828թ. նախագահական ընտրությունների արդյունքում Ջեքսոնը համոզիչ հաղթանակ է տանում և դառնում ԱՄՆ 7-րդ նախագահը: Նրա և հաջորդող նախագահների օրոք իրականացվեցին բազմաթիվ բարեփոխումներ, որոնք նպաստեցին ամերիկյան հասարակության հետագա ժողովրդավարացմանը: Այդ շրջանը (19-րդ դ. երկրորդ քառորդը) ամերիկացի պատմաբաններն անվանում են **“ջեքսոնյան դեմոկրատիայի ժամանակաշրջան”**: Ջեքսոնը ԱՄՆ առաջին քաղաքական գործիչն է, որին կարելի է անվանել ժողովրդական նախագահ: Ի տարբերություն իր նախորդների, որոնք բոլորն էլ ամերիկյան հասարակության վերնախավից էին, նա ծնվել էր աղքատ ընտանիքում, վաղ տարիքում որբացել և դեպի վերև տանող ճանապարհով անցել էր հույսը դնելով միայն սեփական ուժերի վրա: Ջեքսոնը, իր անցած կյանքի ուղիով և քաղաքական գործունեությամբ, փաստորեն, մարմնավորեց “ինքն իրեն կերտած մարդ” (selfmade man) արտահայտությունը: 29 տարեկան հասակում Ջեքսոնն ընտրվում է ԱՄՆ-ի Կոնգրեսի վերին պալատում, բացի այդ, նույն ժամանակ, նա Թեննեսի նահանգի Գերագույն դատարանի անդամ էր և Ֆլորիդայի ռազմական նահանգապետը: 1812-1815թթ. պատերազմի ժամանակ նա ոչ միայն ամենափայլուն հաղթանակը տարավ անգլիացիների նկատմամբ (1815թ. հունվարին Նյու-Օռլեանի մոտ), այլև ջախջախեց հնդկացիների բազմաթիվ ցեղեր, խլելով նրանցից այսօրվա Ալաբամայի և Ջորջիայի զգալի մասը: Նրա ջանքերի շնորհիվ նվաճվեց նաև Ֆլորիդան: “Հնդկացիական տարածքները պետք է բնակեցվեն ամերիկացիների կողմից”: Ջեքսոնի այս գաղափարը և նրա վարած զավթողական քաղաքականությունը հնդկացիների նկատմամբ ջերմ աջակցություն էր ստանում միլիոնավոր ամերիկացիների կողմից: Ջեքսոնի մյուս քաղաքական գիծը, որը բարձրացնում էր նրա ժողովրդականությունը՝ քաղաքական արտահայտման հաստատուն դեմոկրատականությունն էր: Ջեքսոնը և նրա համախոհները աստիճանաբար առաջնորդի դիրք ձեռք բերեցին ամերիկյան քաղաքական դաշտում: Դեմոկրատական կուսակցությունը քսան տարիների ընթացքում, սկսած 1828թ-ից, չորս անգամ հաղթեց նախագահական ընտրություններում: Այսինքն, կարելի է ասել, որ ժամանակակիցների աչքում երկու կուսակցությունների միջև գոյություն ունեին լուրջ և սկզբունքային տարածայնություններ: Սակայն ամերիկյան պատմաբաններից շատերը համարում են, որ այդ տարածայնությունները այնքան էլ լուրջ չէին: Փորձենք պարզաբանել, թե ինչու էր կայանում երկու կուսակցությունների տարբերությունն ու

նմանությունը: Թե “Վիզերը” և թե դեմոկրատները կասկածի տակ չէին դնում մասնավոր սեփականությունը, հանրապետական համակարգը և ֆեդերալիզմը, ինչպես նաև իշխանությունների տարանջատումը: Երկուսն էլ ընդունում էին, որ նրանց միջև մրցակցությունը պետք է տեղի ունենա միայն երկրի Սահմանադրության շրջանակներում, արգելվում էր քննարկել ստրկատիրության հետ կապված թեմաները: Սակայն կուսակցությունները տարբեր մոտեցում ունեին այն հիմնահարցին, թե տնտեսական բարիքները և քաղաքական իրավունքները ինչպես պետք է բաշխվեն սպիտակամորթ բնակչության տարբեր շերտերի միջև:

Դեմոկրատական կուսակցության հայացքների սոցիալ-տնտեսական կորիզը կազմում էին հնարավորությունների հավասարության և հակամոնոպոլիզմի գաղափարները: Ջեքսոնը դեմ էր արմատական հավասարեցմանը, մարդկանց միջև եղած բնական տարբերությունների վերացմանը: Միևնույն ժամանակ, նա դեմ էր արհեստական տարբերությունների արմատացմանը, ինչը, ըստ Ջեքսոնի, ոչ պակաս կործանարար է, քան արհեստական հավասարեցումը: “Տվեք հավասար հնարավորություններ բոլորին, և արդյունքում ամեն մեկը կիրացնի իր հնարավորությունները, իսկ հասարակությունը կծաղկի: Ֆերմերները և բանվորները չեն կարող արհեստական ձևով դառնալ կապիտալիստներ, սակայն նրանք էլ պետք է ունենան հավասար հնարավորություններ հարստություն կուտակելու համար և օգտվեն իրենց աշխատանքի արդյունքներից:” - ասում էր նա: Ջեքսոնականներն արհեստական արտոնության ամենավառ օրինակն էին համարում ԱՄՆ կառավարության կողմից Ազգային բանկին տրված խարտիան: Ազգային բանկի մենաշնորհը ֆինանսավարկային ոլորտում գրկում էր հավասար իրավունքներից և մրցակցային հնարավորություններից ինչպես այլ բանկերին, այնպես էլ ամերիկյան բոլոր արտադրողներին և սպառողներին: Դեմոկրատական կուսակցությունը համարում էր, որ պետության և բիզնեսի միջև յուրաքանչյուր դաշինքի (այլանս) պարագայում վտանգ կա որ արհեստական արտոնություններ կարող են ստեղծվել: Այդ պատճառով պետությունը չպետք է միջամտի տնտեսությանն ու մրցակցությանը: Քանդելով “ֆինանսական արխտոկրատիայի” արհեստական արտոնությունները, պետությունը, միևնույն ժամանակ, հնարավորին չափ պետք է օգնի հասարակ ամերիկացիներին օրինական ձևով մտնելու սեփականատերերի շարքը: Ինչպես և Ջեֆֆերսոնի ժամանակ, հիմնական շեշտը դրվում էր արևմտյան հողերի յուրացման վրա: Ջեքսոնականները պահանջում էին, որպեսզի վաճառվող հողատարածքների չափերը և գները կրճատվեն:

Ինչպես տեսնում ենք Դեմոկրատական կուսակցությանը բնորոշ էր ագրարային շեշտադրումը, ինչը բացատրվում էր սոցիալական նպատակներով՝ որպես անկախ միջին և մանր սեփականատերերի

պահպանման և բազմացման միջոց նրանք ավելի շատ հնարավորություններ էին տեսնում գյուղատնտեսության մեջ:

Վիզերի գաղափարախոսությունը շատ դեպքերում հնչում էր, որպես Դեմոկրատական կուսակցության գաղափարախոսության հակադրություն: Այսպես, օրինակ, բանկերը, արդյունաբերությունը և առևտուրը հայտարարվում էին ամերիկյան ծաղկման հիմքը: Այդ պատճառով պետությունը պետք է անի ամեն ինչ նրանց զարգացման համար: Պետական տնտեսական քաղաքականության մեջ պետք է մտնի պրոտեկցիոնիզմը, որպես սեփական արդյունաբերության պաշտպանության միջոց, Ազգային բանկի աջակցությունը, որը ֆինանսավարկային կայունության երաշխավորն է: Սեփականության անհավասարությունը նրանք բացատրում էին, որպես տնտեսական մրցակցության բնական արդյունք: Լուրջ էին տարածայնությունները վիզերի և դեմոկրատների միջև նաև քաղաքական հարցերում: Դեմոկրատները կողմ էին իշխանությունը սեփականությունից տարանջատմանը, ինչպես նաև ժողովրդի լայն զանգվածների մասնակցությանը քաղաքական կառավարման մեջ: Վիզերը, ընդհակառակը, կողմնակից էին, այսպես կոչված, “էլիտար հանրապետականությանը” և ժողովրդական սուվերենիտետի սահմանափակմանը: Նրանցից շատերը դեմ էին գույքի ցենզի վերացմանը: Այսպիսով, համեմատելով երկու կուսակցությունների տարածայնությունները, կարելի է ասել, որ շատ հարցերում դրանք լուրջ էին և սկզբունքային:

Նախագահ Ջեքսոնի բարեփոխումները

Դեմոկրատական բարեփոխումները հռչակվեցին որպես Ջեքսոնի նախագահության հիմնական նպատակը: Շուտով պարզ դարձավ, որ նոր նախագահն իր նպատակին հասնելու համար օգտագործելու է տարբեր միջոցներ: Հանդիպելով ընդդիմության կոշտ դիմադրությանը, նա անցում է կատարում ղեկավարման ավտորիտար ձևի: Այսինքն, դեմոկրատական նպատակներին հասնելու համար Ջեքսոնն օգտագործում էր ոչ դեմոկրատական միջոցներ: Իզոլը չէ, որ ընդդիմախոսներն անվանում էին նրան “թագավոր Էնդրյու”: Ամենից ավելի Ջեքսոնին դիմադրում էր Կոնգրեսի վերին պալատը՝ Սենատը: Ջեքսոնն իր կողմից, արդարացնելով նախագահական իշխանության ուժեղացումը, ասում էր, որ նախագահն ընտրվում է ժողովրդի, իսկ Սենատը նահանգների օրենսդիր ժողովների կողմից, և, այդ պատճառով, միայն նախագահը կարող է լիովին ներկայացնել ժողովրդական ինքնիշխանությունը: Ղեկավարման ավտորիտար ձևը Ջեքսոնն օգտագործում էր նաև իր վարչակազմի նկատմամբ: Նախարարները, փաստորեն, ունեին միայն

խորհուրդ տալու իրավունք, իսկ որոշումներն ընդունում էր անձամբ նախագահը: Ջեքսոնի նախագահության տարիների ընթացքում չորս անգամ փոխվեցին պետ. քարտուղարները, հինգ անգամ՝ ֆինանսների նախարարները: Բացի այդ, Ջեքսոնը ձևավորեց, այսպես կոչված, “խոհանոցային կաբինետ”, որը կազմված էր ամենավստահելի անձերից: Շուտով, հենց “խոհանոցային կաբինետն” է սկսում հիմնական դերը խաղալ նախագահի քաղաքականության մշակման գործում: Այդ կաբինետում մեծ դեր էր խաղում Ֆ. Բլերը, որին հանձնարարված էր հրատարակել նախագահամետ “Գլուր” թերթը: Այդ և կառավարության համակիր այլ թերթերի միջոցով Ջեքսոնը հնարավորություն էր ստանում իր քաղաքականության նպատակները հասցնել ժողովրդի լայն զանգվածներին:

Ամրապնդելով իր իշխանությունը, Ջեքսոնը ձեռնարկում է Դեմոկրատական կուսակցությանը խոստացած բարեփոխումների իրականացումը: Բարեփոխումներից ամենահայտնին և արմատականը Ազգային բանկի վերացումն էր: Նախագահի և բանկի կողմնակիցների միջև պայքարն սկիզբ է առնում 1832թ. ամռանը, երբ Կոնգրեսում բանկի մենաշնորհի երկարացման հարց է դրվում: Բանկի կողմնակիցներն առավելություն են ստանում թե վերին, և թե ստորին պալատներում: Ջեքսոնի արձագանքը Կոնգրեսի որոշմանը շատ կոշտ էր՝ “Բանկը մտադիր է սպանել ինձ, բայց ես կսպանեմ նրան”: Այդ որոշման վրա դրվեց նախագահական վետո, որը Կոնգրեսին հաղթահարել չհաջողվեց: Ջեքսոնը և նրա համախոհներն ապացուցում էին, որ ֆինանսական մենաշնորհը (Ազգային բանկը) թույլ չի տալիս միլիոնավոր ամերիկացիների՝ բանվորներ, ֆերմերներ բացել իրենց սեփական գործը: Ելքը ֆինանսական մենաշնորհի վերացումն էր, պետական ներդրումների ապակենտրոնացումը բազմաթիվ բանկերի միջև, ինչպես նաև ֆինանսական ակտիվության տեղափոխումը կենտրոնից (Վաշինգտոնից) դեպի նահանգներ: 1833թ. վերջին Ջեքսոնը ֆինանսների նախարարին կարգադրեց Ազգային բանկից հանել կառավարությանը պատկանող ներդրումները և փոխանցել նահանգային բանկերին, ինչը, փաստորեն, նշանակում էր, Ազգային բանկի սնանկացում: Իհարկե, այդ բարեփոխումը ուներ և բացասական կողմեր (բարձր սղաճ), սակայն դրական արդյունքները, առաջին հերթին, սոցիալ-տնտեսական ոլորտում, ակնհայտ էին: Երկրում կտրուկ ավելացավ ժողովրդի տարբեր շերտերի ֆինանսական և ձեռնարկատիրական ակտիվությունը: 1829թ-ից մինչև 1837թ. բանկերի թիվն ԱՄՆ-ում 329-ից հասավ 788-ի, իսկ փոխառության ծավալը՝ 137 մլն. դոլարից մինչև 525 մլն.-ը, ինչը թույլ տվեց տասնյակ հազարավոր ամերիկացիների արևմուտքում ձեռք բերել հողատարածքներ: Այսպես, 1832թ-ից մինչև 1836թ. հողերի վաճառքն

ավելացավ ավելի քան ութ անգամ: Արդյունքում, Ֆերմերային տնտեսություններն ընդլայնվեցին դեպի արևմուտք:

Մեծ թվով բանվորական կուսակցությունները, որոնք առաջացան 20-30-ական թթ-ին, աջակցում էին Դեմոկրատական կուսակցությանը ու նրա բոլոր բարեփոխումներին, չնայած, որ Ջեքսոնը դեմ էր գործադուլների, փորձում էր հավասարության նշան դնել աշխատանքի և ապրանքների շուկաների միջև, ինչը, կարծես, թե պետք է վատացներ նախագահի հարաբերությունները բանվորների հետ: Սակայն դա տեղի չունեցավ: Հիմնական պատճառն այն էր, որ այդ ժամանակվա բանվորները երազում էին դրամ կուտակել և գնելով արևմուտքում փոքր հողատարածք դառնալով ֆերմեր կամ մանր սեփականատեր: Հենց դա էր այսպես, կոչված, “ամերիկյան երազանքը”, և, եթե, նույնիսկ, չէր հաջողվում հասնել նպատակին, այն, էստաֆետայի նման, փոխանցվում էր երեխաներին և թոռներին: Ջեքսոնի քաղաքականությունը, լիովին համապատասխանում էր նրանց ցանկությանը և երազանքին:

Ջեքսոնը և նրա կողմնակիցները դեմ էին ոչ միայն ֆինանսատնտեսական, այլև քաղաքական մենաշնորհներին: Քաղաքական մենաշնորհներից ամենավտանգավորն էին համարվում, այսպես կոչված, կուսակցական “կոկուսները” այս կամ այն կուսակցության առաջնորդների նեղ միավորումները, որոնք իրենց իրավունք էին վերապահում առաջադրել նախագահի թեկնածություններ: Դեմոկրատներն առաջ են քաշում ազգային կուսակցական կոնվենտների ստեղծման գաղափարը, որտեղ պետք է հավաքվեին բոլոր նահանգներից ընտրված պատգամավորները և ազատ քննարկման արդյունքում առաջադրեին իրենց թեկնածուին: Շուտով կոնվենտի անցկացման գաղափարը ընդունում են նաև վիզերը:

Ինչ վերաբերվում է սևամորթների նկատմամբ Դեմոկրատական կուսակցության քաղաքականությանը, ապա հենց այդ հարցում տարածայնությունները դեմոկրատների և վիզերի միջև նվազագույն էին: Ինչպես գրել էր ամերիկացի պատմաբաններից մեկը “Իրականում, բոլոր սպիտակամորթ ամերիկացիները ջեքսոնյան ժամանակաշրջանում ռասիստներ էին”: Այս պրոբլեմը միջկուսակցական չէր, այլ քաղաքական-աշխարհագրական՝ Հյուսիսի և Հարավի միջև: Ամբողջ ջեքսոնյան ժամանակաշրջանի ընթացքում ստրկության հարցում Հարավի և Հյուսիսի միջև հաջողվեց ունենալ փոխզիջում, բայց այս իրավիճակը պահպանելը հետզհետե դժվարանում էր: Այսպես, “Միսսուրիի փոխզիջումից” տասը տարի անց հյուսիս-արևելյան նահանգներում ստեղծվում են արմատական **աբոլիցիոնիստական** կազմակերպություններ, որոնք պահանջում էին ստրկության անհապաղ վերացումը: Նրանց ազդեցությունը հասարակության վրա այնքան մեծացավ, որ Կոնգրեսը 1836թ. ստիպված եղավ ընդունել, այսպես

կոչված, “խցանի (կամ բերանը փակելու) սկզբունքը” (gag rule), որով հակաստրկատիրական բոլոր հանրագրերը (պետիցիաները), մուտքագրվում և գրանցվում էին Կոնգրեսում, բայց առանց քննարկումի դրվում էին “մահուդի տակ”: Այդ արգելքը պահպանվեց մինչև 1844թ:

Ամփոփելով, նշենք, որ ջեքսոնական դեմոկրատիան, իր բոլոր սահմանափակումներով և թերություններով հանդերձ, պատմական նշանակություն ունեցավ ԱՄՆ սպիտակամորթ քաղաքացիների հասարակական կյանքում լիբերալ-դեմոկրատական սկզբունքների ամրապնդման և զարգացման մեջ:

Ջեքսոնը և “Հնդկացիական քաղաքականությունը”

Չնայած որ Ջեքսոնը “հնդկացիական քաղաքականությունը” համարում էր յուրաքանչյուր նահանգի ներքին գործ, այնուամենայնիվ, նա կոչ էր անում Ազգային Կոնգրեսին հնդկացիների տեղափոխման համար չխնայել դրամական միջոցներ: Հնդկացիների ընդհանուր թիվն այդ ժամանակ կազմում էր մոտ 125.000, իսկ նրանցից մոտ 60.000-ը զբաղեցնում էին մի քանի մլն. սկր հողատարածք: 1830թ. ընդունվում է “հնդկացիների տեղափոխման մասին օրենքը” (Indian Removal Act): Ջեքսոնի նախագահության օրոք հնդկացիներից “գնվեց” մոտ 68 մլն. սկր (40 մլն. հեկտար) հողատարածք: Ընդհանուր գումարը կազմեց մոտ 68 մլն. դոլար: Հնդկացիների տեղափոխումը շատ դեպքերում ուղեկցվում էր լուրջ բախումներով, որոնց մասնակցում էր նաև ամերիկյան բանակը: Համառ դիմադրություն ցույց տվեցին Չերոկի ցեղը Ջորջիա նահանգում և Սեմինոլները Ֆլորիդայում, սակայն, ի վերջո, նրանք էլ ստիպված եղան տեղափոխվել հատուկ իրենց համար հատկացված ռեզերվացիաներ:

Իրադարձությունները Տեխասում և ԱՄՆ

Տեխասի յուրացումն ամերիկացիների կողմից սկսվել է դեռ 1821թ., երբ Նոր Իսպանիայի նահանգապետը (շուտով այն դառնում է անկախ պետություն Մեքսիկա անվանումով) ամերիկացի ձեռներեց Մ. Օստինին և 300 ամերիկյան ընտանիքների թույլ է տալիս տեղափոխվել Տեխաս: 1825թ. մարտին Տեխասը հայտարարվում է գաղութացման համար բաց տարածք: Զ. Ք. Ադամսի և Է. Ջեքսոնի վարչակազմերը փորձում էին գնել Տեխասը, սակայն Մեքսիկայի հաճախ փոփոխվող հեղափոխական կառավարությունները ոչ միայն հրաժարվում էին այն վաճառել, այլև փորձ էին անում սահմանափակել տարածքի հետագա գաղութացումը ամերիկացիների կողմից, ինչպես նաև արգելում էին նոր ստրուկների ներմուծումը: Հարաբերությունները Մեքսիկայի կառավարության և ամերիկյան նորաբնակների միջև այնքան սրվեց, որ նրանց միջև զինված

բախումը դարձավ անխուսափելի: 1835թ. Տեխասի գաղութաբնակներն օգնություն են խնդրում Վաշինգտոնից, իսկ 1836թ. մարտին հրապարակում են անկախության Հռչակագիր, որը, փաստորեն, ամերիկյան Հռչակագրի կրկնությունն էր: Նրանք կազմավորում են առանձին կառավարություն Ս. Հյուստոնի գլխավորությամբ և ձևավորում իրենց բանակը: Ամերիկացիներին հաջողվում է նույն թվականի ապրիլին պարտության մատնել Մեքսիկայի ռազմական ուժերին և նույնիսկ գերի վերցնել նրանց հրամանատար գեներալ Անտոնիո դե Սանտա-Անային: 1836թ. հոկտեմբերին հռչակվում է Տեխասի անկախ Հանրապետությունը, իսկ Հյուստոնը դառնում է այդ նորակազմ պետության նախագահ: Շուտով Տեխասի Հանրապետությունը ճանաչում են ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Բելգիան: Սակայն Մեքսիկայի կառավարությունը չճանաչեց Տեխասի անկախությունը և այն համարում էր խռովարար տարածք:

1836թ. վերջին ԱՄՆ-ում տեղի ունեցած հերթական նախագահական ընտրություններում հաղթում է դեմոկրատ **Մարտին Վան Բյուրենը (1837-1841թթ.):** Ջեքսոնի վարչակազմում նա զբաղեցնում էր պետ. քարտուղարի պաշտոնը: Վան Բյուրենը դառնում է երկրի առաջին նախագահը, որը ծնվել էր անկախ ԱՄՆ-ում (բոլոր նախորդները ծնվել էին հյուսիսամերիկյան անգլիական գաղութներում և, հետևաբար, եղել էին բրիտանական գահի հպատակներ): Բնութագրելով նրա վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը, կարելի է նշել, որ չորս տարվա ընթացքում ոչ մի ակտուալ տնտեսական (1837թ. ֆինանսական ճգնաժամը, որը, փաստորեն, տևեց չորս տարի), սոցիալական (մեծ թվով գործազրկությունը, սղաճը, որոնք ֆինանսական ճգնաժամի հետևանքն էին) և քաղաքական (Տեխասի հարցը, որը պահանջում էր արմատական գործողություններ, ինչից, Վան Բյուրենը խուսափում էր) խնդիր իր լուծումն այդպես էլ չի ստանում, ինչը չէր կարող չազդել նախագահի և դեմոկրատների հեղինակության վրա, և երբ 1840թ. վիգերը, որպես նախագահի թեկնածու առաջ են քաշում 1812-1815թթ. անգլո-ամերիկյան պատերազմի հերոսներից մեկի՝ 68-ամյա գեներալ Ուիլյամ Հենրի Հարրիսոնին, իսկ դեմոկրատները նորից հնչեցնում են Վան Բյուրենի անունը, ապա ոչ ոք արդեն չէր կասկածում վիգերի առաջիկա հաղթանակին:

**Թեմա 1.7. ԱՄՆ քաղաքացիական պատերազմի նախօրյակին
(1841-1861)**

ԱՄՆ Նախագահները



Ուիլյամ Հենրի Հարրիսոն (1773-1841), ԱՄՆ 9-րդ նախագահ (մարտ-ապրիլ 1841)



Ջոն Թայլեր (1790-1862), ԱՄՆ 10-րդ նախագահ (1841-1845)



Ջեյմս Փոլք ((1795-1849), ԱՄՆ 11-րդ նախագահ (1845-1849)



Ջաքարի Թեյլոր (1784-1850), ԱՄՆ 12-րդ նախագահ (1849-1850)



Միլարդ Ֆիլմոր (1800-1874), ԱՄՆ 13-րդ նախագահ (1850-1853)



Ֆրանկլին Պիրս (1804-1869), ԱՄՆ 14-րդ նախագահ (1853-1857)



Ջեյմս Բյուկենեն (1791-1868), ԱՄՆ 15-րդ նախագահ (1857-1861)

**ԱՄՆ 19-րդ դարի 40-50-ական թվականներին: Քաղաքական
զարգացումը**

Հարրիսոնը փայլուն հաղթանակ է տանում, դառնալով երկրի 9-րդ նախագահը: Նրա Երդմնակալության ճառը տևեց 1ժ. 45 րոպե և մտավ ամերիկյան պատմության մեջ որպես ամենաերկարը, իսկ նախագահությունը, ընդհակառակը, ամենակարճը՝ ընդամենը մեկ ամիս: Նա մահացավ թոքերի բորբոքումից, որով հիվանդացել էր նախընտրական արշավի ժամանակ: 1841թ. ապրիլի 6-ին, ԱՄՆ 10-րդ նախագահ է դառնում նախկին դեմոկրատ փոխ-նախագահ **Ջոն Թայլերը (1841-1845)**: Նրա նախագահության օրոք խորացան Հյուսիսի և Հարավի միջև եղած տարածայնությունները: Գրանցված լինելով վիգերի կուսակցությունում, Թայլերը, այնուամենայնիվ, պաշտպանում էր Հարավի շահերը, ինչն ստիպում է վիգերին հեռացնել նրան կուսակցությունից: Նրա նախագահության տարիների հանրագումարը կարելի է բնութագրել, որպես համեստ և պատմական առումով քիչ նշանակություն ունեցող: 1844թ. մայիսին վիգերը նախագահի պաշտոնին առաջարկում են Հ. Կլեյի թեկնածությունը, իսկ դեմոկրատները՝ **Ջեյմս Փոլքի**, որը Թեննեսի նահանգի նախկին նահանգապետն էր, ստրկատեր և Տեխասի բռնակցման կողմնակից: Վերջին հանգամանքը օգնեց նրան հաղթել և դառնալ **ԱՄՆ 11-րդ նախագահը (1845-1849)**:

Այդ ժամանակ ԱՄՆ-ում ապրում էր ավելի քան 23 մլն. մարդ, իսկ Միությունը բաղկացած էր 27 նահանգներից, որոնցից 14-ը՝ ստրկատիրական էին: Բացի երկու հիմնական կուսակցություններից (վիգերի և դեմոկրատական) երկրում առաջացել էին նաև մի քանի կարևոր քաղաքական նշանակություն ունեցող շարժումներ: Վերևում արդեն ասվել է աբոլիցիոնիստական (abolish-արգելել, վերացնել) շարժման մասին, որի ընդլայման հետ միասին, զուգահեռաբար, ակտիվանում է, այսպես կոչված, **նեյթիվիստական** շարժումը (native-տեղացի): Բանն այն է, որ 1846-1855թթ. ընթացքում ԱՄՆ ներգաղթեցին մոտ 3 մլն. մարդ, առաջին հերթին, Իռլանդիայից, Գերմանիայից և սկանդինավյան երկրներից: Երկրի զարգացող արդյունաբերությունն աշխատուժի մեծ պահանջ ուներ և ԱՄՆ ինդուստրիալ ապագան կախված էր ներգաղթողներից: Սակայն նրանք Նյու-Յորքում, Չիքագոյում, Միլուոքիում, Սենթ-Լուիսում, իրենց թվով գերազանցեցին տեղի բնակչությանը, իսկ տնտեսական և դրա հետ միասին նաև սոցիալական վիճակի վատացումը, առաջին հերթին, խոշոր արդյունաբերական քաղաքներում 1840-1850-ական թթ-ին, հանգեցրեց նրան, որ սկսեցին որոնել դրա պատճառները և, ինչպես հաճախ է լինում, ամբողջ մեղքը գցեցին ներգաղթողների, հիմնականում, իռլանդացի և գերմանացի կաթոլիկների, ինչպես նաև մեքսիկացիների և չինացիների վրա: 1835թ.

Ֆիլադելֆիայում ստեղծվում է Նեյթիվիստների ամերիկյան կուսակցությունը (Native American Party), որը պահանջում էր խստացնել ներգաղթողներին վերաբերվող օրենքները, արգելել կաթոլիկներին զբաղեցնելու ընտրովի պաշտոններ և այլն: Գործը հասնում էր նույնիսկ բախումների: Այսպես, 1844թ. Ֆիլադելֆիայում բախվեցին բնիկ ամերիկացի բողոքականները ներգաղթած կաթոլիկների հետ, որի արդյունքում զոհվեց 30 մարդ: 1849թ. ստեղծվում է նեյթիվիստների գաղտնի ընկերություն, որն ստանում է **“անգիտակների”** կուսակցություն անվանումը (Know Nothing Party), որովհետև նրա անդամները հրաժարվում էին քննարկել կուսակցության գործունեությունը և բոլոր հարցերին պատասխանում էին “Ես ոչինչ չգիտեմ” (“I know nothing”): Կարճ ժամանակահատվածում նրանց նույնիսկ հաջողվում է Կոնգրեսի վերին պալատում ստանալ 90 տեղ և դառնալ ԱՄՆ երկրորդ (դեմոկրատներից հետո) քաղաքական կուսակցությունը: Նրանց գաղափարախոսությունը դեռ 1855թ շատ լավ նկարագրեց Աբրահամ Լինքոլնը. “Ես “անգիտակ” չեմ և չեմ էլ կարող լինել... Երբ “անգիտակները” կգան իշխանության նրանց լոզունգը կլինի. “բոլոր մարդիկ ստեղծվել են հավասար, բացառությամբ, նեգրերի, արտասահմանցիների և կաթոլիկների: Երբ գործը հասնի դրան, ես կհեռանամ երկրից, կգնամ որևիցե մի տեղ, որտեղ չեն ձևացնում, որ սիրում են ազատությունը...”:

19-րդ դ. 40-ական թթ-ին ԱՄՆ-ում զարգանում էին էքսպանսիոնիստական տրամադրություններ այն ժամանակ Մեքսիկային պատկանող Տեխասի, Նյու-Մեքսիկոյի, Կալիֆորնիայի տարածքների նկատմամբ: Երկու կուսակցություններում էլ (դեմոկրատական և վիգերի) կային այդ ծրագրի կողմնակիցներ և հակառակորդներ: Վերջիններս դեմ էին, որովհետև վախենում էին, որ նոր տարածքները ստրկատիրական նահանգների կարգավիճակ կստանան: 1846-1848թթ. ընթացքում Մեքսիկայի հետ տեղի ունեցած պատերազմից հետո, ԱՄՆ-ին անցնում են Տեխասը, Նյու-Մեքսիկոն և Կալիֆորնիան, ինչից հետո ստրկատիրության տարածման հարցը նոր տարածքների վրա դառնում է գլխավորը երկրի քաղաքական կյանքում: Ստրկատիրության տարածման հակառակորդները դուրս են գալիս իրենց կուսակցություններից և միավորվում են ստեղծելով “Ֆրի սոյլ” (“Ազատ հող”; “Free soil”) կուսակցությունը: Նրանց լոզունգն է դառնում “Ազատ հող, ազատ աշխատանք, ազատ մարդիկ”, իսկ ծրագիրը սահմանափակվում էր նոր տարածքների վրա ստրկատիրության տարածման արգելք դնելու պահանջով: Սակայն ֆրիսոյլերները նույնպես չէին կարող լուրջ մրցակից հանդիսանալ երկու հիմնական կուսակցություններին:

Պատերազմ Մեքսիկայի դեմ (1846-1848թթ.)

1845թ. փետրվարի 28-ին ամերիկյան Կոնգրեսը հավանություն է տալիս Տեխասի բռնակցմանը, իսկ նոր նախագահ Փոլքը իր Երդմնակալության ճառում հայտարարում է, որ Տեխասի Հանրապետությունը դիմել է ԱՄՆ կազմի մեջ մտնելու խնդրանքով: Տեխասի բռնակցման մասին Կոնգրեսի որոշումը նախագահը բացատրեց նրանով, որ Տեխասը մի ժամանակ ԱՄՆ մասն էր, իսկ հիմա, լինելով անկախ պետություն, նա իրավունք ունի ինքնուրույն որոշելու իր բախտը: Տեխասի ԱՄՆ կազմում լինել չլինելու հարցը վերաբերվում է միայն ԱՄՆ-ին և Տեխասին:

Սակայն Մեքսիկան այդ հարցի վերաբերյալ ուներ բոլորովին այլ կարծիք և 1845թ. մարտին խզեց դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ հետ: Երկու կողմերն սկսում են պատրաստվել պատերազմի: Առաջին բախումը տեղի ունեցավ 1846թ. ապրիլի 25-ին, երբ մեքսիկական բանակը անցնավ Ռիո Գրանդե գետը և հարձակվեց ամերիկյան ֆորտի վրա: Մայիսի 11-ին ԱՄՆ պատերազմ հայտարարեց Մեքսիկային: Երկու տարվա ընթացքում ամերիկյան բանակը Ջաքարի Թեյլորի գլխավորությամբ մի քանի ճակատամարտերում ծանր պարտության մատնելով մեքսիկական բանակին, գրավեց Մեքսիկայի մեծ մասը, իսկ 1847թ. մարտին մտավ մայրաքաղաք Մեխիկո: Հաշտության պայմանագիրը երկու պետությունների միջև ստորագրվեց **1848թ. փետրվարի 2-ին**, որով ԱՄՆ-ին էին անցնում Տեխասը, Նյու-Մեքսիկոն, Կալիֆորնիան: Մեքսիկային ԱՄՆ պետք է վճարեր 15 մլն. դոլար:


Արդյունքում, ԱՄՆ ընդլայնում է իր տարածքը մոտավորապես 1.36 մլն. քառ. կմ.-ով: Այսօր այդ տարածքի վրա տեղավորվել են Արիզոնա, Նեվադա, Կալիֆորնիա, Յուտա, Նյու-Մեքսիկո, Կոլորադո (մի մասը), Վայոմինգ (մի մասը) նահանգները: Շուտով այդ տարածքներում հայտնաբերվեցին ոսկու և նավթի մեծ պաշարներ: Սակայն, ինչպես նշեցինք, նոր տարածքների ձեռքբերումը սրեց քաղաքական պայքարը երկրի ներսում, որովհետև դեռ պարզ չէր թե նոր նահանգները ինչ կարգավիճակով (ազատ կամ ստրկատիրական) կմտնեն ԱՄՆ կազմի մեջ:

Փոլքի նախագահության օրոք ԱՄՆ-ին միացավ Օրեգոնի տարածքը, որը երկար ժամանակ վիճելի էր ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի միջև: Վերջ ի վերջո, փոխզիջման արդյունքում, որոշվեց նոր անգլո-ամերիկյան սահմանը, որը տեղափոխվեց դեպի հյուսիս մինչև 49-րդ զուգահեռականը:

Փոլքը երբեք ցանկություն չէր հայտնում պայքարելու երկրորդ նախագահական ժամկետի համար: Այդ իսկ պատճառով դեմոկրատներն առաջ են քաշում 1812-1815թթ. պատերազմի հերոս սենատոր Լ. Կասսի թեկնածությունը, իսկ վիգերը վերջին տասնամյակներում տեղի ունեցած

բոլոր պատերազմների հերոս 64-ամյա գեներալ **Ջաքարի Թեյլորի** թեկնածությունը: Թեյլորը համոզիչ հաղթանակ է տանում և դառնում **ԱՄՆ 12-րդ նախագահը (1849-1850թթ.)**, սակայն նրա նախագահությունը տևում է ընդամենը մեկ տարի և չորս ամիս, քանի որ հանկարծամահ է լինում:

1850թ. հուլիսի 10-ին փոխնախագահ **Միլլարդ Ֆիլմորը երդում տալուց հետո զբաղեցնում է նախագահի պաշտոնը (1850-1853թթ.)**: Որպես ժառանգություն նա ստանում է մի շարք չլուծված խնդիրներ, որոնցից հիմնականը ստրկատիրությանը վերաբերող հարցն էր: Այն, նոր նահանգների ստեղծման հետ մեկտեղ աստիճանաբար սրվում էր:



1850թ. փոխզիջումը

1820թ. Միասուրիի փոխզիջումն արգելք է դառնում ստրկատիրության հետագա տարածման համար: Սակայն նոր նահանգների ստեղծման հետ միասին այդ հարցը նորից սրվում է: Տեխասն ընդունվեց Միություն որպես ստրկատիրական նահանգ, սակայն Կալիֆորնիան, Նյու-Մեքսիկոն և Յուտան ստրկատիրություն չէին ճանաչում, ինչը, եթե նրանք ընդունվեին որպես ազատ տարածքներ, կարող էր խախտել երկրի քաղաքական կայունությունը:

Քաղաքական լարվածությունն ավելի է ուժեղանում, երբ 1848թ. Կալիֆորնիայում հայտնաբերում են ոսկու մեծ պաշարներ: Արդեն 1849թ. ԱՄՆ մյուս նահանգներից, Եվրոպայի տարբեր երկրներից, ինչպես նաև Ասիայից և Լատինական Ամերիկայից Կալիֆորնիա են գալիս շուրջ 80.000 մարդ: Միայն մեկ տարվա ընթացքում Կալիֆորնիայի բնակչությունը աճում է 14.000-ից մինչև 100.000 մարդ, իսկ Սան-Ֆրանցիսկոյի բնակչությունը՝ 459 -ից մինչև 20.000: Եթե հողատարածքները մինչև 1848թ. գարունը վաճառվում էին ընդամենը 16 դոլար 50 ցենտով մեկ ակրի համար, ապա նույն տարվա ամռանը դրանց վաճառքի գինը հասավ 6.000 դոլարի, իսկ ավելի ուշ՝ մինչև 48.000 դոլարի: Ինչպես տեսնում ենք այդ “ոսկու տենդը” չէր կարող չսրել նահանգների կարգավիճակի հետ կապված հարցը:

Վերջապես, **1850թ-ին ընդունվում է սենատոր Հ. Կլեյի կողմից առաջարկված փոխզիջման նոր տարբերակը:** Կալիֆորնիան ընդունվում էր Միություն որպես ազատ նահանգ, իսկ Նյու-Մեքսիկոն և Յուտան՝ առանց կարգավիճակի: 1850թ. փոխզիջումը միայն ժամանակավորապես վերականգնեց քաղաքական կայունությունը երկրում, քանի որ չլուծեց և չէր կարող լուծել ստրկատիրության խնդիրը:

1850թ. փոխզիջումն սկիզբ է դնում Վիգերի կուսակցության պառակտմանը: Այդ պահից ստրկատիրության կողմնակիցների և հակառակորդների միջև սկսվում է ներկուսակցական պայքար, որն, ի վերջո, տրոհում է կուսակցությունը: 1852թ. տեղի ունեցած նախագահական ընտրություններին վիգերը, որպես քաղաքական միասնական կուսակցություն, մասնակցեցին վերջին անգամ: **Հաղթեց դեմոկրատների թեկնածուն՝ Ֆրանկլին Պիրսը (1853-1857):** Նա դառնում է ԱՄՆ 14-րդ նախագահը:

Վիգերի կուսակցությանը փոխարինում է Հանրապետական կուսակցությունը, որը միավորեց քաղաքական ուժերի լայն սպեկտր՝ սկսած ֆրիսոյլերներից, որոնց աջակցում էին ֆերմերները և բանվորները, մինչև արդյունաբերական բուրժուազիան: Նրանց բոլորին միավորում էր բացասական վերաբերմունքն ստրկատիրության նկատմամբ:

Քաղաքացիական պատերազմի նախադրյալները և պատճառները:
Հանրապետական կուսակցության ստեղծումը, նրա ծրագրի հիմնական դրույթները

1850թ. փոխզիջումը վերջինն էր, որը հետաձգեց ստրկատիրության խնդրի լուծումը: Շուտով, սակայն, պարզ է դառնում, որ փոխզիջման հնարավորություններն սպառվել են և բախումը Հյուսիսի և Հարավի միջև անխուսափելի է: Այդ պատերազմի պատճառների վերաբերյալ ամերիկյան պատմաբանների մոտեցումները տարբեր են: Մի մասը պնդում է, որ քաղաքացիական պատերազմը երկու տարբեր քաղաքական և հասարակական կառուցվածքների բախումն էր, ուստի այն անխուսափելի էր: Պատմաբանների մյուս մասն այն կարծիքին է, որ Հյուսիսի և Հարավի միջև բախումը միայն ողբերգական թյուրիմացություն է և պատակահանություն, այսինքն, քաղաքացիական պատերազմից կարելի էր խուսափել, եթե ամերիկյան քաղաքական էլիտան ցուցաբերեր ողջամտություն (*հմասարնություն*):

Իսկ հիմա փորձենք հնարավորին չափ պարզաբանել, թե որոնք էին քաղաքացիական պատերազմի նախադրյալներն ու պատճառները:

Սկսենք նրանից, որ ամերիկյան ստրկությունը նման չէր անտիկ ստրկությանը: Այն ձևավորվել էր կապիտալիզմի ներքո և արտացոլում էր այն առանձնահատկությունը, որ գոյություն ուներ Հյուսիսային Ամերիկայի ագրարային տնտեսության մեջ: Այդ առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ ամերիկյան պլանտատորները վարձու աշխատանքի շուկայի սղության պատճառով ստիպված էին դիմել սևամորթ ստրուկների աշխատանքի օգնությանը: Սակայն ստրուկների օգտագործումն ագրարային բուրժուազիայի (պլանտատորների) համար անհետևանք չանցավ: Նրանք վերածվում են առանձնահատուկ մի դասակարգի, որի մեջ միահյուսվել էին կապիտալիստներին և ստրկատերերին բնորոշ հատկությունները: Ստրկությունն ԱՄՆ հյուսիսում արգելված էր: Ամերիկյան դեմոկրատները համոզված էին, որ շուտով ստրկությունը հարավային նահանգներում բնական ձևով կվերանա, հաշվի առնելով, նրա անշահավետությունը: Սակայն տնտեսական զարգացումը ընթացավ անսպասելի ուղիով, անուղղելի հարված հասցնելով այդ հույսերին: Անգլիայում տեղի ունեցած արդյունաբերական հեղափոխության արդյունքում մեծ զարգացում է ունենում թեթև արդյունաբերությունը, ինչը, իր հերթին, առաջացրեց աննախադեպ պահանջարկ բամբակի նկատմամբ: Ամերիկյան պլանտատորները մնացած բոլոր մշակաբույսերից նախընտրում էին բամբակ աճեցնել:

18-րդ դ. վերջին ԱՄՆ-ում հայտնագործում են բամբակազտիչ մեքենա, ինչը կտրուկ ավելացնում է աշխատանքի արտադրողականությունը և պլանտացիոն ստրկության կառուցվածքի

շահավետությունը: 19-րդ դ. առաջին կեսին մանածագործական ֆաբրիկաների բուռն աճի արդյունքում, պլանտացիոն ստրկությունն ԱՄՆ-ում ստանում է զարգացման ևս մեկ խթան: Այսպիսով, ստրկության բնական ձևով վերացման մասին խոսք անգամ լինել չէր կարող: Բամբակի արտադրությունը և նրա շահավետությունը աճում էին մինչև քաղաքացիական պատերազմի տարիները: Միևնույն ժամանակ, տնտեսական և սոցիալական ընդհանուր զարգացումով ԱՄՆ հարավը լրջորեն զիջում էր Հյուսիսին: Հարավը դառնում է մոնոկուլտուրայի (բամբակի կամ, ինչպես ասում էին Հարավում, “բամբակ-թագավորի”) գերին, իսկ դա նշանակում էր, որ տնտեսության մյուս ճյուղերը չէին զարգանում: Հարավում ուրբանիզացման և ինդուստրացման գործընթացը, փաստորեն կանգ էր առել: Հարավի միայն երկու քաղաքներ էին որ մտնում էին ԱՄՆ 25 խոշորագույն քաղաքների մեջ:

Սակայն, տեխնոլոգիական առաջադիմությունը աստիճանաբար սկսում է դանդաղել, քանի որ ստրկատերերը նախընտրում էին ֆինանսները ներդնել ոչ թե մեքենաներ, այլ նոր ստրուկներ գնելու մեջ: Հետաքրքիր է որ սկսած 1808թ-ից ստրուկների ներմուծումն ԱՄՆ արգելված էր, բայց նրանց թիվը անշեղորեն աճում էր: Այսպես, 1800թ-ին երկրի հարավում կար մոտ 1 մլն. ստրուկ, իսկ 1860թ. նրանց թիվը հասնում էր 4 մլն-ի: Հարավային պլանտատորների հեքիաթային հարստությունների (ամենահարուստ ամերիկացիներից մոտ 60%-ը ապրում էր հարավում, չնայած այստեղ ազատ բնակչությունը կազմում էր միայն 30%-ը) հիմքում ընկած էր ստրուկների գերշահագործումը: Ստրուկների երեխաներին սկսում էին աշխատեցնել վեց տարեկանից: Մի քանի հարավային նահանգներ նույնիսկ մասնագիտացել էին ստրուկների “բազմացման” մեջ, մի բան որ մեծ զարգացում ստացավ 1808թ-ից հետո, երբ արգելվեց ստրուկների ներմուծումը ԱՄՆ: 19-րդ դ. առաջին կեսին Հարավում ստրուկների նկատմամբ հաստատվում է քաղաքական պատժիչ վարչակարգ: Նրանց թույլ չէր տրվում հարաբերվել ազատ քաղաքացիների հետ, հավաքվել նույնիսկ փոքր խմբով: Նրանք իրավունք չունեին դիմելու դատարան և կարող էին ենթարկվել մարմնական պատիժների ստրկատիրոջ քմահաճույքով:

Հակաստրկական քննադատությունը Հարավում արգելքի տակ էր և հետապնդվում էր քրեական օրենսգրքով: Հարավի կողմից ստրկությունը պաշտպանելու համար նույնիսկ մշակվել էր հատուկ գաղափարախոսություն: Ստրկության գաղափարախոսներից մեծ ճանաչում էր ստացել Ջ. Քելխումը, որն ապացուցում էր, որ ստրկությունն իսկական բարիք է ինչպես ստրկատերերի, այնպես էլ ստրուկների համար: Քելխանը և նրա համախոհները “ապացուցում էին” որ միայն ստրկությունը սևամորթ բարբարոսներին մարդ դարձրեց: Համեմատեք, ասում էր նա, ամերիկյան սևամորթներին աֆրիկացիների հետ և դուք

կտեսնեք, որ առաջինները բարոյապես, ֆիզիկապես և ինտելեկտով գերազանցում են երկրորդներին: Ամերիկյան ստրուկները, համոզում էր Քելխանը, ապրում են ավելի լավ, քան Հյուսիսի սպիտակամորթ բանվորները, ինչն ապացուցում է ստրկության առավելությունը կապիտալիզմի նկատմամբ:

Ինչ վերաբերվում է հյուսիսային նահանգներին, ապա մենք տեսնում ենք, որ նրանք պատրաստ էին Հարավի հետ փոխզիջման գնալու, բայց դրա հիմքում ընկած էր ոչ միայն Միության պահպանման ցանկությունը, այլև ռասիզմը: Հյուսիսի սևամորթներն ունեին քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, սակայն, նրանք հնարավորություն չունեին օգտվելու այդ իրավունքներից: Հյուսիսային նահանգների էլիտան սևամորթների և ստրկության խնդրի լուծումը տեսնում էին նրանց Աֆրիկա կամ Լատինական Ամերիկա ուղարկելու մեջ: Սևամորթների որպես օտար ռասայի նկատմամբ վերաբերմունքը լայն տարածում ուներ նաև ազատ նահանգների հասարակ ամերիկացիների մոտ:

1850-ական թթ-ին Հյուսիսի և Հարավի միջև հարաբերությունները և ընդհարումի վտանգն ստանում են նոր որակ: 1854-1856թթ. ընթացքում տեղի ունեցան մի քանի շատ կարևոր իրադարձություններ, որոնք ամերիկյան պատմության մեջ ունեցան մեծ նշանակություն: Դրանցից ամենազվխավորը **1854թ. ԱՄՆ Կոնգրեսի ընդունած “Քանզաս-Նեբրասկա” օրենքն էր**, քանի որ դրանից հետո տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք ավարտվեցին Հարավի և Հյուսիսի միջև Քաղաքացիական պատերազմով: “Քանզաս-Նեբրասկա” օրինագիծը առաջարկվել էր **Ստիվեն Դուգլասի** կողմից, որը Դեմոկրատական կուսակցության առաջնորդներից մեկն էր: Այդ ժամանակ Կոնգրեսում քննարկվում էր երկու նոր տարածքների ընդունման հարցը: Դրանք էին՝ Քանզասը և Նեբրասկան, որոնք գտնվում էին 36 աստ. 30՝ հյուսիսային լայնությունից ավելի հյուսիս և համաձայն 1820թ. Միսսուրիի փոխզիջմանը, որը գործում էր արդեն 34 տարիների ընթացքում և մնում էր երկրի կայունության միակ նախաապայմանը, կարող էին մտնել ԱՄՆ կազմի մեջ միայն որպես ազատ նահանգներ: Դուգլասի օրինագիծը ջախջախիչ հարված էր հասցնում այդ փոխզիջմանը, Հարավի և Հյուսիսի միջև ձեռք բերված կայունությանը: Հետաքրքիրն այն է, որ Դուգլասը փոխզիջումը մերժում էր դեմոկրատական դոկտրինայի միջոցով: Նա ապացուցում էր, որ նոր տարածքների վրա ստրկության արգելման կամ թույլտվության հարցը պետք է որոշվի ոչ թե ֆեդերալ կառավարության, այլ այդ տարածքների բնակչության կողմից դեմոկրատական հանրաքվեի միջոցով: Դուգլասը և նրա համախոհներն ասում էին, որ նրանց չի հետաքրքրում ստրկության հարցը, այլ միայն նոր նահանգների Միության մեջ մտնելու ընթացակարգը: Հերքելով

մեղադրանքներն ստրկությանը պաշտպանելու մեջ, Դուգլասը փորձում էր ապացուցել, որ ստրկությունը ոչ Նեբրասկայում, ոչ էլ Քանզասում չի կարող արձատարվել: Սակայն այս փաստարկները չէին կարող խաբել ստրկության հակառակորդներին և հյուսիսային նահանգներին: Այդ օրենքի մեջ նրանց համար գլխավորն այն էր, որ հնարավորություն էր ստեղծվում ստրկությունը տարածել ազատ նահանգների տարածքներում և, բացի այդ, նոր օրենքը կայացած քաղաքական համակարգը փոխում էր հոգուտ ստրկատիրական Հարավի:

“Քանզաս-Նեբրասկա” օրենքի նախագծի քննարկման և քվեարկության ժամանակ ամերիկյան քաղաքական գործիչների կարծիքները բաժանվեցին, առաջին հերթին, աշխարհագրական, այլ ոչ թե կուսակցական հատկանիշով: Ամերիկյան քաղաքական գործիչների սեկցիոն-աշխարհագրական բաժանումը ջախջախիչ հարված հասցրեց նախկին երկկուսակցական համակարգին: Արդեն 1854թ. կեսին ազատ նահանգները ներկայացնող վիզերի և դեմոկրատների մեծամասնությունը, միավորվելով ֆրիսոյլերների հետ, հայտարարում են **Հանրապետական կուսակցության ստեղծման մասին**, որը դեմ էր նոր նահանգներում ստրկության տարածմանը: Քաղաքական ցնցումն ամենամեծ ազդեցությունն ունեցավ վիզերի վրա, որոնք տրոհվեցին և վերացան որպես ազգային քաղաքական ուժ: Դեմոկրատական կուսակցությունը թուլացավ, բայց պահպանվեց և, վերափոխվելով, սկսեցին պաշտպանել ստրկությունը: **Այսպիսով, 1854թ. ԱՄՆ-ի քաղաքական ասպարեզում ձևավորվում են, փաստորեն, երկու նոր կուսակցություններ՝ Դեմոկրատական և Հանրապետական:** Հիմնական հարցը, որը նրանց այդ ժամանակ բաժանում էր, վերաբերվում էր ստրկությանը: Այդ պահից հանրապետականներն առաջ են քաշում լիբերալ-դեմոկրատական գաղափարները, իսկ դեմոկրատներն իրենց գործունեությունն ստրկության պաշտպանության ուղղությամբ:

“Քանզաս-Նեբրասկա” օրենքի ընդունումն, ինչպես ասվեց, ունեցավ մեծ նշանակություն ԱՄՆ հետագա պատմական զարգացման, Հյուսիսի և Հարավի հարաբերությունների համար: Այս պարագայում հարց է առաջանում, իսկ տեղի կունենար արդյոք Քաղաքացիական պատերազմը, եթե ԱՄՆ քաղաքական վերնախավը 1854թ-ին թույլ չտար կոպիտ քաղաքական սխալ, հրաժարվելով 1820թ. փոխզիջումից: Փորձելով հնարավորին չափ օբյեկտիվ պատասխանել այդ հարցին, սկսենք այն բանից, որ “Քանզաս-Նեբրասկա” օրենքի ընդունումն, իմ համոզմամբ, պատահական չէր: Հարավն արդեն վաղուց ուներ էքսպանսիոնիստական ծրագրեր, և 1854թ-ին նա ուղղակի թելադրեց իր կամքը ամբողջ երկրին: Բան այն է, որ գոյության և զարգացման համար ստրկատիրական համակարգին անհրաժեշտ էին նորանոր տարածքներ, ստրկատիրական տնտեսությունը, ուղղակի, չէր կարող կենսունակ մնալ

առանց տարածքների ընդլայնման (այդ էր պահանջում նաև ամենամեծ եկամուտ բերող մշակաբույսը՝ բամբակը):

Փաստորեն Հարավի ստրկատիրական համակարգի զարգացումը, նրա ապագան և լինել-չլինելը կախված էր “Քանգաս-Նեբրասկա” օրենքի ընդունումից: Այսպիսով, “Քանգաս-Նեբրասկա” օրենքի ընդունումը Հարավի ծրագրի մեջ վաղուց կար, սակայն, Հյուսիսի համար այն դարձավ անակնկալ: Օրենքի ընդունումից հետո Քանգասի բնակչությունը բաժանվում է երկու մասի: Սկսվում են զինված բախումներ երկու կողմերի միջև, որի արդյունքում զոհվում են մոտ 200 մարդ:

1859թ-ին տեղի է ունենում հակաստրկական ապստամբություն Ջոն Բրաունի գլխավորությամբ: Փոքրաթիվ խմբով նա փորձ է անում գրավել խոշոր ռազմական պահեստ նպատակ ունենալով զինել ապագա աբոլիցիոնիստական բանակը: Ապստամբությունը ճնշվեց, Բրաունը մահապատժի ենթարկվեց, դառնալով բոլոր հակաստրկական ուժերի համար ազգային հերոս: *Քանգասում տեղի ունեցած իրադարձություններից հետո երկրի բոլոր հակաստրկական ուժերը համախմբվում և միավորվում են Հանրապետական կուսակցության շուրջը:* Սակայն սխալ կլինի բնութագրել հանրապետականներին որպես միանշանակ հակաստրկական կուսակցություն: Հանրապետական կուսակցությունը և նրա առաջնորդ Աբրահամ Լինքոլնը դատապարտում էին ստրկությունը որպես գլխավոր խոչընդոտ սպիտակ Ամերիկայի զարգացման գործընթացում, իսկ սևամորթների շահերը հանրապետականների մեծ մասի համար երկրորդական էին կամ ընդհանրապես հաշվի չէին առնվում նրանց կողմից: Ստրկության վերացման գաղափարը Հարավում Հանրապետական կուսակցության մեծամասնության համար մինչև Քաղաքացիական պատերազմը խորթ էր: Այնուամենայնիվ, Հանրապետական կուսակցությունը, անշուշտ, կարելի է համարել Ջեֆֆերսոնի և Ջեքսոնի լիբերալ-դեմոկրատական ավանդույթների ժառանգորդը և շարունակողը: Հանրապետականները հենց սկզբից հենվում էին լայն դեմոկրատական կոալիցիայի վրա, որի մեջ մտնում էին միջին և մանր սեփականատերեր, ֆերմերներ: Կուսակցության առաջնորդ Ա. Լինքոլնը, Էնդրյու Ջեքսոնի նման, ծնվել էր աղքատ ընտանիքում և կարողացել էր հասնել բարձունքների միայն սեփական համառության և բնական ընդունակության շնորհիվ:

Հանրապետական կուսակցությունը, խոսելով իր հասարակական իդեալների մասին, միշտ ընդգծում էր, որ պաշտպանում և արտահայտում է աշխատավոր Ամերիկայի շահերը, որոնց մեջ նա ընդգրկում էր ոչ միայն բանվորներին, այլև ֆերմերներին, մանր և միջին ձեռներեցներին: Բանն այն է, որ հանրապետականները հրաժարվում էին տարբերել այդ սոցիալական խմբերը: Պատճառն այն էր, որ Ամերիկայում սահմանները մանր և միջին ձեռներեցների, ֆերմերների և բանվորների միջև

փոփոխական էին, նրանք անընդհատ անցնում էին մի սոցիալական խմբից մյուսը: Օրինակ, սեփականատերերի մեջ մեծամասնությունը կազմում էին մանր անկախ ձեռներեցները և ֆերմերները, որոնցից շատերը երեկվա բանվորներն էին:

Լինքոլնը միշտ ընդգծում էր, որ ներկայացնում է հենց այդ անկախ ձեռներեցների և ֆերմերների շահերը, որոնց ոչ ոք չի վարձակալում և որոնք աշխատում են իրենց և իրենց ընտանիքների համար: Ձեռներեցներն ու ֆերմերները, ասում էր Լինքոլնը, ամերիկյան հասարակության կենտրոնական կերպարներն են, ինչն ապացուցում էր, որ Ամերիկայում աշխատանքը կապիտալից բարձր է կանգնած և այն հասարակության գլխավոր արժեքն է: Շարունակելով իր միտքը, Լինքոլնը նշում էր, որ ջանասեր և ձեռներեց բանվորներն ԱՄՆ-ում ունեն հարյուր տոկոսանոց հավանականություն սեփական գործ բացելու համար և նրանք ուղղակի պարտավոր են ձգտել այդ նպատակին: Բայց, որպեսզի այդ “ամերիկյան երազանքը” իրականություն դառնա, երկրում պետք է իշխի ազատ աշխատանքի համակարգը, որը թույլ է տալիս աշխատավորին ինքնուրույն կատարել ընտրություն: Այստեղից էլ հետևում էր հանրապետականների և Լինքոլնի հիմնական՝ **“Ազատ աշխատանք”** նշանաբանը: Իր կարևոր նպատակներից մեկը Հանրապետական կուսակցությունը համարում էր այն որ պետությունը օգնի իր քաղաքացիներին “ամերիկյան երազանքին” հասնելու գործում: Իսկ անկախ սեփականատերեր և ֆերմերներ ամերիկացիները կարող էին դառնալ, եթե ունենային ազատ մուտք դեպի երկրի Արևմուտք, նրա հողային ֆոնդը: Իր ստեղծման առաջին իսկ օրերից, Հանրապետական կուսակցությունն առաջ էր քաշում **հոմստեդների մասին օրենքը**, ըստ որի ազատ տարածքներում հողաբաժինները հասարակ աշխատավորներին պետք է տրվեին կամ անվճար, կամ էլ նվազագույն գումարով: Ազատ տարածքների նկատմամբ այսպիսի մոտեցումը ձևավորեց հանրապետականների երկրորդ կարևորագույն՝ **“Ազատ հող”** նշանաբանը:

Ակնհայտ էր դառնում, որ Հանրապետական կուսակցության սոցիալական ծրագրի իրականացման համար խոչընդոտ էր ստրկական Հարավը, որը նպատակ էր դրել տարածել արևմտյան ազատ տարածքներում իր հասարակական և սոցիալական համակարգը (ստրկությունը): Հանրապետականները հասկանում էին, որ առանց ստրկության վերացման սպիտակ Ամերիկայի դեմոկրատացումը անհնար էր: Այստեղից էր բխում նրանց ծրագրի երրորդ՝ **“Ազատ մարդիկ”** նշանաբանը:

Լինքոլնը, ինչպես և մյուս հանրապետականները, պայքարում էր քաղաքական դեմոկրատիայի ընդլայման և խորացման համար: Լինքոլնը սահմանեց դեմոկրատիան, որպես “ժողովրդի կառավարում, ժողովրդի

միջոցով և ժողովրդի համար”, որը դառավ դասական: Ընդհանուր առմամբ, Հանրապետական կուսակցության տնտեսական, սոցիալական և քաղաքական ծրագիրը բացահայտորեն հակասության մեջ էր գտնվում ստրկատիրական Հարավի արժեքների հետ և, այդ պատճառով, բախումը Հյուսիսի և Հարավի միջև, ըստ էության, բախում էր երկու տարբեր հասարակական և քաղաքական համակարգերի, երկու քաղաքակրթությունների միջև: **Այսինքն, Քաղաքացիական պատերազմն անխուսափելի էր:**


Ինչպես նշվեց, Հանրապետական կուսակցությունը հարավային Նահանգներում ստրկության վերացման պահանջ չէր ներկայացնում, սակայն ելնելով նրանց ծրագրից Հարավի համար պարզ էր, որ հանրապետականների իշխանության գլուխ գալու դեպքում ստրկատերերի համար ստեղծվելու է մահացու վիճակ: Այստեղից էլ պարզ է դառնում Հարավի հակազդեցությունը, երբ 1860թ. նախագահական ընտրություններում հաղթող դարձավ Լինքոլնը:

Բայց, մինչ այդ, 1856թ-ին տեղի ունեցան հերթական նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում վերջին անգամ նախագահ է դառնում Հարավի շահերը պաշտպանող, Դեմոկրատական կուսակցության թեկնածու **Ջեյմս Բյուկենենը (1857-1861):** Ամբողջ նախագահության ընթացքում Բյուկենենը փորձում էր ինչ-որ չափով մեղմել Հյուսիսի և Հարավի հակասությունները, փաստորեն, այլևս ժամանակ չունենալով զբաղվելու ներքին և արտաքին այլ կարևոր հարցերով: Վերջապես, 1860թ-ին տեղի ունեցավ այն, ինչ որ վաղ թե ուշ պետք է տեղի ունենար: Նոյեմբերի 6-ին, նախագահական ընտրությունների օրը, Լինքոլնը, որպես Հանրապետական կուսակցության կողմից առաջարկված թեկնածու, ստացավ 180 Ընտրիչների աջակցությունը և դարձավ ԱՄՆ 16-րդ նախագահը:

Ֆեդերալ (կենտրոնական) կառավարության նկատմամբ տնտեսական և քաղաքական հսկողության կորուստը դրդեցին Հարավին սկսել Միությունից դուրս գալու գործընթացը: Առաջին քայլն արեց Հարավային Կարոլինան, որը 1860թ. դեկտեմբերի 20-ին ընդունեց սեցեսիայի մասին Օրդոնանսը (լատ. secessio-անջատում). նրան հետևեցին Միսիսիպին, Ֆլորիդան, Ջորջիան, Ալաբաման, Լուիզիանան և Տեխասը: 1861թ. փետրվարի 4-ին անջատված Նահանգների պատգամավորները հավաքվեցին Մոնտգոմերի քաղաքում (Ալաբամա), իսկ փետրվարի 8-ին հայտարարեցին սեփական կոնֆեդերացիայի ստեղծման մասին: Ամերիկայի Կոնֆեդերատիվ Նահանգների նախագահ ընտրվեց Ջեֆֆերսոն Դեվիսը, որը նախկինում Պիրսի վարչակազմում զբաղեցնում էր ռազմական նախարարի պաշտոնը: Մինչև Լինքոլնի երդմնակալության օրը մնացել էր մեկ ամիս:

ՄԱՍ 2

ԱՄՆ 19-րդ դ. երկրորդ կեսից մինչև 20-րդ դ. սկիզբը



**Թեմա 2. 1. ԱՄՆ Քաղաքացիական պատերազմի և
Վերակառուցման տարիներին
(Լիբերալ-Դեմոկրատական հեղափոխություն (1861-1877թթ.))**

ԱՄՆ Նախագահները



Աբրահամ Լինքոլն (1809-1865), ԱՄՆ 16-րդ նախագահը (1861-1865)



Հենրյու Ջոնսոն (1808-1875), ԱՄՆ 17-րդ նախագահը (1865-1869)



Ուլիսս Սիմպսոն Գրանտ (1822-1885), ԱՄՆ 18-րդ նախագահը (1869-1877)

Քաղաքացիական պատերազմը (1861-1865) Լիբերալ-դեմոկրատական հեղափոխության առաջին փուլը: Ռազմական գործողությունները: Պատերազմի ավարտը

Նախագահական երդումը Լինքոլնը տվեց 1861թ. մարտի 4-ին: Իր երդմնակալության ելույթում նա կոչ արեց Հարավին չքայքայել Միությունը: Սակայն նախագահի հաշտեցնող ճառը ոչ մի ազդեցություն չունեցավ հարավային նահանգների վրա: 1861թ. ապրիլի 12-ին հարավային Կոնֆեդերացիայի զորքերը հարձակվում են ֆորտ Սամթերի վրա և հաղթանակ տանում: Լինքոլնը Հարավը հայտարարում է որպես խռովարար նահանգներ և ԱՄՆ-ում սկսվում է Քաղաքացիական պատերազմ: Երկու կողմերի ուժերի հարաբերակցությունը Հյուսիսի կողմն էր: Միությանը հավատարիմ էին մնացել 23 նահանգ, որոնց բնակչության թիվը կազմում էր 22 մլն. մարդ և այնտեղ, փաստորեն,

գտնվում էին երկրի ողջ արդյունաբերությունը, երկաթուղային ճանապարհները, խոշոր բանկերը: Խոռվարար նահանգների բնակչությունը կազմում էր ընդամենը 9 մլն. մարդ, որոնցից մոտ 4 մլն.-ը ստրուկներն էին: Սակայն սկզբնական շրջանում հաջողությունը Հարավի կողմն էր, ինչը բացատրվում էր նրանց բանակի լավ ռազմական պատրաստվածությամբ: Նույնը չէր կարելի ասել Հյուսիսի մասին: Հյուսիսի սկզբնական անհաջողությունների պատճառներից մեկը գլխավոր հրամանատար Ջորջ Մաքքլելլանի զգուշավոր և անվստահ գործողություններն էին: Ստացվեց այնպես, որ Ֆեդերալ բանակը, որն իր թվով զգալիորեն գերազանցում էր Հարավի բանակին, ողջ 1861թ. ընթացքում չկարողացավ տանել և ոչ մի հաղթանակ: 1862թ. օգոստոսին Լինքոլնը ստիպված եղավ Մաքքլելլանին ազատել հրամանատարի պաշտոնից: Այդ պահից սկսած Ֆեդերալ բանակի բոլոր հաջողությունները կապվում են գեներալ Ուլիսս Գրանտի անվան հետ: Հանրապետականների արմատական թևը, բանակի անհաջողությունների պատճառով կորցնելով համբերությունը փորձում են ապացուցել, որ սխալ է պատերազմի սոցիալ-քաղաքական ռազմավարությունը: Պատերազմի նպատակը ոչ թե միայն Միության վերականգնումն է, այլ նաև ստրկության վերացումը, ստրկատերերի սեփականության բռնագրավումը: Հռչակելով այդ նպատակը, Հյուսիսը միանգամից կստանար Հարավի միլիոնավոր ստրուկների աջակցությունը, որոնք ազատության համար պատրաստ կլինեին իրենց կյանքը զոհաբերել: Սակայն առաջին նախագահության օրոք Լինքոլնը դեռևս պատրաստ չէր դիմել այդպիսի քայլի: 1862թ. սկզբին Ֆեդերալ բանակը վերջապես սկսում է հաջողություններ ունենալ: Փայլուն հաղթանակներ են տանում գեներալ Գրանտը Կենտուկիում և Թեննեսիում և գեներալ Բատլերը, որին հաջողվում է գրավել Նյու-Օռլեանը: Այդ երկու բանակները միավորվում են, խոռվարարների տարածքը կիսելով երկու մասի:

Նույն թվականի մայիսին Լինքոլնի նախաձեռնությամբ ընդունվում է հոմսթեդների մասին օրենքը (Homestead Act), որով երկրի քաղաքացին կամ ԱՄՆ քաղաքացի դառնալու ցանկություն հայտնած անձը, կարող էր, փաստորեն, անվճար, կարող էր պետական հողային ֆոնդից ստանալ մինչև 160 ակր (65 հեկտար) հողատարածք: Հինգ տարի անց հողատարածքը դառնում էր քաղաքացու սեփականությունը: Այդ օրենքի ընդունումը համապատասխանում էր հայտնի ջեֆֆերսոնյան երազանքին՝ սպիտակամորթ ամերիկացիների մեծ մասին սեփականատերեր դարձնելու մասին և, որ Ամերիկան պետք է դառնար մի հասարակություն, որտեղ իշխելու էր միջին դասակարգը: Այդ դեմոկրատական ազրարային բարեփոխումն ավելի ուժեղացրեց Լինքոլնի ազդեցությունը հյուսիսային նահանգների սպիտակամորթ բնակչության մոտ և բանակում, սակայն նրանց աջակցությունը բավարար

չէր պատերազմի ընթացքի մեջ բեկում մտցնելու համար: Ինչպես նշվեց, Լինքոլնը 1862թ. օգոստոսին ստիպված եղավ ազատել Մաքքլելանին հրամանատարի պաշտոնից: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Կոնֆեդերացիայի բանակը Մաքքլելանի հերթական ձախողումից հետո քիչ էր մնում գրավեր Վաշինգտոնը: Այդ իրադարձությունից Լինքոլնը իսկական ցնցում ապրեց և ստիպված եղավ ընդառաջել արմատականների գլխավոր պահանջին: **1862թ. վերջին նա ստորագրում է խռովարար նահանգներում ստրուկների ազատության մասին Հռչակագիրը:** Այդ հռչակագրի ընդունումը շատ մեծ նշանակություն ունեցավ Հյուսիսի վերջնական հաղթանակի համար: Շուտով նրանց հաջողվում է նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել: 1863թ. հունիսին տեղի ունեցավ Քաղաքացիական պատերազմի վճռական ճակատամարտը **Գետտիսբերգի** մոտ (Պենսիլվանիա), որտեղ հյուսիսային բանակը մեծ դժվարությամբ հաղթում է: Գետտիսբերգից հետո ֆեդերալ բանակը ոչ մի խոշոր ճակատամարտում այլևս չի պարտվում: Աստիճանաբար ուժեղանում էր ստրուկների աջակցությունը Հյուսիսին: 1863թ. մայիսի 27-ին առաջին անգամ սևամորթներից բաղկացած զունդը մասնակցեց ճակատամարտում և, ինչպես, գրեց ամերիկյան թերթերից մեկը՝ «սևամորթները կռվում էին վագրերի պես»: Պատերազմի ավարտին ֆեդերալ բանակի կողմից կռվում էին արդեն սևամորթներից բաղկացած 166 զունդ, իսկ կռվողների թիվը հասավ մինչև 186000-ի: 1864թ. աշնանը քաղաքացիական պատերազմի ելքն արդեն կանխորոշված էր, որը հեշտացրեց Լինքոլնի վերընտրումը Նախագահի պաշտոնին: Սևամորթների խնդրի նկատմամբ նախագահի հայացքների մեջ տեղի են ունենում շոշափելի փոփոխություններ: Այսպես, Լինքոլնը հրաժարվում է սևամորթներին Աֆրիկա կամ Լատինական Ամերիկա տեղափոխելու ծրագրից: Նա գալիս է այն եզրակացության, որ սևամորթները, որոնք զենքը ձեռքին կռվում էին ազատության համար, պետք է սպիտակամորթների հետ միասին ունենան հավասար քաղաքական իրավունքներ:

Ռազմաճակատում ֆեդերալ բանակի հաջողությունները շարունակվում էին: 1865թ. հունվար-մայիս ամիսների ընթացքում ֆեդերալներին հաջողվում է գրավել Հյուսիսային և Հարավային Կարոլինաները, իսկ ապրիլի 2-ին մտնել Հարավային Կոնֆեդերացիայի մայրաքաղաք Ռիչմոնդ: Մոտենում էր Հարավի վերջնական պարտությունը, սակայն Լինքոլնը այն չտեսավ: Ապրիլի 14-ին երեկոյան, երբ նախագահը գտնվում էր Վաշինգտոնի Ֆորդի թատրոնում, դերասան Ջոն Բուտը նրա դեմ մահափորձ կատարեց, որից հետո հաջորդ առավոտյան Լինքոլնը մահացավ: 1865թ. ապրիլին Հարավը վերջնականապես անձնատուր եղավ: 1861-1865թթ. տեղի ունեցած Քաղաքացիական պատերազմն ամենաարյունահեղն էր ԱՄՆ

պատմության մեջ (եթե բացառենք երկրորդ աշխարհամարտը): Սպանվածների և վիրավորների թիվը երկու կողմերից կազմեց մոտ 800.000:

Քաղաքացիական պատերազմը և դրան հաջորդած Վերակառուցումը, նկատի առնելով թե դրանք ինչ հսկայական ազդեցություն ունեցան ԱՄՆ հետագա քաղաքական և տնտեսական զարգացման համար, շատ պատմաբաններ անվանում են ամերիկյան լիբերալ-դեմոկրատական հեղափոխություն: Քաղաքացիական պատերազմի ավարտը նշանավորում էր այդ լիբերալ-դեմոկրատական հեղափոխության առաջին փուլի ավարտը և անցումը երկրորդ փուլին, այսինքն, Վերակառուցմանը (1865-1877):

Վերակառուցում (1865-1877) Լիբերալ-դեմոկրատական հեղափոխության երկրորդ փուլը: Հեղափոխության ավարտը և արդյունքը

Խռովարար նահանգներին վերստին Միության մեջ ընդունելու համար մշակվել էին մի քանի ծրագրեր, որոնցից հիմնականը երկուսն էին: Առաջինը մշակել էր դեռ Լինքոլնը, իսկ մյուսը՝ արմատական հանրապետականները: Լինքոլնն առաջարկել էր “փափուկ” տարբերակը՝ ստրկատիրական Կոնֆեդերացիայի բոլոր կողմնակիցները, բացառությամբ վերնախավի, ներում էին ստանում և, եթե այս կամ այն խռովարար նահանգի ընտրողների ընդհանուր թվի գոնե 10%-ը կհաստատեն իրենց օրինապահությունը ֆեդերալ իշխանությանը և կհամաձայնվեն ստրկության վերացման հետ, ապա այդ նահանգը Միության մեջ վերադառնալու իրավունք էր ստանում: Կոնգրեսի արմատական հանրապետականները ներկայացնում են այլընտրանքային ծրագիր, որով այս կամ այն խռովարար նահանգը Միության մեջ վերադառնալու իրավունք կստանար, եթե նահանգի ընտրողների մեծ մասը ֆեդերալ կառավարությանը հավատարմության երդում տար և համաձայնվեր արմատական բարեփոխումների: Վերակառուցման ծրագիրն սկսում է իրականացվել Հարավի հանձնվելուց անմիջապես հետո: Նոր նախագահ **Է. Ջոնսոնը (1865-1869)**, որպես հիմք ընդունեց Լինքոլնի ծրագիրը և արմատական հանրապետականների կողմից հանդիպեց կոշտ դիմադրության:

Նախագահի և արմատական հանրապետականների միջև պայքարը աստիճանաբար ավելի անզիջում էր դառնում: ԱՄՆ Կոնգրեսը, ստանալով ազատված սևամորթների աջակցությունը, նպատակ ուներ արմատախիլ անել ստրկությունը Հարավում: Նախ ասենք, որ Վերակառուցումը, փաստորեն, սկսվում է 1865թ. հունվարից, երբ ընդունվում է Սահմանադրության 13-րդ ուղղումը, որով ԱՄՆ տարածքում

արգելվում էր ստրկությունը: 1866թ. հունիսին ընդունվում է 14-րդ ուղղումը, որով սևամորթները քաղաքացիական իրավունքներով հավասարվում էին սպիտակամորթ քաղաքացիների հետ: 1867թ. մարտին ընդունվում է Վերակառուցման մասին Օրենքը (Reconstruction Act), որով 14-րդ ուղղումը մերժած տասը հարավային նահանգները, բաժանվում էին հինգ ռազմական շրջանների, իսկ ամեն մի շրջան պետք է գլխավորեր ֆեդերալ կառավարության կողմից նշանակված գեներալը: Արտակարգ կառավարման ժամանակ այդ նահանգները պարտավոր էին ընդունել 14-րդ ուղղումը, համապատասխան փոփոխություններ կատարել նահանգների սահմանադրություններում, որից հետո միայն նրանք իրավունք կստանային նորից մտնել Միության մեջ: Նախագահ Ջոնսոնի բոլոր փորձերը մերժելու Կոնգրեսի կողմից ընդունվող օրենքները ոչ մի արդյունքի չբերեցին, որովհետև Կոնգրեսը հեշտությամբ հաղթահարում էր նախագահի բոլոր վետոները: Այդ ժամանակ Կոնգրեսը նաև ընդունում է օրենք, որով նախագահին արգելվում էր առանց Կոնգրեսի համաձայնության պաշտոնից հեռացնել պետական ծառայողներին: Նախագահի ռազմական նախարարին հեռացնելու փորձը, որը պաշտպանում էր Կոնգրեսին, ավարտվում է նրանով, որ կոնգրեսականները ամերիկյան պատմության մեջ առաջին անգամ, նախաձեռնում են նախագահի դեմ իմփիչմենթ (նախագահին պաշտոնից զրկելու արարողակարգ): Իմփիչմենթի համար չբավականացրեց ընդամենը մեկ ձայն: Այնուամենայնիվ, Ջոնսոնը վարկաբեկված էր և առաջիկա նախագահական ընտրություններում հաջողության հասնելու համար ոչ մի հնարավորություն չունեց: Այս բոլոր արմատական բարեփոխումների արդյունքում, սևամորթ ամերիկացիներն զգալի չափով ընդլայնեցին իրենց իրավունքները և հնարավորությունները ոչ միայն քաղաքական, այլ նաև սոցիալական և տնտեսական ոլորտներում:

Վերակառուցման գործընթացը զարգանում էր մինչև 1870-ական թթ. սկիզբը, իսկ հետո դանդաղում և ընդհատվում է 70-ականների կեսին: Հարց է առաջանում, թե ինչու ամերիկյան լիբերալ-դեմոկրատական հեղափոխության երկրորդ փուլը՝ Վերակառուցումը, ունենալով հսկայական նվաճումներ, այնուամենայնիվ, շատ ձեռնարկումներում մնաց անավարտ: Ամենագլխավոր պատճառը այն էր, որ 1870-ական թթ-ի սկզբին ստրկատիրական համակարգի վերականգնման վտանգը Հարավում վերացված էր, իսկ բուրժուա-լիբերալ համակարգի հաստատումն ամբողջ երկրով մեկ երաշխավորված: Հարավում տեղի է ունենում քաղաքական, տնտեսական և սոցիալական վերնախավերի փոփոխություն: Ստրկատիրական դասակարգի տեղը զբաղեցնում են, այսպես կոչված, կապիտալիստական “նուվորիշները” և նոր քաղաքական դասակարգը, որը, հիմնականում, կազմված էր նրանցից, ում ժամանակակիցներն անվանում էին “ուղեպայուսակներ” և

“խարդախներ”։ Առաջին անվանումն ստանում էին Հյուսիսից եկած մարդիկ, որոնք ձգտում էին վերափոխել Հարավն իրենց նահանգների նմանությամբ, դրա հետ մեկտեղ չմոռանալով սեփական տնտեսական և քաղաքական շահի մասին։ Երկրորդ փաստարկը աստիճանաբար դառնում էր առաջնային։ Իսկ “խարդախներ” անվանում էին այն հարավցիներին, որոնք հավանություն էին տվել Վերակառուցման քաղաքականությանը, մի կողմից, դրա մեջ տեսնելով Հարավի վերածննդի հավանականություն, և, մյուս կողմից, նրանց մոտ ստեղծվում էր լավ հնարավորություն նոր վերնախավի մեջ մտնելու համար։ Այստեղ, նույնպես, երկրորդ փաստարկը աստիճանաբար դառնում էր առաջնային։

Այսպիսով, ինչպես դա տեղի է ունենում հեղափոխությունների մեծ մասի պարագայում, ամերիկյան լիբերալ-դեմոկրատական հեղափոխությունն ունեցավ իր **տերմիդորը**⁶։ Սակայն ամերիկյան տերմիդորը չեղյալ չհամարեց հեղափոխության բոլոր սոցիալ-տնտեսական և քաղաքական նվաճումները, բայց ենթարկեց նրանց նոր վերնախավերի շահերին, որոնք, իրենց հերթին, հեղափոխության արդյունքում և հենց դրա շնորհիվ էին հասել բարձր դիրքի։

Այասկայի ձեռքբերումը

1867թ. մարտին ԱՄՆ և Ռուսաստանի միջև ստորագրվում է պայմանագիր, որով Ռուսական Այասկան, որի տարածքը կազմում էր 1519 հազ. քառ. կմ., 7,2 մլն. դոլարով վաճառվում է ԱՄՆ-ին։ ԱՄՆ Սենատը պայմանագիրը վավերացրեց 1867թ. ապրիլին, իսկ Ալեքսանդր II կայսրը՝ 1867թ. մայիսին։ Այասկան հետագայում սկսում է կամուրջի դեր խաղալ Հյուսիսային Ամերիկայի և Ասիայի միջև։

Սոցիալ-տնտեսական զարգացումը 19-րդ դ. 70-ական թթ-ին։

Վերակառուցման ավարտը

1869-1877թթ. երկրի նախագահն էր Ուլիսս Գրանտը։ Նրա նախագահության օրոք սկսվում և ավարտվում են Վերակառուցման հիմնական տարիները։ 1872թ. մայիսին Կոնգրեսն ընդունում է Համաներման մասին Օրենք (General Amnesty Act), որով վերականգնվում էին հարավային նահանգների բոլոր քաղաքացիների իրավունքները։ 1870թ. մարտին ընդունվում է ԱՄՆ Սահմանադրության 15-րդ ուղղումը, որն ԱՄՆ բոլոր քաղաքացիներին անկախ մաշկի գույնից և ռասսայական պատկանելությունից երաշխավորում էր հավասար ընտրական իրավունքներ։ Կարճես թե սևամորթ բնակչության կարգավիճակի հարցը լուծվեց և ստրկության խնդիրը վերացավ, սակայն հարավային

⁶ այսպես պատմության մեջ մտավ 1789թ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխության վերջին փուլը

Նահանգների օրենսդիր մարմինների սպիկամորթ ռասիստները փորձում էին խանգարել սոցիալական բարեփոխումների անցկացմանը: Բացի այդ, ռասիստները ստեղծում էին տարբեր ահաբեկչական կազմակերպություններ, որոնցից ամենահայտնին էր Կու-կլուկս-կլանը (Ku Klux Klan): Սևամորթ բնակչության դեմ ահաբեկչությունը դառել էր սովորական երևույթ: Հարավային նահանգների օրենսդիր ժողովներն ընդունում էին օրենքներ (դրանք պատմության մեջ մտան որպես “Ջիմ Բրոուի օրենքները”), որոնց արդյունքում սևամորթ բնակչության մեծ մասը զրկվում էր ընտրություններին մասնակցելու և տեղական իշխանության մարմիններում աշխատելու իրավունքից: Սևամորթներն իրավունք չունեին հաճախել ռեստորաններ, զբոսայգիներ, հյուրանոցներ և այլ հասարակական վայրեր: Մի խոսքով, ինչպես տեսնում ենք, նախկին ստրուկներին տրվեց ազատություն և քաղաքացիական իրավունքներ, սակայն դրանք կրում էին ձևական բնույթ: Իրական հավասար իրավունքների սևամորթներին հաջողվում է հասնել միայն 20-րդ. դարի երկրորդ կեսին:

Քաղաքացիական պատերազմը մեծ վնաս հասցրեց երկրի տնտեսությանը, որն անհրաժեշտ էր վերականգնել կարճ ժամանակվա ընթացքում: Տնտեսապես ավելի զարգացած Հյուսիսն ուներ ակնհայտ առավելություն Հարավի նկատմամբ: Հարավային նահանգների տնտեսությունը քայքայված էր՝ արդյունաբերական ձեռնարկությունները, երկաթուղային ճանապարհները և կամուրջները՝ քանդված, ֆինանսական համակարգը՝ փլուզված, ֆերմերները՝ սնանկացած: Առաջին հերթին, իհարկե, պետք էր վերականգնել Հարավի գյուղատնտեսությունը: Հարավի սնանկացած խոշոր հողատերերը (պլանտատորները) բաժանում էին իրենց պլանտացիաները մի քանի մասերի և վարձակալության տալիս աղքատ սպիտակամորթ ֆերմերներին կամ նախկին ստրուկներին, որոնք վարձի դիմաց պետք է հողատիրոջը փոխանցեին ստացած բերքի մոտ կեսը: Վերակառուցման առաջին տարիների ընթացքում վարձակալ սևամորթ ֆերմերների թիվը Հարավում հասնում էր մինչև 70%-ի: Արդեն 1870-ական թթ. կեսին, մեխանիկական մեքենաների օգտագործման արդյունքում, բամբակի բերքը հասավ նախապատերազմյան մակարդակին: Աստիճանաբար մեծանում էր մյուս գյուղատնտեսական մշակաբույսերի՝ հացահատիկի, եգիպտացորենի, ծխախոտի բերքատվությունը:

Արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք Վերակառուցման տարիներին մեծ տեմպերով կառուցվում էին Հարավում, զինվում էին նորագույն տեխնիկայով: Դրա հետ մեկտեղ զարգանում էին հին քաղաքները և կառուցվում էին նորերը: Այնուամենայնիվ, ի տարբերություն Հյուսիսի, հարավային նահանգների քաղաքների բնակչության թիվը, հիմնականում, չէր գերազանցում 2,5 հազարը:

Հյուսիսում, որը տնտեսական, ֆինանսական և կազմակերպչական առումով պատրաստ էր բարեփոխումների, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև խոշոր քաղաքների աճի գործընթացն ավելի արագ էր տեղի ունենում, քան Հարավում: Առաջին հերթին, հյուսիսային նահանգների շնորհիվ, խոշոր քաղաքներում (սկսած 100.000-ից) բնակվող մարդկանց թիվը 1870-1900թթ-ի ընթացքում 4 մլն-ից հասնում է մինչև 14 մլն.: Երկրի արդյունաբերական արագ զարգացումն, առաջին հերթին Հյուսիսում, Միացյալ Նահանգները դարձնում էր ինդուստրիալ երկիր: “Վայրի Արևմուտքն” ապրում էր իր վերջին տարիները. այստեղ նույնպես կառուցվում էին քաղաքներ, գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղային ճանապարհներ, որոնք կապում էին արևմուտքն արևելքի հետ: Այստեղ արդյունահանում էին ոսկի, արծաթ, երկաթ: 1860թ. ԱՄՆ-ում չկար մեկ մլն. բնակչությամբ և ոչ մի քաղաք, իսկ 1890թ. Նյու-Յորքում ապրում էր ավելի քան 1,5 մլն. մարդ, իսկ Չիկագոյում և Ֆիլադելֆիայում մոտ 1 մլն.:

Քաղաքացիական պատերազմը նպաստեց ամերիկյան տնտեսության զարգացմանը, առաջին հերթին, էլեկտրոտեխնիկական և մետաղագործական արդյունաբերությունների, ինչպես նաև մեծ առաջ խաղացում տեղի ունեցավ տրանսպորտի և կապի բնագավառներում: *Իսկ 19-րդ դ. երկրորդ կեսի խոշոր տեխնիկական հայտնագործումները նպաստեցին ԱՄՆ-ում արդյունաբերական հեղափոխության գործընթացի արագացմանը: Եթե մինչև քաղաքացիական պատերազմը երկրում փրվել էր 36.000 վկայագրեր (պատենտներ) գիտության փորձեր բնագավառներում հայտնագործումների համար (օրինակ, կարի մեքենա, վերելակ, հեռագրային ապարատ), ապա հաջորդ 30 փարիների ընթացքում վկայագրերի թիվը հասավ 440.000-ի: Հայտնագործումների թվին պատկանում էին Ալեքսանդր Բելլի հեռախոսային ապարատը (1876), Քրիսթոֆեր Շոուպի գրամեքենան (1868), Ջեյմս Ռիթի դրամարկղային ապարատը (1897), Ջոզեֆինա Բոհրանի լվացքի մեքենան (1886), Թոմաս Էդիսոնի էլեկտրական լամպը (1877), Ջորջ Իսթմենի լուսանկարչական ժապավենը և կինոապարատը (1888-89) և շարք ուրիշները: Առանց այդ հայտնագործումների արդյունաբերական հեղափոխությունը երբեք չէր կայանա:*

Երկիրը մտնում էր հասարակական զարգացման նոր դարաշրջան, որի առանձնահատկությունն էր հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և ինտելեկտուալ բարձր մակարդակը, ինչը, իր հերթին պետք է հանգեցներ ժողովրդական զանգվածների ինքնագիտակցության աճին և ակտիվությանը:

Թեմա 2. 2. ԱՄՆ զարգացումը 1877-1900 թթ. (“Ոսկեդար”)

ԱՄՆ Նախագահները



Ռեզերֆորդ Հեյս (1822-1881) – ԱՄՆ 19-րդ նախագահը (1877-1881)



Ջեյմս Հարֆիլդ (1831-1881) – ԱՄՆ 20-րդ նախագահը (1881թ. մարտ-սեպտեմբեր)



Չեսթեր Արթուր (1829-1886) – ԱՄՆ 21-րդ նախագահը (1881-1885)



Գրովեր Քլիվլենդ (1837-1889) – ԱՄՆ 22-րդ նախագահը (1885-1889)



Բենջամին Հարրիսոն (1833-1901) – ԱՄՆ 23-րդ նախագահը (1889-1893)



Գրովեր Քլիվլենդ (1837-1889) – ԱՄՆ 24-րդ նախագահը (1893-1897)



Ուիլյամ Մաքքինլի (1843-1901) – ԱՄՆ 25-րդ նախագահը (1897-1901)

**Սոցիալ-տնտեսական զարգացումը: Մենաշնորհների
ժամանակաշրջանը և սոցիալ-դարավիճակի տարածումը ԱՄՆ-ում:
Մոնոպոլիզացման արդյունքները:**

Վերակառուցման տարիների ընթացքում տեղի է ունենում կարևոր փոփոխություն երկրի քաղաքական դաշտում: Դա, առաջին հերթին, վերաբերվում է Հանրապետական կուսակցությանը, որի գաղափարախոսության դեմոկրատական ուղղվածությունը զգալի փոփոխությունների ենթարկվեց: Այսպես, կուսակցության առաջնային նպատակներից դարձան արդյունաբերության և ֆինանսա-բանկային սեկտորի զարգացման խրախուսումը, տեղական կապիտալիզմի, արդյունաբերողների պաշտպանությունն օտարերկրյա մրցակցությունից: Հանրապետական կուսակցության գաղափարախոսության փոփոխման մասին է վկայում նաև, այսպես կոչված, “1877թ-ի փոխզիջումը” Դեմոկրատական կուսակցության հետ: Բան այն է, որ նախագահական ընտրությունների արդյունքում, դեմոկրատների թեկնածու Սեմյուել Թիլդենն Ընտրիչների Կոլեգիայի քվեարկության արդյունքում մեկ ձայնի առավելություն ստացավ հանրապետականների թեկնածու Ռեզերֆորդ Հեյսի նկատմամբ: Սակայն երկու կուսակցություններն սկսեցին իրար մեղադրել չորս նահանգներում (Լուիզիանա, Հարավային Կարոլինա, Ֆլորիդա, Օրեգոն) քվեարկության նենգափոխման մեջ: Ստեղծվեց հատուկ ֆեդերալ հանձնաժողով, որը պետք է վերստին ստուգեր քվեարկության արդյունքներն այդ չորս նահանգներում: Հաղթանակի հասնելու համար Դեմոկրատներին բավական էր մնացած 20 Ընտրիչների ձայներից ստանալ ընդամենը մեկը, այսինքն, հարկավոր էր հաղթել չորս նահանգներից ընդամենը մեկում: Իսկ հանրապետականներին հաղթանակի համար անհրաժեշտ էր բոլոր Ընտրիչների ձայները: Կասկած չէր հարուցում, որ երեք հարավային նահանգներում (Լուիզիանա, Հարավային Կարոլինա և Ֆլորիդա), որտեղ շարունակվում էր Վերակառուցումը, իսկ հանրապետականները հսկում էին ընտրողական ընթացակարգը, ընտրությունների արդյունքները նենգափոխվել էին նրանց օգտին: Վերջ ի վերջո գաղտնի բանակցությունների արդյունքում, երկու կուսակցությունները եկան փոխզիջման: Հեյսը դառնում էր նախագահ, բայց դրա փոխարեն, նա պետք է դուրս բերեր ֆեդերալ զորքերը Լուիզիանայից, Հարավային Կարոլինայից և Ֆլորիդայից, ֆեդերալ պաշտոնների բաշխման հսկողությունը Հարավում հանձնեց դեմոկրատներին, տնտեսության զարգացման համար ավելացներ Հարավի ֆինանսավորումը, մասնավորապես, մեծացներ ֆեդերալ ներդրումները երկաթուղային ճանապարհների շինարարության մեջ: 1877թ. ընթացքում **նախագահ Հեյսը (1877-1881)** կատարեց դեմոկրատների բոլոր պահանջները:

Այսպիսով, հարավային նահանգներում հետ բերելով իշխանությունը, դեմոկրատներն այնտեղ ստեղծում են ռասիստական վարչակարգ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆեդերալ սահմանադրությունը, նրա 15-րդ ուղղումը, թույլ չէր տալիս ռասայական խտրականություն, հարավային օրենսդիր մարմինները դիմեցին տարբեր զարտուղի ճանապարհների սևամորթների քաղաքական իրավունքները սահմանափակելու համար: Առաջին միջոցը, որն զգալի չափով նվազեցրեց սևամորթ ընտրողների թիվը, “Ընտրության հարկի մասին” օրենքն էր: Հարյուր հազարավոր սևամորթներ հարկ մուծելու փոխարեն նախընտրեցին չմասնակցել ընտրություններին: Երկրորդ միջոցը, որն էլ ավելի նվազեցրեց սևամորթ ընտրողների թիվը, “Գրագիտության ցենզի մասին” օրենքի ընդունումն էր: Ցենզի համաձայն ընտրողը պետք է կարողանար կարդալ նահանգի կամ ֆեդերալ սահմանադրությունը և, մի շարք դեպքերում, բացատրել կարդացածի իմաստը: Այդ ցենզի ընդունումից տուժեցին նաև սպիտակամորթ ընտրողները, սակայն հիմնական հարվածն ուղղված էր սևամորթների դեմ, որովհետև անգրագետների թիվը նրանց մեջ կազմում էր 60%: Արդյունքում, այդ բոլոր օրենքները հարավային նահանգների մոտ 90% սևամորթ ամերիկացիներին զրկեցին ընտրելու իրավունքից և հաստատեցին սպիտակամորթ ընտրողների լիակատար գերիշխանությունը: Ընտրական իրավունքի այդ բոլոր սահմանափակումները, որոնք տեղի ունեցան երկրի Հարավում, ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից հաստատվեցին որպես օրինական, որովհետև, ըստ դատարանի, նրանք իրենց մեջ չէին պարունակում ռասիստական խտրականության տարրեր: Գերագույն դատարանը օրինական համարեց նաև Հարավում ընդունված սևամորթների և սպիտակամորթների տրանսպորտում անջատ երթուղիները, ինչպես նաև անջատ ռեստորանների, սրճարանների հաճախումների և այլ նման օրենքները: Փաստորեն, հավանություն տալով ռասսայական խտրականությանը (սեգրեգացիայի), Գերագույն դատարանը հայտարարեց, որ այդ օրենքները չեն հակասում ֆեդերալ սահմանադրության 14-րդ ուղղումին, որովհետև այն, դատապարտելով իրավունքների անհավասարությունը, միևնույն ժամանակ չի մերժում այդ իրավունքներից անջատ օգտվելը: Այսպես ստեղծվում է “հավասար, բայց անջատ իրավունքների” դոկտրինան, որն իրականում իրենից ներկայացնում էր ռասիզմի ցինիկ արդարացում: Իսկ Հանրապետական կուսակցությունը, որը, փաստորեն, ռասսայական հարցի հետ կապված փոխզիջման է գնում Հարավի հետ, փակում է աչքերը հարավային նահանգներում ռասիստական վարչակարգի հաստատման վրա: Կենտրոնական իշխանությունը նրանք սկսում են օգտագործել արդյունաբերական և ֆինանսական կապիտալի աջակցության համար: Ստանալով հանրապետականների և պետական մարմինների

աջակցությունը, արդյունաբերողներից և ֆինանսիստներից ամենաընդունակները և հաջողակները քսան-երեսուն տարվա ընթացքում կարողացան ստեղծել երկաթուղային, նավթային, բանկային, պողպատի և այլ “կայսրություններ”:

Հենց 19-րդ դ. 80-90-ական թթ-ին դասական ազատ մրցակցությունն իր տեղը զիջեց մենաշնորհային (մոնոպոլիստական) կապիտալիզմին: Հանրապետականներից ամենամեծ աջակցություն ստացան երկաթուղային ընկերությունները: 1870-1900թթ-ի ընթացքում երկաթուղային ճանապարհների ընդհանուր երկարությունն ավելանում է ավելի քան յոթ անգամ և հասնում 190.000 մղոնի (1 մղոն – 1.609 կմ), ինչը գերազանցում էր ամբողջ Արևմտյան Եվրոպայի երկաթուղային ճանապարհների երկարությունը: Ծաղկում էին նաև արդյունաբերական և ֆինանսական միավորումները (կորպորացիաները), որոնցից շատերը վերածվում են մենաշնորհների: Դրանցից էին, օրինակ, “Ստանդարտ Օյլը”, “Յունայթեդ Սթեյթս Սթիլը”, “Ջեներալ Մոթորզը”, “Նեշընըլ Սիթի Բենկը”: Պետք է նշել, որ ԱՄՆ Գերագույն դատարանն իր որոշումներով նույնպես աջակցում էր մեծ բիզնեսին: Դատարանի այդ դիրքորոշումն, ըստ էության, ուներ երկու պատճառ, որոնք բխում էին այն ժամանակվա գաղափարախոսությունից: Առաջինը կայանում էր նրանում, որ բիզնեսի, իսկ ավելի ճիշտ, մեծ բիզնեսի, ծաղկումն ամբողջ Միացյալ Նահանգների բարեկեցության հիմքն է հանդիսանում: Իսկ երկրորդ պատճառը կայանում էր նրանում, որ, ըստ հասարակության վերնախավի, երկրի և բիզնեսի շահերը միայն այն դեպքում կպաշտպանվեն, եթե պետությունն իր տնտեսական և սոցիալական քաղաքականության մեջ առաջնորդվի “չմիջամտել երևույթների բնական ընթացքի մեջ” սկզբունքին: Այդ սկզբունքի հիմքում ընկած էր, այսպես կոչված, **սոցիալ-դարվինիզմը**, որը 19-րդ դարի 80-90-ական թթ-ին ԱՄՆ-ում դառնում է գրեթե համազգային գաղափարախոսություն: Սոցիալ-դարվինիզմը հայտնի գիտնական Չարլզ Դարվինի կենսաբանական օրենքները փոխադրում էր հասարակության վրա, բացատրելով, որ բոլոր սոցիալական երևույթները և հակասությունները, ինչպես, օրինակ, դասակարգային բախումները, մրցակցությունը, մենաշնորհների հսկայական եկամուտները մի կողմից և մասսայական աղքատությունը՝ մյուս, բխում են երևույթների բնական էությունից: Այսինքն, հավասարության նշան դնելով հասարակական և կենսաբանական օրենքների միջև անտեսվում էին այդ երևույթների սոցիալ-տնտեսական պատճառները: Առաջին անգամ Դարվինի օրենքները հասարակության նկատմամբ կիրառեց **անգլիացի Հերբերտ Սպենսերը**: Նրա տեսությունն զգալի ազդեցություն ուներ Անգլիայում, սակայն ամենալայն տարածում ստացավ հենց ԱՄՆ-ում: Դա ուներ երկու հիմնական պատճառ: Առաջինը կայանում էր նրանում, որ Դարվինի կենսաբանական օրենքներն առաջատար տեղ էին զբաղեցնում այն

ժամանակվա գիտության մեջ, իսկ սոցիալ-դարվինիզմի հիմքում ընկած էին հենց այդ օրենքները: Իսկ երկրորդ, ամենազխարավոր պատճառը այն էր, որ սոցիալ-դարվինիզմն ԱՄՆ-ում լիովին արտահայտում էր նոր սոցիալ-տնտեսական վերնախավի (էլիտայի) շահերը: Ամերիկյան սոցիալ-դարվինիստների առաջնորդն է դառնում **Ուիլյամ Սամները**, իսկ ամերիկյան սոցիոլոգիան նույնիսկ սկսում են անվանել “սամներոլոգիա”: Սամներն ապացուցում էր, որ համաշխարհային պատմության մեջ չկա ժամանակաշրջան, որտեղ գոյություն չունենային դասակարգեր և չլինեին բախումներ նրանց միջև: Այդ բանը կար, կա և կլինի ապագայում և չկա ոչ մի միջոց դասակարգային պայքարը վերացնելու համար: Սամները դա անվանում էր, բնական օրենք գոյության համար պայքարում և տարածում էր այն նաև բիզնեսի վրա: Իրենց մրցակիցներին ջախջախող արդյունաբերական և ֆինանսական մագնատներին (օլիգարխներին), նա անվանում էր “բնական ընտրության” արդյունք, հասարակության էլիտա, որոնց ստեղծել է ինքը՝ բնությունը:

Ամերիկյան տնտեսական վերնախավը, ծանոթանալով սոցիալ-դարվինիզմի սկզբունքների հետ, մեծ ոգևորությամբ ընդունեց դրանք: ԱՄՆ ամենահարուստ մարդիկ, որոնցից էին, է. Քարնեգին, Դ. Ռոկֆելլերը, Դ. Մորգանը, Հերսթն իրենց ներկայացնում էին, որպես ամենահարմարվող անհատներ, իսկ նրանց կողմից ստեղծած արդյունաբերական և ֆինանսական կայսրությունները որպես “բնական ընտրության” բարձրագույն նվաճումներ: Սոցիալ-դարվինիստական գաղափարն ընդունվում է նաև երկու քաղաքական կուսակցությունների և պետական իշխանության կողմից, ինչն իր արտացոլումն ստացավ “պետության կողմից չմիջամտելու” (տնտեսության մեջ) և “երևույթների բնական ընթացքի մասին” դոկտրինաներում: Բայց, իրականում, պետության քաղաքականությունը կարելի է անվանել կեղծավոր, որովհետև նա շարունակում էր աջակցել խոշոր բիզնեսին և մենաշնորհներին: Արդարանալու համար իշխանությունները վկայակոչում էին այն հանգամանքը, որ մենաշնորհների շնորհիվ ԱՄՆ մտավ առաջատար երկրների շարքը, այդ պատճառով նրանց պետք է տալ “ձեռքերի ազատություն”: Հիմա փորձենք տեսնել, թե ինչ արդյունքների բերեց այս քաղաքականությունը: Տնտեսական արդյունքները տպավորիչ էին: 20-րդ դար ԱՄՆ մտավ որպես աշխարհի ամենաառաջատար պետություններից մեկը: Երեսուն տարվա ընթացքում թուջի արտադրությունն ավելացավ 8 անգամ, ածուխինը՝ 10, պողպատինը՝ 150 անգամ: ԱՄՆ արտադրում էր ավելի շատ թուջ և պողպատ, քան Մեծ Բրիտանիան և Գերմանիան միասին վերցրած:

Ինչ վերաբերվում է մոնոպոլիզացման սոցիալական արդյունքների, ապա դրանք հակասական էին: Ձևավորվեց նոր տնտեսական վերնախավ, և նրանց և բնակչության հիմնական մասի

միջև անդունդը մեծանում էր: Ամերիկայի ազգային հարստությունը կտրուկ աճեց (համախառն ազգային եկամուտը 1870-1900թթ. ավելացավ երեք անգամ), սակայն այն բաշխվում էր խիստ անհամաչափ: Արդյունաբերական բանվորների եկամուտները, որոնց ձեռքով էին ստեղծվում այդ բոլոր հարստությունները, երեսուն տարվա ընթացքում ավելացավ ընդամենը 1,4 անգամ, իսկ մենաշնորհների տերերինը՝ 1000 անգամ: Մոնոպոլիզացման հետևանքով սնանկացան տասնյակ հազարավոր մանր և միջին ձեռներեցներ: Բացի այդ, պետք է նշել, որ մենաշնորհների տերերը, վերացնելով իրենց մրցակիցներին, օգտագործում էին, շատ դեպքերում, “կեղտոտ” մեթոդներ (օրինակ, նավթային մագնատ Ջոն Ռոքֆելլերը վառում էր մրցակիցների նավթապահեստները, կաշառում էր դատավորներին և օրենսդիրներին):

Երկրի մոնոպոլիզացումն իր հետևանքներն ունեցավ նաև քաղաքական կյանքում: Մի կողմից, երկրում պահպանվել էին բոլոր քաղաքական ինստիտուտները: Մյուս կողմից, հարավային նահանգներում ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնց կիրառումը կտրուկ կրճատեց ընտրողների, առաջին հերթին, սևամորթ ընտրողների, թիվը: Սրանով մեծ հարված հասցվեց դեմոկրատական սկզբունքներին: Բացի այդ, ֆինանսա-արդյունաբերական խոշոր կապիտալի ներկայացուցիչները կամ նրանց դրածոները աստիճանաբար սկսում են ներթափանցել գործադիր և օրենսդիր բարձր մարմիններ: Օրինակ, 19-րդ դ. վերջին 25 սենատորներ (համարյա 1/3-ը) միլիոնատերեր էին: Այդ պայմաններում նախագահների համար դժվար էր վարել ինքնուրույն քաղաքականություն, մանավանդ, որ այդ ժամանակաշրջանի համարյա բոլոր նախագահներն իրենց նախորդների՝ Է. Ջեքսոնի և Ա. Լինքոլնի համեմատությամբ քաղաքական թզուկներ էին: Աստիճանաբար գաղափարական տարբերությունը հանրապետականների և դեմոկրատների միջև փոքրանում էր, երկուսն էլ մերձենում էին մենաշնորհային կապիտալին, որն ընտրարշավների ժամանակ հանդես էր գալիս, որպես երկու քաղաքական կուսակցությունների գլխավոր ֆինանսիստը: Որպես դրա վառ օրինակ կարելի է հիշել 1896թ. նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում հաղթեց հանրապետական Ու. Մաքքինլին: Հանրապետական կուսակցության հաղթանակի մեջ վճռական դեր խաղաց Օհայո նահանգի մուլտիմիլիոնատեր Մ. Հաննան, որը կարողացավ հանրապետականների հաղթանակն ապահովելու համար հավաքել 3,5 մլն. դոլար, ինչն այն ժամանակվա համար ռեկորդային գումար էր:

Նման իրավիճակը երկար շարունակվել չէր կարող: Աճում էր այն ամերիկացիների թիվը, որոնք համարում էին, որ օլիգարխների բարձրացումը՝ կուսակցական վերնախավերի և պետության կողմից դավաճանություն էր դեմոկրատիայի և ժողովրդի հանդեպ: Այդ

ամերիկացիները փորձ են անում միավորվել և անցնել հակահարձակման, վերականգնելու համար իրենց դիրքերը տնտեսության և քաղաքականության մեջ:

Քաղաքական գարգացումը և քաղաքական պայքարը

Առաջինն իրենց բողոքն սկսում են հայտնել ամերիկյան ֆերմերները: 70-80-ական թթ-ին ֆերմերներն ստեղծում են տարբեր կուսակցություններ, որոնց հիմնական քննադատությունն ուղղված էր դրամի ոսկյա ստանդարտի դեմ: Նրանք պաշտպանում էին “էժան” այսինքն թղթյա և արծաթյա գաղափարը: Դա բացատրվում էր նրանով, որ 19-րդ. դ. վերջին գյուղատնտեսական ապրանքների գները անկում էին ապրում և ֆերմերներն ամբողջ մեղքը գցում էին կառավարության վրա, որը ֆինանսական օլիգարխների հետ հանցավոր համաձայնության մեջ մտնելով, գնաց ոսկե ստանդարտի (“թանկ դրամի”) ամրապնդման ճանապարհով:⁷

Ֆերմերների մեծ մասը միացավ 1890-ական թթ-ի սկզբին ստեղծված **Պոպուլիստական կուսակցությանը**, որը արմատական բարեփոխումների անցկացման կողմնակիցն էր: Կուսակցությունը պահանջում էր, որ ժողովրդական հանրաքվեն դառնա բարձրագույն օրենսդիր իշխանությունը երկրում, նրանք կողմնակից էին սենատորների անմիջական ընտրություններին, պաշտպանում էին կոնգրեսականների և դատավորների հետ կանչելու իրավունքը և այլն: Առաջ անցնելով ասեմբլ, որ պոպուլիստների պահանջներից շատերը 20-րդ դարի սկզբին ընդունվեցին օրենքի ձևով: Ամենամեծ հաջողությանը կուսակցությունը հասնում է 1892թ. ընտրություններին, երբ նրան կողմ քվեարկեցին ընտրողների մոտ 10%-ը: Սակայն շուտով պոպուլիստները տրոհվեցին:

Ամերիկյան բանվորները կազմակերպվում են որպես ընդդիմություն, որը մեծ տարածում է ստանում ամբողջ երկրում: 1890-ական թթ.-ին ձևավորվում է **Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան (ԱԱՖ)**, որն իր հիմնական պայքարը մղելով մենաշնորհների դեմ, պաշտպանում էր բանվորների տնտեսական և սոցիալական շահերը (աշխատանքի իրավունք, աշխատավարձի բարձրացում, 8-ժամյա աշխատանքային օր): Բանվորների գործադուլները դառնում են ավելի կազմակերպված և նպատակասլաց: Բանվորների արմատական թևը, որոնց չէր բավարարում ԱԱՖ-ի իրենց կարծիքով չափավոր պահանջները, 1901թ-ին ստեղծում է **ԱՄՆ Սոցիալիստական կուսակցությունը**, որը 20-

⁷ Ոսկե ստանդարտի գաղափարը վերջնականապես փլուզվեց 1933թ-ին, երբ 1929թ-ին սկսած տնտեսական ճգնաժամի հետևանքով, ԱՄՆ անցնում է թղթյա դրամական համակարգի:

որ դարի սկզբին բավական մեծ հաջողությունների է հասնում (1912թ. ընտրություններին սոցիալիստների թեկնածու Յուզին Դեբսն ստանում է մոտ 1մլն. ձայն, որը կազմում էր ընտրողների մոտ 10%-ը): Դա բացատրվում էր նրանով, որ կուսակցությունը կարողացել էր իր կողմը գրավել ոչ միայն բանվորներին, այլև միջին դասակարգի մի մասին:

Սոցիալիստները, նույնպես չարիքի արմատը տեսնելով մենաշնորհների մեջ, փորձում էին ապացուցել, որ միայն դրանց ազգայնացումով կարելի է լուծել խնդիրը: Պետք է նշել, որ սոցիալիստական գաղափարներն ԱՄՆ-ում մեկեն չտարածվեցին, այլ հասունանում էին երկու տասնյակ տարիների ընթացքում: 1848-49թթ-ի հեղափոխական իրադարձությունները Գերմանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Իտալիայում և Հունգարիայում նպաստեցին եվրոպացիների զանգվածային ներգաղթին դեպի ԱՄՆ, իսկ այդ ներգաղթողների մեծ մասը, առաջին հերթին, գերմանացիները և ֆրանսիացիները, “վարակված” էին սոցիալիստական գաղափարներով: Նրանց ակտիվ գործունեության շնորհիվ ամերիկյան բանվորական շարժումն ընդունեց կազմակերպված ձև:

Պուպուլիստների, տրեյդ-յունիոնիստների և սոցիալիստների գործունեությունն ապացույց էր այն բանի, որ երկրում ստեղծվել էր արմատական քաղաքական ընդդիմություն, որի պահանջներին իշխանության վերնախավը ստիպված էր ականջ դնել (այսպես, **1890թ-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց կարևոր Շերմանի Հակամենաշնորհային օրենքը (Sherman Antitrust Law)**, որը մենաշնորհների և տրեստների սահմանափակումներ մտցրեց, ինչը համապատասխանում էր ֆերմերների և մանր բիզնեսի շահերին): Սակայն սոցիալական բախումներից խուսափելու համար անհրաժեշտ էին լուրջ փոփոխություններ ամերիկյան աշխարհայացքի (որի զգալի մասը կազմում էր սոցիալ-դարվինիզմը) մեջ: Այն ամերիկացիները, ովքեր այդ տեսակետի կողմնակիցներն էին, ստեղծում են շարժում, որն ստանում է **առաջադիմական (պրոգրեսիվ) անվանումը**: Այդ շարժումը հսկայական ազդեցություն ունեցավ նախքան առաջին աշխարհամարտը (1900-1914թթ.), իսկ այդ ժամանակաշրջանն ամերիկյան պատմության մեջ մտավ որպես Առաջադեմ դարաշրջան (Տես հաջորդ գլուխը):

Հիմա մի քանի խոսք այն նախագահների մասին, ովքեր ղեկավարել են երկիրը 1881-1901թթ-ի ընթացքում, նշենք նրանց նախագահության ամենակարևոր իրադարձությունները: 1881թ-ին երկրի նախագահ է դառնում Օհայո նահանգի սենատոր, Քաղաքացիական պատերազմի գեներալ, հանրապետական **Ջեյմս Հարֆիլդը (1881թ. մարտ-սեպտեմբեր)**: Նրա նախագահությունը տևեց ընդամենը 199 օր: 1881թ. հուլիսի 2-ին վաշինգտոնյան կայարանում նրա դեմ մահափորձ կատարվեց: Պետական պաշտոնի հավակնող, հոգեպես

անհավասարակշիռ Չարլզ Գիտոն ծանր վիրավորեց նախագահին: Սեպտեմբերի 19-ին Հարֆիլդը վախճանվեց և ԱՄՆ նախագահ դարձավ փոխվարչապետ **Չեստեր Արթուրը (1881-1885)**: Նրա նախագահության օրոք 1882թ. Կոնգրեսն ընդունում է օրենք, որով տասը տարվա ժամանակամիջոցի համար արգելվում էր ներգաղթը Չինաստանից (1892թ. այդ արգելքը երկարացվեց ևս տասը տարով, իսկ 1902թ. նորից երկարացվեց, արդեն անժամկետ: Ասենք, որ ներգաղթի քվոտաները չէին վերաբերում եվրոպացիներին): Պրոտեկցիոնիստական (բարձր մաքսագների հաստատում) քաղաքականությունը շարունակվում էր: Չեստեր Արթուրի նախագահության տարիներին ընդունվեց նաև մի շատ կարևոր օրենք **Քաղաքացիական ծառայության մասին (Pendleton Civil Act)**, որով մի շարք ֆեդերալ պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ էր մասնակցել մրցույթի և հանձնել քննություններ: Ստեղծվեց ԱՄՆ քաղաքացիական ծառայության հատուկ Հանձնաժողով: Այդ օրենքը հիմք դարձավ պետական ծառայության այն համակարգի համար, որը գործում է մինչև այսօր:

1885-1889թթ. ԱՄՆ նախագահն էր Նյու-Յորքի նահանգապետ դեմոկրատ **Գրովեր Բլիվենդը**: Այսպիսով, 24 տարվա ընթացքում առաջին անգամ հաղթում է Դեմոկրատական կուսակցությունը: Իր ողջ նախագահությունը Բլիվենդը նվիրեց պրոտեկցիոնիստական բարձր մաքսագների դեմ պայքարելուն, սակայն նրա բոլոր փորձերը հանգեցրին դրանց միայն աննշան իջեցմանը (Սենատը հանրապետականների ձեռքում էր և նրանց հաջողվեց տապալել նախագահական առաջարկությունների մեծ մասը):

Շերթական նախագահական ընտրություններում հաղթում են հանրապետականները և նրանց թեկնածուն՝ նախկին գեներալ և նախկին սենատոր **Բենջամին Հարրիսոնը (1889-1893)** դառնում է ԱՄՆ 23-րդ նախագահը: ԱՄՆ ստեղծման պահից Հարրիսոնը տասներորդ գեներալն էր, որը զբաղեցրեց նախագահի պաշտոնը:⁸

Հիմնական տարածայնությունը դեմոկրատների և հանրապետականների միջև նորից մաքսագների հետ կապված հարցն էր: Հանրապետականները և Հարրիսոնը պաշտպանում էին բարձր պրոտեկցիոնիստական մաքսագների քաղաքականությունը, ինչը, առաջին հերթին, համապատասխանում էր տեղական արտադրողի շահերին, սակայն, մյուս կողմից, նպաստում էր երկրի մոնոպոլիզացմանը և մանրածախ գների բարձրացմանը: Դեմոկրատները, պաշտպանելով, հիմնականում, հարավային նահանգների շահերը, որտեղ արդյունաբերությունն այդքան զարգացած չէր, պայքարում էին

⁸ Տասնմեկերորդը՝ Դուայթ Էյզենհաուերն էր (1953-1961): Նա ԱՄՆ 20-րդ դարի բոլոր նախագահների մեջ միակ գեներալն է:

մաքսագների իջեցման համար, ինչը կուժեղացներ մրցակցությունը շուկայում և կբերեր արդյունաբերական ապրանքների գների նվազեցմանը: Դեմոկրատներին մեղադրում էին սեփական արտադրողի և երկրի շահերի ոտնահարման, իսկ Քլիվլենդին նույնիսկ Անգլիայից կաշառք վերցնելու մեջ:⁹

1892թ. տեղի ունեցան հերթական նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում հաղթում է դեմոկրատ **Գրովեր Բլիվլենդը, որը երկրորդ անգամ դառնում է ԱՄՆ նախագահ (1893-1897)**: Նրա նախագահության գրեթե հենց սկզբից երկրում սկսվում է տնտեսական ճգնաժամ, որը անմիջապես անդադարանում է բնակչության սոցիալական վիճակի վրա: Գործազուրկների թիվը 1893թ. վերջին հասնում է 4 մլն.-ի, աճում են գներն, ուժեղանում՝ գործադուլները: Այդ ամենը բարդացնում էր երկրի ներքաղաքական վիճակը: Քլիվլենդի վարչակազմի ձեռնարկած գործողություններն ինչ-որ չափով կայունացրին վիճակը տնտեսությունում: Սակայն նրան այդպես էլ չհաջողվեց նախընտրական արշավի ժամանակ տված մաքսագների իջեցման մասին իր խոստումը կատարել: Նախագահության վերջում Քլիվլենդի իմիջն այնքան էր ընկած (դրա պատճառը, իհարկե, առաջին հերթին տնտեսական ճգնաժամն էր և այն հասարակական համակրանք չվայելող որոշումները, որոնք նախագահը և նրա վարչակազմն ստիպված էին ընդունել ճգնաժամի դեմ պայքարելու համար), որ թույլ տվեց հանրապետականներին հետագայում պնդել, որ եթե նրանք այդ ժամանակ որպես նախագահի թեկնածու առաջարկեին նույնիսկ “հնաշոր տիկնիկին”, ապա միևնույն է կհաղթեին: “Տիկնիկի” դերում հանդես եկավ Քաղաքացիական պատերազմի վերջին վետերաններից մեկը **Ուիլյամ Մաքքինլին, որը դարձավ ԱՄՆ 25-րդ նախագահը (1897-1901)**: Հանրապետականների ծրագրի հիմնական դրույթները չէին փոխվել՝ 1. պրոտեկցիոնիստական քաղաքականության շարունակություն 2. ոսկե ստանդարտի պահպանում: Այսինքն, խոսքը հյուսիսային և հյուսիսարևելյան նահանգների արդյունաբերողների և ֆինանսիստների շահերի պաշտպանության մասին էր: Մաքքինլիի նախագահության ժամանակ հաստատվում են ամենաբարձր մաքսագները (57%) ԱՄՆ պատմության մեջ:

Տնտեսական ճգնաժամը, որն այդքան “խանգարեց” Քլիվլենդին և դեմոկրատներին, ավարտվեց և երկիրը նորից մտավ տնտեսական վերելքի փուլ, ինչը թույլ տվեց հանրապետականներին և Մաքքինլիին նորից հաղթանակ տանել նախագահական ընտրություններում:

⁹ Մեծ Բրիտանիան, որն այդ ժամանակ աշխարհի տնտեսապես ամենահզոր երկիրն էր, վարում էր “ազատ առևտրի” քաղաքականություն և նրան ձեռնտու էին ցածր մաքսագները:

Երդմնակալությունից վեց ամիս անց Մաքքինլին այցելում է Պանամերիկյան ցուցահանդեսը Բուֆֆալոյում որտեղ նրա դեմ մահափորձ է արվում անարխիստ Լեոն Չոլզոշի կողմից: Ծանր վիրավորված նախագահը յոթ օր անց՝ 1901թ. սեպտեմբերի 14-ին մահանում է:

Այսպիսով, մի ժամանակ իր գոյատևման համար պայքարող ամերիկյան պետությունը նոր դարաշրջան էր մտնում որպես աշխարհի տնտեսապես ամենահզոր երկրներից մեկը: ԱՄՆ խոշոր մենաշնորհային կապիտալն առաջատար դեր է սկսում խաղալ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ասպարեզում, նշանավորելով երկրում պետական-մենաշնորհային կապիտալիզմի դարաշրջանի սկիզբը, ինչպես նաև իմպերիալիզմի սկիզբն ամբողջ աշխարհում:

Արտաքին քաղաքականությունը: Հեյի դոկտրինան և պատերազմ Իսպանիայի դեմ

19-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ շարունակում էր ամրապնդել իր դիրքերը Լատինական Ամերիկայում: Ամերիկյան տնտեսական և քաղաքական էքսպանսիայի հիմքում ընկած էր, այսպես կոչված **պանամերիկանիզմի դոկտրինան**, համաձայն որի մայրցամաքի բոլոր պետություններն ունեն ընդհանուր շահեր և նպատակներ, իսկ ԱՄՆ-ն, որը բոլոր ամերիկյան պետություններից ամենադեմոկրատականն է և ռազմական առումով ամենահզորը, իր վրա է վերցնում այդ երկրների անկախության և ազատության պաշտպանությունը եվրոպական ագրեսորներից: Այլ կերպ ասած, ԱՄՆ-ն, հիմք ընդունելով Մոնրոյի դոկտրինան, նպատակ ուներ մայրցամաքում անցկացնել այն քաղաքականությունը, որը համապատասխանում էր իր ազգային շահերին: Հենվելով հենց այդ գաղափարի վրա, ԱՄՆ միջամտում է Կուբայի և Իսպանիայի միջև ընդհարմանը: Կուբան Իսպանիայի գաղութն էր և այնտեղ 1896թ-ին ապստամբություն է տեղի ունենում: Հարաբերություններն ԱՄՆ-ի և Իսպանիայի միջև աստիճանաբար սրվում են: Արդեն վաղուց ԱՄՆ քաղաքական շրջանակներում, մամուլի աջակցությամբ, ժամանակ առ ժամանակ, բարձրացվում էր Կուբայի նվաճման և Իսպանիային վերջնականապես Արևմտյան կիսագնդից վճռելու հարցը: ԱՄՆ-ում դեռ բավական հզոր ուժ էին իրենցից ներկայացնում հակաիմպերիալիստները և, առաջին հերթին, իզոլյացիոնիստները¹⁰, սակայն ամերիկյան պետության տնտեսական հնարավորությունները և պահանջներն արդեն դուրս էին գալիս ազգային

¹⁰ Իզոլյացիոնիզմը դարձել էր ամերիկյան արտաքին քաղաքականության ավանդույթը:

շրջանակներից և, այդ ուժերը ի վիճակի չէին կանգնեցնելու ամերիկյան արտաքին տնտեսական էքսպանսիան:

1898թ. փետրվարին Կուբայում գտնվող ամերիկյան քաղաքացիների և նրանց սեփականության պաշտպանության պատրվակով, ԱՄՆ կառավարությունը Հավանայի նավահանգիստ ուղարկեց “Մեն” հաճանավր: Փետրվարի 15-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով, հաճանավր խորտակվում է և զոհվում են նրա անձնակազմի 260 անդամները: ԱՄՆ կառավարությունը չբավարարվելով Իսպանիայի կողմից ներկայացված պայթյունի պատճառների մասին բացատրություններով, վերջնագիր է ներկայացնում, պահանջելով Իսպանիայից զինադադար կնքել և վերջ տալ բռնությունների քաղաքականությանը: Իսպանիայի պատասխանը ձգձգվեց և ապրիլի 11-ին նախագահ Մաքքինլին, դիմելով Կոնգրեսին ասում է, որ սպառվել են բոլոր հնարավորությունները Կուբայում անտանելի վիճակը խաղաղ միջոցներով վերջ տալու համար և, նա խնդրում է, որ Կոնգրեսն իր համաձայնությունը տա ԱՄՆ ռազմական միջամտության վերաբերյալ: Կոնգրեսն իր համաձայնությունը տալիս է և, բացի այդ, ճանաչում է Կուբայի անկախությունը և պահանջում, որպեսզի իսպանացիները դուրս բերեն այնտեղից իրենց զորքերը: Դրանից հետո, 1898թ. ապրիլի 21-ին Իսպանիան խզում է ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները: Հաջորդ օրը, ԱՄՆ շրջափակում է Կուբայի բոլոր նավահանգիստները, իսկ ապրիլի 24-ին Իսպանիան ԱՄՆ-ին պատերազմ է հայտարարում: Բացի Կուբայից պատերազմի մեջ ներգրավված էին Պուերտո-Ռիկոն և Ֆիլիպինները, որոնք նույնպես շարունակում էին մնալ իսպանական գաղութներ:¹¹

Պատերազմը տևեց 100 օր (պատերազմական գործողությունները տեղի էին ունենում, հիմնականում, ծովում) և ավարտվեց ԱՄՆ-ի դյուրին հաղթանակով: 1898թ. հունիս-օգոստոս ամիսների ընթացքում ոչնչացվեց իսպանական նավատորմը, ամերիկացիները գրավեցին Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլան և օկուպացրին Պուերտո-Ռիկոն: 1898թ. դեկտեմբերին Փարիզում ստորագրվում է հաշտության պայմանագիր, որով 1. Իսպանիան դուրս բերեց իր զորքերը Կուբայից, 2. Որպես ռազմատուգանք Իսպանիան ԱՄՆ-ին հանձնեց Պուերտո-Ռիկոն և Գուամը, 3. ԱՄՆ 20 մլն. դոլարով Իսպանիայից գնեց Ֆիլիպինները:

Սակայն Կուբան անկախություն այդպես էլ չստացավ: Երբ 1901թ-ին Կուբայի Սահմանադիր ժողովը հավանություն տվեց անկախ պետության ստեղծմանը, ԱՄՆ Կոնգրեսն, իր հերթին, ընդունեց, այսպես

¹¹ Ֆիլիպիններում, ինչպես և Կուբայում, իսպանացիների դեմ ապստամբություն էր բռնկվել:

կոչված, “Պլատտի ուղղումը”, որով ԱՄՆ իր հսկողության տակ էր վերցնում Կուբայի ներքին և արտաքին քաղաքականությունը:¹²

Հաստատվելով Կարիբյան ծովի կղզիներում և Խաղաղ օվկիանոսի միջին մասում, ԱՄՆ ընդհուպ մոտեցավ Ասիական մայրցամաքին, որն Աֆրիկայի հետ մեկտեղ դառնում էր եվրոպական պետությունների առևտրա-տնտեսական շահերի օբյեկտը: Միացյալ Նահանգները մեծ հաջողության էին հասել ռազմա-ծովային նավատորմի կառուցման գործում (նավատորմի հզորությամբ ԱՄՆ զբաղեցնում էր 5-րդ տեղն աշխարհում), սակայն նրանք ի վիճակի չէին ուժի միջոցով վիճարկել առաջատար եվրոպական պետությունների տնտեսական և քաղաքական դիրքերն Ասիայում: Այստեղ, ի տարբերություն Լատինական Ամերիկայի, ներթափանցման համար անհրաժեշտ էր օգտագործել այլ ռազմավարություն: Այդ նոր ռազմավարությունն ընդգրկվեց ԱՄՆ պետքարտուղար **Ջ. Հեյի դոկտրինայի** մեջ: Այս դոկտրինայով առաջարկվում էր տնտեսական մրցակցության համար ընդունել հատուկ օրենքներ և կիրառել դրանք չինական շուկայում: ԱՄՆ առաջարկում էր ղեկավարվել ջենտլմենական սկզբունքներով՝ վարել նույն մաքսային քաղաքականությունը, երկաթուղային ճանապարհներով ապրանքների տեղափոխումների և նավահանգիստներում ապրանքների հետ կապված ծառայությունների համար հաստատել ընդհանուր վարձ և այլն:

Հանդես գալով այսպիսի լիբերալ սկզբունքներով (ազատ առևտուր և հավասար հնարավորություններ), ԱՄՆ հույս ուներ, որ տնտեսական մրցակցությունում կհաղթի եվրոպացիներին: 1899թ. սեպտեմբերին պետքարտուղար Հեյը պաշտոնական հայտագրեր ուղարկեց Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և Իտալիայի կառավարություններին, որտեղ նրանց ծանոթացնում էր իր առաջարկներին: Փաստորեն, չսպասելով վերջնական պատասխանի (ԱՄՆ առաջարկներին միանշանակ աջակցեց միայն Իտալիան), 1900թ. մարտին Միացյալ Նահանգները պաշտոնապես հռչակում են Չինաստանի նկատմամբ “բաց դռների” քաղաքականություն, որից հետո ամերիկյան բիզնեսն սկսում է ակտիվորեն ներթափանցել չինական շուկա: Սակայն ԱՄՆ-ին (նա դեռևս զիջում էր Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային և Գերմանիային) այդպես էլ չհաջողվեց որպես առաջատար հաստատվել Չինաստանում, ինչպես և ամբողջ Ասիայում:

¹² Այդ ուղղումը հիմք հանդիսացավ նաև 1903թ. մայիսին ԱՄՆ-ի և Կուբայի միջև կնքված պայմանագրի համար, որով ԱՄՆ իրավունք էր ստանում անժամկետ վարձակալել Գուանտանամոյի ռազմա-ծովային բազան: Այդ պայմանագիրը գործում է մինչև այսօր:

Թեմա 2.3. ԱՄՆ “Առաջադեմ” դարաշրջանում (1900-1914թթ.)

ԱՄՆ Նախագահները



Թեոդոր Ռուզվելտ (1858-1919) —ԱՄՆ 26-րդ նախագահը (1901-1909)



Ուիլյամ Հովարդ Թաֆտ (1857-1930)—ԱՄՆ 27-րդ նախագահը (1909-1913)



Վուդրո Վիլսոն (1856-1924)— ԱՄՆ 28-րդ նախագահը (1913-1921)

Առաջադեմ շարժման սոցիալ-տնտեսական գաղափարախոսության ձևավորումը

Առաջադեմների առաջին գաղափարախոսներից էր **Լեսթեր Ուորդը**, որը Սամների նման նույնպես սոցիոլոգ էր, սակայն, ի տարբերություն սոցիալ-դարվինիստական ուսմունքի, ասում էր, որ տարբերությունը կենսաբանական և հասարակական զարգացումների միջև կայանում է նրանում, որ կենդանական աշխարհը, գտնվելով լիակատար կախման մեջ շրջապատող միջավայրից, փոփոխության է ենթարկվում նրա ազդեցության տակ, իսկ մարդն ինքն է փոփոխման ենթարկում շրջապատող միջավայրը, ցույց տալով իր առավելությունը նրա և մյուս կենսաբանական տարատեսակների հանդեպ: Այսպիսով, եթե սոցիալ-դարվինիստական տեսությունը, փաստորեն, հասարակության ստորին դասակարգերին իրենց սոցիալական վիճակը բարելավելու համար ոչ մի հույս չէր թողնում, ապա Ուորդի տեսությունն ուներ վառ մարդասիրական ուղղվածություն: Հաստատելով, որ

հասարակության մեջ գործող այնպիսի ինստիտուտներ, ինչպես մասնավոր սեփականությունը, կապիտալը, շուկան, պետությունը և կուսակցությունները հավերժ են, Ուորդը նպատակ էր դրել բարեփոխել նրանց շրջապատող սոցիալական միջավայրը, որը նա բաժանում էր ռասայական-էթնիկականի, կրոնականի, աշխարհագրականի, կրթականի և տնտեսականի: Եթե Սամները և սոցիալ-դարվինիզմը հասարակական անհավասարությունը բացատրում էր մարդկանց բնածին ընդունակությունների տարբերություններով, ապա Ուորդն ապացուցում էր, որ տարբեր սոցիալական շերտերի ներկայացուցիչներն հենց ծնված օրվանից դրվում էին անհավասար պայմանների մեջ, որոնք ոչ թե բնական, այլ, առաջին հերթին, արհեստական բնույթ էին կրում, և Ուորդն առաջարկում էր դա ուղղել: Ինքը, Ուորդն, առաջ չէր քաշում կոնկրետ սոցիալական բարեփոխումների ծրագիր, թույլ տալով դա անել քաղաքական գործիչներին: Սակայն Ուորդը հիմք դրեց լիբերալիզմի բարեփոխմանը, որը ժամանակի ընթացքում կոչվեց **նոր կամ սոցիալական լիբերալիզմ**: Ինչ վերաբերվում է տրադիցիոն (ավանդույթային) լիբերալիզմին, որը հասարակության զարգացման տեսության հիմքում դնում էր անսահմանափակ անձնական ազատությունը և “պետական չմիջամտության” սկզբունքը, ապա այն ԱՄՆ-ում սկսեցին անվանել **պահպանողական**: Աստիճանաբար Ուորդի գաղափարախոսությունը լայն տարածում ստացավ ԱՄՆ-ում և դրա մեջ հատուկ դեր կատարեց հայտնի “Նյու ռիփաբլիկ” լիբերալ ամսագրի հիմնադիր **Շերբերտ Քրոուլին**, որի “Ամերիկայի ապագան” գիրքը (1909թ.) դարձավ քաղաքական բեստսելլեր և Առաջադեմ շարժման մանիֆեստ: Ըստ Քրոուլիի մոնոպոլիզացված Ամերիկան ի վիճակի կլինի հաջողությամբ լուծել իր տնտեսական և սոցիալական խնդիրները, եթե նրա քաղաքականության հիմքում ընկած լինեն ամերիկյան հիմնադիր հայրերի՝ Ջեֆֆերսոնի և Համիլթոնի գաղափարներից վերցված երկու հիմնական սկզբունքները: Ջեֆֆերսոնից՝ նրա “ամերիկյան մեծ երազանքը” քաղաքացիների հավասար հնարավորությունների և նրանցից յուրաքանչյուրի տնտեսական բարեկեցությանը մասնակից դարձնելու մասին: Միաժամանակ Ջեֆֆերսոնի այդ նպատակին հասնելու համար “ամենալավ կառավարությունն այն է, որը քիչ է կառավարում” բանաձևը, որը դեռ գործում էր մինչև Քաղաքացիական պատերազմն, արդեն հնացել էր և չէր գործում, որովհետև մենաշնորհներն հաջողության հասնելու շանս չէին թողնում անկախ անձանց: Այդ նպատակին հասնելու համար հարկավոր է, ըստ Քրոուլիի, Համիլթոնի գաղափարախոսությունից վերցնել ուժեղ կենտրոնական կառավարության մասին սկզբունքը: Միայն այդպիսի ուժեղ կենտրոնական ազգային կառավարությունը կարող է ծառայել երկրում

համընդհանուր բարեկեցության և սոցիալական հաշտության հաստատման գաղափարին:

Քրոուլին ունեցավ շատ համախոհներ, որոնք սկսում են ակտիվ քննարկել, թե ինչ բարեփոխումներ պետք է անցկացնի ուժեղ և կրթված պետությունը: Ասվում էր, որ գոյություն ունեն երկու հիմնական սոցիալական խնդիրներ՝ մենաշնորհներ և բանվորական շարժում: Ռեֆորմատորների մեծ մասը եկան այն եզրակացության, որ մենաշնորհները տնտեսության մեջ ավելի արդյունավետ են, քան առաջվա ազատ մրցակցությունը, սակայն, միևնույն ժամանակ, նրանք պահանջում էին պետությունից վերջ տալ արդյունաբերական և ֆինանսական մագնատների կողմից չարաշահումներին և ստեղծել հստակ և ավելի արդար վերաբաշխման մեխանիզմ, որը թույլ կտար հասարակության բոլոր ներկայացուցիչներին օգտվելու տնտեսական բարիքներից:¹³

Բանվորական շարժման մեջ առանձնացվում էին երկու ուղղություններ՝ թրեյդ-յունիոնիստական և արմատական-սոցիալիստական: Ըստ լիբերալ ռեֆորմատորների հասարակության համար վտանգ էր ներկայացնում երկրորդ ուղղությունը, որովհետև թրեյդ-յունիոնիզմը հետապնդում էր բանվորների տնտեսական վիճակը բարելավելու նպատակ միայն գոյություն ունեցող համակարգի շրջանակներում: Այդ պատճառով, պետության առջև նպատակ էր դրվում ճանաչել և նույնիսկ խրախուսել արհմիությունները, ինչը կչեզոքացներ ռադիկալ-սոցիալիստներին, որոնց գաղափարախոսությունը վտանգ էր ներկայացնում հասարակության հիմնական ինստիտուտների գոյատևմանը:

Լիբերալները հերքեցին աշխատանքի և կապիտալի միջև անտագոնիստիկ (անհաշտելի հակամարտություն) բնույթ ունեցող սոցիալիստների գաղափարը, որն, իբր, պայմանավորված էր արտադրության միջոցների վրա հաստատված մասնավոր սեփականությամբ: Իրականում նրանց հակամարտությունը կրում էր բաշխողական բնույթ (շահույթի հետ կապված) և այն կարելի էր լուծել փոխադիման և բանակցությունների միջոցով: Աշխատանքի և կապիտալի

¹³ Նշենք, որ 20-րդ դ. սկզբից մենաշնորհների թիվը աճում էր: Եթե 19-րդ դ. վերջին մենաշնորհների թիվը հասնում էր 60, ապա նոր դարի սկզբին 185: Ամենահայտնի և հզոր մենաշնորհներից էին “Յունայդեթ ստեյթս ստիլ կորպորեյշն”, “Ստանդարտ օյլ կոմպանի”, “Բեյլ տելեֆոն սիստեմ”, “Ֆորդ մոտոր կոմպանի”, իսկ մոնոպոլիստներից ամենահայտնի անուններն էին Էնդրյու Քարնեգի, Ջոն Ռոքֆելլեր, Կորնելիուս Վանդերբիլտ, Ջոն Մորգան, Հենրի Ֆորդ: Եթե 1893թ-ին ամերիկացիների 9%-ին պատկանում էր ազգային հարստության 71%-ը, ապա արդեն 1903թ-ին ամերիկացիների 1%-ը տիրում էր երկրի հարստության 87%-ին:

միջև հակամարտությունը մեղմացնելու առաջին ձևը, լիբերալների համոզվածությամբ, կայանում էր բանվորներին արտադրության արժեթղթերը ձեռք բերելու հնարավորությունը ստանալու մեջ, իսկ երկրորդ ձևը՝ աշխատավարձերի ճկուն բարձրացման, ինչը նշանակում էր, որ բանվորների եկամուտները պետք է աճեին արտադրության եկամուտների հետ միասին:

Սոցիալական լիբերալիզմի հզոր գաղափարախոսական հոսանքի հետ մեկտեղ 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ում ստեղծվում է լայն լրագրողա-հրապարակախոսային շարժում, որն զբաղվում էր մենաշնորհային Ամերիկայի բոլոր բացասական կողմերը մանրամասն ցույց տալով, նկարագրելով, ինչպես նաև բացահայտելով իշխանությունների և մեծ բիզնեսի հանցավոր կապը: Այդ լրագրող-դեմոկրատների գործունեությունը վերններում, բնականաբար, առաջացնում էր դժգոհություն: Շուտով նրանք այդ լրագրողներին անվանեցին **“կեղտ ցրիվ տվողներ” (muckrakers)**: Այդ անվան տակ էլ նրանք մտան ԱՄՆ պատմության մեջ: Թերթերի և հանդեսների տպաքանակը, որոնք տպագրում էին “կեղտը ցրիվ տվողների” հոդվածները, մի քանի անգամ բարձրանում էր: Միանգամից տասնյակ հրատարակչություններ, գնահատելով այդպիսի լրագրողների առևտրական հնարավորությունները, բաց են անում նրանց համար իրենց դռները: Ձեռներեց հրատարակիչների և լիբերալ լրագրողների դաշինքը տվեց ապշեցուցիչ արդյունք: Լիբերալ լրագրողները դառնում են ռեալ քաղաքական ուժ և սոցիալական ու քաղաքական բարեփոխումների համար համազգային շարժման անբաժանելի մասը:

Առաջադեմ շարժումն սկզբից ձևավորվեց “ներքևում”, առանձին քաղաքների մակարդակով և ապա բարձրացավ նահանգների մակարդակի: Առաջին անգամ առաջադեմ բարեփոխումներն անցկացվեցին Վիսկոնսինում, Այովայում, Կալիֆորնիայում: 1908-1912թթ. առաջադեմ շարժումը դուրս եկավ համազգային մակարդակի վրա: Երկու գլխավոր կուսակցություններում ձևավորվեցին ռեֆորմիստական խմբեր, որոնք պահանջում էին կուսակցական ծրագրերի մեջ մտցնել տնտեսական, սոցիալական և քաղաքական բարեփոխումների մասին կետեր: Ընտրողների մեջ բարեփոխումներին վերաբերվող պահանջներն այնքան լայն տարածում էին ստացել այդ ժամանակ, որ դա արդեն հնարավոր չէր անտեսել:

Քաղաքական զարգացումը: Առաջադեմ բարեփոխումները, նրանց նշանակությունը

1908թ-ի ընտրությունների ժամանակ Դեմոկրատական կուսակցությունն իր ծրագրի մեջ ներառեց մի շարք ռեֆորմիստական

կետեր՝ 1. հակամենաշնորհային պայքարի ուժեղացում 2. ֆեդերալ եկամտային հարկի ներածում 3. ԱՄՆ-ի Կոնգրեսի գործունեության դեմոկրատացում: 1912թ-ին ծրագրի մեջ ավելացան սենատորների ուղիղ ընտրությունների մասին և արհմիությունների նկատմամբ հակամենաշնորհային օրենսդրության կիրառման արգելման մասին կետերը:

Հանրապետական կուսակցությունում բարեփոխումների կողմնակիցների ազդեցությունն այդքան էլ մեծ չէր: Իր նախագահության ժամանակ հանրապետականների առաջնորդ **Թեոդոր Ռուզվելտը (1901-1909)** մի քանի բարեփոխումների փորձ արեց, սակայն հանրապետականների մեծամասնությունը դրան դեմ դուրս եկավ (Ռուզվելտի նախագահության ժամանակ մենաշնորհների թիվը հասավ մինչև 10.000, նրանց ընդհանուր կապիտալը կազմում էր 31 մլրդ. դոլար): 1911թ-ին Հանրապետական կուսակցության փոքրամասնությունը, որը բարեփոխումների կողմնակից էր, անջատվեց կուսակցությունից և **1912թ-ին** ստեղծեց առանձին **Առաջադեմ կուսակցություն**: Այդ կուսակցությունը գլխավորեց Թ. Ռուզվելտը: Կուսակցությունն իր պահանջներով դեմոկրատներից ավելի հեռու գնաց, ծրագրի մեջ ներգրավելով երբեմնի Պոպուլիստական կուսակցության պահանջները:¹⁴

Կուսակցությունը կողմ էր բանվորական օրենսդրության ընդլայնմանը, պահանջում էր նաև կանանց համար ընտրական իրավունք տրամադրել: Առաջադեմները, ինչպես և Հերբերտ Քրոուլին, ումից կուսակցությունը վերցրել էր իր գաղափարախոսության մեծ մասը, համարում էին, որ մենաշնորհները հարկավոր է պահպանել, որովհետև նրանց շնորհիվ հնարավոր եղավ վերջ տալ տնտեսական քաոսին, ինչը բնորոշ է ազատ մրցակցությանը և հասնել հսկայական տնտեսական առաջխաղացման: Ուրիշ բան, որ ազգային հարստության զգալի մասը յուրացվում է մի բուռ մենաշնորհների կողմից: Հենց այստեղ իր խոսքը պետք է ասի պետությունը: Նրա պարտականության մեջ պետք է մտնեն գների հսկողությունը, մենաշնորհների եկամուտներին համապատասխան եկամտահարկերի հաստատումը, անազնիվ գործարքների բացահայտումը և այլն: 1912թ. ընտրությունների ժամանակ Դեմոկրատական և Առաջադեմ կուսակցությունները հանդես եկան որպես գլխավոր մրցակիցներ: Այն փաստը, որ Վուդրո Վիլսոնը և Թ. Ռուզվելտը առաջ անցան Հանրապետական կուսակցության թեկնածուից, խոսում էր այն մասին, որ սոցիալ լիբերալիզմը մեծ ուժ էր հավաքել ԱՄՆ-ում: **Նախագահ Վիլսոնը (1913-1921)**, որը հայտարարեց “նոր ազատության” քաղաքականության մասին, և Դեմոկրատական

¹⁴ Ընտրողներին տրամադրել սահմանադրության մեջ ուղղումներ կատարելու, պատգամավորներին հետ կանչելու իրավունքը:

կուսակցությունը կարողացան անցկացնել մի շարք լիբերալ բարեփոխումներ, որով և ավարտվեց Առաջադեմ դարաշրջանը: *Ընդհանուր առմամբ այդ ժամանակաշրջանում ընդունվեցին մի քանի ֆեդերալ օրենքներ և բազմաթիվ օրենքներ նահանգների մակարդակով, որոնց արդյունքում տեղի ունեցավ իշխանության վերաբաշխում վերին դասակարգի և հասարակության միջև, ինչը թույլ տվեց վերջինիս ընդլայնել հսկողությունը մենաշնորհների և քաղաքական համակարգի նկատմամբ:*

Առաջադեմ դարաշրջանի սոցիալ-տնտեսական դեմոկրատական բարեփոխումներից կարելի է առանձնացնել **ԱՄՆ Սահմանադրության 16-րդ ուղղումը** (ընդունվեց 1913թ.), որով մտցվում էր եկամտահարկ ֆեդերալ մակարդակի վրա: Այդ հարկը վերաբաշխման բնույթ ուներ և դառնում է ֆեդերալ բյուջեի համալրման հիմնական աղբյուրներից մեկը: Այդ հարկի շնորհիվ պետությունը հնարավորություն ստացավ կտրուկ ավելացնել սոցիալական ծախսերը և բնակչության չունեվոր խավերին հատկացվող օգնությունը: 1914թ-ին ընդունվում է օրենք, որով բանվորական միությունները (արհմիությունները), ի տարբերություն արդյունաբերողների միությունների, չէին կարող դիտվել որպես մենաշնորհներ և նրանց վրա չէին տարածվում հակամենաշնորհային օրենքները: Արհմիությունների առաջնորդներն այդ պահից հայտարարում են ԱՄՆ-ում **“Աշխատանքի Մեծ խարտիայի”** ստեղծման մասին:

1913թ.-ին Կոնգրեսն ընդունեց Ֆեդերալ ռեզերվային համակարգի մասին օրենք (Federal Reserve System Act), որը, փաստորեն, ստացավ ԱՄՆ Կենտրոնական բանկի նշանակությունը:

1913-1914թթ-ի ընթացքում ընդունվեցին օրենքներ, որով զգալի չափով կրճատվում կամ ընդհանրապես չեղյալ էին հայտարարվում մաքսատուրքերը մեծ քանակով ներմուծվող ապրանքների վրա:

1914թ-ին ստեղծվում է Ֆեդերալ առևտրի հանձնաժողով, որը պետք է իր վրա վերցնե հակամենաշնորհային օրենսդրության կատարման, ինչպես նաև անագնիվ մրցակցության կանխման հսկողությունը: Նույն թվականին ընդունվում է նաև Կլեյտոնի երկրորդ Հակամենաշնորհային օրենքը (Clayton Antitrust Act), որը, փաստորեն, առաջին օրենքի (Շերմանի) շարունակությունն էր:

Առաջադեմները մեծ հաջողությունների հասան նաև քաղաքական ասպարեզում: Այսպես, կարևորագույն բարեփոխումներից կարելի է համարել **ԱՄՆ Սահմանադրության 17-րդ ուղղումի** ընդունումը, որով սենատորների ընտրությունները դառնում էին ուղղակի:

1907թ-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունում է ընտրարշավների ֆինանսավորման մասին ֆեդերալ օրենք, որով ազգային բանկերին և մենաշնորհներին արգելվում էր ֆինանսավորել դրանք, իսկ 1911թ-ին մտցվեցին նոր սահմանափակումներ:

Առաջադեմ դարաշրջանի վերջին քաղաքական բարեփոխումը եղավ **ԱՄՆ Սահմանադրության 19-րդ ուղղումը** (1920թ.), որով ընտրություններին մասնակցելու իրավունք էին ստանում կանայք:

Ամփոփելով ասե՛ք, որ Առաջադեմ դարաշրջանում ԱՄՆ լուսավորյալ (կրթված) էլիտան ունակություն ցուցաբերեց հաշվի առնել հասարակության մեծնամասնության, այդ թվում նաև, ստորին խավերի շահերը և արտացոլել դրանք պետական օրենսդրության մեջ: Լուսավորյալ էլիտայի քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես սոցիալական փոխզիջում, որից վերին խավերը վերջին հաշվով ավելի շահեցին, քան կորցրեցին: Փաստերը ցույց են տալիս, որ ամերիկյան խոշոր բիզնեսը բարեփոխումներից հետո ոչ միայն չթուլացավ, այլև նույնիսկ ուժեղացավ: Այսպես, օրինակ, նախագահ-ռեֆորմատոր Վ. Վիլսոնի իշխանության վերջին տարում (1921թ.) առաջատար ամերիկյան մենաշնորհների ունեցվածքն ավելացել էր 1913թ. համեմատությամբ (Վիլսոնի նախագահության առաջին տարվա) միջինում 2-3 անգամ: **Ջիզուսները դեմոկրատիային, սոցիալական հաշտությունը միջին և ստորին դասակարգերի հետ վերին խավերին տնտեսապես ավելի շահավետ էր, քան սոցիալական բախումները և մենիշխանության ձգտումը:**

Հնարավոր չէ չնշել նաև մեծ ծավալների բարեգործության մասին, որն անում էին խոշոր արդյունաբերողները և բանկիրներն աջակցելով կրթությանը և մշակույթին: Նրանց փողերով հիմնվում էին բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցից շատերը մինչև այսօր ամերիկյան բարձրագույն դպրոցի հպարտությունն են, բացվում էին դպրոցներ չունևորների և սևամորթ քաղաքացիների համար, սպեղծվում էին հանրային գրադարաններ:

Խոշոր բարերարներից էին Մորգանը, Ֆրիկը, Մելլոունը, Վանդերբիլտը, Ռոկֆելլերը, Ֆորդը: Ամերիկյան մենաշնորհային կապիտալը ֆինանսավորում էր նաև 20-րդ դարի սկզբի տեխնիկական նորույթը՝ ռադիոն, որը շատ արագ մեծ տարածում ունեցավ երկրում: Այն թույլ տվեց միլիոնավոր ամերիկացիների ոչ միայն լսել երկրի քաղաքական գործիչների ելույթները, այլև խորասուզվել երաժշտական աշխարհի մեջ: Գրամոֆոնների և սկավառակների մեծածավալ արտադրությունը թույլ տվեց ծանոթանալ առաջին ամերիկյան մյուզիքլներին, ինչպես նաև հանրաձանոթ կոմպոզիտոր Իրվինգ Բերլինի և ռեգթայմի հիմնադիր Սքոթ Ջոփլինի սպեղծագործություններին: Խոշոր կապիտալը 1905թ. հիմք դրեց նաև ամերիկյան առաջին փոքր կինոթատրոնների՝ “նիկլոդեոնների” կառուցմանը, որտեղ ընդամենը 5 ցենտով ցուցադրում էին առաջին կարճամետրաժ կինոնկարները: 1910թ-ին երկրում կինոթատրոնների թիվը հասնում էր 10.000-ի:

Արտաքին քաղաքականությունը

Հաղթելով իսպանա-ամերիկյան պատերազմում (1898թ.), ԱՄՆ-ի լիակատար հսկողության տակ անցան Կարիբյան ծովը և Խաղաղ օվկիանոսին հարող լատինամերիկյան ափը, որի հետևանքով Վաշինգտոնը նախաձեռնեց միջօվկիանոսյան (Ատլանտյան-Խաղաղ) ջրանցքի կառուցումը: Կառուցելով և իր հսկողությունը հաստատելով ջրանցքի վրա, ԱՄՆ կստանար մեծ տնտեսական և քաղաքական առավելություն իր մրցակիցների նկատմամբ:

Ջրանցքը պետք է կառուցվեր Կոլումբիային պատկանող Պանամա նահանգում, սակայն Կոլումբիայի սենատը հրաժարվում էր ստորագրել ԱՄՆ-ի հետ ջրանցքի կառուցման պայմանագիրը, համարելով այն ոչ շահավետ: Կոլումբիայի սենատի այդ որոշումը զայրացրեց Թ. Ռուզվելտին: Նա հայտարարեց, որ «թույլ չի տա մի խումբ ավազակների թալանել Սեմ քեռուն»: Շուտով Պանամայում, ամերիկյան կառավարության աջակցությամբ, սկսվում է շարժում անկախության համար, որն ավարտվում է հաղթանակով և նոր անկախ պետության ստեղծումով: ԱՄՆ, ճանաչելով նորաստեղծ պետությունը, արդեն նրա հետ է կնքում ջրանցքի կառուցման պայմանագիրը: Ջրանցքի շինարարությունն սկսվեց 1906թ-ին և ավարտվեց 1914-ին: Շինարարության վրա ծախսվեց 375 մլն. դոլար:

20-րդ դարի սկզբին ԱՄՆ իր տնտեսական և քաղաքական գերիշխանությունն է հաստատում Լատինական Ամերիկայում: Ամերիկյան մենաշնորհները հսկում էին լատինամերիկյան պետությունների ֆինանսների, արդյունաբերության և գյուղատնտեսության մեծ մասը: Դա թույլ տվեց Թ. Ռուզվելտին 1904թ-ին «Մոնրոյի դոկտրինայի» վերաբերյալ տալ սեփական մեկնաբանություն, որն անվանվեց «Ռուզվելտի ուղղում»: Այստեղ, խոսելով միջամերիկյան հարաբերությունների մասին, նախագահն ասաց, որ ԱՄՆ-ի միջամտությունը Լատինական Ամերիկայի երկրների ներքին գործերին կհամարվի արդարացված, եթե այդ պետություններն անընդունակ լինեն լուծելու իրենց ներքին խնդիրները: Արդարացված կլինի ԱՄՆ-ի միջամտությունը նաև այն դեպքում, եթե լատինամերիկյան պետությունների որևիցե գործողության արդյունքում եվրոպական պետությունների կողմից ամերիկյան մայրցամաքի գործերի մեջ միջամտության վտանգ լինի: Լատինամերիկյան պետությունների կողմից այս կամ այն գործողության անօրինականությունը կամ վտանգավորությունը որոշելու իրավունքը տրվում էր ԱՄՆ-ին: Այսինքն, ԱՄՆ պատրաստ էր իր վրա վերցնել «միջազգային ոստիկանական ուժի» դերը և անհրաժեշտության դեպքում լատինամերիկյան պետությունների դեմ կիրառել «մեծ մահակի» քաղաքականությունը (Big Stick Policy; այդ քաղաքականության էությունը կայանում էր նախագահի կողմից «խոսել փափուկ և միշտ ունենալ մեծ մահակ» արտահայտության մեջ):

Այսպես, օրինակ, 1902թ-ին ԱՄՆ թույլ չտվեց Մեծ Բրիտանիային, Գերմանիային և Իտալիային ուժի միջոցով ստիպելու Վենետուելային վճարելու իր արտաքին պարտքը: Միացյալ Նահանգները կասկածի տակ չէին դնում Վենետուելայի պարտավորություններն արտաքին պարտքերի վճարման վերաբերյալ, սակայն հայտարարեցին, որ Ամերիկայում եվրոպական պետությունները չեն կարող ուժ գործադրել: “Մեծ մահակի” օգտագործման իրավունքն ԱՄՆ հաստատում է Կուբայի, Նիկարագուայի, Հաիթիի և մյուս երկրների հետ կնքված պայմանագրերում: Նրանք բոլորը համաձայնվեցին, որ ԱՄՆ կարող է նրանց պատժել ֆինանսական կամ քաղաքական “մեղքերի” համար:

Ռուզվելտը միջնորդի դեր է կատարում 1905թ-ին Ռուսաստանի և Ճապոնիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրման գործում:¹⁵ Այդ միջնորդության համար նա նույնիսկ արժանացավ Նոբելյան մրցանակի:

¹⁵ Ռուսաստանի և Ճապոնիայի միջև պատերազմը տեղի ունեցավ 1904-1905թթ-ին և ավարտվեց Ճապոնիայի հաղթանակով:

**Թեմա 2.4. ԱՄՆ առաջին աշխարհամարտի տարիներին:
Պահպանողականության ժամանակավոր ռևանշը
(1914-1921)**

ԱՄՆ Նախագահները



Վուդրո Վիլսոն (1856-1924) -- ԱՄՆ 28-րդ նախագահ
(1913-1921)

ԱՄՆ առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918)

1914թ. օգոստոսի 1-ին սկսվեց առաջին աշխարհամարտը, որը դարձավ ամենաարյունահեղը և կործանարարը մարդկության ամբողջ պատմության ընթացքում: Պատերազմում մասնակցեցին 33 պետություններ և 70 մլն. զինվոր: Չոհվեց մոտ 10. մլն մարդ, իսկ ռազմական գործողությունները տեղի էին ունենում երեք մայրցամաքների վրա՝ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում: Պատերազմի հիմնական պատճառն աշխարհի նոր վերաբաժանումն էր, ինչին ձգտում էին “երիտասարդ” կապիտալիստական պետությունները, մասնավորապես Գերմանիան: Իսկ աշխարհի նոր վերաբաժանում հասկացության տակ հասկացվում էր գաղութների վերաբաշխումը, ապրանքների համար սպառման շուկաների նվաճումը: Այդ պատճառով պատերազմը կրում էր զավթողական և ավազակային բնույթ: Հաշվի առնելով, որ այդ ժամանակ Բրիտանիան մնում էր տնտեսապես և ռազմական առումով աշխարհի ամենահզոր պետությունը, ուներ հսկայան թվով գաղութներ, իսկ Գերմանիան, որը տնտեսական զարգացման տեմպերով բոլորից առաջ էր անցել, բայց հետագա զարգանալու համար բավարար չափով գաղութներ չուներ և ձգտում էր դրանք խլել, առաջին հերթին, Բրիտանիայից, ապա պատերազմի հիմնական պատճառը կարելի է համարել անգլո-գերմանական տնտեսական հակամարտությունը:

Եվրոպան բաժանվեց երկու ռազմաստրատեգիական բլոկերի՝ Անտանտի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և սկզբից Եռյակ դաշինքի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա) իսկ հետո այն վերափոխվեց Բառյակ դաշինքի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա):

Նախագահ Վիլսոնի վարչակազմն իր վերաբերմունքը պատերազմի հանդեպ ներկայացրեց առաջին իսկ օրերից: Նախագահը հայտարարեց, որ ԱՄՆ պատերազմի նկատմամբ չեզոք դիրք է բռնելու: Բայց, միևնույն ժամանակ, ամերիկյան քաղաքական գործիչների մեծ մասը, ինչպես նաև երկրի խոշոր արդյունաբերական և ֆինանսական բիզնեսն իրենց նախապատվությունն ակնհայտորեն տալիս էին Անտանտի երկրներին: Բացի այն հանգամանքից, որ անգլո-ամերիկյան, ինչպես նաև ֆրանս-ամերիկյան և ռուս-ամերիկյան քաղաքական և տնտեսական հարաբերություններն այդ ժամանակ գտնվում էին բարձր մակարդակի վրա և ամերիկացիները վախենում էին այդ երկրների պարտության դեպքում կորցնել այնտեղ իրենց մեծ ֆինանսական ներդրումները, ԱՄՆ-ին բոլորից շատ անհանգստացնում էր այն, որ Գերմանիան հաղթանակի դեպքում կդառնար Եվրոպայի ռազմաստրատեգիական առումով ամենահզոր երկիրը:

ԱՄՆ կողմից հայտարարված չեզոքության քաղաքականությունը համապատասխանում էր Մոնրոյի դոկտրինայի և ավանդական իզոլյացիոնիզմի սկզբունքներին, և, հետևելով այդ սկզբունքներին, ԱՄՆ պատերազմի ժամանակ զբաղեցնում էր, փաստորեն, “երրորդ ծիծաղողի” դիրքը, որովհետև պատերազմի արդյունքում նա դառնում էր այն միակ երկիրը, որը կարողացավ մեծ տնտեսական և քաղաքական օգուտ քաղել:

Սկսած 1914թ. աշնանից երկրի տնտեսությունը վերելք է ապրում: Առաջին հերթին, մի քանի անգամ ավելանում են մետաղագործական և ռազմական ոլորտին պատկանող մենաշնորհների եկամուտները: Արտադրությունն էլ ավելի է աճում, երբ արտադրական պրոցեսում սկսում են օգտագործել հոսքագիծ (առաջին անգամ այն օգտագործվեց 1913թ-ին Հ. Ֆորդի գործարաններում): Պատերազմի առաջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ առևտրի ծավալն Անտանտի երկրների հետ ավելացավ գրեթե չորս անգամ:

1916թ-ին ընդունվեց Ազգային պաշտպանության մասին օրենքը (National Defense Act), որով զգալի չափով ավելանում էր ամերիկյան բանակի թվաքանակը: Կոնգրեսի որոշումով սկսվում է սուզանավերի, հաճանավերի, գծանավերի արագ կառուցումը:

1917թ. ապրիլի 6-ին ԱՄՆ-ը Գերմանիային պատերազմ է հայտարարում և այդ պահից մասնակցում ռազմական գործողություններին Անտանտի կողմից: ԱՄՆ մասնակցությունը պատերազմում բացատրվում էր ոչ միայն “դեմոկրատիայի պաշտպանությամբ և արդար խաղաղության հասնելու” նպատակներով, ինչպես ասվում էր պաշտոնական հայտարարությունում, այլև ուներ **երկու դրդապատճառ՝**

1. 1915թ. գարնանը գերմանական սուզանավը խորտակեց “Լուզիտանիա” անգլիական մարդատար նավը, զոհվեց 1198 մարդ,

որոնցից 124-ը ամերիկացիներ էին: Այդ դեպքն ամերիկյան հասարակության մեջ զայրույթի հսկայական ալիք բարձրացրեց: Վիլսոնը խստորեն պահանջեց Գերմանիայից վերջ տալ հանցավոր գործողություններին

2. այսպես կոչված “Յիմմերմանի ճեպագիրը”: Բրիտանական հետախուզությանը հաջողվում է գողանալ գերմանական ծածկագիրը և դրա օգնությամբ կարողալ ամբողջ դիվանագիտական նամակագրությունը Բեռլինի և արտասահմանում գտնվող գերմանական դեսպանատների միջև: 1917թ. հունվարի 19-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ա. Յիմմերմանը ճեպագիր է ուղարկում Մեքսիկայում Գերմանիայի դեսպան Հ. Ֆոն Էքհարդին, որտեղ դեսպանին տրվում էր հանձնարարություն Մեքսիկայի նախագահին առաջարկել ԱՄՆ-ի դեմ պատերազմ սկսել, ինչի համար Գերմանիան խոստանում էր Մեքսիկային մեծ ֆինանսական օգնություն և աջակցություն “մեքսիկական տարածքները” վերադարձնելու գործում (Տեխաս, Արիզոնա, Նյու-Մեքսիկո): Ճեպագրի տեքստը տպագրվում է մամուլում, ինչից հետո ամերիկյան հասարակության մեծ մասը սկսում է պահանջել պատերազմ Գերմանիայի դեմ:

Իսկ **պատերազմ հայտարարելու հիմնական պատճառը** կայանում էր նրանում, որ Միացյալ Նահանգները, որի տնտեսությունը հսկայական վերելք էր ապրում, հասկանում էր, որ Գերմանիան շուտով պարտվելու է և եթե չմասնակցի ռազմական գործողություններին, ապա կարող է դուրս մնալ աշխարհի հետպատերազմյան կարգավորման գործից, ինչը, հաշվի առնելով ԱՄՆ տնտեսական և քաղաքական հզորացումը պատերազմի տարիների ընթացքում, անթույլատրելի էր քաղաքական և տնտեսական էլիտայի կարծիքով: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ պատերազմում ԱՄՆ մասնակցության հարցում հետաքրքրված էին Անտանտի երկրները, առաջին հերթին, Բրիտանիան:

Ամերիկյան զորքերն սկսեցին եվրոպական մայրցամաք ժամանել 1917թ. հոկտեմբերին: Պատերազմի վերջում այնտեղ արդեն կար մոտ 2 մլն. ամերիկյան զինվոր, որոնց մեծ մասը մասնակցեց ռազմական գործողություններին: Պատերազմի արդյունքում ամերիկացիների կորուստները կազմեցին 115.000 սպանված և 206.000 վիրավոր: Համեմատելով նշենք, որ Մեծ Բրիտանիան կորցրեց 947.000 զինվոր, Ռուսաստանը՝ 1մլն. 700.000, Գերմանիան՝ մոտ 3 մլն և Ավստրո-Հունգարիան՝ մոտ 3մլն զինվոր:

Իհարկե, ինչպես տեսնում ենք, ԱՄՆ մասնակցությունը ռազմական գործողություններում և մարդկային կորուստները նվազագույն էին, բայց նյութական աջակցությունն Անտանտի երկրներին հսկայական էր: Ինչպես ասվեց, պատերազմը նպաստեց ամերիկյան տնտեսության արագ զարգացմանը: ԱՄՆ դառնում է **աշխարհի հիմնական**

պարտատերը: Պատերազմի ժամանակ ԱՄՆ վարկերը Անտանտի երկրներին կազմեցին մոտ **11 մլրդ. դոլար** և շուրջ 6,5 մլրդ. դոլար կազմեցին ամերիկյան մասնավոր ներդրումները: Արդյունքում ԱՄՆ Եվրոպայի հանդեպ պարտքեր ունեցող երկրից դառնում է նրա խոշորագույն պարտատերը: Պատերազմի վերջում ԱՄՆ-ում կուտակվել էր աշխարհի ոսկու պաշարների մոտ 40%-ը:

Փարիզի հաշտության կոնֆերանսը: Վիլսոնի “14 կետերը”

Հաղթող երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը աշխարհի հետպատերազմյան կարգավորման հարցերում միասնական չէին: Ամեն մեկն ուներ սեփական քաղաքական, տնտեսական և տարածքային շահերը, որոնք չէին համընկնում դաշնակիցների շահերի հետ: Այդ բոլոր բարդ և, վերջին հաշվով, անլուծելի տարածայնություններն արտացոլվեցին բանակցությունների ժամանակ և Վերսալյան պայմանագրի մեջ: Փարիզի հաշտության կոնֆերանսը բացվեց 1919թ. հունվարի 18-ին: Մասնակցում էին 27 պետություններ, սակայն, փաստորեն, բոլոր կարևորագույն հարցերը որոշում էին երեք պետություններ՝ Մեծ Բրիտանիան (վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջ), Ֆրանսիան (վարչապետ Ժակ Կլեմանսո) և ԱՄՆ-ը (նախագահ Վ. Վիլսոն):

Օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ Միացյալ Նահանգները հույս ուներ հաշտության կոնֆերանսում թելադրել իր կամքը: Նախագահ Վ. Վիլսոնը ներկայացրեց ամերիկյան “խաղաղության ծրագրի” “14 կետերը”: Այդ ծրագրի, ինչպես և ԱՄՆ արտաքին քաղաքական դոկտրինաների մեծ մասի մեջ, շատ էին լիբերալ-դեմոկրատական սկզբունքներով կետերը: Վիլսոնը համեմատում էր “14 կետերը” Մոնրոյի դոկտրինայի հետ՝ եթե վերջինն առաջարկում էր ամերիկյան մայրցամաքի հարցերի կարգավորումը հիմնված դեմոկրատական սկզբունքների վրա, ապա “14 կետերը” վերաբերում էին ամբողջ աշխարհին: Հիմնական կետերից էին՝ 1. բոլոր գաղութների ինքնորոշման իրավունք 2. խաղաղություն առանց ռազմատուգանքների և բռնակցումների 3. գաղտնի պայմանագրերի վերացում 4. հավասար առևտրային պայմաններ համաշխարհային շուկայում բոլոր երկրների համար (“ծովերի և առևտրի ազատություն”): Ինչպես և Մոնրոյի դոկտրինը, “14 կետերը” տպավորություն էին ստեղծում, որ ԱՄՆ առաջարկում է աշխարհի լիբերալ-դեմոկրատական կարգավորում անշահախնդիր կերպով, հետապնդելով ոչ թե ազգային, այլ միայն համամարդկային շահ: Սակայն, այդ կետերի իրականացման դեպքում դժվար չէ համոզվել, որ աշխարհի հենց այդպիսի կարգավորումը կապահովեր ԱՄՆ առավելությունն իր եվրոպական մրցակիցների

նկատմամբ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնագավառներում: Եվ, իրոք, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան՝ ԱՄՆ-ի հիմնական մրցակիցները, եթե հետևեին “14 կետերին”, պետք է հրաժարվեին իրենց հսկայական գաղութներից, իսկ ԱՄՆ-ը ոչ մի բան չէր կորցնում, որովհետև գաղութներ չունեի:

Այնուհետև, վերացնելով միջազգային մաքսատուրքերը և մտցնելով համաշխարհային շուկայում ազատ և հավասար մրցակցության սկզբունքը, ԱՄՆ, որն իր տնտեսական հզորությամբ եվրոպական երկրներից արդեն առաջ էր անցել, հնարավորություն էր ստանում ավելի էժան և որակյալ ապրանքների և ֆինանսական հզորության միջոցով հեշտությամբ հաստատել իր տնտեսական, իսկ դրա հետ մեկտեղ նաև քաղաքական գերիշխանությունը:

Մի խոսքով, լիբերալ-դեմոկրատական “14 կետերը” իրականում նշանակում էին ԱՄՆ կողմից համաշխարհային մակարդակով իր տնտեսական և քաղաքական գերիշխանության հաստատման ծրագիր: Դա շատ լավ հասկանում էին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Այդ պատճառով նրանք մերժեցին Վիլսոնի ծրագիրը և ներկայացրին սեփական առաջարկությունները, որով նրանց գաղութները ոչ միայն չնվազեցին, այլև, նույնիսկ ավելացան Գերմանիայի գաղութների հաշվին: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից ընդունվեց Վիլսոնի միայն մեկ առաջարկը՝ Ազգերի լիգայի ստեղծումը, սակայն առաջատար ղեկավարների տեղերն այդ նոր միջազգային կառույցում նրանք իրենց հատկացրեցին, ԱՄՆ-ին վերապահելով երկրորդական դիրքեր:¹⁶

Զարմանալի չէ, որ ԱՄՆ-ում Փարիզի հաշտության կոնֆերանսի արդյունքները, ինչպես և Վերսալյան պայմանագիրը, արժանացան սուր քննադատության: Վիլսոնը և նրա կողմնակիցներն անվանվեցին “ինտերնացիոնալիստներ” (այն առումով, որ նրանք ցանկանում էին աշխարհը ղեկավարել Ազգերի լիգայի միջոցով), իսկ քաղաքական կյանքում առաջատար դիրքերը նորից անցան “իզոլյացիոնիստներին”, որոնք փորձում էին ամերիկացիներին համոզել, որ բացի զոհաբերություններից, սղաճից, “չոր օրենքից” և կյանքի համար վտանգավոր գրիպի համաճարակից եվրոպական պատերազմն ամերիկացիներին ոչինչ չբերեց: “Իզոլյացիոնիստները” նախկին դաշնակիցներին մեղադրում էին ԱՄՆ “անշահախնդիր” ռազմական օգնության դիմաց երախտամոռ լինելու համար: Սակայն պետք չէ մտածել, որ “իզոլյացիոնիստները” մտադրություն ունեին մեկուսանալ համաշխարհային գործերից: Նրանք, ինչպես և Վիլսոնը, ցանկանում էին

¹⁶ ԱՄՆ այդ ժամանակ զգալիորեն զիջում էր ռազմական առումով իր դաշնակիցներին, այդ պատճառով ի վիճակի չէր պնդել իր առաջարկությունները դիմելով ուժային գործողությունների:

աշխարհում ԱՄՆ գերիշխանության հաստատումը, սակայն ոչ թե համագործակցելով “նենգ” Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ Ազգերի լիգայում, այլ ամերիկյան տնտեսական և քաղաքական շահերն ինքնուրույն առաջ քաշելու հիման վրա: Իզոլացիոնիստական ուղղությունն ավելի տարածում ստացավ Հանրապետական կուսակցությունում, իսկ ինտերնացիոնալիստական գաղափարները՝ Դեմոկրատականում:

Պահպանողականության ժամանակավոր ռևանշը

Լիբերալ բարեփոխումները շարունակվեցին մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը, իսկ հետո կտրուկ սկսեցին նվազել, ինչը բացատրվում էր պատերազմական ժամանակաշրջանի հետ կապված հատուկ պայմաններով, երբ պետությունը թշնամու նկատմամբ հաղթանակի հասնելու համար մոբիլիզացնում է երկրի բոլոր նյութական և մարդկային ռեսուրսները: Երբ 1917թ-ին ԱՄՆ մուտք գործեց պատերազմ, Վիլսոնի կառավարությունը հակապատերազմական ուժերի ճնշելու համար դիմեց երեք հիմնական միջոցների՝ 1. հատուկ կարգադրությունների հիման վրա երկրից վտարվում էին բոլոր այն օտարերկրացիները և ներգաղթյալները, որոնք զբաղվում էին նենգադուլով (սաբոտաժ) ռազմական արդյունաբերությունում, հեղափոխական կոչեր անում: 2. կառավարությունը ճնշում էր գործադուլները, առաջին հերթին, նրանք որ առաջ էին քաշում քաղաքական պահանջներ: Պետությունը ջախջախիչ հարված հասցրեց “Աշխարհի ինդուստրիալ բանվորներ” արմատական արհմիությանը, որից հետո նա այդպես էլ չկարողացավ ոտքի կանգնել: 3. Գործելով լրտեսության և դավաճանության մասին օրենքների հիման վրա, կառավարությունը ճնշումների էր դիմում այն անձանց հանդեպ, որոնք դիմադրում էին նրա մոբիլիզացիոն միջոցառումներին կամ իրենց գործողություններով վիրավորանք էին հասցնում պետությանը, երկրի դրոշին, սահմանադրությանը, ԱՄՆ ռազմական ուժերին: Այսպես, Սոցիալիստական կուսակցության առաջնորդ Յուզին Դեբսը, որը դեմ էր պատերազմում ԱՄՆ մասնակցությանը, բանտարկվեց 2,5 տարով:

Պատերազմից հետո կառավարության ճնշումները արմատականների և սոցիալիստների հանդեպ շարունակվեցին: Դա բացատրվում էր նրանով, որ պետությունը չէր կարող թույլ տալ որ երկրում տարածում ստանան բոլշևիկյան գաղափարները:¹⁷

¹⁷ 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի է ունենում հեղաշրջում, որի արդյունքում իշխանության գլուխ են անցնում բոլշևիկները, որոնց գլխավոր նպատակը՝ համաշխարհային պրոլետարական սոցիալիստական

Այսպիսով, լիբերալ քաղաքական շրջանն իր տեղը զիջեց պահպանողական շրջանին: Քաղաքական պահպանողականության տարածման հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ ԱՄՆ-ը 20-րդ. դարի 20-ական թթ-ին մտնում էր տնտեսական բարգավաճման նոր տասնամյակ, որն ամերիկյան պատմության մեջ մտավ որպես «Բարգավաճման տասնամյակ»:

հեղափոխությունն էր: Նրանց գաղափարները հետպատերազմյան առաջին տարիներին լայն տարածում էին ստացել Եվրոպայում:

ՄԱՍ 3

ԱՄՆ նորագույն դարաշրջանում /20-րդ դ. երկրորդ կեսից-21դ. սկիզբ/

Թեմա 3.1. ԱՄՆ զարգացումը մինչև տնտեսական ճգնաժամի սկիզբը: Մեծ Լճացումը (1929-1933թթ.)

ԱՄՆ Նախագահները



Ուորրեն Հարդինգ (1865-1923թթ.) - ԱՄՆ 29-րդ
նախագահը (1921-1923թթ.)



Քեյվլին Քուլիջ (1872-1933) – ԱՄՆ 30-րդ նախագահը
(1923-1929)



Հերբերտ Հուվեր (1874-1964) - ԱՄՆ 31-րդ նախագահը
(1929-1933)

Նախագահ Հարդինգի ներքին և արտաքին քաղաքականությունը

Հարդինգի նախագահությամբ սկիզբ է առնում ամերիկյան պատմության նոր փուլը: Նոր նախագահն այն անվանեց “նորմալության” շրջան, որի ժամանակ պետք է վերջ տրվեր այն օրենքների կիրառմանը, որոնք ընդունվել էին պատերազմի ժամանակ: Հիմնականում դա այն օրենքներն էին, որոնք թույլ էին տալիս պետությանն ակտիվ մասնակցել երկրի տնտեսական կյանքին: Նոր հանրապետական վարչակազմը

որպես իր գործունեության հիմնական սկզբունք հայտարարում էր հնարավորությունների հավասարության գաղափարը, ինչը պետք է թույլ տար հասնել գլխավոր նպատակին՝ “համընդհանուր բարօրությանը”։ Սակայն Հարդինգը և նրա կառավարությունն առաջին իսկ քայլերից ցույց տվեցին, որ նրանք յուրատեսակ ձևով են հասկանում “համընդհանուր բարօրությունը”։

Նախագահը և Հանրապետական կուսակցությունը փորձ էին անում ապացուցել ամերիկացիներին, որ երկրի ծաղկումն ապահովեցին մենաշնորհները և այդ պատճառով նրանց գործունեությանը պետք է տրվի ազատություն։ Բացի այդ, հանրապետականները պնդում էին, որ խոշոր կապիտալի ներկայացուցիչներին հարկավոր է ներգրավել տնտեսական կառավարման մեջ։ Հիմք ընդունելով այդ գաղափարը, ֆինանսների նախարար նշանակվեց խոշոր բանկիր և արդյունաբերող, երկրի ամենահարուստ մարդկանցից մեկը՝ Է.Մեյլոն, պետքարտուղար դարձավ Չ.Հյուզը, առևտրի նախարար միլիոնատեր Հ.Հուվերը, ռազմածովային նավատորմի նախարար միլիոնատեր Է.Դենբին, իսկ ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ նշանակվեց ԱՄՆ նախկին նախագահ Ու.Թաֆտը։ Է.Մեյլոն, որը դարձավ խոշոր կապիտալի քաղաքական ազդեցության խորհրդանիշը, իր պաշտոնում մնաց մինչև 1932թ.-ը։ Զբաղեցնելով այդ պաշտոնը, նա ստիպված եղավ դուրս գալ 51 մենաշնորհների ղեկավարությունից, սակայն նրա աշխատանքը ֆինանսների նախարարի պաշտոնում արդարացրեց այդ զոհաբերությունը, բերելով հսկայական շահույթ ամբողջ խոշոր բիզնեսին։ Այսպես, 1921թ. նրա նախաձեռնությամբ մեկ միլիոն դոլարը գերազանցող եկամուտների վրա հարկը իջեցվեց 66-ից մինչև 50%-ի, իսկ 1926թ.՝ մինչև 20%-ի։ Բարձրացվեցին մաքսատուրքերը, թուլացվեց պետության հսկողությունը մենաշնորհների նկատմամբ։ Մյուս կողմից ուժեղանում էր ճնշումն արհմիությունների վրա, ինչը բերեց նրանց կրճատմանը համարյա 1,5 անգամով։ Բանվորների աշխատավարձը մնում էր բավական բարձր մակարդակի վրա, սակայն ընդունվեցին մի քանի օրենքներ, որով կտրուկ նվազեցրին ներգաղթողների թիվն աղքատ և միջին զարգացում ունեցող եվրոպական երկրներից, իսկ ասիական երկրներից ներգաղթն արգելված էր։

Ամերիկյան պատմաբաններ Ա.Նեվիլսը և Գ.Քոմմաջերը գրում են՝ “Հարդինգի պատկերացումը “նորմալության” մասին վերադարձնում է երկիրը Մարկուս Հաննայի և Մաքքինլիի ժամանակները, երբ գոյություն ունեին և միմյանց հետ զուգակցում էին երկու քաղաքական ուղղություններ։ Առաջին ուղղությունը կայանում էր նրանում, որ մասնավոր ձեռներեցությունն ազատվում էր պետական հսկողությունից և երկրորդը՝ մասնավոր բիզնեսը ֆինանսավորվում էր Վաշինգտոնի

կողմից: Կառավարությունը հեռացավ բիզնեսից, սակայն բիզնեսը ներխուժեց կառավարության քաղաքականության մեջ”:

1920թ. հունվարին ընդունվեց ԱՄՆ Սահմանադրության 18-րդ ուղղումը, որով երկրում արգելվում էր ակոհոլային խմիչքների (սպիրտի պարունակությունը չպետք է գերազանցեր 0,5%-ը) արտադրությունը, վաճառքը և տեղափոխումը: Վոլսթեդի օրենքի համաձայն (Volstead Act) ստեղծվեցին հատուկ իրավապահպան կառույցներ, որոնք փոփոխակի հաջողությամբ պայքարում էին ակոհոլային խմիչքների մաքսանենգության և տնային ինքնաթոր վիսկիի և օղու արտադրության դեմ: Երկրում օրենքը խախտողների թիվն աճում էր, ինչը, իր հերթին, հանգեցնում էր նաև հանցագործությունների աճին, առաջին հերթին, խոշոր քաղաքներում: Ամերիկյան անգլերենում նույնիսկ առաջացավ նոր խոսք “bootlegging”, ինչը նշանակում էր անօրինական ակոհոլային խմիչքների փոխադրում: 20-ական թթ-ի վերջին “չոր օրենքը” սոցիալ-բարոյական հարցից դառնում է քաղաքական-տնտեսական խնդիր:

Հարդինգն իր արտաքին քաղաքականության մեջ նորից ընտրում է “Հին Աշխարհի գործերին չմիջամտելու” սկզբունքը: Մյուս կողմից 20-րդ դարի 20-ական թթ. դառնում են ԱՄՆ միջազգային դիրքի ամրապնդման տարիներ, ինչը տեղի ունեցավ, առաջին հերթին, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջազգային դիրքերի թուլացման, ինչպես նաև Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի կայսրությունների փլուզման հետևանքով: 1921թ. հուլիսի 2-ին ԱՄՆ Կոնգրեսը պաշտոնապես հայտարարեց Առաջին աշխարհամարտի ավարտի մասին: Իզոլյացիոնիստական տրամադրությունների հաղթանակը երկրում թույլ տվեց ԱՄՆ-ին, պատերազմից ստանալով հսկայական նյութական շահույթներ, մինևույն ժամանակ, իրենց վրա պատասխանատվություն չվերցնել իրադարձությունների հետագա զարգացման համար Եվրոպական մայրցամաքում (այդ կապակցությամբ ամերիկյան թերթերից մեկը գրեց՝ “ինչպես երևում է մեր արտաքին քաղաքականությունը կայանում է նրանում, որ մենք չենք մասնակցելու ոչ մի դաշինքի, բայց հաճույքով կմիջամտենք ամեն ինչի մեջ”): Հետագայում ԱՄՆ մեղադրեց Եվրոպական երկրներին Երկրորդ աշխարհամարտի նախադրյալների ստեղծման, իսկ Եվրոպան, իր հերթին, մեղադրեց ԱՄՆ-ին այդ նախադրյալներն անտեսելու մեջ:

Հարդինգի նախաձեռնությամբ 1921թ. նոյեմբերի 12-ին Վաշինգտոնում բացվում է միջազգային կոնֆերանս, որը նվիրված էր ռազմածովային ուժերի կրճատման և ծովում պատերազմ վարելու սկզբունքների համապատասխանեցմանը: Այդ նախաձեռնությունն աջակցություն ստացավ հինգ ամենախոշոր ռազմածովային պետությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից: Ծանր բանակցությունների արդյունքում 1922 թ-ին

ստորագրվեց համաձայնագիր, որով այդ պետությունների միջև հաստատվեց ծանր ռազմանավերի հետևյալ հարաբերակցությունը՝ 5-5-3-1, 67-1, 67 համաչափությամբ: Այդ հարաբերակցությունը տարածվում էր նաև սուզանավերի վրա:¹⁸

20-ական թթ-ի սկզբին սրվում է տնտեսական և քաղաքական վիճակը Գերմանիայում: Վերսալյան պայմանագրի համաձայն Գերմանիան պետք է վճարեր ռազմատուգանք, որի ընդհանուր գումարը կազմեց 33 մլրդ. դոլար, կամ 132 մլրդ. գերմանական մարկ: Սակայն ծանր տնտեսական վիճակը և գերմանական մարկի շարունակվող արժեքազրկումը թույլ չէր տալիս Գերմանիային սկսել ռազմատուգանքի վճարումները, ինչը շատ էր անհանգստացնում հաղթող երկրներին, առաջին հերթին Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, որոնք, իրենց հերթին, պարտք էին ԱՄՆ-ին: Բացի այդ անչափ սրվել էր Գերմանիայի ներքին քաղաքական վիճակը: 1923թ. վերջին գերմանացի կոմունիստները փորձ արեցին գինված ապստամբության միջոցով տապալել դեմոկրատական բուրժուական կառավարությունը: Ապստամբությունը ձախողվեց, սակայն բոլշևիզմի վտանգը դեռևս մեծ էր, իսկ խուսափելու համար իրադարձությունների անցանկալի զարգացումներից պետք էր շտապ վերականգնել գերմանական տնտեսությունը, ինչն, իր հերթին, կհեշտացներ նաև ռազմատուգանքի վճարումը:

1924թ. օգոստոսին ԱՄՆ նախաձեռնությամբ ընդունվում է Դաուեսի ծրագիրը (Dawes Plan), որով Գերմանիային տրամադրվում էր փոխառություն, որի մեծ մասը տրվում էր ամերիկյան բանկերի կողմից: Այսպիսով, Դաուեսի ծրագրի ընդունումը հետապնդում էր երկու նպատակ՝ 1. քաղաքական (բարելավելով տնտեսությունը կայունացնել դեմոկրատական քաղաքական համակարգը և դրա արդյունքում թույլ չտալ երկու ծայրահեղ քաղաքական ուժերին՝ կոմունիստներին և նացիստներին գլուխ բարձրացնել) և 2. տնտեսական (վերականգնել գերմանական տնտեսությունը, ինչը թույլ կտար վճարել ռազմատուգանքը): ԱՄՆ դաշնակիցների պարտքն ամերիկյան կառավարությանը և մասնավոր բանկերին կազմում էր 20 մլրդ. դոլար: Պարտապանների դերում էին հայտնվել Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Չեխոսլովակիան, Յուգոսլավիան, Ավստրիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Հունգարիան և այլ պետություններ:

Հետագայում պարտքերի և նրանց տոկոսների մի մասը չեղյալ հայտարարվեց: Բացի այդ, 1930թ-ին ընդունվեց Յանգի ծրագիրը (Young

¹⁸ Վաշինգտոնյան համաձայնագիրն ուժի մեջ մնաց մինչև 1935թ., երբ Ճապոնիան անցավ խոշոր ռազմական նավերի կառուցմանը, որը Վաշինգտոնյան համաձայնագրի կոպիտ խախտում էր:

Plan), որով կրճատվում էր ռազմատուգանքի գումարը, իսկ վերջնական վճարման ժամկետը հետաձգվում էր մինչև 1988թ.-ը: Սակայն հետագա իրադարձությունները (1929թ. տնտեսական ճգնաժամը, Հիտլերի իշխանության գալը, Երկրորդ աշխարհամարտը) այդ համաձայնության մեջ զգալի փոփոխություններ մտցրեցին:

Մինչև երկրորդ աշխարհամարտը Գերմանիան որպես ռազմատուգանք վճարեց մոտ 4,5 մլրդ. դոլար, իսկ ԱՄՆ-ին պարտք ունեցող եվրոպական երկրները վճարեցին նրան մոտ 2,5 մլրդ. դոլար:¹⁹

ԱՄՆ-ն հրաժարվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել ԽՍՀՄ-ի հետ, բայց, միևնույն ժամանակ, ցուցաբերում էր մարդասիրական օգնություն: Այսպես, օրինակ, 1921թ-ին, ԱՄՆ մեծ օգնություն ցույց տվեց Ռուսաստանի Պոլովոժեի սովյալ բնակչությանը: Մյուս կողմից, 20-ական թթ-ին երկու երկրների միջև զարգանում էին առևտրատնտեսական հարաբերությունները, ԱՄՆ վարկեր էր տրամադրում խորհրդային իշխանություններին:

Հարդինգի նախագահությունը երկար չտևեց, բայց նույնիսկ այդ կարճ ժամանակահատվածում տեղի ունեցան մի քանի կոռուպցիոն սկանդալներ, որոնք անմիջական կապ ունեին նրա վարչակազմի հետ: Դա չէր կարող չզագրել նրա իմիջի վրա: Երբ կոռուպցիոն սկանդալների և դրանց բացահայտումների ալիքը հասավ իր գագաթնակետին, Հարդինգը հանկարծամահ եղավ:

Կ.Քուլիջի առաջին և երկրորդ վարչակազմերը (1923-1929թթ.)

1923 թվականին փոխնախագահ Քուլիջը դառնում է երկրի նախագահ: Նոր նախագահն անմիջապես փոփոխություններ է կատարում վարչակազմում, հրաժարվելով այն մարդկանցից, որոնք այս կամ այն կերպ կապ ունեին կոռուպցիոն սկանդալների հետ և կարող էին վարկաբեկել նոր նախագահին: Բացի այդ Քուլիջին հարկավոր էր կարճ ժամանակում ձեռնարկել միջոցներ վերականգնելու համար Հանրապետական կուսակցության իմիջը, հաշվի առնելով, որ մինչև հերթական նախագահական ընտրությունները մնացել էր ընդամենը մեկ տարի: Այդ ընթացքում (1924թ.) ընդունվեց իմիգրացիայի մասին հերթական օրենքը, որով էլ ավելի էր սահմանափակվում ներգաղթողների թիվը Հարավային և Արևելյան Եվրոպայից և արգելք էր

¹⁹ 1953թ. ստորագրվեց մի համաձայնագիր, որով Գերմանիայի պարտքի մնացորդը պիտի վճարվեր երկու գերմանական պետությունների՝ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միավորումից հետո միայն: Սակայն Արևմտյան Գերմանիան (ԳՖՀ) պարտքի մեծ մասը վճարեց արդեն մինչև 1980թ., իսկ միավորումից հետո (1990թ.) այդ վճարումները շարունակվեցին:

դրվում ճապոնիայից ներգաղթի վրա: Այդ օրենքի ընդունման անհրաժեշտությունը բացատրվում էր դրանով, որ անսահմանափակ ներգաղթն իջեցնում էր ամերիկացի բանվորների բարեկեցության մակարդակը և ավելացնում գործազուրկների, աղքատների և հանցագործերի թիվը: Նույն թվականին և 1926թ-ին Կոնգրեսն ընդունում է Եկամտոսների մասին օրենքները (Revenue Act), որով խոշոր մասնավոր կապիտալը փաստորեն ազատվում էր հարկերից (խոշոր մասնավոր կապիտալին պատկանող այդ “դուրս հանված” գումարն սկսում է ակտիվորեն մասնակցել բորսայական չարաշահումների մեջ, ինչն անխուսափելի դարձրեց 1929-1933 թթ-ի ճգնաժամը):

1924թ. նոյեմբերին տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնց արդյունքում հաղթում է Քուվիջը: Նրա առաջին նախագահական ժամկետը համընկավ տնտեսական վերելքի հետ: Քուվիջը, փաստորեն, շարունակում էր Հարդինգի տնտեսական և սոցիալական քաղաքականությունը, մենաշնորհներին տրամադրելով գործունեության բացառիկ ազատություն, բարձրացնելով մաքսատուրքերը, իջեցնելով հարկերը գերշահույթի վրա: Հարդինգի և Քուվիջի հանրապետական վարչակազմերի օրոք մենաշնորհների տնտեսական աճող հզորության դեմ չէր ընդունվել և ոչ մի օրենք: Միևնույն ժամանակ ճնշվում էր բանվորական շարժումը, ընդունվում էին արհմիությունների դեմ ուղղված օրենքներ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Քուվիջի նախագահության օրոք մարվեց ԱՄՆ ազգային պարտքը, իսկ ազգային հարստությունը կազմեց 450 մլրդ. դոլար (1912թ-ին այն կազմում էր ընդամենը 187 մլրդ. դոլար): Անկասկած, երկիրը հասավ մեծ նվաճումների և այդ հաջողության մեջ մեծ դեր ունեցան ինչպես ողջ Հանրապետական կուսակցությունը, այնպես էլ Հարդինգը և Քուվիջը անձնապես, ապացուցելով, որ իրենց սոցիալ-տնտեսական քաղաքականությունը այդ ժամանակաշրջանում ընդհանուր առմամբ ճիշտ էր:

Միջազգային ասպարեզում ԱՄՆ 1928թ. օգոստոսի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հետ ստորագրում է պայմանագիր, որով այդ պետությունները հրաժարվում էին ազգային քաղաքականություն վարելիս դիմել պատերազմական գործողությունների: Այն պատմության մեջ մտավ որպես Քելլոգ-Քրիանի պակտ (նախաձեռնողներն էին ԱՄՆ պետքարտուղար Ֆրենկ Քելլոգը և Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանը):

Միևնույն ժամանակ ստորագրող պետությունները հայտարարեցին, “պաշտպանական պատերազմներ” վարելու իրավունքի մասին, չբացատրելով, թե դրա տակ նրանք ինչ նկատի ունեին և խոսքը որ դեպքերի մասին է: Նման վերապահումները, փաստորեն, նվազեցնում

էին պայմանագրի նշանակությունը (հետագայում պայմանագրին միացան ևս 49 պետություններ, այդ թվում նաև ԽՍՀՄ-ը):

Քուլիջը հրաժարվեց երկրորդ նախագահական ժամկետից և Հանրապետական կուսակցությունն առաջ քաշեց առևտրի նախարար Հերբերտ Հուվերի թեկնածությունը, որն, ի տարբերություն նախորդ նախագահներ Հարդինգի և Քուլիջի ոչ միայն անհատապաշտության (ինդիվիդուալիզմի) գործադրողն էր, այլև դրա ամենահեղինակավոր տեսաբանն էր: Նրա խոսքերով անհատապաշտությունն ընկած է ամերիկյան տնտեսության և ամերիկյան ապրելակերպի հիմքում: Այդ պատճառով, Հուվերը, բարձր գնահատական տալով Հանրապետական կուսակցության վարած քաղաքականությանը, նշում էր, որ հարկավոր է շարունակել իր նախորդների՝ Հարդինգի և Քուլիջի տնտեսական քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր *laissez-faire* (ֆր., այսինքն, գործողությունների ազատություն, պետության չմիջամտելը մասնավոր բիզնեսին) սկզբունքը: Այդ սկզբունքի շարունակությունը կարելի է համարել, երբ 20-ական թթ-ի վերջին սկսում է գործածվել այսպես կոչված “կոպիտ” անհատապաշտություն” (ինդիվիդուալիզմ, *rugged individualism*) տերմինը, որով անձի իրավունքները, նրա ձգտումը հենվել միայն սեփական ուժերի վրա ավելի բարձր էին գնահատվում, քան հասարակության իրավունքները: Որպես այդ գաղափարի օրինակ կարող էր ծառայել Հուվերի կենսագրությունը, որը ծնվել էր աղքատ կվակերների ընտանիքում և միայն սեփական ձեռներեցության շնորհիվ դարձել միլիոնատեր:

Հանրապետական կուսակցությունը նորից չհանդիպեց արժանի դիմադրության դեմոկրատների կողմից: Դա բացատրվում էր ոչ միայն նրանով, որ երկիրն ապրում էր տնտեսական վերելք, այլև այն հանգամանքով, որ Դեմոկրատական կուսակցությունը 20-ական թթ-ին հրաժարվում էր լիբերալ-ռեֆորմիստական գաղափարից: Տարբերությունները նրանց և հանրապետականների միջև նորից դարձան աննշան:

Մյուս կուսակցությունները չէին կարող մրցակցել այդ երկու քաղաքական հսկաների հետ: Սոցիալիստները միասնական չէին, նրանցից անջատվեցին արմատականները, որոնք ստեղծեցին Կոմունիստական կուսակցությունը: Կոմունիստներն օրինակ վերցնելով ռուս բոլշևիկներից, պահանջում էին ԱՄՆ-ում կատարել սոցիալիստական հեղափոխություն և հաստատել պրոլետարիատի դիկտատուրա: Բանվորների մեծ մասն նրանց ընկալում էին որպես քաղաքական վայրենիներ և նախընտրում էին քվեարկել հանրապետականների կամ դեմոկրատների օգտին: Այսպիսով, ներքին սոցիալ-տնտեսական վիճակը բարենպաստ էր հանրապետականների համար և զարմանալի չէ, որ

Հուվերը համոզիչ հաղթանակ է տանում և դառնում է **ԱՄՆ 31-րդ նախագահը**:

1929թ. ճգնաժամի նախադրյալները: Մեծ դեպրեսիա (լճացում)

Կարծես թե ապագա ճգնաժամի ոչ մի նշան չկար: Շարունակվում էր մենաշնորհների ընդլայման և հզորացման գործընթացը, նոր տեխնոլոգիաների ներդնումն արտադրության մեջ, որի արդյունքում ավելանում էր աշխատանքի արտադրողականությունը: Տնտեսական վերելքը նպաստում էր մենաշնորհների եկամուտների հսկայական աճին, միևնույն ժամանակ ուժեղացնելով գերարտադրության ճգնաժամի վտանգը: Աշխատանքի արտադրողականության վրա շատ մեծ ազդեցություն ուներ էներգետիկայի զարգացումը: 1929թ. սկզբին էլեկտրիֆիկացված էր ամերիկյան արդյունաբերական արտադրությունների արդեն 70%-ը (1914թ.՝ ընդամենը 30%-ը): Էժան էլեկտրաէներգիայի լայն օգտագործումը նավթամշակող արդյունաբերության մեջ, էլեկտրաքիմիական պրոցեսների ներդնումը նավթի մշակման մեջ թույլ տվեց զգալի չափով ավելացնել բենզինի արտադրությունը: Բացի արդյունաբերությունից էլեկտրաէներգիան սկսում են լայնորեն օգտագործել նաև կենցաղում, ինչը, իր հերթին, առաջացրեց նոր ճյուղերի զարգացումն էլեկտրատեխնիկական արդյունաբերությունում: ԱՄՆ ներքին շուկան գերհագեցած էր կենցաղային տեխնիկայով՝ էլեկտրասարքավորումներով, սառնարաններով, ռադիոընդունիչներով, լվացքի մեքենաներով, փոշեկուլներով: Այդ ապրանքների արժեքը բավական բարձր էր, սակայն դրանք կարելի էր ձեռք բերել նաև վարկով: Մեծ վերելք էր ապրում ավտոմոբիլային արդյունաբերությունը՝ բացի “Ֆորդից” ստեղծվում են նաև երկու ավտոմոբիլային մենաշնորհներ՝ “Կրայսլերը” և “Ջեներալ Մոտորսը”: Ավտոմեքենան աստիճանաբար դառնում էր ամերիկյան կենցաղի անբաժանելի մասը: Սակայն, ընդհանուր առմամբ, ներքին շուկան գերհագեցած էր ապրանքներով և առաջարկը շատ էր գերազանցում շուկայի սպառման հնարավորությունները, ինչը գերարտադրանքի ճգնաժամի վտանգ էր առաջացնում:

Խոշոր մենաշնորհների հավելյալ եկամուտների մի մասը վերածվում էր արժեթղթերի, որոնք հետո բորսայում դառնում էին չարաշահության (սպեկուլյացիայի) առարկա: Փաստորեն բորսան աստիճանաբար կլանում էր չքաշիված եկամուտների հսկայական մասը: Ամեն օր բորսայի միջոցով մեծ քանակությամբ ֆիկտիվ կապիտալ ձեռքից ձեռք էր անցնում: Բաժնետոմսերը վաճառողների համար արժեք էին ներկայացնում միայն այն պատճառով, որ գտնվում էին դրանք գնողներ, իսկ վերջինների համար բաժնետոմսերն արժեք էին ներկայացնում, եթե

դրանցով կարելի էր գումար աշխատել: Երկրում գովազդում էր այն միտքը, որ հեշտությամբ կարելի է միլիոնատեր դառնալ և ամերիկացիներից շատերը ներդնում էին իրենց սահմանափակ կապիտալը բաժնետոմսեր գնելու համար: 1929թ-ին բորսայական խաղերի մեջ մասնակցում էր մոտ 1 մլն. մարդ., բոլոր գործարքների մոտ 90% սպեկուլացիոն բնույթ էին կրում: Շատ դեպքերում արժեթղթերի տերերը մեծ պարտքեր էին կուտակում վարկերի միջոցով ձեռք բերելով տներ, ավտոմեքենաներ, կենցաղային իրեր: Արտաքին հայացքից ամերիկյան տնտեսության մեջ ամեն ինչ լավ էր և թվում էր, որ ամերիկյան կապիտալիզմի “ոսկեդարը” շարունակվելու է հավերժ:

1929թ. հունիսին Կալիֆորնիայի համալսարանում տեղի ունեցավ սոցիալական հարցերի նվիրված կոնֆերանս, որտեղ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ Ամերիկայի ծաղկումը վերաբերում է բնակչության միայն 24%-ին, որոնց էլ պատկանում է երկրի ամբողջ հարստությունը և դա կարող է բերել ազգային աղետի: Պաշտոնական տվյալներով 7 մլն. բանվորական ընտանիքների տարեկան եկամուտը կազմում էր 1500 դոլար, 15 մլն. բանվորական ընտանիքներին՝ 2500 դոլար: Հաշվի առնելով, թե ինչ հսկայական եկամուտներ էին ստանում մենաշնորհների տերերը, բանվորների աշխատավարձերը շատ ցածր էին: Նույն պաշտոնական տվյալներով ամերիկացիների մոտ 50 մլն.-ը կիսաաղքատ կյանք էին վարում “բարգավաճող Ամերիկայում”: 1929թ. տվյալներով ԱՄՆ ազգային հարստության 60%-ը պատկանում էր բնակչության 2%-ին:

Ճգնաժամի սկիզբը համարվում է 1929թ-ի հոկտեմբերի 23-ը, երբ Նյու-Յորքի բորսայում սկսվում է խուճապ՝ բաժնետոմսերի գները կտրուկ ընկնում են: Բորսային ճգնաժամի առաջին շաբաթվա ընթացքում արժեզրկված բաժնետոմսերի ընդհանուր գումարը կազմեց 15 մլրդ. դոլար, իսկ տարվա վերջում՝ 40 մլրդ. դոլար: Միլիոնավոր մանր ավանդատերեր զրկվեցին իրենց բոլոր ներդրումներից, մանր և միջին արդյունաբերությունների սնանկացման արդյունքում միլիոնավոր բանվորներ դարձան գործազուրկ: ԱՄՆ հարկային ծառայության տվյալներով 1929թ-ին 513 անձանց տարեկան եկամուտները հասնում էին 1 մլն դոլար, իսկ 1932թ-ին այդպիսի մարդկանց թիվը նվազեց մինչև 20-ի: 1932թ-ին գործազուրկների թիվը հասավ 15 մլն.-ի, այսինքն աշխատունակ ամերիկացիներից գործազուրկ էր յուրաքանչյուր չորրորդը: Սնանկացան ավելի քան 5.000 բանկեր և 32.000 մասնավոր արտադրություններ: Երկրի ազգային եկամուտը կրկնակի կրճատվեց (1929թ.՝ 80 մլրդ. դոլարից 40 մլրդ. դոլարի 1932թ-ին): Մեծ հարված հասցվեց նաև երկրի գյուղատնտեսությանը, որի արտադրանքի գները կտրուկ ընկան: Արդյունքում տասնյակ հազարավոր ֆերմերներ սնանկացան: Արտասահմանյան բանկերում գտնվող ամերիկյան

կապիտալը շտապ այնտեղից հանվում էր, ինչը նպաստեց տնտեսական ճգնաժամի տարածմանը նաև Եվրոպայում:

Ամերիկացիների մեծ մասն արդեն ասելությամբ էին արտասանում Նախագահի անունը, որն իր նախընտրական ճառերում խոստացել էր յուրաքանչյուր ամերիկացուն երկու ավտոմեքենա ավտոտնակում, ինչպես նաև աղքատության վերացում: Մանկացած ամերիկացիներն իրենց ետնախորշերն անվանում էին “հովերվիլներ”; հին թերթերը, որոնցով ծածկվում էին սառչող աղքատները՝ “Հուվերի վերմակ”; դատարկ գրպանները՝ “հուվերյան դրոշներ”: Մինչդեռ նախագահը, հավատարիմ մնալով “կոպիտ անհատապաշտության” սկզբունքին, հրաժարվում էր միջոցառումներ ձեռնարկել գործազուրկ ամերիկացիներին օգնելու համար: Մինևույն ժամանակ նրա նախաձեռնությամբ օգնություն էր տրամադրվում բանկերին, երկաթուղային և արդյունաբերական արտադրություններին:

Տնտեսական ճգնաժամը մեծ ազդեցություն ունեցավ երկրի ներքաղաքական վիճակի վրա: Հանրապետական կուսակցությունն արագ կորցնում էր հեղինակությունը: Նրանց կողմից Սպիտակ տունը նորից գրավելու հավանականությունը հավասարվեց զրոյի, երբ նրանք նորից առաջ քաշեցին Հուվերի թեկնածությունը: Դեմոկրատական կուսակցությունից որպես նախագահի թեկնածու առաջադրվեց Նյու-Յորքի նահանգապետ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը: Նրա նախընտրական խոստումները կոնկրետ բնույթ չէին կրում, սակայն առաջարկած ծրագիրը հույս էր ներշնչում, որ երկրում վերջապես փոփոխություններ տեղի կունենան: Նրա առաջարկություններից կարելի է նշել պետական օգնությունը գործազուրկներին և ֆերմերներին, հասարակական աշխատանքների կազմակերպումը երիտասարդների համար, բանկային համակարգի բարեփոխումը:

Ինչպես և սպասվում էր Դեմոկրատական կուսակցությունը համոզիչ հաղթանակ տարավ և Ռուզվելտը, որին ծայն տվեցին 22,8 մլն ամերիկացիներ (Հուվերի օգտին՝ 15, 7 մլն.) դարձավ **ԱՄՆ 32-րդ նախագահը**:²⁰

Մշակույթը

20-րդ դարի 20-ական թթ-ին իր ծաղկման շրջանն է ապրում ամերիկյան ինտելեկտուալ էլիտան: Համաշխարհային ճանաչում են ստանում այնպիսի գրողներ և պոետներ, ինչպիսիք էին Էպտոն Սինկլերը,

²⁰ Կոմունիստական կուսակցության թեկնածու՝ Ու.Ֆոստերը ստացավ 103.000 ձայն, որը այդ կուսակցության համար մինչև այսօր ամենամեծ հաջողությունն է համարվում:

Թեոդոր Դրայգերը, Ֆրենսիս Սկոտ Ֆիցջերալդը, Էռնեստ Հեմինգուեյը, Ջոն Սթեյնբեքը, Ուիլյամ Ֆոլկները և ուրիշներ: Երաժիշտներից մեծ ճանաչում ստացան Ջորջ Գերշվինը, Վիրջիլ Թոմսոնը, Ռոջեր Սեշընսը: 20-ական թթ. դառնում են ամերիկյան ջազի ծաղկման շրջան: Ժողովրդական (սևամորթների) արվեստում առաջացավ “դիքսիլենդ” հասկացողությունը: Համաշխարհային ճանաչում ստացան ջազի այնպիսի կատարողներ, ինչպիսիք էին Լուի Արմստրոնգը, Բենի Գուդմանը, “Դյուք” Էլլինգտոնը: 20-ական թթ-ի սկզբին արվեստի ինքնուրույն ճյուղ է դառնում ամերիկյան կինոն: Հենց այդ ժամանակ ստեղծվում են այսօր համաշխարհային ճանաչում ունեցող “Մետրո -Գոլդվին-Մեյեր”, “20-րդ դար Ֆոքս”, “Փարամաունթ”, “Կոլամբիյա Փիքչերս” կինոկլանկերությունները: Ստեղծվեցին Չարլի Չապլինի առաջին ֆիլմերը և դրա հետ մեկտեղ սկսում են փայլել առաջին կինոաստղերը՝ Լիլիան Գիշ, Մերի Փիքվորդ, Ռուդոլֆ Վալենտինո, Դուգլաս Ֆերբենքս, Բաստեր Բիթոն: 1926թ-ին հայտնվում է առաջին ծայնային ֆիլմը՝ “Դոն ժուանը”: 1927թ-ին տեղի է ունենում “Օսկար” կինոմրցանակի առաջին շնորհումը:

Թեմա 3.2. ԱՄՆ Ռուզվելտի նախագահության ժամանակաշրջանում /1933-1945/

ԱՄՆ Նախագահները



*Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ- ԱՄՆ 32-րդ
նախագահը (1933-1945)*

Ռուզվելտի վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը: “Նոր կուրսի” գաղափարախոսությունը

Մինչև երդմնակալությունը Ռուզվելտի դեմ մահափորձ է անում գործազուրկ Ջ.Ջանգարան: Մահացու վերք է ստանում Չիկագոյի քաղաքագլուխ Է.Չերմակը, որն այդ պահին կանգնած էր Ռուզվելտի մեքենայի մոտ: Ռուզվելտը չվնասվեց: Նոր նախագահը երդմնակալության ճառով ելույթ ունեցավ 1933թ-ի մարտի 4-ին: Այդ ճառը հետագայում դարձավ հոետորության դասական օրինակներից մեկը: Ռուզվելտը մասնավորապես ասաց. “Հիմա ժամանակն է ասել ճշմարտությունը, ամբողջ ճշմարտությունը, բաց և վճռաբար: Մենք չպետք է խուսափենք և ազնիվ հայացք գցենք մեր երկրում ստեղծված իրավիճակին: Այս Մեծ երկիրը կդիմանա, ինչպես դա եղել է անցյալում, կվերածնվի և կծաղկի: Այդ պատճառով, թույլ տվեք, առաջին հերթին, արտահայտել իմ հաստատ համոզումը, որ միակ բանը, ինչից մենք պետք է վախենանք դա վախն է՝ սաստիկ, անխելամիտ, անհիմն սարսափը, որը կջլատի մեր ջանքերը...: Մարդկության պատմությունը զարգանում է առեղծվածային, միստիկական փուլերով: Մի դեպքում սերունդներին շատ բան է տրվում, մյուսներից շատ բան է պահանջվում, իսկ այսօրվա ամերիկացիների սերունդը հանդիպում է ճակատագրի հետ”:

Պետք է անպայման նշենք, որ 20-րդ դ. 30-ական թթ. բախտորոշ էին ոչ միայն ԱՄՆ, այլև ողջ արևմտյան քաղաքակրթության, կապիտալիստական համակարգի, ինչպես, փաստորեն, նաև ամբողջ աշխարհի համար: Կարելի է ասել, որ 1929-1933թթ. ճգնաժամը, որն ընդունեց գլոբալ բնույթ, ամբողջ աշխարհի առջև դրեց երեք գլխավոր

այլընտրանք: Առաջին ընտրությունն առաջարկեց Գերմանիան, երբ հոգնելով չդադարող սոցիալ-տնտեսական ցնցումներից, ժողովուրդը հրաժարվեց լիբերալ-դեմոկրատական համակարգից և ընտրեց ամբողջատիրության աջ արմատական տարբերակը (նացիզմ, ֆաշիզմ), որը ճգնաժամից դուրս գալու համար կարողացավ մոբիլիզացնել ազգը: Այդ տարբերակն ընդունեց ոչ միայն Գերմանիան, այլև այն օրինակ ծառայեց մի շարք երկրների համար: Այն ուներ իր երկրպագուները նաև ԱՄՆ-ում:

Երկրորդ տարբերակն առաջարկում էր ԽՍՀՄ-ը, որտեղ հաստատվել էր ամբողջատիրության ձախ արմատական տարբերակը: Ճիշտ է, Ստալինի անցկացված ինդուստրիալացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը ոչ թե համաշխարհային ճգնաժամի, այլ ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունք էր: Սակայն համաշխարհային հանրությունն այն դիտում էր գլոբալ տնտեսական ճգնաժամի համատեքստում և, այդ պատճառով, ստալինյան մոդերնիզացիայի հաջող ցուցանիշները (գործազրկության վերացում, արդյունաբերության արագ աճ) շատերի համար օրինակ էին ծառայում: Այդ տարբերակի երկրպագուներ գտնվեցին նաև ԱՄՆ-ում և զարմանալի չէ, որ հենց 30-ական թթ-ին ամերիկյան Կոմունիստական կուսակցությունը հասավ իր պատմության մեջ ամենամեծ, մինչ օրս չգերազանցված, հաջողության:

Ռուզվելտը կանգնած էր շատ կարևոր և բախտորոշ խնդրի լուծման առջև: Այն կայանում էր աջ և ձախ արմատական ամբողջատիրական վարչակարգերի, նրանց գաղափարախոսության հանդեպ այլընտրանքային ճանապարհ գտնելու մեջ, որը կփրկեր ամերիկյան և արևմտյան արժեքները: Այդ կարևորագույն խնդիրը հին դասական կապիտալիստական մոդելների հիման վրա լուծելն անհնար էր՝ պահպանողական-անհատապաշտության (ինդիվիդուալիզմի) տարբերակի գաղափարը տապալվեց: Ռուզվելտի ընտրած ծրագիրն ստացավ “Նոր կուրս” անվանումը: Այս հասկացության անվան տակ ինչպես ցույց տվեց ժամանակը, թաքնված էր ԱՄՆ և արևմտյան քաղաքակրթության բարեփոխման գաղափարախոսությունը և ռազմավարությունը, որն ապացուցեց իր առավելությունը թե ձախ և թե աջ արմատական ամբողջատիրական տարբերակների նկատմամբ: Սակայն 30-ական թթ-ի սկզբին նման ելքը դեռ ակնհայտ չէր, պատմությունը այդ ժամանակ քաղաքական պատվանդան բարձրացրեց ոչ միայն Ռուզվելտին, այլև Հիտլերին և Ստալինին:

Անցնենք հիմա “Նոր կուրսի” գաղափարախոսությանը և էությանը: Կարելի է ասել, որ Ռուզվելտի “Նոր կուրսը” փաստորեն ամբողջ ամերիկյան պատմությունը բաժանում է երկու դարաշրջանի: Եթե առաջին դարաշրջանի ընթացքում ամերիկյան հասարակությունը

զարգանում էր, ընդհանուր առմամբ, դասական կապիտալիզմին բնորոշ կանոններով, ապա երկրորդ դարաշրջանում, այսինքն “Նոր կուրսից”, սկսվում է այդ կանոնների, ինչպես նաև “հին” կապիտալիզմի արմատական ձևափոխության (տրանսֆորմացիայի) գործընթացը: Այդ ձևափոխության մեջ կարևորագույն դեր խաղաց պետության և հասարակության ակտիվ մասնակցությունը մասնավոր կապիտալիստական արտադրության և կուտակման գործընթացների մեջ: Նշենք թե որոնք էին կարևորագույն բարեփոխումները: Դրանցից մեկը վերաբերվում էր ազգային հարստության բաշխման խնդրին: Ռուզվելտը նշում էր, որ 20-ական թթ-ին ԱՄՆ-ում տեղի էր ունենում աշխատանքի արտադրողականության արագ աճ, որի արդյունքում մենաշնորհները կուտակեցին հսկայական հարստություն: Սակայն նրանց հարկումը պետության կողմից չէր համապատասխանում դրանց արագ աճին: Ազգի արտադրողական հզորություններն անընդհատ ավելանում էին, սակայն նրա սպառողական հնարավորությունները մենաշնորհների ազախության, էգոիզմի և անսահման իշխանության պատճառով, մնում էին անփոփոխ: Մենաշնորհները հրաժարվում էին իրենց գերշահույթը կիսել հասարակության միջին և ստորին խավերի հետ: Այդպիսի պայմաններում գերարտադրությունը, գործազրկությունը և տնտեսական ճգնաժամը դառնում էին անխուսափելի: Այդ պատճառով Ռուզվելտը հիմնական շեշտը դնում էր բաշխման ոլորտի արմատական բարեփոխման վրա, որի արդյունքում կընդլայնվեր բնակչության գնողունակությունը, իսկ դրա հետ մեկտեղ կվերանար գերարտադրության ճգնաժամը: Ինքը, Ռուզվելտը, բաշխման այդ արմատական բարեփոխումն անվանեց “պոմպի լցավորում”, իսկ գիտական գրականության մեջ տնտեսական այդ տարբերակը և դրա հետ կապված բոլոր միջոցառումները ստացան “պահանջարկի տնտեսություն”²¹ անվանումը:

Այդ միջոցառումներից նշենք հետևյալը՝ 1. նվազագույն աշխատավարձի մասին օրենքը 2. սոցիալական ապահովագրության մասին օրենքը, որն, առաջին հերթին վերաբերվում էր գործազուրկներին և ծերերին, 3. ընդունվեց օրենք, որով բանվորներին իրավունք էր տրվում կոլեկտիվ պայմանագիր կնքել ձեռներեցների հետ, որտեղ կնշվեր նրանց գործադուլ անելու իրավունքը, ինչպես նաև “փակ արտադրամասի” սկզբունքի կիրառումը (այսինքն, աշխատանքի էին ընդունվում միայն արհմիության անդամները), որը զգալիորեն մեծացնում էր աշխատավորների հնարավորություններն աշխատավարձ բարձրացնելու և ձեռնարկությունների եկամուտներն իրենց օգտին վերաբաշխելու գործում: Բացի վերը թվարկվածից, կառավարության կողմից ստեղծվեց

²¹ Այսինքն, այնպիսի տնտեսական քաղաքականություն, որի արդյունքում ավելանում է բնակչության գնողունակությունը, վճարունակությունը:

գործազուրկ և կարիքավոր ամերիկացիների համար հասարակական աշխատանքների մի համակարգ, որն ընդգրկեց ավելի քան 10 մլն. մարդ և դրա նպատակներին պետական բյուջեից ծախսվեց 16 մլրդ. դոլար: Այդ միջոցառումը նույնպես խթանում էր “պահանջարկի տնտեսությունը”:

“Նոր կուրսի” ժամանակաշրջանում պետական բյուջեն դառնում է ստորին սոցիալական խավերի գնողունակությունը բարձրացնելու և միաժամանակ ազգային եկամուտը տարբեր դասակարգերի միջև վերաբաշխելու մեխանիզմ: Ռուզվելտը համարում էր, որ բյուջեի ձևավորման հիմնական բեռն իր վրա պետք է վերցնի վերին խավը, առաջին հերթին, խոշոր մենաշնորհների տերերը, որոնց նախագահն անվանում էր “ճարպոտ կատուներ”: Խոշոր հարստությունների վրա պետական հարկերը ավելացան ավելի քան երեք անգամ, իսկ գերեկամուտների վրա հարկը հասավ մինչև 75%-ի: Բյուջետային քաղաքականության հարցում լիբերալ տնտեսագետների մոտ կար երկու դպրոց: Մեկը, որը մինչև ճգնաժամը, համարվում էր դասական, հաշվեկշռված բյուջեի կողմնակից էր, իսկ մյուսը համարում էր, որ սուր ճգնաժամի ժամանակ հնարավոր է օրինականացնել պակասորդը (դեֆիցիտը): Ռուզվելտը որդեգրեց երկրորդ տարբերակը:

Այսպես, 1932թ-ից մինչև 1940թ. պետական ֆեդերալ ծախսերն ավելացան 4 մլրդ. 266 մլն. դոլարից մինչև 10 մլրդ. 61 մլն. դոլար: Այդ ժամանակահատվածում արդյունաբերական արտադրությունն ավելացավ 60%-ով: Իհարկե չափազանցություն կլիներ տնտեսության բարելավումը բացատրել միայն “պոմպի լցավորումով”, սակայն սխալ կլիներ նաև թերագնահատել դրա հսկայական դերը:

Խորը բարեփոխումներ կատարվեցին Ռուզվելտի կողմից ոչ միայն բաշխման, այլ նաև արտադրողականության բնագավառում: 1933թ. հունիսի 16-ին Կոնգրեսն ընդունում է Արդյունաբերության վերականգնման մասին օրենքը, որով պետության հովանավորությամբ ձեռնարկությունների միջև ընդունվում էին “ազնիվ մրցակցության” կողքեսներ՝ յուրահատուկ նորմատիվներ, որոնք հաստատում էին հումքի և արտադրության ծավալները, ապրանքների գները, աշխատավարձերի չափը, ինչը թույլ կտար կանխել ձեռնարկությունների փակումը իսկ բանվորներին՝ ունենալ տանելի կենսապայմաններ: Ազգային արդյունաբերության մոտ 99%-ը ընդգրկված էր “ազնիվ մրցակցության” կողքեսների մեջ:

1933թ. մայիսի 12-ին ընդունվում է Ագրարային սեկտորի կարգավորման մասին օրենքը, որով նախատեսվում էր կրճատել ցանքատարածությունները և անասունների գլխաքանակը պետության փոխհատուցման հաշվին:

Մյուս միջոցառումներից նշենք “չոր օրենքի” վերացումը 1933թ. դեկտեմբերին, Ֆեդերալ ռեզերվային համակարգի լիազորությունների

ընդլայնումը դրամաֆինանսական ոլորտում, մինչև 5.000 դոլարի հասնող մասնավոր ներդրումների ապահովագրումը, ֆոնդային բորսաների և բաժնետոմսերի առք ու վաճառքի հսկման համար ստեղծված հանձնաժողովը: Ընդունվեց ոսկե ստանդարտից հրաժարվելու մասին օրենք և դոլարը ենթարկվեց արժեզրկման (դեվալվացիայի):

Ռուզվելտի Նոր կուրսը պատմագիտական գրականության մեջ ստացավ ոչ միանշանակ գնահատական: Պատմաբանների մի մասը փորձում է ապացուցել, որ ԱՄՆ հաղթահարեց խորը տնտեսական ճգնաժամը ոչ այնքան ռուզվելտյան բարեփոխումների, որքան Երկրորդ աշխարհամարտի սկսվելով 1939թ-ին, երբ ամերիկյան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը հակահիտլերյան կոալիցիայից ստանում էին հսկայական քանակությամբ պատվերներ:

Զթերագնահատելով այդ հանգամանքը, այնուամենայնիվ, պատմաբանների մեծ մասը համոզված է, որ հենց Ռուզվելտի Նոր կուրսը նպաստեց ամերիկյան կապիտալիզմի արմատական վերակառուցմանը, այնպիսի մոդելի ձևավորմանը, որն ԱՄՆ-ին ճգնաժամից դուրս բերելու համար ռեալ հնարավորություններ ստեղծեց: Նոր կուրսը դառնում է նաև ծախ (Ստալինյան) և ապա աջ (Հիտլերյան) արմատական ամբողջատիրական վարչակարգերի այլընտրանք լիբերալ-կապիտալիստական տարբերակը, որն, ի վերջո, հաղթող դուրս եկավ այդ ծանր պայքարում:

Վերջում նշենք, որ Նոր կուրսից հետո ԱՄՆ տնտեսական զարգացումն ընդունում է աննախադեպ կայուն բնույթ: Զարգացման միջին տեմպերն այսպիսին են՝ 1950-ական թթ.՝ 3,3%, 1960-ական՝ 4,4%, 1970-80-ական՝ 3%, 1990-ական՝ մոտ 2%: Նոր կուրսից հետո, 60 տարիների ընթացքում ԱՄՆ համախառն ներքին եկամուտն ավելացավ ավելի քան 9 անգամ:

Ռուզվելտի Նոր կուրսի քաղաքականությունն աջակցություն ստացավ ԱՄՆ բնակչության ճնշող մասի կողմից: Դա ցույց տվեցին ինչպես 1934թ-ին տեղի ունեցած Կոնգրեսի ընտրությունների արդյունքները, այնպես էլ 1936թ-ի նախագահական ընտրությունները, որտեղ Դեմոկրատական կուսակցությունը համոզիչ հաղթանակ տարավ: Այդ հաղթանակների համար դեմոկրատները պարտական էին Ռուզվելտին:

Արտաքին քաղաքականությունը

1929-1933թթ-ի տնտեսական ճգնաժամը տարածվեց բոլոր կապիտալիստական երկրներում: Դրա հետևանքով սրվեց պայքարը առաջատար իմպերիալիստական պետությունների միջև սպառման շուկաների և հումքի աղբյուրների համար: Մեծ վտանգ էին ներկայացնում

Ֆաշիստական և միլիտարիստական պետությունները՝ Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան, որոնց նպատակն էր աշխարհի վերաբաժանումը, իրենց քաղաքական, տնտեսական և ռազմական շահերին համապատասխան: Ռուզվելտի կառավարությունը եկավ այն եզրակացության, որ ստեղծված միջազգային իրավիճակում ԱՄՆ պետք է պահպանի պաշտոնական չեզոքություն և 1935թ-ին Կոնգրեսն ընդունեց չեզոքության մասին օրենքը (Neutrality Act), որով արգելվում էր զենքի մատակարարումը պատերազմող երկրներին:

Ռուզվելտի վարչակազմը 1933թ. նոյեմբերի 17-ին դիվանագիտական հարաբերություններ է հաստատում ԽՍՀՄ-ի հետ: Այս քայլը հետապնդում էր ինչպես տնտեսական (տարբեր արդյունաբերական ապրանքների պատվերներ ԽՍՀՄ-ի կողմից, ինչը լրացուցիչ օգնություն կլիներ ճգնաժամի մեջ գտնվող ամերիկյան արդյունաբերությանը) այնպես էլ քաղաքական (միլիտարիստական Ճապոնիան վտանգ էր ներկայացնում ոչ միայն խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, սպառնալով ամերիկյան շահերին, այլ նաև Հեռավոր Արևելքում, ինչն արդեն անհանգստացնում էր ԽՍՀՄ-ին: Այսպիսով, ԱՄՆ կարող էր ԽՍՀՄ-ին դիտել որպես Ճապոնիայի դեմ դաշնակից):

1939թ-ի սեպտեմբերի 1-ին սկսվում է Երկրորդ աշխարհամարտը և ԱՄՆ քաղաքական կուսակցությունների և խմբավորումների միջև տարածայնություններն իրենց տեղն են գիջում արտաքին քաղաքականության հետ կապված լուրջ տարածայնություններին: Իզոլյացիոնիստները գտնում էին, որ ԱՄՆ պետք է միջամտի պատերազմի մեջ միայն այն ժամանակ, երբ պատերազմող երկրներն ուժասպառ կլինեն և միջազգային դրությունն ԱՄՆ-ի շահերի համար բարենպաստ կլինի: ԱՄՆ քաղաքական էլիտայի լիբերալ մասը նախագահ Ռուզվելտի գլխավորությամբ նույնպես կողմնակից էին այն գաղափարին, որ ԱՄՆ պետք է առաջատարի դեր խաղա հետպատերազմյան աշխարհում, սակայն այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր վարել ակտիվ արտաքին քաղաքականություն և ձեռք բերել դաշնակիցներ: Որպես դաշնակիցներ Ռուզվելտը և նրա կողմնակիցները նկատի ունեին, առաջին հերթին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, որոնք պատերազմում էին եվրոպական ֆաշիստական պետությունների դեմ: Մինչև աշխարհամարտի սկիզբը՝ 1939թ. հունիսի 30-ին իզոլյացիոնիստները հաղթանակ տարան Կոնգրեսում, որտեղ ձայների չնչին առավելությամբ նրանց հաջողվեց պահպանել պատերազմող երկրներին զենք արտահանելու արգելքը (էմբարգո): Արգելքը տարածվում էր նաև Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի վրա: Սակայն պատերազմի սկզբից հետո մոտեցումն այդ հարցի վերաբերյալ փոխվում էր: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի պարտության վտանգը, որը քաղաքական և տնտեսական առումով ձեռնտու չէր ԱՄՆ-ին,

ստիպում են Կոնգրեսին դիմել Մեծ Բրիտանիայի հետ սերտ ռազմատնտեսական և քաղաքական կապերի հաստատմանը: 1939թ-ի սեպտեմբերի 21-ին Ռուզվելտը, դիմելով Կոնգրեսին, ևս մեկ անգամ հաստատում է երկրի չեզոքությունը, բայց, միևնույն ժամանակ, խնդրում է պատերազմող բարեկամական երկրների համար վերացնել զենքի արտահանման արգելքը: Նախագահն ընդգծում էր, որ բոլոր գնումները կատարվելու են կանխիկ դրամով, իսկ ապրանքն ամբողջությամբ տեղափոխվելու է գնորդի նավերով: Այսինքն խոսքը առայժմ միայն առևտրական գործարքի մասին էր: 1939թ-ի նոյեմբերի 4-ին Կոնգրեսը հավանություն տվեց նախագահի այդ առաջարկությանը:

1940թ-ի ապրիլին նացիստական Գերմանիան օկուպացնում է Դանիան և Նորվեգիան, մայիսին գրավում է Բելգիան, Լուքսեմբուրգը և Հոլանդիան, իսկ հունիսի 21-ին ստիպում կապիտուլյացիայի ակտ ստորագրել Ֆրանսիային: Այս պայմաններում իզոլյացիոնիստների համար դժվարանում է արտաքին քաղաքականության մեջ պաշտպանել իրենց կուրսը: Այսպես, օրինակ, նույնիսկ Հանրապետական կուսակցությունից որպես նախագահի պաշտոնի թեկնածու Ու.Վիլկին ասում էր, որ իզոլյացիոնիզմը չի համապատասխանում ԱՄՆ-ի շահերին:

1940թ-ի նոյեմբերի 5-ին պետք է տեղի ունենային հերթական նախագահական ընտրությունները: Գնալով ավանդույթի դեմ, Դեմոկրատական կուսակցության ազգային համագումարը ձայների մեծամասնությամբ որպես նախագահի պաշտոնի թեկնածու նորից, արդեն երրորդ անգամ ընտրում են Ռուզվելտին, դիմելով “երկու հաջող ժամկետները արժանի էր երրորդի” լոզունգին: Բացի այդ, նրանք նշում էին, որ աշխարհում ստեղծված արտակարգ իրավիճակի պայմաններում նախագահ փոխելն աննպատակահարմար է: Ընտրությունների արդյունքում Ռուզվելտին կողմ քվեարկեցին ավելի քան 27 մլն. մարդ, Վիլկիի օգտին՝ 22 մլն. մարդ: Այսպես, ԱՄՆ պատմությունն անմեջ առաջին անգամ Ռուզվելտը երրորդ անգամ անընդմեջ ընտրվում է երկրի նախագահ: 1941թ-ի սկզբին նախագահը, խոսելով երկրի և աշխարհի ապագայի մասին նշում է, որ ԱՄՆ “դեմոկրատիայի զինանոցն է” և աշխարհի ապագայի հիմքը պետք է կազմեն չորս ազատություններ՝ խոսքի ազատություն, խղճի ազատություն, ազատություն վախից և աղքատությունից:

1941թ-ի մարտին Կոնգրեսը հաստատում է դաշնակիցներին ռազմական և տնտեսական օգնություն տրամադրելու ծրագիրը և ընդունում լենդ-լիզի մասին օրենք (Land-Lease act): Այդ նպատակին հատկացվեց 7 մլրդ. դոլար: Մեծ Բրիտանիան առաջին պետությունն էր, որի վրա տարածվեց այդ օրենքը:

1941թ-ի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվում է ԽՍՀՄ-ի վրա: Չերչիլը միանգամից հայտարարում է, որ Անգլիան

զորավիզ կլինի ագրեսիայի զոհին: Չերչիլի օրինակին հետևեց Ռուզվելտը, չնայած որ ԽՍՀՄ-ի հետ դաշնակցային հարաբերություններ հաստատելու և օգնություն ցուցաբերելու մեծ թվով հակառակորդներ կային, ինչպես հանրապետականների, այնպես էլ դեմոկրատների մեջ: Ռուզվելտն ասում էր, որ “Ամերիկայի պաշտպանության և անվտանգության համար չափազանց կարևոր է օգնել Ռուսաստանին քանի դեռ նա պատերազմում է “առանցքի” երկրների դեմ...” (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա):

Հիմա փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչպես պատահեց, որ երկու հակադիր քաղաքական ուժեր՝ սովետական սոցիալիզմը և լիբերալ-կապիտալիստական Արևմուտքն ստեղծում են ռազմական դաշինք: Բանն այն է, որ Հիտլերի իշխանության գլուխ գալը փոխում է համաշխարհային ասպարեզում քաղաքական ուժերի ամբողջ դասավորությունը: Հիտլերը նպատակ ուներ ջախջախելու ինչպես արևմտյան դեմոկրատիան, այնպես էլ սովետական սոցիալիզմի, ինչը և ստիպում է այդ երկու հակադիր քաղաքական ուժերին ստեղծել դաշինք ուղղված երրորդ ուժի՝ ֆաշիստա-նացիստական բլոկի դեմ, նրա վերացման համար: Այդ դաշինքը, իր էությանմբ, հակասական էր և, այդ պատճառով, կարող էր պահպանվել միայն մինչև ֆաշիզմի վերացումը:

1941թ-ի հոկտեմբերի 28-ին Ռուզվելտը ստորագրում է ԽՍՀՄ-ի վրա լենդ-լիզի օրենքի տարածման մասին որոշումը, իսկ 1942թ-ի հունիսի 11-ին երկու պետությունների միջև ստորագրվում է պատերազմում երկկողմանի օգնության մասին Համաձայնագիր (այդ համաձայնագրի հիման վրա ԱՄՆ մինչև 1945թ-ի սեպտեմբերի 30-ը ԽՍՀՄ-ին տրամադրում է ռազմական և ոչ ռազմական զույք 11,2 մլրդ. դոլարի չափով, այդ թվում 400.000 ապրանքատար ավտոմեքենա, 14.000 ինքնաթիռ, 7.000 տանկ, 4,5 մլն. տ. սննդամթերք և այլն: Լենդ-լիզով ԱՄՆ-ն ԽՍՀՄ-ին տրամադրեց մոտ 2,6 մլրդ. դոլարի չափով օգնություն):

1941թ-ին օգոստոսին Նյուֆաունդլենդ կղզում Չերչիլը և Ռուզվելտը ստորագրեցին պատերազմի նպատակների մասին “Ատլանտյան խարտիան”: 1942թ-ի հունվարի 1-ին Վաշինգտոնում ստորագրվեց 26 պետությունների դաշնակցային հռչակագիրը, որով ձևավորվեց հակահիտլերյան կոալիցիան՝ ապագա ՄԱԿ-ի կորիզը:

Մշակույթ և տեխնիկա

Ամերիկյան տնտեսության վիճակը, Մեծ լճացումը (դեպրեսիա), հսկայական ազդեցություն էին թողնում երկրի մշակույթի վրա: Լուսավորության, արվեստի և մշակույթի բնագավառներում աշխատողները հասարակ ամերիկացիների հետ միասին գտնվում էին

կարիքի մեջ: Կրթական համալիրների ղեկավարները դժվարությամբ էին գտնում ֆինանսական միջոցներ դպրոցների և քոլեջների նորմալ աշխատանքն ապահովելու համար, շատ դեպքերում նրանք ստիպված կրճատում էին ուսումնական ծրագրերը: Սակայն նույնիսկ այդպիսի արտակարգ վիճակի պայմաններում երկրի մշակութային կյանքը շարունակվում էր: Մեծ լճացման տարիներին ստեղծվեցին գրող Թորնտոն Ուայլդերի, ամերիկյան ջազի դասականներ Բենի Գուդմանի և Գլեն Միլլերի, կոմպոզիտորներ Ահարոն Բոփլանդի, Ռոյ Հարրիսի, Քոուլ Փորտերի գործերը: 1931թ-ին ավարտվեց քանդակագործ Հաթսոն Բորգլումի վիթխարի աշխատանքը՝ ԱՄՆ չորս նախագահների քանդակները 20 մետր բարձրությամբ գրանիտե ժայռի վրա Հարավային Դակոտայում: 1930-31թթ-ին ավարտվում է աշխարհի երկու ամենաբարձրահարկ շենքերի՝ “Կրայսլեր բիլդինգի” (77 հարկ) և “Էմփայլը սթեյթ բիլդինգի” (102հարկ) կառուցումը: 1931թ-ին սկսվում է Նյու-Յորքի Ռոկֆելլերի կենտրոնի շինարարությունը (ավարտվում է 1939թ-ին), իսկ 1935թ-ին՝ Արվեստի Ազգային պատկերասրահի կառուցումը Վաշինգտոնում:

20-րդ դ. 30-ական թվականները ռադիոյի համար դառնում են տրիումֆային: Նրա ազդեցությունը և հասարակական դերն ամերիկացիների կյանքում աճում էին ռադիոկայանների թվի աճման հետ մեկտեղ: 1935թ-ին ռադիոկայանների թիվը երկրում կազմում էր 605, իսկ 1940թ.՝ 814: 1939թ-ին ամերիկացիներից մոտ 80%-ը ուներ ռադիոընդունիչ: Մեծ լճացման տարիները դառնում են Հոլիվուդի և ամերիկյան կինոյի ծաղկման շրջանը, շնորհիվ դրա հասարակ ամերիկացիները կարողանում էին գոնե մի քանի ժամվա ընթացքում չմտածել առօրյա հոգսերի մասին և խորասուզվել հույսերի և երազանքների մեջ:

Այդ ժամանակվա կինոաստղներն էին Գրետա Գարբոն, Բեթ Դեյվիսը, Կլարկ Գեյբլը, Ռոբերտ Թեյլորը, Ֆրեդ Աստերը և Ջինջեր Ռոբերտսը: 1937թ-ին էկրաններին է հայտնվում Ուոլտ Դիզնեյի առաջին լիամետրաժ մուլտիպլիկացիոն (անիմացիոն) կինոնկարը՝ “Ձյունանուշիկը և յոթ թզուկները”, իսկ 1939թ-ին Ատլանտայում (Ջորջիայի նահանգ) տեղի ունեցավ “Քամուց քշվածները” գեղարվեստական ֆիլմ-էպոպեայի պրեմիերան, որտեղ Վիվյեն Լին և Կլարկ Գեյբլը կատարում էին գլխավոր դերերը:

ԱՄՆ մեծ հաջողությունների հասավ նաև գիտատեխնիկական ասպարեզում: 1939թ-ին Նյու-Յորքում Համաշխարհային ցուցահանդեսի ժամանակ առաջին անգամ տեղի ունեցավ հեռուստացույցի ցուցադրումը: 1937թ-ին Չիկագոյում ստեղծվեց արյան առաջին բանկը, ինչը հսկայական դեր խաղաց Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Ամերիկյան ֆիզիկոս Հարոլդ Յուրին 1931թ-ին հայտնաբերում է ծանր

ջրածին, իսկ Գերմանիայից ներգաղթած Ալբերտ Այնշտայնը նախագահ Ռուզվելտին 1939թ-ին առաջարկեց ատոմային ռումբի ստեղծման գաղափարը, որն սկիզբ դրեց Մանհետտենյան նախագծին:

ԱՄՆ Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945)

1941 թ.-ի սեպտեմբերին Ճապոնիան, Գերմանիան և Իտալիան ստորագրում են ռազմաքաղաքական դաշինք՝ Եռյակ պակտ: Նրանց նպատակն էր աշխարհի վերաբաժանումը, արևմտյան դեմոկրատիայի և կոմունիզմի ջախջախումը:

1942 թ-ի հուլիսին Ճապոնիան օկուպացնում է Ինդոնեզիան և արդեն նպատակ էր դրել գրավել Բրիտանական Մալայան կղզիները, որոնք նավթի և կաուչուկի հարուստ պաշարներ ունեին: Դեկտեմբերի 7-ին ճապոնական ռազմաօդային ուժերը ռմբակոծեցին խաղաղօվկիանոսյան ամերիկյան ռազմածովային բազան՝ Փըրլ-Հարբորում (Հավայան կղզիներ): Խորտակվեցին 18 ամերիկյան ռազմանավ, ոչնչացվեց 188 ինքնաթիռ, զոհվեց մոտ 2400 մարդ: Հաջորդ օրը նախագահ Ռուզվելտը դիմում է Կոնգրեսին Ճապոնիային պատերազմ հայտարարելու առաջարկությամբ:

Ներկայացուցիչների պալատը և Սենատը համարյա միաձայն (մեկ ձեռնպահ) կողմ քվեարկեցին Ճապոնիային պատերազմ հայտարարելու նախագծին: Դեկտեմբերի 11-ին Գերմանիան և Իտալիան պաշտոնապես ԱՄՆ-ին պատերազմ հայտարարեցին, իսկ ԱՄՆ-ն՝ նրանց:

1942թ. սկզբին ամերիկյան զորքերը լուրջ պարտություն կրեցին Ֆիլիպիններում, որի արդյունքում ճապոնացիներին հաջողվեց մեծ թվով ամերիկացի զինվորների գերի վերցնել: ԱՄՆ պատասխանեց Տոկիոյի մասշտաբային ռմբակոծումներով, իսկ ապրիլին ԱՄՆ ռազմածովային ուժերը ջախջախում են ճապոնացիներին սկզբում Մարջանյան ծովում, իսկ քիչ անց Միդուեյ և Գուադալկանալ կղզիների մոտ:

Այս հաղթանակները խափանում են ճապոնացիների նվաճողական ծրագրերը Խաղաղ օվկիանոսի կենտրոնական մասում: Ամերիկյան բանակն սկսում է մասնակցել նաև պատերազմական գործողություններին անգլիական բանակի հետ միասին Հյուսիսային Աֆրիկայում: Այսպես, 1942թ-ի մայիս-հունիսին Հյուսիսային Աֆրիկայում գերմանա-իտալական զորքերը գեներալ Ռոմելի գլխավորությամբ սկսում են նոր հարձակում Եգիպտոսի վրա՝ նպատակ ունենալով գավթել Սուեզի ջրանցքը և շատ մեծ կարևորություն ունեցող անգլիական ռազմածովային բազան, որը գտնվում էր Ալեքսանդրիայում: Չնայած մի քանի հաջողություններին՝ Ռոմելին այդպես էլ չհաջողվեց հասնել իր նպատակին: Ատլանտյան օվկիանոսում սկսվում է լայնածավալ պայքար գերմանական և անգլո-ամերիկյան ռազմածովային ուժերի միջև ծովային

ուղիներին տիրելու համար: Այստեղ Գերմանիան օգտագործելով մեծ թվով սուզանավեր՝ մեծ կորուստներ էր պատճառում դաշնակցային ռազմական և առևտրային նավատորմերին, սակայն այդ գործողություններից Գերմանիան ռեալ օգուտ այդպես էլ չստացավ:

1942թ. սկզբից ամերիկյան և անգլիական ավիացիան սկսում են սիստեմատիկորեն ռմբակոծել գերմանական քաղաքները և արդյունաբերական ձեռնարկությունները, սակայն լուրջ վնաս հասցնել գերմանական ռազմական արդյունաբերությանը չհաջողվեց:

1942թ-ի վերջից ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի կառավարություններն իրենց առաջնահերթ ռազմական խնդիրն էին համարում Հյուս. Աֆրիկայի նվաճումը: Անգլո-ամերիկյան հրամանատարությունը պատրաստում էր միանգամից երկու ռազմական գործողություն՝ Հյուս. Աֆրիկայի արևելյան և արևմտյան մասերում: Արևելյան մասում ծրագրավորվել էր հարձակում գեներալ Ռոմելի գերմանափտալական ուժերի դեմ Եգիպտոսում, իսկ արևմուտքում՝ ֆրանսիական գաղութների՝ Ալժիրի և Մարոկկոյի դեմ:

Սկզբում անգլիական բանակին հաջողվեց դուրս մղել թշնամուն Եգիպտոսից, իսկ նոյեմբերի սկզբին անգլո-ամերիկյան ուժերը ամերիկացի գեներալ Դ.Էյզենհաուերի գլխավորությամբ ափ իջան Մարոկկոյում և Ալժիրում: Զարգացնելով հարձակումն արևելքից և արևմուտքից՝ անգլո-ամերիկյան զորքերը ծուղակի մեջ գցեցին հակառակորդին և 1943թ-ի ամռանն ստիպեցին նրանց Թունիսի տարածքում անձնատուր լինել:

Այսպիսով, Հյուս. Աֆրիկայի նվաճումն անգլո-ամերիկյան ռազմական ուժերի մեծ հաջադությունն էր, սակայն դա չէր նշանակում, որ երկրորդ ռազմաճակատ չպետք է բացվեր, որովհետև հիմնական ռազմական գործողությունները տեղի էին ունենում Եվրոպայում, գերմանա-խորհրդային ռազմաճակատում և պատերազմի ճակատագիրն այնտեղ էր որոշվում:

Երկրորդ ռազմաճակատն անգլո-ամերիկյան դաշնակիցների կողմից պետք է բացվեր Եվրոպայում: Երկրորդ ռազմաճակատի հարցը լուծվեց 1943թ-ի մայիսին՝ Չերչիլի և Ռուզվելտի հանդիպման ժամանակ Վաշինգտոնում: Չերչիլը “Բալկանյան տարբերակի” կողմնակիցն էր, սակայն ի վերջո, դաշնակիցները կանգ առան այն տարբերակի վրա, որը առաջարկեց Ռուզվելտը՝ երկրորդ ռազմաճակատը բացել 1944թ-ի մայիսի 1-ից ոչ ուշ, Ֆրանսիայում: Իսկ մինչև երկրորդ ռազմաճակատը բացելը որոշվեց պարտության մատնել Իտալիային և ստիպել նրան դուրս գալ պատերազմից: 1943թ. հուլիսի 10-ին անգլո-ամերիկյան զորքերն ափ դուրս եկան Սիցիլիա կղզում, որտեղից ներխուժեցին Հարավային Իտալիա և սեպտեմբերի 8-ին Իտալիայի նոր կառավարությունը զինադադար ստորագրեց Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի հետ: Մուսոլինիի

Ֆաշիստական կառավարության տապալումը և Խտալիայի անցումը դաշնակիցների կողմն ունեցավ մեծ քաղաքական նշանակություն:

1943թ. նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկզբին Թեհրանում տեղի ունեցավ Ռուզվելտի, Չերչիլի և Ստալինի հանդիպումը, որտեղ վերջնականապես որոշում ընդունվեց 1944թ. մայիսին Հյուսիսային Ֆրանսիայում բացելու երկրորդ ռազմաճակատ: Եվ ահա 1944թ. հունիսի 6-ին անգլո-ամերիկյան դեսանտն ափ իջավ Հյուսիսային Ֆրանսիայում՝ Նորմանդիայում, և այդպիսով բացվեց երկրորդ ռազմաճակատը: Անգլո-ամերիկյան հրամանատարությունն ափ հանեց 37 ընտիր դիվիզիաներ՝ 6.000 նավերի օգնությամբ: 11.000 ինքնաթիռներ օդից պաշտպանում էին անգլո-ամերիկյան ուժերի գործողությունները: Այդ ռազմական գործողության անվանումն էր “Օվերլորդ” (ափ իջնելիս ամերիկացիները կորցրեցին մոտ 10.000 զինվոր):

Նույն օրը թվով ավելի փոքր դեսանտ ափ հանվեց նաև հարավային Ֆրանսիայում: Անգլո-ամերիկյան զորքերի ընդհանուր հրամանատարն էր գեներալ Էյզենհաուերը: 1944թ. սեպտեմբերին Ֆրանսիան ամբողջությամբ ազատագրվեց օկուպանտներից: Գերմանացիներն ստիպված եղան դուրս գալ նաև Բելգիայից և Հոլանդիայից:

ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի հետագա գործողությունների ծրագիրը նախատեսում էր հարձակման զարգացումը Գերմանիայում, որպեսզի պարտության մատնելով թշնամուն՝ գրավեն Կենտրոնական Եվրոպայի կարևորագույն շրջանները, և անեն դա ավելի արագ, քան խորհրդային բանակը: Հետագայում իր հուշերի մեջ Չերչիլը գրում էր, որ ինքը շատ էր ուզում, որպեսզի անգլո-ամերիկյան զորքերն ավելի վաղ մտնեին Կենտրոնական Եվրոպա, քան խորհրդային բանակը:

1944թ. տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Այդ ժամանակ ԱՄՆ արդեն դուրս էր եկել արդյունաբերական և գյուղատնտեսական ճգնաժամից: 1940-1942թթ. ընթացքում ԱՄՆ արտադրեց ավելի շատ ռազմամթերք, քան բոլոր հակահիտլերյան կոալիցիայի երկրները միասին: Փաստորեն վերանում է գործազրկությունը, ավելանում բանվորների աշխատավարձը, բայց մենաշնորհների եկամուտներն ավելացել էին, իհարկե, անհամեմատ ավելի շատ: Այդպիսի, դեմոկրատների համար բարենպաստ ներքին և արտաքին պայմաններում, հանրապետականների թեկնածու՝ Թ.Դյուին չէր կարող մրցակցել Ռուզվելտի հետ, որի թեկնածությունը Դեմոկրատական կուսակցությունը առաջարկեց արդեն չորրորդ անգամ, առաջ քաշելով “Ձիերին փոխելու ժամանակը չէ” լոզունգը: Քվեարկության արդյունքում Ռուզվելտը, ստանալով 25,6 մլն. ձայն, չորրորդ անգամ դառնում է ԱՄՆ նախագահ (Դյուին ստացավ 22 մլն. ձայն):

1945թ. փետրվարին Ղրիմում, Յալթա քաղաքում, տեղի ունեցավ նոր հանդիպում (վերջինը Ռուզվելտի մասնակցությամբ) Ստալինի, Չերչիլի և Ռուզվելտի միջև, որտեղ որոշվեց, որ դաշնակիցները կայաքարեն նացիստական Գերմանիայի դեմ մինչև նրա անձնատուր լինելը, իսկ պատերազմից հետո Գերմանիան պետք է բաժանվի չորս օկուպացիոն գոտիների: Բեռլինը նույնպես պետք է բաժանվեր օկուպացիոն գոտիների: Քննարկվեցին հետպատերազմյան աշխարհի կարգավորման հարցերը և, մասնավորապես, խաղաղության և անվտանգության պահպանման համար միջազգային կազմակերպության (ՄԱԿ) ստեղծման հարցը: ԱՄՆ և ԽՍՀՄ պայմանավորվեցին, որ Գերմանիայի պարտությունից երեք ամիս անց ԽՍՀՄ ճապոնիայի դեմ պատերազմի մեջ կմտնի, իսկ դրա դիմաց կստանա Սախալինի հարավային մասը և Կուրիլյան կղզիները: Ղրիմի կոնֆերանսի այդ որոշումը առիթ տվեց հետագայում մի շարք ամերիկյան քաղաքական գործիչների մեղադրել Ռուզվելտին կամ “ազգային շահերի դավաճանության” կամ որպես լուրջ հիվանդության արդյունք:

1945թ. ապրիլ-հունիս ամիսներին չորս երկրների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ-ի և Չինաստանի անունից Սան-Ֆրանցիսկոյում տեղի է ունենում միջազգային կոնֆերանս 50 պետությունների մասնակցությամբ, որոնք ընդունում են ապագա ՄԱԿ-ի կանոնադրությունը: Այն ձայների մեծամասնությամբ հաստատվում է ԱՄՆ Սենատի կողմից: Դրանով վերջ է դրվում իզոլացիանիզմին և վերջնականապես հաղթում է այն համոզվածությունը, որ ԱՄՆ միջազգային գործերում պետք է խաղա վճռական դեր:

Ռուզվելտին այդպես էլ չվիճակվեց ականատես լինել հակահիտլերյան կռալիցիայի վերջնական հաղթանակին: Ծանր հիվանդության հետևանքով 1945թ. ապրիլի 12-ին նա վախճանվում է: Ռուզվելտյան դարաշրջանն ավարտվեց:

Թեմա 3.3.ԱՄՆ Հ.Թրումենի նախագահության օրոք (1945-1953)

ԱՄՆ նախագահները



Հարի Թրումեն – ԱՄՆ 33-րդ նախագահը (1945-1953)

Հ.Թրումենի նախագահության սկիզբը

ԱՄՆ նախագահ դարձավ փոխնախագահ Հ.Թրումենը, որը մինչ այդ պաշտոնն զբաղեցնելը Միսսուրիի նահանգի սենատորն էր: Ֆրանկլին Ռուզվելտի մահից հետո դաշնակիցների հարաբերությունների մեջ փոփոխություն տեղի չունեցավ, ինչի հետ Գերմանիան հույսեր էր կապում: 1945թ. մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիան ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի ներկայացուցիչների ներկայությամբ: Սակայն պատերազմը դեռ շարունակվում էր Հեռավոր Արևելքում, որտեղ Ճապոնիան շարունակում էր դիմադրություն ցույց տալ: 1945թ. փետրվար-հունիս ամիսների ընթացքում ամերիկյան զորքերը պարտության մատնեցին ճապոնացիներին Մանիլայում (Ֆիլիպիններ), Իվոձիմա կղզում և Օկինավայում (Այս արյունահեղ ճակատամարտերում զոհվեցին ավելի քան 65.000 ամերիկացի զինվորներ):

Ճապոնիայի պարտությունը, փաստորեն, անխուսափելի էր: 1945թ-ին Պոտսդամում (Գերմանիա) տեղի ունեցած “մեծ եռյակի” վերջին հանդիպման ժամանակ ²² Ստալինը ևս մեկ անգամ հաստատեց Ճապոնիայի դեմ պատերազմելու ԽՍՀՄ-ի պատրաստակամությունը: Թրումենը, իր հերթին, տեղեկացրեց ԽՍՀՄ առաջնորդին, որ ԱՄՆ հաջողությամբ փորձարկել է նոր կործանիչ զենք՝ ատոմային ռումբ (այդ լուրը Թրումենն ստացավ կոնֆերանսի ժամանակ):

²² Այդ “մեծ եռյակից” մնացել էր, փաստորեն, միայն Ստալինը, քանի որ Չերչիլին պառլամենտական ընտրություններում պահպանողական կուսակցության պարտությունից հետո փոխարինել էր Կ.Էթլին:

Ունենալով այդպիսի զենք, Թրումենն սկսում է գործել ավելի վստահ: Նրա նպատակն է դառնում ստիպել Ճապոնիային անձնատուր լինել մինչև ԽՍՀՄ-ի պատերազմի մեջ մտնելը: Հետագայում Թրումենը խոստովանեց, որ Ճապոնիայի վրա ատոմային ռումբ նետելու գաղափարը նրա մոտ առաջացավ հենց Պոտսդամում: Ընդունելով այդ որոշումը, ԱՄՆ նախագահը ցանկանում էր նաև ցույց տալ ԽՍՀՄ-ին ԱՄՆ հզորությունը և “տեղը դնել” խորհրդային կառավարությանը:

Առաջին ատոմային ռմբակոծումը տեղի ունեցավ 1945թ. օգոստոսի 6-ին Հիրոսիմայում, իսկ երկրորդը՝ օգոստոսի 9-ին Նագասակիում: Այդ ռմբակոծումները ներկայացվեցին ամերիկյան և համաշխարհային հանրությանը որպես ստիպողական գործողություն, որի նպատակն էր արագացնել պատերազմի ավարտը և փրկել հազարավոր ամերիկյան զինվորների կյանքը:

ԽՍՀՄ-ը Ճապոնիայի դեմ պատերազմ սկսեց օգոստոսի 9-ին և Հեռավոր Արևելքում կարողացավ ջախջախել ճապոնական զորքերի Կվանտունյան բանակը: Վերջ ի վերջո Ճապոնիան ստիպված եղավ կապիտուլյացիայի ակտ ստորագրել: Դա տեղի ունեցավ 1945թ. սեպտեմբերի 2-ին ամերիկյան “Միսուրի” ռազմանավի վրա: Ճապոնիայի պարտությամբ ավարտվեց Երկրորդ աշխարհամարտը:

Բոլոր ռազմաճակատների ռազմական գործողություններում մասնակցեց ավելի քան 16 մլն. ամերիկացի զինվոր: Պատերազմի ընթացքում ԱՄՆ կորցրեց մոտ 300.000 մարդ: Պատերազմական ծախսերը կազմեցին մոտ 300 մլրդ. դոլար: Ազգային պարտքը հասավ մինչև 258 մլրդ. դոլարի: Սակայն պատերազմը ԱՄՆ-ին բերեց ոչ միայն կորուստներ, այլև հսկայական օգուտ: Փաստորեն վերացավ գործազրկությունը, իսկ ազգային եկամուտն աճեց 73 մլրդ. դոլարից (1939թ.) մինչև 181 մլրդ. դոլարը (1945թ.):

Ավարտելով Երկրորդ աշխարհամարտի թեման կանգ առնենք նրա հիմնական արդյունքների վրա: Դրանք են՝

1. Հիմնական արդյունքը ֆաշիստական պետությունների՝ Գերմանիայի, Իտալիայի և միլիտարիստական Ճապոնիայի պարտությունն էր: Ֆաշիստական գաղափարախոսությունը, քաղաքականությունը, ռազմական ուժերը, տնտեսությունը ապրեցին լիակատար կործանում:

2. Շատ ուժեղացավ ԽՍՀՄ-ը, նրա ռազմական ուժերը: Ուժեղացավ երկրի քաղաքական դերն աշխարհում:

3. Պատերազմից հետո աշխարհի ևս 11 պետություններ ԽՍՀՄ-ի օրինակով հայտարարեցին իրենց երկրում սոցիալիզմ կառուցելու մասին: Այսպես առաջացավ սոցիալիզմի համակարգը, որը գլխավորեց ԽՍՀՄ-ը: Շուտով ամբողջ աշխարհը բաժանվեց երկու ճամբարների՝

կապիտալիստական (Արևմուտք) և սոցիալիստական (Արևելք), որոնք իրար դեմ սկսում են վարել այսպես կոչված “սառը պատերազմ”:

4. Պատերազմից հետո սկսվում է համաշխարհային գաղութային համակարգի փլուզումը:

5. Ամենահզորացածն այդ պատերազմից դուրս եկավ ԱՄՆ-ն, որը տնտեսական և ռազմական զարգացման տեմպերով բոլոր երկրներին իրենից հետ էր թողել: ԱՄՆ-ն շուտով դառնում է “գերտերություն”:

Նոր նախագահի իշխանության գլուխ գալու հետ մեկտեղ տեղի ունեցան փոփոխություններ նաև Ռուզվելտի կառավարությունում, որտեղից հեռացվեցին “նոր կուրսի” կողմնակիցներից շատերը: Քիչ անց նաև Ռուզվելտի “նոր կուրսը” Թրումենը փոխարինեց “արդար կուրսով”, ինչը, փաստորեն, վերջ է դնում ռուզվելտյան վարչակազմի բուրժուական լիբերալիզմին: Առաջին իսկ օրերից Թրումենը հասկացնել տվեց, որ ինքը մտադիր է լուրջ փոփոխություններ մցնել պատերազմի ժամանակ դաշնակիցների հետ կնքված համաձայնությունների մեջ և այսուհետև “խոսել ռուսների հետ ուժի դիրքից”: ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմքը “սառը պատերազմի” սկզբից դառնում է ԽՍՀՄ-ի հետ դիմակայությունը բոլոր ճակատներում, իսկ գաղափարախոսության մեջ՝ հակակոմունիզմը:

Մշակույթը

Պատերազմի ժամանակ մշակույթը շարունակում էր զարգանալ: Ամերիկյան գրականությունը հարստացավ Ուիլյամ Սարոյանի և Թեննեսսի Ուիլյամսի ստեղծագործություններով, ամերիկյան կինոարվեստը վերելք էր ապրում, նրա բարոյական և հոգեբանական ազդեցությունը ժողովրդի վրա ծանր պատերազմական տարիներին չափազանց մեծ էր:

1940 թ-ին էկրան է բարձրանում Չ. Չապլինի առաջին ծայնային ֆիլմը՝ լեգենդար հակաֆաշիստական երգիծական կինոնկար “Մեծ դիկտատորը”: Պատերազմական տարիներին ստեղծվեցին տասնյակ ֆիլմեր, որոնք ամերիկյան կինոարվեստում թողեցին զգալի հետք և աշխարհին ճանաչել տվեցին այնպիսի դերասանների, ինչպիսիք էին Քեթրին Հյոփբեռնը, Ջոան Քրուֆորդը, Մարլեն Դիտրիխը, Հերի Կուպերը, Հեմֆրի Բոգարտը: Էստրադան “նվաճված” էր Բինգ Քրոսբի, Ֆրենկ Սինատրայի և Նատ “Քինգ” Քոուլի կողմից:

“Սառը պատերազմի” սկիզբը

“Սառը պատերազմի” սկիզբը համարվում է Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ու.Չերչիլի ելույթը ԱՄՆ Միասուրի նահանգի Ֆուլթոն քաղաքի Վեսթմինստերյան քոլեջում, որտեղ ներկա էր մոտ 30.000 մարդ: Այդ ելույթի առիթը Իրանում առաջացած քաղաքական ճգնաժամն էր:

Համաձայն 1942 թ-ին կնքված պայմանագրի՝ խորհրդային զորքերը իրավունք ունեին Իրանի տարածքում պատերազմից հետո մնալ ևս վեց ամիս: Ժամկետը լրանում էր 1946թ-ին մարտի 2-ին: Սակայն ԽՍՀՄ-ը հայտարարեց, որ դուրս կբերի իր զորքերն Իրանի այլ մասերից բայց ոչ իրանական Ադրբեջանից:

Արևմտյան երկրները ԽՍՀՄ-ի այդ քայլը գնահատեցին որպես ադրբեջանական անջատողական ուժերին ռազմական օգնության և Իրանի տարածքի մի մասում խորհրդամետ վարչակարգ ստեղծելու փորձ: Ըստ Չերչիլի՝ նոր աշխարհակարգի հիմքը պետք է դառնա “ամերիկյան դեմոկրատիան”: Ամերիկյան դեմոկրատիա ասելով, Չերչիլը նկատի ուներ Արևմուտքի ընդհանուր մշակութային և բարոյական արժեքները: Նրա կարծիքով, ամբողջ քրիստոնեական քաղաքակրթությունը վտանգի մեջ էր, և ամբողջ աշխարհին սպառնում էր բռնակալության հաստատման վտանգը: Եվ այդ սպառնալիքը գալիս էր ԽՍՀՄ-ից, խորհրդային կոմունիզմից: Չերչիլը կոչ էր անում բոլոր դեմոկրատական երկրներին, որպեսզի նրանք միասնական ուժերով պաշտպանեն իրենց ազատությունը: Փաստորեն խոսքը վերաբերվում էր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ռազմաստրատեգիական դաշինքի ստեղծմանը, որը “երկաթյա վարագույր” կիջեցներ կոմունիստական սպառնալիքի առջև:

“Երկաթյա վարագույր” տերմինը Չերչիլը առաջին անգամ օգտագործեց պառլամենտում 1945թ. օգոստոսի 16-ին իր ելույթի ժամանակ: Ֆուլթոնյան ճառից հետո այդ հասկացությունը դարձավ “սառը պատերազմի” խորհրդանիշը: Չերչիլի ելույթը նաև նոր աշխարհայացքային փիլիսոփայության արտահայտումն էր, որը մեծ տարածում ունեցավ ամբողջ Արևմուտքում: Դրա հիմքում ընկած էր աշխարհի նոր բաժանումը երկու հակադիր համակարգերի, որոնք պատրաստ էին բախվելու իրար հետ: Եվ որպեսզի խուսափեն “տաք” պատերազմից, պետք էր անմիջապես մեկուսացնել հակառակորդին՝ սկսելով “սառը պատերազմ”: Արևմտյան երկրների համար դա նշանակում էր ԱՄՆ ռազմաքաղաքական գերիշխանության ճանաչումը:

1947 թ-ի մարտի 12-ին Կոնգրեսում իր ելույթի ժամանակ Թրումենը խոսեց “աշխարհի զարգացման երկու այլընտրանքային ճանապարհների” մասին՝ ժողովրդավարական և ամբողջատիրական: ԱՄՆ չի կարող անտարբեր մնալ աշխարհի դեմոկրատիայի ճակատագրի նկատմամբ: Բացի այդ ամբողջատիրական վարչակարգերը սպառնում են

ԱՄՆ անվտանգությանը: Այդ ամենն ստիպում է ԱՄՆ-ին գլխավորել “խաչակրաց արշավանքը կոմունիզմի դեմ”: 1945-1949 թթ-ի ընթացքում ԱՄՆ երկկողմանի պաշտպանական պայմանագրեր է ստորագրում 42 պետությունների հետ: 1946-1947 թթ-ին տեղի ունեցած բոլոր բանակցությունները ԽՍՀՄ-ի հետ Գերմանիայի հետագա քաղաքական և ռազմական զարգացման ուղու վերաբերյալ ավարտվում են ապարդյուն, ինչն ստիպում է արևմտյան երկրներին (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա) միավորել օկուպացիոն գոտիները: 1948թ. հունիսի 24-ին ԽՍՀՄ-ը փաստորեն, իրականացնում է Արևմտյան Բեռլինի շրջափակումը: Ռազմական կոնֆլիկտն այդ ժամանակ բացառվում էր, այդ պատճառով որոշվեց ստեղծել օդային ճանապարհ, որը կապ կհաստատեր Արևմտյան Բեռլինի հետ և հնարավորություն կտար ապահովել բնակիչներին սննդամթերքով, առաջին անհրաժեշտության ապրանքներով, վառելիքով: 324 օր անընդմեջ ամերիկյան ինքնաթիռները վայրէջք էին կատարում արևմտաբեռլինյան Թեմփելհոֆ օդանավակայանում: Վերջ ի վերջո, ԽՍՀՄ ստիպված էր հրաժարվել շրջափակումից:

1949 թ. մայիսի 23-ին ԱՄՆ նախաձեռնությամբ ստեղծվում է Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՀ), իսկ քիչ անց, արդեն ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՀ): Այդ պահից աշխարհի բաժանման գիծը երկու բևեռների, Արևմուտքի և Արևելքի, ազատ աշխարհի և ամբողջատիրական վարչակարգերի միջև, սկսում է անցնել Գերմանիայի տարածքով, ինչի մարմնավորումը շուտով դառնում է Բեռլինի պատը:

Թրումենի վարչակազմի գործունեությունը մինչև 1953թ.

Պատերազմի ավարտն անդրադառնում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Արդյունաբերությունը, որն առաջ աշխատում էր ռազմական պահանջների համար, աստիճանաբար կրճատում է իր արտադրանքը, ինչը, իր հերթին, հանգեցնում է նաև աշխատանքային տեղերի կրճատմանը: Բացի այդ ռազմական ուժերի թվաքանակը 12 մլն.-ից կրճատվում է մինչև 3 մլն.-ը: Սա ևս նպաստեց գործազրկության աճին: Դրա հետ մեկտեղ 1946թ-ին ամբողջ երկրում տեղի ունեցան աշխատավարձերի բարձրացման պահանջներով գործադուլներ, որոնց մասնակցեցին մոտ 4,6 մլն. մարդ: Այս ամենը չէր կարող չազդել երկրի ներքին քաղաքական վիճակի, Դեմոկրատական կուսակցության դիրքերի վրա: Առաջին անգամ վերջին 14 տարիների ընթացքում հսկողությունը Կոնգրեսի երկու պալատների վրա անցնում է Հանրապետական կուսակցությանը:

1946թ. նոյեմբերին Թրումենը ստորագրում է #9806 հրամանը, որով ձևավորվում էր ժամանակավոր նախագահական հանձնաժողով, որի առջև դրվել էր խնդիր ստուգել պետական ծառայողների “օրինապահությունը”: Դրանով սկիզբ է դրվում հակակոմունիստական հիստերիային: Նախագահի կարգադրությամբ պետական ապարատից հեռացվեցին կոմունիզմի հանդեպ համակրանք ունեցող և “հակամերիկյանության” մեջ մեղադրվող հազարավոր մարդիկ: Այդ հիստերիայի գոհն են դառնում ամերիկյան հասարակության ինտելեկտուալ էլիտայի մի շարք ներկայացուցիչները՝ գրողներ, ժուռնալիստներ, դերասաններ (օրինակ՝ Չ.Չապլինը, որը ստիպված եղավ հեռանալ երկրից): 1947թ-ին ընդունվում է Ազգային անվտանգության մասին օրենքը (National Security Council) և դրա հիման վրա 1947թ. սեպտեմբերի 18-ին ստեղծվում է Կենտրոնական հետախուզական վարչությունը (Central Intelligence Agency, CIA): 1947թ. հունիսին Կոնգրեսն ընդունում է այսպես կոչված “Մարշալի ծրագիրը”, որով նախատեսվում էր եվրոպական տնտեսության վերականգնումը: Այդ ծրագիրն ընդունվեց 16 եվրոպական երկրների կողմից: ԱՄՆ ֆինանսական ներդրումները կազմեցին ավելի քան 10 մլրդ. դոլար, որոնց զգալի մասը վերադարձավ Ամերիկա արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների վրա պատվերների տեսքով (“Մարշալի ծրագիրը” ԱՄՆ-ի կողմից առաջարկվեց նաև ԽՍՀՄ-ին, սակայն Ստալինը մերժեց այդ առաջարկը): “Մարշալի ծրագրի” իրականացման արդյունքում ամերիկյան արտահանումը դեպի եվրոպական երկրներ աճեց 9,5 մլրդ. դոլարից (1946թ.) մինչև 15 մլրդ.-ը (1952թ.): Իր հերթին ԱՄՆ-ի Կոնգրեսն իր համաձայնությունը չտվեց լատինամերիկյան պետությունների վրա տարածելու “Մարշալի ծրագիրը”: Դրա փոխարեն 1948թ. ապրիլին ԱՄՆ նախաձեռնությամբ ստեղծվում է ամերիկյան պետությունների Կազմակերպություն, որի նպատակն էր ամերիկյան մայրցամաքում կոլեկտիվ անվտանգության ձևավորումը:

Նախագահական ընտրությունների նախօրյակին սրվում է ներքին քաղաքական պայքարը: Թրումենը, որի թեկնածությունն առաջ են քաշում դեմոկրատները, փորձում էր համոզել տասնյակ հազարավոր ամերիկացիների, որ ձգտում է բարելավել բանվորների սոցիալական վիճակը, լավացնել սոցիալական ապահովությունը, ընդլայնել բնակարանային շինարարության ծրագրերը, սակայն հանրապետականների հսկողության տակ գտնվող Կոնգրեսը խանգարում է նրան իրականացնել այդ ամենը: Նա նույնիսկ հայտարարեց, որ Հանրապետական կուսակցությունը հսկվում է “Ուոլլ-սթրիտի մի խումբ արնախումների կողմից”: Դեմոկրատների և Թրումենի կողմից նման ակտիվ, հարձակողական մարտավարությունը տվեց իր արդյունքը: 1948թ-ի նոյեմբերի 2-ին, բոլոր կանխագուշակումներին

հակառակ, Թրումենին հաջողվում է հաղթել հանրապետականների թեկնածու՝ Թ. Դյուրին:

Թրումենի երկրորդ վարչակազմն ստիպված էր մեծ ուշադրություն հատկացնել արտաքին քաղաքականությանը: Դեռ 1948թ. մարտին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բելգիան, Հոլանդիան և Լյուքսեմբուրգը Բրյուսելում “ռուսական ագրեսիայի դեմ” ստորագրում են կոլեկտիվ պաշտպանության մասին համաձայնագիր, որն աջակցություն ստացավ ԱՄՆ կողմից:

1949թ. հունվարի 20-ին Թրումենը, ելույթ ունենալով Կոնգրեսում, հայտարարեց, որ մտադիր է ստորագրել Հյուսիսատլանտյան պայմանագիր: Եվ ահա, 1949թ-ի ապրիլի 4-ին Բրյուսելում “արևմտյան աշխարհի” 12 երկրներ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Կանադա, Իտալիա, Բելգիա, Հոլանդիա, Լյուքսեմբուրգ, Նորվեգիա, Դանիա, Իսլանդիա, Պորտուգալիա ստորագրում են Հյուսիսատլանտյան պակտը, որը նախատեսում էր ռազմաքաղաքական բլոկի՝ ՆԱՏՕ-ի ստեղծումը (NATO-North Atlantic Treaty Organization): 1955թ-ին NATO-ին է միանում նաև ԳՖՀ-ն:

Խորհրդային Միությունը 1955թ-ի մայիսի 14-ին ստեղծում է իր ռազմաքաղաքական բլոկը՝ Վարշավյան պայմանագրի Կազմակերպությունը, որի մեջ մտան սոցիալիզմ կառուցող պետությունները՝ ԽՍՀՄ-ը, Չեխոսլովակիան, Լեհաստանը, Ռումինիան, Ալբանիան (պաշտոնապես դուրս է գալիս բլոկից 1968թ-ին), Բուլղարիան, Հունգարիան, ԳԴՀ-ն (բլոկը լուծարվեց 1991թ-ի հուլիսի 1-ին)::

Շուտով ԱՄՆ կորցնում է միջուկային զենքի մենաշնորհը: Դա տեղի է ունենում, երբ 1949թ. սեպտեմբերի 25-ին ԽՍՀՄ-ը հանդես է գալիս միջուկային զենքի հաջող փորձարկման մասին հայտարարությամբ, ինչից հետո ԱՄՆ միջուկային զենք արտադրելու համար անհրաժեշտ ամբողջ տեխնոլոգիան տրամադրում է Մեծ Բրիտանիային: 1952թ-ի նոյեմբերի 1-ին ԱՄՆ Խաղաղ օվկիանոսի Էնիվետոկ կղզու վրա անց է կացնում ջերմամիջուկային զենքի առաջին փորձարկումը, որը հաջողությամբ է ավարտվում: 1953թ-ին ջրածնային ռումբ ունեցավ նաև ԽՍՀՄ-ը: Դրանով սկիզբ դրվեց միջուկային զենքի սպառազինությանը, որը շարունակվեց 40 տարի:

40-ական թթ. վերջին սրվում է վիճակը Կորեական թերակղզում: Կորեան Ճապոնիայի գաղութն էր և պատերազմից հետո 38-րդ զուգահեռականով բաժանվեց երկու մասի՝ Հյուսիսային և Հարավային: 1948թ-ի օգոստոսին Հարավային Կորեան ԱՄՆ-ի աջակցությամբ հռչակվում է Կորեայի Հանրապետություն, իսկ նույն թվականի սեպտեմբերին Հյուսիսային Կորեան Չինաստանի և ԽՍՀՄ-ի աջակցությամբ՝ Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետություն:

Պետք է նշել, որ այդ ժամանակ Չինաստանում հաստատվել էր կոմունիստական դիկտատուրան Մաո-Ցզե-Դունի գլխավորությամբ: Նախկին չինական բուրժուական կառավարությունը Չան Կայշիի գլխավորությամբ ստիպված եղավ փախչել Թայվան: Այդ իրադարձությունը թույլ տվեց հանրապետականներին մեղադրել Թրումենի վարչակազմին “Չինաստանը կորցնելու” մեջ: Հասկանալի էր, որ կոմունիստական Չինաստանը պաշտպանելու էր Հյուսիսային Կորեային:

1950թ. հունիսի 25-ին Հյուսիսային Կորեայի բանակն անցնելով 38-րդ զուգահեռականը, հարձակվում է Հարավի վրա, ստիպելով հարավկորեական բանակին նահանջել: ԱՄՆ-ն ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի միջոցով անց է կացնում Հարավային Կորեային ռազմական օգնություն տրամադրելու որոշում: ՄԱԿ-ի միջազգային ուժերի հիմնական կորիզը կազմում էին ամերիկյան զինվորները, իսկ այդ ուժերի հրամանատարն էր ԱՄՆ բանակի գեներալ Դ.Մակարտուրը: Նրան հաջողվեց դուրս մղել հակառակորդին Հարավից և քշել մինչև Չինաստանի սահմանը: Պատերազմի մեջ է մտնում արդեն Չինաստանը և հիմա արդեն նահանջում են հարավկորեացիներն ամերիկացիների հետ միասին: Վտանգ էր առաջանում, որ այդ լոկալ պատերազմը կարող է ստանալ համաշխարհային բնույթ, եթե պատերազմական գործողությունների մեջ ներքաշվեն ԽՍՀՄ-ը և Չինաստանը: Իրադարձությունների նման զարգացումը չէր մտնում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի ծրագրերի մեջ: Այդ պատճառով, վերջ ի վերջո, 1953թ-ին ստորագրվում է համաձայնագիր, որով Կորեան բաժանվում է (և մինչև այսօր էլ մնում է բաժանված) 38-րդ զուգահեռականով (այդ պատերազմում ամերիկացիները կորցրեցին 30.000 զինվոր): Հարավային Կորեայում տեղադրվեց ամերիկյան ռազմական բազա: ԽՍՀՄ-ի և Չինաստանի ագրեսիվ նպատակները կանգնեցնելու նպատակով ԱՄՆ շարունակում էր ստեղծել տարբեր ռազմաքաղաքական դաշինքներ տարբեր երկրների հետ: Այսպես, 1951թ-ին Սան-Ֆրանցիսկոյում ԱՄՆ-ն Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հետ ստորագրում է ռազմական դաշինք, որը ստանում է ԱՆԶՈՒՍ անվանումը (Ա-Ավստրալիա, ՆԶ-Նոր Զելանդիա, ՈՒՍ-United States-ԱՄՆ):

Հակակոմունիստական հիստերիայի նոր փուլը “բացվեց” 50-ական թթ-ին: Դրա սկիզբն է համարվում երբ Վիսկոնսին նահանգի սենատոր հանրապետական Զ.Մաքքարթին հանդես է գալիս սենսացիոն հայտարարությամբ, թե իբր ինքն ունի ցուցակ, որտեղ նշված են պետդեպարտամենտում աշխատող 205 կոմունիստներ և դրա մասին տեղյակ է պետքարտուղար Աչխոնը: Չնայած որ Մաքքարթնիի այս հայտարարությունը, ինչպես և նրա գործունեությունը հիմնականում ուղղված էր դեմոկրատական կառավարության դեմ, այնուամենայնիվ,

երկրում նորից սկսվում է հակակոմունիստական հիստերիա՝ “վիուկների որս”:

Այդ ժամանակահատվածը պատմության մեջ անվանվեց “մաքքարթիզմ”, որը, անշուշտ, սովեր գցեց ամբողջ ամերիկյան դեմոկրատիայի վրա: Ուշագրավ է նաև, որ արդեն 1954թ-ին Մաքքարտնիի գործունեությունն արժանացավ հետաքննության և նրան մեղադրեցին լիազորությունները գերազանցելու և անօրինական ֆինանսական գործարքների մեջ, որից հետո նրա քաղաքական կարիերան վերջ գտավ:

1952թ. նոյեմբերին տեղի ունեցան հերթական նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում հաղթանակ տարան հանրապետականները, իսկ նրանց թեկնածուն՝ Երկրորդ աշխարհամարտի հերոս, Եվրոպայում դաշնակցային ուժերի նախկին գլխավոր հրամանատար, ԱՄՆ բանակի նախկին շտաբի պետ Դուայտ Էյզենհաուերը դարձավ ԱՄՆ 34-րդ նախագահը: Փոխնախագահ դարձավ 39-ամյա Ռիչարդ Նիքսոնը: Հանրապետականները գրավեցին ոչ միայն Սպիտակ տունը, այլև Կոնգրեսը:

Թեմա 3.4. Էյզենհաուերի նախագահությունը /1953-1961/

ԱՄՆ Նախագահները



Դուայթ Դեյվիդ Էյզենհաուեր – ԱՄՆ 34-րդ նախագահը (1953-1961)

Առաջին վարչակազմի արտաքին քաղաքականությունը

Հանրապետականների հաղթանակը նշանակում էր անցում ավելի կոշտ քաղաքականության, առաջին հերթին, արտաքին ասպարեզում: Պետդեպարտամենտի քարտուղար նշանակվեց Ջոն Ֆոստեր Դալլեսը, որը կողմնակից էր ակտիվ արտաքին քաղաքականության և ԽՍՀՄ-ի վրա անհրաժեշտության դեպքում ճնշում գործադրելու գծին: Այն պետք է դեմոկրատների վարած “զսպվածության” քաղաքականությունը փոխարիներ “ավելի դինամիկ” քաղաքականությամբ, որը թույլ կտար ստրկացված երկրները “ազատել կոմունիստական ճնշումից”:

Դալլեսն զբաղեցնում է պետքարտուղարի պաշտոնը վեց տարի շարունակ: Նախագահը երկրի արտաքին քաղաքականության կուրսի ձևավորման բոլոր լիազորությունները հանձնել էր նրան: Դալլեսի նախաձեռնած առաջին քայլերից եղավ 1954թ- Թայվանի հետ երկկողմանի օգնության մասին պայմանագրի ստորագրումը, որը զգուշացնում էր Չինաստանին չկատարելու չմտածված քայլեր: Աստիճանաբար բարդանում էր իրավիճակը Հնդկաչինում: Վիետնամում ֆրանսիացիների դեմ սկսվում է ազատագրական պայքար, որն աջակցություն էր ստանում Չինաստանից: 1954թ. գարնանը ֆրանսիացիները լուրջ պարտություն են կրում վիետնամական ազատագրական բանակից, որից հետո ստիպված են լինում դուրս բերել իրենց բանակը երկրից: Ժնևում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում, որին մասնակցում էր նաև ԱՄՆ-ն, Վիետնամը 17-րդ զուգահեռականով բաժանվեց երկու մասի՝ Հարավայինի և

Հյուսիսայինի:Վերջինում իշխանությունը գտնվում էր կոմունիստների ձեռքում:²³

Սակայն ամերիկացիները հրաժարվեցին ստորագրել վերջնական համաձայնագիրը, գտնելով, որ դա արդեն մեծ զիջում կլիներ վիետնամցի և չինացի կոմունիստներին: Ասիական կոմունիստների աճող հզորության դեմն առնելու համար ԱՄՆ 1954թ. սեպտեմբերին ստեղծում է ՍԵԱՏՕ ռազմական բլոկը (SEATO-South-East-Asia Treaty Organization), որի մեջ մտան հետևյալ երկրները՝ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ֆիլիպիններ, Թայլանդ, Պակիստան, Ավստրալիա և Նոր Զելանդիա:

Դալլեսը նշում էր, որ Հյուսիսային Վիետնամի կորուստը չպետք է բերի կոմունիզմի տարածմանը Հարավ-Արևելյան Ասիայում և Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմտյան մասում: Բացի այդ 1954թ-ի սեպտեմբերին ԱՄՆ Պակիստանի հետ ստորագրում է երկկողմանի անվտանգության մասին պայմանագիր, ինչը մեծ դժգոհություն առաջացրեց Հնդկաստանում և բերեց խորհրդա-հնդկական հարաբերությունների սերտացմանը: 1954թ. ապրիլի 7-ին Դալլեսի նախաձեռնությամբ Էյզենհաուերը ելույթ է ունենում նոր, այսպես կոչված “դոմինոյի տեսություն” ռազմաքաղաքական դոկտրինայով, որտեղ նախազգուշացնում էր մյուս երկրներին աշխարհի որևիցե տարածաշրջանում ստատու-քվոյի խախտման փորձ անելու վերաբերյալ:

Առաջին վարչակազմի ներքին քաղաքականությունը

Հետագայում ամերիկյան պատմաբանները Էյզենհաուերի առաջին նախագահության ներքին քաղաքականությունը բնութագրեցին որպես “լճացման շրջան”, հիմնավորելով այդ արտահայտությունը նրանով, որ կառավարությունում ներգրավված խոշոր արդյունաբերական և ֆինանսական կապիտալի ներկայացուցիչների մեջ չգտնվեց Դալլեսի նման փորձառու, եռանդուն և փառասեր մի մարդ: Պատմաբան Թագուելլը նշում է, որ տնտեսությամբ և ֆինանսներով զբաղվող մարդիկ հասել էին մեծ հաջողության բիզնեսում և Էյզենհաուերին թվում էր , որ նրանք հաջողության կհասնեն նաև կառավարությունում, սակայն, ինչպես գրում է Թագուելլը “նրանք գիտեին, թե ինչ էր անհրաժեշտ իրենց, այլ ոչ թե երկրին”: Այնուամենայնիվ մակրոտնտեսության մեջ ցուցանիշները տպավորիչ էին՝ ազգային եկամուտը 1950-1960թթ-ին աճեց 300 մլրդ. դոլարից մինչև 500 մլրդ. դոլարը: Մեծ զարգացում էր

²³ 1954թ. նոյեմբերին Հարավային Վիետնամ ուղարկվեցին ամերիկյան ռազմական խորհրդականներ գեներալ Քոլլինզի գլխավորությամբ, որոնք պետք է զբաղվեին հարավվիետնամական բանակի վերապատրաստմամբ:

ապրում ավտոմոբիլային արդյունաբերությունը, աճում էին շինարարության ծավալները, առաջին հերթին բուռն տեմպերով ընթանում էր ֆեդերալ ժամանակակից ավտոճանապարհների կառուցումը:

Մեծ տեմպերով առաջ էր գնում նաև երկրի ուրբանիզացման գործընթացը: Առաջին հերթին դա վերաբերվում էր երկրի Հարավին և Արևմուտքին: Հյուստոնը (Տեխաս), Մայամին (Ֆլորիդա), Տուսոնը և Ֆինիքսը (Արիզոնա) արագ դառնում էին խոշոր քաղաքներ, իսկ, օրինակ, Լոս-Անջելեսը (Կալիֆորնիա) և Նյու-Յորքը՝ մեգապոլիսներ: Բացի այդ Կալիֆորնիայում սկսում են զարգանալ արդյունաբերության ժամանակակից բարձր տեխնոլոգիական ճյուղեր, որոնք հետագայում դառնում են “Silicon Valley”-ի հիմքը:

Քաղաքացիական իրավունքների համար պայքարող սևամորթ ամերիկացիների ճնշման տակ ԱՄՆ Գերագույն դատարանը 1954թ. ընդունում է կրթության ասպարեզում երկրի սևամորթ բնակչության նկատմամբ ռասայական խտրականության վերացման մասին որոշումը:

Երկրորդ վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը

1955թ-ին Էյզենհաուերն ինֆարկտ է ստանում, ինչից հետո շատերը եզրակացնում են, որ նա երկրորդ ժամկետի համար չի ներկայացնի իր թեկնածությունը: Սակայն 1956թ. փետրվարի 29-ին Էյզենհաուերը հայտարարեց, որ կպայքարի երկրորդ ժամկետի համար: Դեմոկրատական կուսակցության թեկնածու՝ Ստիվենսոնի նկատմամբ նախագահը նորից հաղթանակ է տանում, ստանալով 35 մլն. ձայն (Ստիվենսոնը՝ 26 մլն.): Սակայն հանրապետականները պարտություն են կրում դեմոկրատներից Կոնգրեսի համար պայքարում, ինչն ապացուցում է, որ Էյզենհաուերի հեղինակությունը չէր ընկել և ամերիկացիներն իրենց ձայները տալիս էին, առաջին հերթին, նրան, այլ ոչ թե Հանրապետական կուսակցությանը:

Նորից, ինչպես և առաջին ժամկետի ժամանակ, առավել ուշադրություն էր դարձվում արտաքին քաղաքականությանը: Ներքին քաղաքականության մեջ կարելի է նշել Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի (Civil rights Act) ընդունումը 1957թ-ին, որով ֆեդերալ իշխանություններին հնարավորություն էր տրվում միջամտել սևամորթ բնակչության ընտրություններին մասնակցելու իրավունքների խախտման դեպքում:

Միջազգային ասպարեզում “սառը պատերազմը” շարունակվում էր տարբեր ուղղություններով: Ինչպես ԽՍՀՄ-ը, այնպես էլ ԱՄՆ-ն չէին ցանկանում որևէ զիջում կատարել: Մրցակցությունը տարածվեց նույնիսկ տիեզերքի վրա: 1957թ. աշնանը ԽՍՀՄ-ին հաջողվում է տիեզերային

ուղեծիր դուրս բերել Երկրի առաջին արհեստական արբանյակը: ԱՄՆ-ի պատասխանը եղավ ՆԱՍԱ-ի ստեղծումը (National Aeronautics and Space Administration) 1958թ-ին: ԱՄՆ առաջին արհեստական արբանյակը “Էքսպլորեր-1” տիեզերք դուրս բերվեց նույն 1958թ-ին:

Միջազգային դրությունը 50-ական թթ-ին լարվեց նաև Մերձավոր Արևելքում, որտեղ աստիճանաբար սրվում էին արաբա-խորայելական հարաբերությունները: Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը, որին աջակցում էր ԽՍՀՄ-ը, բացահայտորեն կոչ էր անում “զգել իսրայելցիներին ծովը” և, բացի այդ, հայտարարում, որ ազգայնացնելու է Սուեզի ջրանցքը, որը գտնվում էր Անգլիայի և Ֆրանսիայի հսկողության տակ: ԱՄՆ ավելի շատ հակված էր ջրանցքը միջազգայնացնել, քան թողնել անգլո-ֆրանսիական հսկողության տակ: Այդ պատճառով ԱՄՆ այդ կոնֆլիկտում չեզոք դիրք բռնեց: Նույնիսկ ԱՄՆ-ի կողմից այդ դիրքորոշումն արգելք չհանդիսացավ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի համար, որոնք Իսրայելի հետ միասին հարձակվեցին Եգիպտոսի վրա: Եգիպտոսին անմիջապես պաշտպանեց ԽՍՀՄ-ը, որի առաջնորդ Ն.Խրուշչովը Մեծ Բրիտանիայի վարչապետ Իդենին իր ուղերձում զգուշացնում է, որ եթե ագրեսիան շարունակվի, ԽՍՀՄ-ը պատրաստ է նույնիսկ միջուկային զենք օգտագործել:

Այսպիսով, անգլո-ֆրանսիական արկածախնդրությունն ամբողջ աշխարհը կանգնեցրեց միջուկային կոնֆլիկտի եզրին: ՄԱԿ-ի միջոցով ԱՄՆ-ին հաջողվեց համոզել Անգլիային և Ֆրանսիային զինադադար կնքելու անհրաժեշտության մեջ: Վերջ ի վերջո Անգլիան և Ֆրանսիան ստիպված եղան 1956թ. դեկտեմբերի 22-ին թողնել Եգիպտոսի տարածքը: Նրանց հեղինակությունն արաբական աշխարհում ընկավ և նրանց տեղը շուտով զբաղեցրեց ԱՄՆ, որը Մերձավոր Արևելքի նկատմամբ մշակեց հատուկ, այսպես կոչված “Էյզենհաուերի դոկտրինան”, որի համաձայն ԱՄՆ-ին իրեն իրավունք էր տալիս անհրաժեշտության դեպքում օգտագործել իր ռազմական ուժերը Մերձավոր Արևելքում, պաշտպանելով այդ տարածաշրջանը կոմունիստական ագրեսիայից:

1956թ-ին Հունգարիայում սոցիալիստական վարչակարգի դեմ ապստամբություն է բարձրանում, որը ճնշվում է խորհրդային զորքերի կողմից: Սակայն նույն ժամանակ տեղի ունեցող Սուեզի ճգնաժամը թույլ չտվեց Արևմուտքին և ԱՄՆ-ին ավելի ակտիվ մասնակցություն ցուցաբերել այդ իրադարձությանը:

Իրադրությունը Լատինական Ամերիկայում նույնպես անհանգստացնում էր ԱՄՆ ղեկավարությանը: Անընդմեջ տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և քաղաքական ճգնաժամերն ուղղակի ցնցում էին համարյա բոլոր լատինամերիկյան պետությունները, որտեղ ծաղկում էին կոռուպցիան, բռնությունը, աղքատությունը, սոցիալական անարդարությունը: Այդ պայմաններում լատինամերիկյան շատ

պետություններում մեծ տարածում էին ստացել սոցիալիստական գաղափարները, ինչը չէր կարող չանհանգստացնել ԱՄՆ-ին: Այդպիսի երկրներում ամերիկացիների աջակցությամբ տեղի էին ունենում հեղաշրջումներ, որոնց արդյունքում իշխանության գլուխ էին անցնում ռազմական խունտաներ: ԱՄՆ-ի այդպիսի “միջնորդությունը” չէր կարող, իհարկե, նրա հանդեպ մեծ սեր առաջացնել լատինամերիկյան ժողովուրդների մոտ:

1959թ-ին տապալվում է Կուբայի դիկտատոր Բատիստայի իշխանությունը և այն անցնում է Ֆ.Կաստրոյին, որը 1960թ-ին ԽՍՀՄ-ի հետ ստորագրում է առևտրի պայմանագիր: Էյզենհաուերի վարչակազմը որոշում է ընդունում խզել Կուբայի հետ դիվանագիտական հարաբերությունները և CIA-ի միջոցով հեղափոխական Կուբայի դեմ օգտագործել “կոնտրաս” ջոկատները:²⁴

1959թ. աշնանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային մասնակցելու համար Նյու-Յորք է ժամանում Ն.Խրուշչովը: Նա ոչ պաշտոնական հանդիպում է ունենում Էյզենհաուերի հետ Քեմփ-Դեվիդում: Կարծես հույս առաջացավ, որ “սառը պատերազմը” երկու կողմերի միջև ինչ-որ չափով կթուլանա, սակայն, երբ 1960թ. գարնանը ԽՍՀՄ-ի տարածքի վրա խփվեց ամերիկյան ինքնաթիռ-ըտես Ու-2-ը, տեղի է ունենում նոր դիվանագիտական կոնֆլիկտ և արդեն խոսք անգամ չէր կարող լինել առճակատման թուլացման մասին:

1961թ. հունվարին լրացավ Էյզենհաուերի 70-ամյակը: Նա Ամերիկայի վերջին նախագահն էր, որը ծնվել էր դեռևս 19-րդ դարում: Դեմոկրատների առաջ քաշած “Նոր սերունդն առաջարկում է առաջնորդին” լոզունգը դուր էր գալիս ամերիկացիներից շատերին: Այդ տրամադրությունները բնորոշ էին նաև Հանրապետական կուսակցության համար (Էյզենհաուերի երրորդ ժամկետի մասին խոսք անգամ չէր կարող լինել, քանի որ դեռ 1947թ-ին ընդունվել էր ԱՄՆ Սահմանադրության 22-րդ ուղղումը, որով նախագահի ժամկետը Սպիտակ տանը սահմանափակվում էր երկու շրջանով):

²⁴Այդպես էին անվանում Կուբայից փախած այն էմիգրանտներին, որոնք պատրաստ էին զենքի միջոցով վերջ տալ Կաստրոյի կառավարությանը

Թեմա 3.5. ԱՄՆ Ջ.Քեննեդիի և Լ.Ջոնսոնի նախագահության ժամանակաշրջանում/1961-1969թթ./

ԱՄՆ Նախագահները



Ջոն Ֆիցջերալդ Քեննեդի-ԱՄՆ 35-րդ նախագահ/1961-1963/



Լինդոն Բեյնս Ջոնսոն-ԱՄՆ 36-րդ նախագահ/1963-1969/

Ջ. Քեննեդիի ներքին և արտաքին քաղաքականությունը

Նախագահական պաշտոնն զբաղեցնելու համար երկու կուսակցություններն իրենց շարքերից առաջարկում են երիտասարդ թեկնածուների: Դեմոկրատները՝ Ջոն Քեննեդիին, իսկ Հանրապետական կուսակցությունը՝ փոխնախագահ Ռիչարդ Նիքսոնին: Նախընտրական ելույթների ժամանակ Քեննեդին, խոսելով արտաքին հարաբերությունների մասին, շեշտը դնում էր հետագայում դոկտրինայի ձև ընդունած “ճկուն արձագանք” քաղաքականության վրա, որը, փաստորեն, նախկին վարչակազմի և “սառը պատերազմին” բնորոշ քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր: Կասկածի տակ էր դրվում միայն այդ քաղաքականության մի քանի ուղղությունները (Քեննեդին կոչ էր անում վերազինել Արևմտյան Եվրոպան և ուժեղացնել ԱՄՆ-ի հրթիռային հզորությունը): Ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականությունում Քեննեդին խոսք էր տալիս անցկացնել լուրջ սոցիալական բարեփոխումներ, այդ թվում՝ բժշկական ապահովագրություն ծերերի և ֆեդերալ իշխանությունների կողմից օգնություն ուսուցիչների համար, նվազագույն աշխատավարձերի բարձրացում բանվորներին, սոցիալական ապահովության ծրագրերի ընդլայնում: Այդ քաղաքականությունը Քեննեդին անվանեց “նոր եզրեր”՝ ձգտել և հասնել հաջողությունների աշխատանքի, գիտության և տեխնիկայի, մշակույթի, սոցիալական և քաղաքացիական պրոբլեմների

լուծման բոլոր այդ և մնացած բնագավառներում: Նրան են պատկանում յուրաքանչյուր ամերիկացուն ուղղված “Մի հարցրու, թե ինչ է արել քեզ համար երկիրը, հարցրու, թե դու ինչ ես արել երկրիդ համար” հայտնի խոսքերը:

Նիքսոնի ներկայացրած հանրապետականների ծրագիրը իր հիմնական արտաքին և ներքին ուղղություններով համարյա ոչ մի բանով չէր տարբերվում դեմոկրատների ծրագրից: Ինչպես հետո գրում էր մամուլը Քեննեդին հաղթանակ տարավ ոչ թե որովհետև ներկայացրեց ավելի լավ քաղաքական ծրագիր, այլ, որովհետև ավելի լավ տեսք ուներ հեռուստատեսային էկրանների վրա: Սակայն նրա առավելությունը նվազագույն էր՝ Քեննեդին ստացավ ընդամենը 120.000 ձայն ավելի: Ջոն Ֆիցջերալդ Քեննեդին դառնում է ԱՄՆ 35-րդ նախագահը: Նախագահի կողմից ձևավորված կառավարության և խորհրդականների միջին տարիքը ընդամենը 38 էր, ինչը համապատասխանում էր նրա այն խոսքերին, որոնք նա ասաց իր երդմնակալության ճառում. “Ջահը տրվում է ամերիկացիների նոր սերնդին” (պաշտպանության նախարար նշանակվեց “Ֆորդի” նախկին նախագահ Ռ.Մակնամարան, ֆինանսների նախարար՝ բանկիրների նշանավոր տան ներկայացուցիչ միլիոնատեր Դ.Դիլլոնը, պետքարտուղար՝ Դ.Ռասկը, արդարադատության նախարար՝ Ջ.Քեննեդիի եղբայր՝ Ռոբերտ Քեննեդին):

Քեննեդիի նախագահության կարճատև շրջանում տեղի ունեցան մի շարք շատ կարևոր իրադարձություններ, առաջին հերթին, միջազգային և խորհրդա-ամերիկյան հարաբերություններում:

1. Կաստրոյի իշխանության տապալման փորձի ձախողումը

Քեննեդին, ինչպես և Էյզենհաուերը, “Կուբայի խնդիրը” ուժի միջոցով լուծելու կողմնակից էր: 1961թ. ապրիլի 16-ին նախագահն իր համաձայնությունն է տալիս “Սապատա” ռազմական գործողությանը: 1500 զինված և հատուկ պատրաստություն ստացած կուբացի հակահեղափոխականները պետք է ափ իջնեին Կոչինոս ծովածոցում գտնվող Պլայա-Խիրոնում: Սակայն այդ ռազմական գործողությունն ավարտվում է անհաջողությամբ, իսկ Քեննեդին այդպես էլ չհամարձակվեց հրաման տալ ամերիկյան ավիացիային և ռազմածովային ուժերին “կոնտրասներին” աջակցելու, վախենալով, որ այդ քայլը կբերի միջազգային իրավիճակի և խորհրդա-ամերիկյան հարաբերությունների սրմանը: Դրանից հետո կուբացի “կոնտրասների” համար Քեննեդին Կաստրոյից հետո թիվ 2 թշնամին է դառնում: Իրեն արդարացնելու համար Քեննեդին փորձում է “կուբայական ֆիասկոյի” համար ամբողջ պատասխանատվությունը զցել CIA-ի և անձամբ նրա ղեկավար՝ Ալեն Դալլեսի վրա, որն իբր նրան սխալ տեղեկատվություն էր տվել Կաստրոյի

նեժմի թույլ լինելու մասին: Դալլեսն ստիպված է լինում հրաժարական տալ, իսկ Քեննեդին ձեռք է բերում ևս մեկ շատ հզոր թշնամի: “Կուբայական ֆիասկոյից” հետո ԱՄՆ վարչակազմը լատինամերիկյան պետություններին տնտեսական օգնություն տրամադրելու մասին որոշում է ընդունում: Այդ ֆինանսական օգնության հիմնական մասը շուտով հայտնվեց լատինամերիկյան էլիտայի ներկայացուցիչների շվեյցարական հաշիվներին:

2. Բեռլինի ճգնաժամը

1961թ. հունիսին Վիեննա քաղաքում տեղի ունեցավ հանդիպում Ն.Խրուշչովի և Քեննեդիի միջև: Այդ հանդիպման ժամանակ քննարկվեց Բեռլինի կարգավիճակի հարցը: ԽՍՀՄ-ը մտադիր էր հաշտության պայմանագիր ստորագրել ԳԴՀ-ի հետ, որում հնարավոր է վերանայվեր Արևմտյան Բեռլինի կարգավիճակը, ինչն անընդունելի էր ԱՄՆ և Արևմուտքի համար: Վիեննայի հանդիպումն ավարտվեց ապարդյուն, “ուժային դիրքից” բանակցություններ վարելու փորձը չհաջողվեց ոչ մի կողմին: 1961թ. հուլիսի 25-ին Քեննեդին իր ելույթում նշեց, որ հաշտության պայմանագրի ստորագրումը ԽՍՀՄ-ի և ԳԴՀ-ի միջև կարող է հանգեցնել պատերազմական գործողությունների, ինչին Խրուշչովը պատասխանեց, որ “...եթե ԱՄՆ-ն մեր դեմ պատերազմ սկսի ապա Քեննեդին կլինի վերջին ամերիկյան նախագահը...”: 1961թ. օգոստոսի 12-ի լույս 13-ի գիշերն սկսվում է Բեռլինի պատի կառուցումը, ինչից սկսվում է առճակատման նոր փուլը, որն ստացավ “Բեռլինի պատի ճգնաժամ” անվանումը: ԱՄՆ պատասխանը եղավ իր ռազմական ուժերի թվի ավելացումն Արևմտյան Եվրոպայում 5.000-ից մինչև 6,5 հազ. մարդ: Պատերազմի վտանգը մեծացավ, սակայն կողմերից ոչ մեկն իրականում դա չէր ցանկանում: Այդ պատճառով գտնվեց, փաստորեն, փոխզիջումային տարբերակ՝ ԱՄՆ-ն “փափկացրեց” իր մոտեցումը Բեռլինյան պատի վերաբերյալ, իսկ ԽՍՀՄ-ը հրաժարվեց ԳԴՀ-ի հետ հաշտության պայմանագիր ստորագրելու գաղափարից:

3. Վիետնամի ճգնաժամի սկիզբը

ԱՄՆ “սահմանափակ միջամտությունը” Հարավային Վիետնամում սկսվում է դեռ 1950թ. Թրումենի նախագահության օրոք, երբ ֆինանսական օգնություն տրամադրվեց Ֆրանսիային, որն այդ ժամանակ պատերազմ էր վարում Հնդկաչինում, իսկ Վիետնամում գտնվող ֆրանսիական բանակին կոնսուլտացիայի նպատակով ուղարկվեց 35 ռազմական խորհրդական:

Էյզենհաուերի նախագահության վերջում խորհրդականների թիվը հասնում է 900-ի, իսկ Քեննեդիի օրոք միջամտությունն ստանում է իր շարունակությունը: Փոխնախագահ Լ.Ջոնսոնը Քեննեդիի

հանձնարարությամբ այցելում է Հարավային Վիետնամ և, վերադառնալով ԱՄՆ, կոչ է անում կառավարությանն ընդունել վերջնական որոշում՝ “... կամ մենք պատրաստ ենք հիմա դիմադրել կոմունիստական էքսպանսիային Հարավ-Արևելյան Ասիայում ... կամ ընդունել մեր լիակատար պարտությունը”։ Քեննեդին կողմ էր առաջին տարբերակին։ Ամերիկյան խորհրդականների թիվը հարավվիետնամական բանակում սկզբում ավելացավ մինչև 10.000-ի, իսկ քիչ անց՝ մինչև 18.000-ի։ Նախագահի հատուկ հրահանգով նրանց պաշտոնապես թույլ էր տրվում մասնակցել ռազմական գործողություններին։ Այսպիսով ԱՄՆ-ն ցույց տվեց, առաջին հերթին, ԽՍՀՄ-ին, որ պատրաստ է պաշտպանել իր ազգային շահերն աշխարհի յուրաքանչյուր կետում։

4. Կուբայի ճգնաժամը

1962թ. հոկտեմբերին ԽՍՀՄ սկսում է Կուբայի տարածքում տեղադրել միջին հեռահարության հրթիռներ, որոնց հայտնաբերեցին ամերիկյան Ու-2 ինքնաթիռ-լրտեսները։ ԱՄՆ մեղադրում է ԽՍՀՄ-ին Կուբայի տարածքից ԱՄՆ-ի դեմ հրթիռա-միջուկային հարված հասցնելու համար պայմաններ ստեղծելու մեջ։ ԽՍՀՄ-ը փորձում էր մինչև վերջին պահը հերքել այդ մեղադրանքները իր դիվանագետների միջոցով, որոնք, իրականում, ռեալ վիճակի մասին ոչ մի պատկերացում չունեին։ Դա արվում էր այն ժամանակ, երբ հրթիռների մի մասի վրա արդեն կային միջուկային մարտագլխիկներ։

Ճգնաժամի գագաթնակետը Քեննեդիի 1962թ. հոկտեմբերի 22-ի ելույթն էր, որում նա “որպես առաջին քայլերից մեկը” հայտարարում է Կուբայի ծովային շրջափակման մասին, իսկ ԽՍՀՄ-ից պահանջում, որպեսզի նա անմիջապես հեռացնի Կուբայից հրթիռները։ Խոսելով “առաջին քայլերի մասին”, Քեննեդին հասկացնել տվեց, որ ԱՄՆ պատրաստ է նույնիսկ պատերազմ սկսել եթե ԽՍՀՄ չկատարի պահանջը։ 14 օրվա ընթացքում ամբողջ աշխարհը գտնվում էր հետագա իրադարձությունների զարգացման սպասողական վիճակում։ Միջուկային պատերազմի վտանգը շատ մեծ էր։ Վերջ ի վերջո երկար բանակցություններից հետո ԽՍՀՄ-ը Կուբայից հեռացրեց հրթիռները, իսկ ԱՄՆ-ն խոստացավ չմիջամտել Կուբայի ներքին գործերին և պահպանել նրա տարածքային անձեռնմխելիությունը։ Կուբայի ճգնաժամը ցույց տվեց ամբողջ աշխարհին, թե ինչ վտանգ է իրենից ներկայացնում ցանկացած արկածախնդրությունը, մանավանդ, եթե այն բխում է միջուկային զենք ունեցող երկրներից։ Այդ միջադեպն սթափեցրեց ԱՄՆ-ին և ԽՍՀՄ-ին, որոնք վերջապես հասկացան, որ ապագա միջուկային պատերազմում հաղթող չի լինելու։ Այս պահից հետո

“սառը պատերազմին” մասնակցող երկրներն սկսում են մտածել նաև երկկողմանի զինաթափման մասին:

5. 1963թ. օգոստոսի 5-ին Մոսկվայում ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվում է միջուկային զենքի ջրի տակ, տիեզերքում և մթնոլորտում փորձարկումների արգելման մասին պայմանագիր:

1963թ. հոկտեմբերին նախագահը Խորհրդային Միությանը ցորեն վաճառելու հարցում հավանություն տվեց, ինչն օգնեց խորհրդային ղեկավարությանը հաղթահարելու ծանր երաշտի հետևանքները:

5. Սոցիալական բարեփոխումների ծրագիրը

Հիշենք, որ Քեննեդիի կողմից հայտարարված “նոր սահմանագծեր” ծրագրի մեջ մտնում էին մի շարք հավակնոտ միջոցառումներ և բարեփոխումներ սոցիալական, տնտեսական և գիտական ասպարեզներում: 1961թ. ապրիլի 12-ին Խորհրդային Միությունն առաջինը մարդ է ուղարկում տիեզերք (Յ.Գագարինին “Սոյուզ” “Վոստոկ” տիեզերանավով), իսկ 1961թ. մայիսին՝ արդեն ամերիկացիները /աստղագնաց Ալան Շեպարդ/: Քեննեդին խոստացավ, որ առաջիկա տաս տարիների ընթացքում ամերիկացիները Լուսնի վրա մարդ կիջեցնեն:

Միջազգային իրավիճակի սրումը, ինչպես նաև պահպանողական մեծամասնությունը Կոնգրեսում, որոնք դեմ էին լրացուցիչ ֆինանսական ծախսերին ֆեդերալ բյուջեից, այդպես էլ թույլ չտվեցին Քեննեդիի վարչակազմին անցկացնել նախատեսված բարեփոխումներից շատերը, որոնք, առաջ անցնելով ասենք, իրականացրեց Լ.Ջոնսոնը:

Նոյեմբերի 22-ին Դալլասում (Տեխաս) իր ելույթում Քեննեդին պետք է ասեր հետևյալ խոսքերը. “Ամերիկացիները ժամապահ են ազատության պատի մոտ...”, սակայն այդ խոսքերի փոխարեն լավեցին կրակոցներ: Ջոն Քեննեդին մահացու վիրավորվեց և շուտով մահացավ: Մարդասպան հայտարարվեց Լի Հարվի Օսվալդը, չնայած որ այդ սպանության մեջ դեռ ամեն ինչ այդքան պարզ չէ, մանավանդ, որ քիչ անց սպանվում է ինքը, Օսվալդը, իսկ նրան սպանողը՝ Ռուբին շուտով անսպասելի մահանում է բանտում քաղցկեղից:

Քեննեդիի զոհվելու օրը փոխնախագահ Լինդոն Ջոնսոնը, որը սպանության պահին ինքնաթիռում էր, համաձայն ԱՄՆ Սահմանադրության, անմիջապես նախագահական երդում է տալիս:

L.Ջոնսոնի ներքին քաղաքականությունը 1963-1964թթ.

Մինչև հերթական նախագահական ընտրությունները մնացել էր համարյա մեկ տարի: Ջոնսոնը հայտարարեց, որ իր պարտքն է համարում ավարտին հասցնել այն բարեփոխումները, որոնք նախատեսված էին զոհված նախագահի կողմից: Օգտվելով այն հանգամանքից, որ կոնգրեսականներից շատերը, որոնք ժամանակին Քեննեդիի բարեփոխումներին դեմ էին դուրս գալիս, իսկ հիմա, նրա զոհվելուց հետո, դա չեն համարձակվի անել, Ջոնսոնին հաջողվում է Կոնգրեսում անցկացնել Հարկային բարեփոխման մասին օրենքը (Tax Reduction Act), որով կրճատվում էին հարկերը միլիոնավոր ամերիկացիների համար:

Երկրորդ, շատ կարևոր օրենքը, որն ընդունվեց Կոնգրեսի կողմից՝ Քաղաքացիական իրավունքների մասին օրենքն էր (Civil Rights Act of 1964), որը սևամորթ քաղաքացիների համար երաշխավորում էր հավասար իրավունքներ և արգելում էր նրանց հանդեպ խտրականությունը: Այդ օրենքի ընդունումը նախագահական ընտրություններում Ջոնսոնի համար ապահովեց սևամորթ ամերիկացիների ձայները:

1964թ. մարտին նախագահը եկավ այն եզրակացության, որ ժամանակն է արդեն որ նրա վարչակազմը նախաձեռնություն ցուցաբերի և երկրի առջև բացի “նոր համարձակ հեռանկարներ”: Ջոնսոնը խոստացավ կես միլիարդ դոլարով կրճատել ֆեդերալ բյուջեն պետական ապարատի ծախսերի կրճատման հաշվին: Միաժամանակ նա հավաստիացրեց, որ կավելանա ֆինանսավորումը կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառներում, կանցկացվեն գործազրկության կրճատման և բժշկական ապահովագրության վերաբերող բարեփոխումներ: 1964թ. ապրիլի 23-ին Ջոնսոնն առաջին անգամ օգտագործեց “Մեծ հասարակություն” տերմինը, որը քիչ անց դառնում է նրա

ընտրական կամպանիայի հիմնական լոզունգը: Ելույթ ունենալով Միչիգանի համալսարանում Ջոնսոնը, խոսելով “Մեծ հասարակություն” ծրագրի հիմնական դրույթների մասին, նշեց նաև կրթության մեծ նշանակությունը և դրա հետ կապված խնդիրները՝ “Այսօր ոչ մի երկիր չի կարող լինել անկիրթ և միևնույն ժամանակ Մեծ ... (դա Ջեֆֆերսոնի խոսքերի բառափոխումն էր, որը ժամանակին ասել էր, որ “ոչ մի երկիր չի կարող լինել անկիրթ և միևնույն ժամանակ ազատ”): Այսօր 8 մլն. ամերիկացիներ ... չունեն նույնիսկ հինգերորդ դասարանի կրթություն: Համարյա 20 մլն. չեն ստացել 8-րդ դասարանի կրթություն, իսկ 54 մլն.-ը -ունեն միջնակարգ կրթություն: Ամեն տարի միջնակարգ դպրոցի ավելի քան 100.000 շրջանավարտներ չեն ընդունվում քոլեջ, որովհետև չեն կարող դա իրենց թույլ տալ”:

Ջոնսոնի ելույթները, նրա բարեփոխումների ծրագրերը, մեծ ոգևորությամբ էին ընդունվում նախագահական ընտրությունների նախօրյակին ամերիկացիների կողմից:

Հանրապետական կուսակցությունն իր շարքերից որպես նախագահի թեկնածու ընտրեց Արիզոնայի սենատոր Բ.Գոլդուոթերին, որն ամբողջ երկրով մեկ հայտնի էր իր ծայրահեղական հայացքներով: Նրա շուրջ հավաքվեցին երկրի բոլոր աջ ծայրահեղ հայացքներ ունեցող ուժերն սկսած ռասիստական (Կու-Կլուկս-Կլան և դրա տիպի) և վերջացրած ֆաշիստական կազմակերպություններով, բոլոր նրանք, ովքեր աստելությամբ էին լցված սևամորթների, հրեաների, կաթոլիկների, բոլոր լիբերալների նկատմամբ և համոզված էին, որ երկիրը կանգնած է անդունդի եզրին: Նրանց քաղաքական տեսակետները, ինչպես գրում է ամերիկյան պատմաբան Ս.Ուորենը “խելացնորության և անցյալի կարոտախտի մի խառնուրդ էր”:

Պարզ է, որ Գոլդուոթերի ներկայացրած ծրագիրը Ջոնսոնի ծրագրի ճիշտ հակառակ պատկերն էր ներկայացնում: Այնտեղ համարյա խոսք չկար քաղաքացիական իրավունքների, ֆեդերալ օգնության և սոցիալական բարեփոխումների մասին:

1964թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններն ավարտվում են Դեմոկրատական կուսակցության համոզիչ և փայլուն հաղթանակով: Այն մեծ հարված հասցրեց բոլոր այն աջ ծայրահեղական ուժերին, որոնք պաշտպանում էին Գոլդուոթերին: Ջոնսոնը հաղթեց մոտ 16 մլն. ձայների առավելությամբ (մոտ 42մլն. ընդդեմ մոտ 26մլն-ի.), որը ԱՄՆ ողջ պատմության ընթացքում եզակի երևույթ էր: 1964թ. նախագահական ընտրությունների արդյունքը ցույց տվեց, որ ամերիկացիների ճնշող մեծամասնությունը դեմ էր ներքին և արտաքին ծայրահեղականությանը: Լինդոն Ջոնսոնը դարձավ ԱՄՆ 36-րդ նախագահը:

Ջոնսոնը կատարում է իր խոստումը և Կոնգրեսում անց է կացնում քաղաքացիական իրավունքներին վերաբերվող մի քանի օրենքներ: Այսպես 1965թ-ին ընդունվում է Ընտրական իրավունքների մասին օրենքը (Voting Rights Act), որով վերացվում էին սևամորթներին վերաբերող խտրական ցենզերը, այդ թվում նաև գրագիտության ցենզը: Բացի այդ ընդունվում է նաև հերթական Քաղաքացիական իրավունքների մասին օրենքը, որով արգելվում էր ռասայական խտրականության հետ մեկտեղ նաև գենդերային խտրականությունը:

Տարիներ շարունակ քաղաքացիական իրավունքների համար սևամորթների շարժումը զուգակցվում էր Մարտին Լութեր Քինգի անվան հետ, որը խաղաղ պայքարի կողմնակից էր: Սակայն 1964թ-ին այդ շարժումից անջատվեց նրա արմատական թևը, որը բաժանվեց երկու խմբավորումների: Առաջին խմբավորումն անվանեց իրեն “սև հովազներ”,

որոնք հանդես էին գալիս սև ռասայի առավելության (black power), բռնության և հակասեմիտիզմի դիրքերից: Մյուս խմբավորումը կոչվեց “սև մուսուլմաններ” կամ “Իսլամի ազգը” (Nation of Islam), որի առաջնորդներն էին Էլայա Մուհամմադը և Մալքոլմ Իքսը (X): Վերջինը կատարելով ուխտագնացություն դեպի Մեքքա հրաժարվում է “սև ռասիզմից”, սակայն դա նրան չի փրկում՝ 1965թ-ին Մալքոլմն սպանվում է Հարլեմում: “Negro” բառը համարվեց վիրավորական և թե պաշտոնական և թե առօրյա կյանքում, փոխարինվեց “black” բառով:

Երիտասարդության մեջ տարածում էին ստանում արմատական և անարխիստական գաղափարախոսությունները, որոնք հերքում էին ավագ սերնդի ավանդական արժեքները, պրոպագանդում էին սեռական հարաբերությունների ազատություն, թմրադեղերի ընդունում և այլն, որն ստանում է “հակամշակույթ” ընդհանուր անվանումը: Այդ երիտասարդության բողոքը տարածվեց նաև երաժշտության մեջ: Էլվիս Փրեսլիի և ռոքն-ռոլլի տեղը եկան սոցիալական և քաղաքական տեքստ ունեցող երգեր, իսկ երիտասարդական “հակամշակութային” խորհրդանիշներ են դառնում 1969թ. օգոստոսին Նյու-Յորք նահանգում անցկացրած Վուդստոքյան երաժշտական փառատոնը, ինչպես նաև երգիչներ և երաժիշտներ Բոբ Դիլանը, Ջիմմի Հենրիքսը, Ջենիս Ջոլիփինը, գրող Ջերոմ Դեյվիդ Սեյինջերը, այսպես կոչված ավտերնատիվ կինոն և պոպ-արտը: Ամերիկյան գրականության մեջ իրենց հապուկ տեղն զբաղեցրեցին Քեն Քիզին (“Թռիչք կկվի բնի վրայով”) և Ջոզեֆ Հելլերը (“Խորամանկություն-22”):

Տիեզերական հետազոտությունների հետ զուգահեռ մեծ տարածում են ստանում գիտական ֆանտաստիկային վերաբերվող ստեղծագործությունները, որոնց ամենավառ ներկայացուցիչներն էին Ռեյ Բրեդբերին և Այզեկ Ազիմովը: 60-ական թթ-ին չափազանց մեծ ճանաչում էին ստացել Օսկար Համմերսթայնի և Ռիչարդ Ռոջերսի մյուզիքլները, Մերիլին Մոնրոյի և Օդրի Հեփբոռնի մասնակցությամբ կինոֆիլմերը: Փոխվում էր ամերիկյան խոշոր քաղաքների տեսքը, որտեղ 60-ական թթ-ի հոշակավոր ճարտարապետներ Ի.Փեյի, Պ.Այզենպերի, Ֆրենկ Օ.Հերիի նախագծերի հիման վրա կառուցվում էին ժամանակակից երկնաքերներ: 1959թ-ին “Մաթեյլ” ֆիլման ստեղծեց Բարբի տիկնիկը, որը շուտով ամբողջ աշխարհի փոքր աղջիկների երազանքը դարձավ:

Լ.Ջոնսոնի վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը

1964-1969թթ.

1964թ. ԱՄՆ Կազմակերպությունը	նախաձեռնությամբ Կուբայի	Ամերիկյան հետ	պետությունների դիվանագիտական
------------------------------	-------------------------	---------------	------------------------------

հարաբերությունները խզելու և կոշտ տնտեսական պատժամիջոցներն էր մտցնելու որոշում ընդունեց (հրաժարվեց միայն Մեքսիկան):

Նորից սրվեց միջազգային դրությունը Հարավ-Արևելյան Ասիայում: 1964թ. օգոստոսի 2-ին և 4-ին տեղի ունեցան ընդհարումներ Հյուսիսային Վիետնամին պատկանող Տոնկինյան ծովածոցում վիետնամական և ամերիկյան ռազմական նավերի միջև, որոնք Վաշինգտոնը գնահատեց որպես սադրանք: Այդ միջադեպը համարվում է Վիետնամի պատերազմի սկիզբը, որովհետև արդեն օգոստոսի 7-ին Կոնգրեսն ընդունեց “Տոնկինյան բանաձևը”, որով նախագահն իրավունք էր ստանում առանց պատերազմ հայտարարելու ձեռնարկել բոլոր քայլերը, այդ թվում նաև օգտագործել ամերիկյան ռազմական ուժերը Հարավ-Արևելյան Ասիայի երկրների ագատությունը պաշտպանելու համար: Ավելի ուշ Նախագահ Ջոնսոնը խոստովանեց, որ Հյուսիսային Վիետնամի տարածքի ոմբակոծման գաղափարը, որպես պատժիչ միջոց, արդեն վաղուց քննարկվում էր կառավարությունում: 1964թ. Հարավային Վիետնամում, համաձայն պաշտոնական տվյալների, արդեն կար 23.000 ամերիկյան զինծառայող և ծրագրեր էին մշակվում ԱՄՆ ռազմաօդային ուժերի օգտագործման համար Հյուսիսային Վիետնամի դեմ:

Հայտնի ամերիկյան հրապարակախոս Թ.Դրեյփեռը գրում էր, որ “...ճիշտ է, որ “ամերիկյան տունը”, որը Լինդոն Ջոնսոնը կառուցեց Վիետնամում, նա միայնակ չի արել: Դրա հիմքը դրվել էր դեռ նախագահ Էյզենհաուերի օրոք, իսկ առաջին հարկը կառուցել էր Քեննեդին: Իսկ Լինդոն Ջոնսոնը դառնում է շենքի մնացած հարկերի ճարտարապետը...”: Կոմունիզմի սովետական կամ չինական տարբերակի տարածումը վտանգ էր ներկայացնում ամբողջ Ասիայի համար: Սակայն եթե, օրինակ, Ինդոնեզիայում Կոմունիստական կուսակցությունը, որը զինված ապստամբության միջոցով փորձ արեց իշխանության գլուխ գալ, պարտություն կրեց և ջախջախվեց իշխանությունների կողմից (սպանվեց մոտ 500.000 մարդ), ապա Վիետնամում կոմունիստների դիրքը գնալով ուժեղանում էր:

1965թ. հունիս-հուլիս ամիսների ընթացքում նախագահ Ջոնսոնը Վիետնամի նկատմամբ պետք է ընտրեր երկու ճանապարհներից մեկը՝ 1. Հեռանալ Վիետնամից և թողնել, որ երկիրը միավորվի կոմունիստների գլխավորությամբ և 2. միջամտել և փորձել կանխել կոմունիզմի տարածումն այդ տարածաշրջանում: Նախագահը շատ ծանր ընտրության առաջ էր կանգնած և տրամաբանական է, որ ստիպված եղավ ընտրել երկրորդ ճանապարհը:

Մյուս ծանր խնդիրը, որը պետք է լուծեր Ջոնսոնը և նրա վարչակազմը այն էր թե ինչպես բացատրել ամերիկյան հասարակությանը որ այդ պատերազմն անհրաժեշտ է: Բացի այդ, այդքան թանկ արժեցող պատերազմը հարցականի տակ էր դնում

վարչակազմի խոստացած “Մեծ հասարակություն” ծրագրի իրագործումը: Պարզ է, որ մեկը մյուսին բացառում էր:

Որոշվեց թաքցնել հասարակությունից Վիետնամում ամերիկյան մասնակցության իրական մասշտաբները, ինչպես նաև ամերիկյան բանակի կորուստները: Այսպես հիմք դրվեց Ջոնսոնի վարչակազմի նկատմամբ ամերիկացիների “վստահության ճգնաժամին” (credibility gap):

1965թ. հուլիսի 28-ին Ջոնսոնը հայտարարեց, որ մինչև տարվա վերջը ամերիկյան բանակի թվաքանակը կհասնի 125.000-ի, սակայն իրականում այն գերազանցեց 200.000-ը: 1968թ. Վիետնամում գտնվում էին ավելի քան 56.000 ամերիկյան զինծառայողներ: Պաշտոնական տվյալներով Վիետնամում ամսական ծախսվում էր մոտ 800 մլն. դոլար, սակայն իրականում այդ գումարը կազմում էր 2-3 մլրդ.: Վիետնամի պատերազմում ռազմական ծախսերը Ջոնսոնի նախագահության տարիներին (1964-1969) կազմեց մոտ 350 մլրդ. դոլար, այսինքն 20%-ով ավելի, քան Երկրորդ աշխարհամարտում:

Ամբողջ երկրով մեկ աստիճանաբար ուժեղանում էր հակապատերազմական շարժումը, մանավանդ, որ ռազմաճակատում ամերիկյան բանակը հեռու էր հաջողությունից: Այսպես, 1968թ. հյուսիսվիետնամական բանակի գարնանային հարձակման արդյունքում ամերիկացիները լուրջ պարտություն կրեցին (Tet Offensive):

Ջոնսոնը շարունակում էր պնդել, որ անհրաժեշտ է ամեն գնով հաղթել այս պատերազմում, սակայն աստիճանաբար նրա դեմ էր տրամադրվում ոչ միայն ամերիկյան հասարակության մեծ մասը, այլև շատերը իր իսկ վարչակազմից:

Ջոնսոնին չէին կարող փրկել նույնիսկ այն մի շարք բարեփոխումները, որոնք նա իրականացրեց կրթության և առողջապահության ոլորտներում: Արդեն 1966թ. Դեմոկրատական կուսակցությունն առաջին լուրջ պարտությունն է կրում, կորցնելով 47 տեղ Ներկայացուցիչների պալատում: “Մեծ հասարակություն” ծրագրի իրականացումը մնաց անավարտ, առաջին հերթին, Վիետնամի պատերազմի պատճառով:

1968թ. մարտի 31-ին իր հեռուստադիմումում Ջոնսոնը հայտարարեց, որ չի մասնակցի հերթական նախագահական ընտրություններին: Նույն օրը հայտնի է դարձավ նաև, որ նախագահը հրաման է տվել վերջ տալու Հյուսիսային Վիետնամի ուժերի ճակատամարտներին:

Ավելի ուշ, իր հուշերում, Ջոնսոնը բացատրեց նախագահական ընտրություններին չմասնակցելու որոշման պատճառը՝ “Երկրում գոյություն ունեին շատ խորը հակասություններ, երևի ամենախորն սկսած Քաղաքացիական պատերազմից...Այդ հակասությունները ես ի վիճակի

չէի վերացնել: Իմ այդ անընդունակությունը դարձավ այն հիմնական պատճառներից մեկը, որն էլ ինձ ստիպեց հեռանալ քաղաքական ասպարեզից...”:

Թեմա 3.6. ԱՄՆ 20-րդ դ. 70-80-ական թթ.

ԱՄՆ Նախագահները



Ռիչարդ Միլհաուս Նիքսոն --- ԱՄՆ 37-րդ նախագահը(1969-1974)



Ջերալդ Ռուդոլֆ Ֆորդ -----ԱՄՆ 38-րդ նախագահը(1974-1977)



Ջեյմս (Ջիմմի) Էրլ Քարթեր -----ԱՄՆ 39-րդ նախագահը (1977-1981)



Ռոնալդ Ռիչլանդ Ռեյգան ----ԱՄՆ 40-րդ նախագահը (1981-1989)

Ռ.Նիքսոնի նախագահությունը (1969-1974): Ռ.Նիքսոնի վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը

Նախագահի պաշտոնի համար պայքարից Ջոնսոնի հրաժարվելուց հետո Դեմոկրատական կուսակցության մեջ ռեալ քաղաքական ուժ ունեցող թեկնածուներից մնացին երկուսը՝ Ռոբերտ Քեննեդին՝ զոհված նախագահի եղբայրը և Գ.Հեմֆրին՝ փոխնախագահը: Ռոբերտ Քեննեդիի սպանությունից հետո Հեմֆրին մնաց որպես միակ թեկնածու:

Հանրապետական Կուսակցությունը նախագահական պաշտոնի համար թեկնածու է ընտրում Ռիչարդ Նիքսոնին: Երկու թեկնածուների նախընտրական ծրագրերն իրարից քիչ էին տարբերվում: Ներքին քաղաքականության մեջ մեծ ուշադրություն էր հատկացվում սոցիալական խնդիրներին, իսկ արտաքինում՝ Վիետնամի պատերազմին: Երկու

կուսակցությունները դեմ էին ամերիկյան բանակի միակողմանի դուրս բերմանը, մինևույն ժամանակ համարելով, որ այդ խնդիրը պետք է ունենա “երկարաժամկետ լուծում”: Ի վերջո, փոքր առավելությամբ հաղթում է Ռիչարդ Նիքսոնը (նա ստանում է 31, 7 մլն., իսկ Հենֆրին՝ 31,2 մլն. ծայն):

Նիքսոնը, ինչպես և Ջոնսոնը, ստիպված էր մեծ ուշադրություն դարձնել արտաքին քաղաքականությանը, սակայն, ի տարբերություն նախկին նախագահի վարչակազմի, Նիքսոնը, բացի Վիետնամի խնդրի լուծումից, միջազգային հարաբերություններում գլխավոր ուղղություններն էր համարում նաև ԽՍՀՄ-ի և Չինաստանի հետ հարաբերությունների բարելավումը: ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ այդ նոր և շատ կարևոր ծրագրի հեղինակն էր նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Հենրի Բիսինջերը:

Նիքսոնը բոլորին հայտնի էր, որպես վառ արտահայտված հակակոմունիստ և, ինչպես համարում են ամերիկացի մի շարք քաղաքագետներ, որքան էլ որ դա պարադոքսային հնչի, հենց այդ հանգամանքը թույլ տվեց նրան վարելու կոմունիստների նկատմամբ լարվածության թուլացման քաղաքականություն, քանի որ ոչ ոք չէր կարող նրան մեղադրել ԽՍՀՄ և կոմունիստների նկատմամբ “փափուկ” քաղաքականություն վարելու մեջ:

1. Հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ

ԽՍՀՄ գլխավորած բլոկում տեղի ունեցան մի քանի կարևոր իրադարձություններ: Նախ, 1968թ. մայիսին խորհրդային զերիշխանության դեմ, “սոցիալիզմ մարդկային դեմքով” լոզունգով տեղի ունեցավ ապստամբություն Չեխոսլովակիայում, որը պատմության մեջ մտավ “Պրահայի գարուն” անվանումով: Այն ճնշվեց խորհրդային և վարչավյան բլոկի այլ երկրների բանակների միջոցով:

Բացի այդ, բլոկի մեջ տեղի ունեցավ պառակտում, երբ Հարավսլավիան և Ռումինիան հրաժարվեցին “Բրեժնեի դոկտրինայից”, որով միջազգային կոմունիստական շարժման շահերը համարվում էին բլոկի մեջ մտնող երկրների ազգային շահերից ավելի բարձր:

Միջազգային կոմունիստական շարժման համար մեծ հարված էր խորհրդաչինական հարաբերությունների սրումը, որի գագաթնակետը 1969թ. մարտին Դամանսկի թերակղզում, Ուսսուրի գետի վրա տեղի ունեցած սահմանային միջադեպն էր, որի արդյունքում երկու կողմերից զոհվեցին բազմաթիվ մարդիկ: Այնուամենայնիվ, ԱՄՆ սկսում է վարել ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների բարելավման քաղաքական կուրս:

1972թ. մայիսին տեղի ունեցավ ԱՄՆ նախագահի պաշտոնական այցը ԽՍՀՄ, որի արդյունքում ստորագրվեցին “ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների հիմքերի մասին” փաստաթուղթը,

“հակահրթիռային պաշտպանության համակարգերի սահմանափակման”, “ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման” մասին պայմանագրերը: Այդ պայմանագրերի ստորագրումով սկսվում է խորհրդա-ամերիկյան հարաբերությունների նոր փուլ: Ելույթ ունենալով Կոնգրեսում Նիքսոնը ասաց. “Աշխարհի երկու ամենահզոր երկրների նոր հարաբերությունների համար հիմք դրվեց ... ինչը հույս է տալիս ամբողջ մարդկությանը խուսափել ընդհարումներից”:

1973թ. հունիսին այս անգամ արդեն Խորհրդային Միության ղեկավար՝ Լ.Բրեժնևը պաշտոնական այցով ժամանեց ԱՄՆ, որի արդյունքում ստորագրվեցին ստրատեգիական հարձակման սպառազինությունների հետագա կրճատման և երկու պետությունների միջև համագործության մասին մի շարք համաձայնագրեր, ինչը թույլ տվեց խորհրդային ղեկավարին նույնիսկ հայտարարել “սառը պատերազմի” ավարտի մասին:

Վերջապես, 1974թ-ի հուլիսի սկզբին Նիքսոնը երկրորդ անգամ այցելեց ԽՍՀՄ, որի արդյունքում ստորագրվեցին տարբեր ուղղությունների՝ տնտեսական, տեխնիկական համագործության համաձայնագրեր, ինչպես նաև միջուկային զենքի ստորգետնյա փորձարկումների սահմանափակման պայմանագիր:

2. Հարաբերությունները Չինաստանի հետ

Չինաստանի հետ նոր հարաբերությունների սկիզբը կարելի է համարել 1969թ. ՉժՀ նկատմամբ էմբարգոյի մասնակի վերացումը (էմբարգոն ամբողջությամբ վերացվեց 1971թ.):

1971թ. հուլիսին Սպիտակ տունն առաջին անգամ հայտարարեց նախագահի Չինաստան այցելելու մտադրության մասին և 1972թ. փետրվարին Նիքսոնը ժամանեց Պեկին, որտեղ հանդիպումներ ունեցավ Չինաստանի ղեկավարներ՝ Մաո Յզեդունի և Չժոու Էնլայի հետ: Համաձայնվեցվեցին չին-ամերիկյան առևտրային կապերի ընդլայնման հնարավորությունները:

Այդ այցը, ինչպես և այցը ԽՍՀՄ, կարելի է համարել պատմական: Դա միջազգային հարաբերություններում ԱՄՆ նոր կուրսի հեղինակ՝ Հենրի Բիսինջերի անձնական մեծ հաջողությունն էր, որը մինչև Նիքսոնի պաշտոնական այցը, երկու անգամ՝ 1971թ. հուլիսին և հոկտեմբերին այցելել էր Պեկին: Նա կարողացավ համոզել ՉժՀ ղեկավարությանը քայլ կատարել դեպի ԱՄՆ հետ հարաբերությունների բարելավումը: Միևնույն ժամանակ ԱՄՆ հավատարիմ էր մնում Թայվանի հանդեպ պարտավորությանը, որով ԱՄՆ Թայբեյին պետք է տրամադրեր անհրաժեշտ օգնություն ՉժՀ հարձակման դեպքում: Դրանով ԱՄՆ նվազագույնի հասցրեց իրադարձությունների վտանգավոր զարգացման հնարավորությունը Ասիական տարածաշրջանում:

3. Վիետնամի պատերազմի ավարտը

Պարզ էր, որ Նիքսոնը, նույնիսկ մեծ ցանկության դեպքում, չէր կարող միանգամից վերջ տալ Վիետնամի պատերազմին դուրս բերելով այնտեղից ամերիկյան զորքերը: Դա մեծ հարված կլիներ երկրի հեղինակությանը և կնշանակեր պարտություն ոչ միայն կոմունիստական Վիետնամից, այլև ամբողջ կոմունիստական բլոկից, որովհետև Հյուսիսային Վիետնամի թիկունքում կանգնած էին ԽՍՀՄ-ը և Չինաստանը:

Սակայն, մյուս կողմից, հաշվի առնելով, որ ոչ մի էական դրական փոփոխություն ռազմաճակատում տեղի չէր ունենում և ԱՄՆ ներսում աստիճանաբար թափ էր հավաքում հակապատերազմական շարժումը, այդ պատերազմն անվերջ չէր կարող շարունակվել:

Հարկավոր էր փոփոխություն մտցնել Վիետնամի պատերազմի դոկտրինայի մեջ, որպեսզի այն հետագայում արդարացման հիմք դառնար զորքերը դուրս բերելու համար: 1969թ. հուլիսի 25-ին, գտնվելով Գուամ կղզում, մամուլի ասուլիսի ժամանակ, Նիքսոնն առաջ քաշեց արտաքին քաղաքականության նոր դոկտրինա, որը հենց այդպես էլ կոչվեց “Գուամի դոկտրինա”: Նախագահն ասաց, որ, պատկանելով խաղաղօվկիանոսյան պետությունների շարքին, ԱՄՆ շարունակելու է կարևոր դեր խաղալ Ասիայում, կատարելով իր ստանձնած բոլոր պարտավորությունները: Հաստատելով ԱՄՆ պատրաստակամությունը այդ տարածաշրջանում օգտագործել “անվտանգության ապահովման նպատակով” ամերիկյան ռազմածովային և ռազմաօդային ուժերը, Նիքսոնը, միևնույն ժամանակ, ընդգծեց, որ այսուհետև նրա երկրի համար արտաքին քաղաքականության նպատակը կլինի ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի անվտանգության ապահովման հիմնական պատասխանատվությունն ընկնի այդ տարածաշրջանում գտնվող պետությունների վրա:

Այլ կերպ ասած, Վիետնամի պատերազմը աստիճանաբար պետք է դառնար վիետնամցիների գործը: 1969թ. հունիսին նախագահը հայտարարում է ամերիկյան 25.000 զինծառայողների Հարավային Վիետնամից դուրս բերման մասին, իսկ վեց ամիս անց՝ ևս 60.000-ի:

1970թ. ապրիլին Նիքսոնի հրամանով Վիետնամից դուրս են բերվում արդեն 150.000 զինծառայողներ, սակայն Վիետնամի, ինչպես նաև հարևան Կամբոջայի ռմբակոծումները շարունակվում էին: Վերջ ի վերջո երկար բանակցություններից հետո 1974թ. հունվարին Փարիզում ԱՄՆ, Վիետնամի Հարավային և Հյուսիսային մասերի ներկայացուցիչները ստորագրում են զինադադարի մասին Համաձայնագիրը: 1974թ. մարտի վերջին ամերիկյան զինվորները հեռացան Վիետնամից: Պատերազմում զոհվեց 58.000 ամերիկյան զինծառայող:

“Ուղթըրգեյթը” և Նիքսոնի հրաժարականը

Ռիչարդ Նիքսոնը 1972թ-ին տեղի ունեցած հերթական նախագահական ընտրությունների արդյունքում համոզիչ հաղթանակ է տանում Դեմոկրատական կուսակցության թեկնածու՝ Ջորջ Մաքգովերնի նկատմամբ (Նիքսոնին իրենց ձայնը տվեցին 46,7 մլն. ամերիկացիներ, իսկ Մաքգովերնին՝ 28,9 մլն.): Այս համոզիչ հաղթանակը կարելի է բացատրել, առաջին հերթին, ԱՄՆ միջազգային ասպարեզում ունեցած հաջողություններով՝ ԽՍՀՄ-ի և Չինաստանի հետ հարաբերությունների բարելավման, ինչպես նաև, իհարկե, Վիետնամի պատերազմի շուտափույթ ավարտման սպասելիքներով (նախագահական ընտրություններից առաջ ԱՄՆ պետքարտուղար Քիսինջերը հայտարարեց, որ շուտով Հնդկաստանում խաղաղություն է հաստատվելու): Կարծես թե Նիքսոնը կարող էր դառնալ ԱՄՆ նշանավոր նախագահներից մեկը, սակայն շուտով հասարակությանը հայտնի դարձան փաստեր, որոնք վերջ դրեցին Նիքսոնի քաղաքական կարիերային և խայտառակեցին նրան:

Գիտակցելով առաջիկա նախագահական ընտրությունների հետ կապված նախընտրական պայքարի դժվարությունը և ցանկանալով իր քաղաքական հակառակորդների ծրագրերի մասին տեղեկություններ ստանալ, Նիքսոնի անձնական հրահանգով Դեմոկրատական կուսակցության շտաբում, որը գտնվում էր Վաշինգտոնի “Ուղթըրգեյթ” հյուրանոցում, տեղադրվեցին գաղտնալսման հատուկ սարքավորումներ:

Այդ ամենը հայտնի դարձավ պատահաբար, սարքավորումները դնելու պահին, երբ հանցագործները, իսկ դրանք Սպիտակ տան աշխատակիցներ էին, բռնվեցին տեղում հյուրանոցի գիշերային պահակի կողմից, որը ոստիկանություն կանչեց: Այդ պահից սկսվում է այսպես կոչված “ուղթըրգեյթյան սկանդալը”, որը սրում է ներքաղաքական իրավիճակը:

1973թ. հունվարին Վաշինգտոնում սկսվեց “ուղթըրգեյթյան գործով” յոթ մասնակիցների դատավարությունը, իսկ ապրիլի վերջին Նախագահը “Ուղթըրգեյթում” տեղի ունեցած միջադեպի համար պատասխանատվությունն ստիպված իր վրա վերցրեց, միևնույն ժամանակ հերքելով անձնական մասնակցության բոլոր մեղադրանքները, բայց նրան արդեն ոչ ոք չէր հավատում:

Նիքսոնի և նրա վարչակազմի հեղինակությունն արագ անկում ապրեց: 1973թ. հոկտեմբերին, փորձելով խուսափել կաշառակերության մեջ մեղադրանքի վտանգից, հրաժարական տվեց փոխնախագահ Ս.Ազնյուն:

Նոր փոխնախագահ է դառնում կոնգրեսական Ջերալդ Ֆորդը: Հավանական էր դառնում Նախագահի իմփիչմենթը: Ուստի Նիքսոնը որոշեց պաշտոնը թողնել կամավոր կերպով:

1974թ. օգոստոսի 9-ին նա հրաժարական է տալիս: Համաձայն ԱՄՆ Սահմանադրության երկրի 38-րդ նախագահ է դառնում Ջերալդ Ֆորդը: ԱՄՆ գրեթե 200 տարվա պատմության մեջ առաջին անգամ նախագահի պաշտոնն անցնում է մի մարդու, որը չէր ընտրվել ոչ որպես նախագահ ոչ էլ որպես փոխնախագահ:

Ջերալդ Ֆորդի նախագահությունը (1974-1977)

Իր նախագահության տարիների ընթացքում Ֆորդին այդպես էլ չի հաջողվում համագործակցել Կոնգրեսի հետ, որը գտնվում էր դեմոկրատների ձեռքում: Նախագահը վետո է դնում Կոնգրեսի հավանությանն արժանացած ավելի քան 50 օրինագծերի, սակայն Կոնգրեսին հաջողվում է հաղթահարել այդ արգելքների մեծ մասը: Կոնգրեսը հրաժարվում է կրճատել ֆեդերալ օգնությունը սոցիալական բնագավառում: Նախագահի և Կոնգրեսի միջև դիմակայությունը շարունակվեց նաև հետևյալ սկզբունքային հարցի շուրջ՝ բնակչության որ սոցիալական շերտերը՝ ունևորները թե փոքր եկամուտ ունեցողները պետք է օգտվեն եկամտահարկի վրա սահմանված զեղչից: Այդ օրենքի հիմնական նպատակն էր՝ աջակցել երկրի տնտեսական աճին: Այստեղ Ֆորդը նորից պարտություն է կրում՝ օրենքը տարածվեց փոքր եկամուտ ունեցողների վրա:

Արտաքին քաղաքականության մեջ Կոնգրեսականներից աջակցություն ստանալու Ֆորդի փորձերը ևս արդյունավետ չէին: 1974թ. նոյեմբերին Վլադիվոստոկում տեղի է ունենում աշխատանքային հանդիպում Ֆորդի և Բրեժնևեվի միջև, որտեղ երկու կողմերը հասան սկզբունքային պայմանավորվածության ստրատեգիական հարձակողական սպառազինությունների սահմանափակման վերաբերյալ նոր երկարաժամկետ պայմանագրի ստորագրման մասին:

Սակայն Կոնգրեսը այդ հանդիպման արդյունքներին դեմ դուրս եկավ: Բացի այդ, ԱՄՆ առևտրավարքային օրենսդրության մեջ ընդունվում է Ջեքսոն-Վենիկի ուղղումը, որով խորհրդա-ամերիկյան առևտրային համաձայնության կատարումը պայմանավորվում էր խորհրդային Միությունում քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ: ²⁵ Դրանով մեծ հարված հասցվեց 1972թ-ին ստորագրված խորհրդա-ամերիկյան առևտրային համաձայնությանը:

Չնայած զինադադարի մասին ստորագրված պայմանագրին, պատերազմական գործողությունները Հնդկաստանում շարունակվեցին

²⁵ Դրա մեջ մտնում էր նաև արտագաղթի (առաջին հերթին հրեաների) թույլատրումը:

մինչև 1975թ.-ի ապրիլի 30-ը, երբ Հարավային Վիետնամի և Կամբոջայի մայրաքաղաքներ՝ Սայգոնից և Պնոմպենից՝ հեռացվեցին վերջին ամերիկյան դիվանագետներն ու խորհրդականները:

Ամերիկյան քաղաքագետները գալիս են այն եզրակացության, որ աջակցություն չստանալով Կոնգրեսի և նույնիսկ, շատ դեպքերում, սեփական կուսակցության կողմից, Ֆորդը սահմանափակված էր իր գործողությունների մեջ: Նրա ամենահամարձակ քայլը՝ Նիքսոնին ներում շնորհելու մասին հայտարարությունն էր: Ներքաղաքական և արտաքին քաղաքականության ասպարեզներում նրա գործունեությունը, ինչպես տեսանք, արդյունավետ չէր: Այդ պատճառով դժվար էր ակնկալել, որ Ֆորդը կհաղթի նախագահական ընտրություններում:

Ֆորդին հաջողվում է հաղթել Հանրապետական կուսակցության համագումարում իր հիմնական հակառակորդ՝ նախկին հոլիվուդյան դերասան և Կալիֆորնիայի նահանգապետ 67-ամյա Ռոնալդ Ռեյգանին, բայց դա բավական չէր հաղթանակ տանելու համար Դեմոկրատական կուսակցության թեկնածու՝ Ջորջիայի նախկին նահանգապետ Ջեյմս (Ջիմմի) Էրլ Քարթերի նկատմամբ, որն էլ դարձավ ԱՄՆ 39-րդ նախագահը:

Կինոարվեստ, գիտություն և տեխնիկա

70-ական թվականներին ամերիկյան գիտությունը և տեխնիկական հասնում են շարք մեծ հաջողությունների: 1969թ.-ի հուլիսի 16-ին առաջին անգամ մարդկության պատմության մեջ երեք աստղագնացներ՝ Նիլ Արմստրոնգը, Ֆիլ Քոլլինզը և Էդվին Օլրիհնը՝ “Ապոլոն-11” տիեզերանավով կատարում են թռիչք դեպի Լուսին և իջնում են նրա մակերեսի վրա:

1969թ. նոյեմբերի 14-ին (Ապոլոն-12) և 1971թ.-ի հունվարի 31-ին (Ապոլոն-14) տեղի ունեցան 2-րդ և 3-րդ թռիչքները դեպի Լուսին: Ամերիկյան գիտության և տեխնիկայի խոշոր նվաճումներից մեկը կարելի է համարել մարդկային արհեստական սրտի իմպլանտացիան, որն առաջին անգամ իրականացրեց վիրաբույժ Մայքլ Դե Բեյկին:

70-ական թթ-ին ամերիկյան գրականության ամենավառ ներկայացուցիչներն էին Ջոն Ափոլայթը, Ջոյս Բերոլ Օուֆսը, Թոնի Մորրիսոնը:

Վիետնամի պատերազմը չէր կարող իր հետքը չթողնել Հոլիվուդի վրա, որտեղ 70-ական թթ-ին սրտեղծվեցին մի քանի շարք փառանդավոր ժապավեններ՝ Հել Էշբիի “Վերադարձ դեպի տուն” (1978) , որտեղ գլխավոր դերերում էին Ջեյն Ֆոնդան և Ջոն Վոյտը. Մայքլ Չիմինոյի “Եղջերունների որսորդը” (1978) գլխավոր դերերում Ռոբերտ դե Նիրո և

Մերիլ Սթրիպ, Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի “Մեր օրերի Հայտնությունը” (1979) գլխ. դերում՝ Մարլոն Բրանդո, Օլիվեր Սթոունի “Դասակը” (1982):

70-ական թթ-ին մեծ ճանաչում են ստանում այսպես կոչված ֆիլմ-աղետները՝ “Դժոխքը երկնքում”, “Երկրաշարժ” և սարսափ ֆիլմերը, որոնցից շատ մեծ ցնցում առաջացրեց երիտասարդ կինոռեժիսոր Սթիվեն Սփիլբերգի “Ծնություն” (1975) ֆիլմը: Էլ ավելի մեծ ճանաչում ունեցավ ամբողջ աշխարհում Ջորջ Լուկասի “Աստղային պայտերազմներ” (1977-2005) վեց ֆիլմերից բաղկացած ֆանտաստիկ կինոէպոպեան: Հոլիվուդյան հառնող աստղ Սիլվեստր Սթալլոնեն կարողացավ կերտել “Անհաղթ հերոսի” կերպարը նախ “Ռոկկի” չորս ֆիլմերում (1976-1985), ապա նաև “Ռեմբո. Առաջին արյունը” (1982) ֆիլմում:

Պեպք է նշել նաև Ռոբերտ Բենտոնի խորը մարդկային “Կրամերն ընդդեմ Կրամերի” (1979) ֆիլմը Դաստին Հոֆմանի և Մերիլ Սթրիպի մասնակցությամբ, (արժանացավ “Օսկար” մրցանակի):

Հոչակավոր ֆիլմերի շարքում իրենց տեղը զբաղեցրին Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի “Կնքահայրը” (1972) և “Կնքահայրը-2” (1974) կինոժապավենները սրբեղծված Մարիո Պյուզոյի համանուն վեպի հիման վրա:

Ջ.Քարթերի նախագահությունը (1977-1981)

1884թ. սկսած ԱՄՆ “խորը Հարավից” նախագահ չէր ունեցել: Քարթերի հաղթանակին օգնեց ինչպես ամբողջ Հարավի, այնպես էլ քաղաքացիական իրավունքների համար շարժման նշանավոր գործիչների աջակցությունը, ինչն ապահովեց Քարթերին սևամորթ ամերիկացիների ձայները: Իրենց դերն ունեցան նաև ապագա նախագահի պոպուլիստական խոստումները, օրինակ, “երբեք երկրին սուտ չասել”, կարգ ու կանոն հաստատել կառավարությունում, ինչպես նաև “քաղաքական և տնտեսական էլիտայի” քննադատումը:

Այդ ամենը դուր էր գալիս շարքային ամերիկացուն՝ “փողոցի մարդուն”: Քարթերի նախընտրական խոստումներում առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում “մարդու իրավունքների” մասին թեզը: Քարթերը նշում էր, որ այդ գաղափարը նրա համար առաջնակարգ կլինի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Առաջ անցնելով ասենք, որ այդ խոստումը նախագահը կատարեց:

Քարթերի առաջին քայլը, որպես երկրի ղեկավար, կրում էր խորհրդանշական բնույթ՝ Վիետնամի պատերազմի ժամանակ զինձառաջությունից խուսափած երիտասարդ ամերիկացիներին տրվում էր ներում (հետաքրքիր է, որ այդ երիտասարդների թվում էր նաև Բիլ Քլինթոնը, որը 16 տարի անց դառնալու էր ԱՄՆ նախագահը):

Վարչակազմի տնտեսական քաղաքականությունը չի կարելի համարել հաջող: Եթե 1977 թ. սկզբին հիմնական ցուցանիշները խոսում էին տնտեսության աճի մասին, ապա շուտով պատկերը փոխվեց: Այսպես օրինակ, եթե սղաճը 1978թ-ին կազմում էր 5,2%, ապա 1979թ-ին՝ 13,4% : Ֆեդերալ բյուջեի պակասորդը, որը Քարթերը խոստացել էր հասցնել զրոյի, 1979թ-ին աճեց մինչև 27,7 մլրդ. դոլարի (1980թ.՝ 59 մլրդ. դոլար):

Քարթերին, ինչպես և Ֆորդին, այդպես էլ չհաջողվեց նորմալ աշխատանքային համագործակցություն հաստատել Կոնգրեսի հետ, չնայած որ Կոնգրեսի երկու պալատներում մեծամասնությունը կազմում էին դեմոկրատները: Շատ դեպքերում կոնգրեսական դեմոկրատները, որոնք ներկայացնում էին հյուսիս-արևելյան նահանգները, ավանդական կասկածամտությամբ էին վերաբերվում հարավցի նախագահին մտավախություն ունենալով, որ նա վարելու է միայն հարավային նահանգների համար շահավետ քաղաքականություն: Կոնգրեսը հրաժարվում է հաստատել հարկման, բժշկական ապահովագրության և առողջապահության համակարգում բարելավման վերաբերյալ նախագահական առաջարկությունները: Քարթերի նախագահության վերջում սոցիալ-տնտեսական կյանքի համարյա բոլոր բնագավառներում վիճակը ավելի վատ էր, քան մինչև նրա երդմնակալությունը:

Արտաքին քաղաքականության մեջ Քարթերն ունեցավ մեկ, բայց մեծ հաջողություն՝ 1978թ. սեպտեմբերին Քարթերի նախաձեռնությամբ տեղի են ունենում բանակցություններ Եգիպտոսի նախագահ Անվար Սադատի և Իսրայելի վարչապետ Մենախեմ Բեգինի միջև, որոնց արդյունքում 1979թ. մարտին, Քարթերի մեծ ջանքերի շնորհիվ, Քեմփ-Դեյվիդում երկու պետությունների միջև ստորագրվում է հաշտության պայմանագրի հիմքերի մասին համաձայնագիր, որը հույս էր տալիս վերջ տալ Իսրայելի և արաբական աշխարհի միջև թշնամությանը:

Արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած այլ իրադարձություններից կարելի է առանձնացնել՝ 1. 1976թ. մարտին երկար և բարդ վեճերից հետո ԱՄՆ Սենատն ընդամենը մեկ ձայնի առավելությամբ հաստատում է 2000թ-ին Պանամայի ջրանցքի նկատմամբ հսկողությունը Պանամայի հանրապետությանը փոխանցելու մասին պայմանագիրը, որից հետո նախագահը և նրա կառավարությունը մի շարք քաղաքական գործիչներ մեղադրվեցին ազգային շահերին դավաճանելու մեջ:

2. 1978թ. վերջին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և ԱՄՆ կառավարությունները համաձայնվեցին 1979թ. հունվարի 1-ից երկու պետությունների միջև պաշտոնապես հաստատել դիվանագիտական հարաբերություններ, ինչը նշանակում էր ԱՄՆ և Թայվանի միջև պաշտոնական հարաբերությունների վերջը: Քարթերի վարչակազմի այդ որոշումը նույնպես, ինչպես Պանամայի ջրանցքի

հարցում, միանշանակ չընդունվեց ամերիկյան քաղաքական շրջանակներում՝ շատերը նորից մեղադրեցին Քարթերին դավաճանության մեջ՝ արդեն հին դաշնակից՝ Թայվանի նկատմամբ: Դրանից հետո (մինչև մեր օրերը, այսինքն 21-րդ դ. սկիզբը) ԱՄՆ-ին հաջողվում է վարել այսպես կոչված “երկու Չինաստանների” քաղաքականություն՝ մի կողմից, հաստատելով սերտ քաղաքական-տնտեսական կապեր “մայրցամաքային” Չինաստանի հետ, մյուս կողմից, շարունակելով ռազմաքաղաքական համագործակցությունը Թայվանի հետ:

3. Բարդացել էր իրավիճակը Լատինական Ամերիկայի մի շարք պետություններում: Եթե Չիլիում դեռ 1973թ-ին գեներալ Պինոչետին, Միացյալ Նահանգների աջակցությամբ հաջողվում է հեղաշրջման արդյունքում տապալել սոցիալիստ Սալվադոր Ալենդեի կառավարությունը, ապա 1979թ. Քարթերն այդպես էլ չհամարձակվեց պաշտպանել ԱՄՆ դաշնակից՝ Նիկարագուայի դիկտատոր Անաստասիո Սոմոսային, ինչը թույլ տվեց այդ երկրում իշխանության գլուխ անցնել հակամամերիկյան տրամադրություններ ունեցող հեղափոխական “սանդինիստներին”, որոնք անմիջապես սերտ կապեր հաստատեցին Կուբայի հետ: Սրվում է ներքաղաքական վիճակը նաև հարևան Սալվադորում, որտեղ ակտիվանում են պարտիզանները: Քարթերի հակառակորդները մեղադրեցին նախագահին անվճռականության մեջ, նրա հեղինակությունը երկրում շարունակում էր անկում ապրել:

4. Արտաքին քաղաքականության մեջ Քարթերն ամենամեծ անհաջողությունը կրեց Իրանում: Իրանի շահը՝ Մոհամմեդ Ռեզա Փեհլեվին՝ ԱՄՆ ամենասերտ դաշնակիցներից մեկն էր: 1978թ. հունվարին երկրում սկսվում է իսլամական հեղափոխություն, որի արդյունքում շահն ստիպված եղավ փախչել Իրանից: 1979թ. ապրիլի 1-ին Իրանը հռչակվեց որպես Իրանի Իսլամական Հանրապետություն: Շահն ապաստան է գտնում ԱՄՆ-ում, ինչն Իրանի կրոնական ֆունդամենտալիստների կողմից գնահատվեց որպես թշնամական գործողություն:

1979թ-ի նոյեմբերի 2-ին ռազմաշունչ տրամադրված իրանցի ուսանողները գրավում են ամերիկյան դեսպանատան շենքը Թեհրանում, իսկ աշխատողներին պատանդ վերցնում: Սպիտակ տունը պահանջեց ազատել պատանդներին, սակայն մերժում ստացավ Իրանի նոր իշխանությունների կողմից: 1980թ. ապրիլին ԱՄՆ խզում է Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները և էմբարգո է դնում իրանական նավթի, իսկ հետո նաև առևտրական բոլոր կապերի վրա: Ապրիլի 25-ին ԱՄՆ փորձ է անում ազատել պատանդներին “կոմանդոս” ջոկատի միջոցով, սակայն այդ գաղտնի գործողությունն անհաջողության է մատնվում՝ երկու ուղղաթիռներ վառվում են, զոհվում են ութ և

վիրավորվում հինգ ամերիկյան զինծառայողներ: Այդ անհաջողությունը շատ ցավալի տարան բոլոր ամերիկացիները և շատերը նորից մեղքը գցում էին Քարթերի և նրա վարչակազմի վրա:

5. 1979թ. հունիսի 15-18-ը Վիեննա քաղաքում տեղի է ունեցավ հանդիպում Քարթերի և ԽՍՀՄ ղեկավար՝ Լ.Բրեժնեվի միջև, որն ավարտվեց ԱՄՆ և ԽՍՀՄ միջև ստրատեգիական հարձակողական սպառազինությունների սահմանափակման մասին պայմանագրի ստորագրումով (ՍՍՍ-2): Աշխարհի բոլոր տեղեկատվական միջոցներում տպվեց իրար հետ գրկախառնվող Քարթերի և Բրեժնեվի լուսանկարը, ինչը առիթ տվեց ամերիկյան ընդդիմադիր մամուլին և նախագահի քաղաքական հակառակորդներին մեղադրել նրան զիջողականության և կոմունիզմի հետ հաշտեցման մեջ:

Ամբողջ երկրով մեկ տարածվում է “նրան կարող է համբուրել ցանկացած անձ” արտահայտությունը, որը 1980թ. նախընտրական արշավի ժամանակ դառնում է հանրապետականների հիմնական լոզունգներից մեկը: Բացի այդ ԽՍՀՄ-ի հետ ստորագրված պայմանագիրը մեծ դժգոհություն առաջացրեց Կոնգրեսում: Սենատորները մեղադրեցին նախագահին նշելով, որ նրա ստորագրած պայմանագիրը թույլ կտա ԽՍՀՄ-ին միակողմանի շարունակել սպառազինությունների մրցավազքը:²⁶

Խորհրդա-ամերիկյան հարաբերությունները կտրուկ սրվեցին, երբ 1979թ. դեկտեմբերի վերջին խորհրդային զորքերը մտան Աֆղանստան: 1980թ. մարտին ԱՄՆ-ում արգելք է դրվում ԽՍՀՄ-ին ժամանակակից տեխնոլոգիաների և հացահատիկի վաճառքի վրա, ինչպես նաև կոչ է արվում բոլկոտի ենթարկել 1980թ. Մոսկովյան Օլիմպիադան, որի արդյունքում ավելի քան 60 պետություններ հրաժարվեցին գնալ Մոսկվա: Այսպիսով, նույնիսկ, Օլիմպիական խաղերը դարձան քաղաքական սուր պայքարի դաշտ:²⁷

Խորհրդային Միության ներխուժումը Աֆղանստան վերջ դրեց խորհրդա-ամերիկյան հարաբերությունների մեջ դրական տեղաշարժերին և դարձավ սպառազինությունների մրցավազքի նոր փուլի սկիզբ:

26 Նախընտրական արշավի ժամանակ Ռոնալդ Ռեյգանը խոստացավ անվավեր ճանաչել այդ պայմանագիրը, սակայն 1982թ. մայիսի 31-ին ի վերջո համաձայնվեց հետևել այդ պայմանագրի կետերին այնքան ժամանակ որքան այդ կետերին կհետևի խորհրդային կողմը:

27 Որպես պատասխան քայլ ԽՍՀՄ-ը և սոցիալիստական բլոկը, բացառությամբ Ռումինիայի և Հարավսլավիայի, բոյկոտեցին 1984թ-ի ձմեռային և ամառային Օլիմպիական խաղերը, որոնք անցկացվեցին ամերիկյան Լեյք-Պլեսիդո և Լոս-Անջելես քաղաքներում:

1980թ. նոյեմբերին տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում, ինչպես և ենթադրվում էր, հաղթեց Հանրապետական կուսակցության թեկնածու՝ 69-ամյա Ռոնալդ Ռեյգանը: Փոխվարչապետի պաշտոնն ստացավ Ջորջ Բուշ-ավագը:

ԱՄՆ Ռոնալդ Ռեյգանի նախագահության տարիներին (1981-1989):

Տնտեսության զարգացումը: Ռեյգանոմիկա

Անկասկած, Ռեյգանի ութ տարվա նախագահության ժամանակ տեղի ունեցան լուրջ փոփոխություններ ամերիկյան տնտեսական և սոցիալական քաղաքականության մեջ, երևի ամենալուրջը վերջին 50 տարիների ընթացքում (Ռուզվելտի “Նոր կուրսից” հետո):

Բարեփոխումների ժամանակը եկել էր, քանի որ արդեն երկար ժամանակվա ընթացքում ԱՄՆ տնտեսությունը գտնվում էր ճգնաժամի մեջ և առաջխաղացում չկար: Դա պայմանավորված էր, առաջին հերթին, 70-ական թթ-ի սկզբին նավթի գնի կտրուկ աճով, ինչը, իր հերթին, բերեց երկրում բարձր սղաճի և մեծ գործազրկության հաստատմանը (այդ երևույթը մակրոտնտեսությունում անվանվում է ստագֆլյացիա):

Մեծացավ դրամային զանգվածը, իսկ նախագահ Նիքսոնն ստիպված էր եղել գների և աշխատավարձերի վրա հսկողություն հաստատել, որը վերացվեց միայն Ռեյգանի նախագահության օրոք: Բարեփոխումների ժամանակը եկել էր: Ռեյգանի վարչակազմի մշակած և իրականացրած տնտեսական և սոցիալական քաղաքականությունն անվանվեց “ռեյգանոմիկա”: Այդ քաղաքականության էությունը լավ հասկանալու համար, պետք է կանգ առնել Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունների ծրագրերում ամրագրված պետության կողմից սոցիալ-տնտեսական կարգավորման քաղաքականության հիմնական ռազմավարական տարբերության վրա (որի հիմքը դրվեց էյզենհաուերի օրոք): Դեմոկրատական կուսակցության կողմից անցկացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը կարելի է անվանել, հիմնականում, “պահանջարկի տնտեսություն”, ինչը նշանակում էր, որ պետությունը հատուկ ուշադրություն է դարձնում այն միջոցառումներին, որոնք ուղղված են ամերիկացիների գնողունակության ընդլայնմանը (դրանով պետք է կանխվեին գերարտադրության ճգնաժամերը):

Հանրապետականների կառավարություններն իրենց սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ, առաջին հերթին, ուշադրությունը դարձնում են այն միջոցառումներին, որոնք ուղղված էին “առաջարկության տնտեսության” զարգացմանը, այսինքն հիմնական շեշտադրումն արվում է ոչ թե ապրանքների և ծառայությունների առաջարկությունների կարգավորման, այլ դրանց արտադրության

խթանման վրա: “Առաջարկության տնտեսության” քաղաքականությունն իր դասական տեսքն ստացավ հենց Ռեյգանի նախագահության տարիներին: Ազատ շուկան և ազատ մրցակցությունը հայտարարվում էին տնտեսական աճի, վերարտադրության և աշխատանքային ուժի բաշխման ապահովման համար միակ հուսալի միջոցը, իսկ պետական կարգավորումը պետք է սահմանափակվեր այդ մրցակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելով, առաջին հերթին, ինչպես նշում էր “ռեյգանոմիկայի” գլխավոր հեղինակներից մեկը, Ուիլյամ Նիսկանենը, “շուկաների ստեղծման և ընդլայնման” մեջ: “Ռեյգանոմիկայի” հիմնական կետերը հետևյալն էին՝ 1. Պետական ծախսերի նվազեցում; 2. հարկային բարեփոխում, հարկերի իջեցում; 3. պետական միջամտության նվազեցումը տնտեսության մեջ; 4. Սղաճի իջեցում դրամային զանգվածի կրճատման հաշվին:

Ռեյգանի վարչակազմին հաջողվում է կատարել բոլոր չորս կետերը: Զգալի չափով իջեցվեցին հարկերը բիզնեսի վրա (70%-ից մինչև 28%), ինչը նպաստեց տնտեսության զարգացմանը, նոր աշխատանքային տեղերի ստեղծմանը և գործազրկության նվազեցմանը (7,1%-ից մինչև 5,5%):

Հետևելով մոնետարիստական քաղաքականությանը, Ռեյգանի կառավարությունը Ֆեդերալ ռեզերվային համակարգի օգնությամբ զգալի չափով կրճատում է դրամային զանգվածը, ինչը նպաստեց սղաճի իջեցմանը (18%-ից մինչև 4%): Համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ; Gross Domestic Product (GDP)) 1980թ-ին կրճատվել էր 0,3%-ով, իսկ 1988թ-ին աճեց 4,1%-ով:

Մյուս կողմից Ռեյգանի վարչակազմը կրճատում է տարբեր սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը և կտրուկ ավելացնում ծախսերը բանակի սպառազինման վրա՝ եթե 1980թ-ին այն կազմում էր 267,1 մլրդ. դոլար, ապա 1988թ. 393,1 մլրդ. դոլար, ինչն էլ, հիմնականում բերեց պետական բյուջեի պակասորդի: Այդ պակասորդը լրացնելու համար կառավարությունն ստիպված եղավ ավելացնել պետական պարտքը՝ 997 մլրդ. դոլարից մինչև 2,85 տրիլ. դոլարը, որի արդյունքում ԱՄՆ դառնում է աշխարհի ամենամեծ ներքին պարտք ունեցող երկիրը:

Ամփոփելով նշենք, որ, ինչպես ցույց տվեց պատմությունը, “առաջարկության տնտեսության” և “պահանջարկի տնտեսության” քաղաքականությունները պետության կողմից տնտեսության վրա իրար լրացնող ռազմավարություններ են: “Առաջարկության տնտեսության” ռազմավարությունը հանդես է գալիս որպես տնտեսության աճի միջոց, որի արդյունքում խորանում է սոցիալական անհավասարությունը և մեծանում բյուջեի պակասորդը, իսկ “պահանջարկի տնտեսության” ռազմավարությունն իրենից ներկայացնում է ազգային եկամտի վերաբաշխման միջոց, որի նպատակն է բնակչության հիմնական

զանգվածի գնողունակության ընդլայնումը: Այդ երկուսը իրար փոխարինելով և լրացնելով, նպաստում են ամերիկյան տնտեսության զարգացմանը:

Արտաքին քաղաքականությունը

1981թ. հունվարի 20-ին, երբ Ռոնալդ Ռեյգանը պաշտոնապես դարձավ ԱՄՆ նախագահ, Իրանը հայտարարում է ամերիկյան 53 պատանդների ազատման մասին:

Ռեյգանը դեմ էր ԽՍՀՄ-ի հետ ստրատեգիական հարձակողական սպառազինությունների կրճատման մասին բանակցություններ վարելուն, համարելով, որ այն ձեռնտու է միայն ԽՍՀՄ-ին, որովհետև վերջինս ունի զգալի առավելություն ստրատեգիական միջուկային սպառազինությունների կուտակման հարցում: Ռեյգանը համոզված էր, որ ԽՍՀՄ-ի հետ բանակցությունները պետք է վարել ուժային դիրքից, իսկ դա հնարավոր կլինի միայն, եթե ԱՄՆ-ն կտրուկ ավելացնի սպառազինությունների, առաջին հերթին, ստրատեգիական միջուկային սպառազինությունների ֆինանսավորումը:

Ռեյգանը շատ լավ հասկանում էր, որ “չարի կայսրության” (այդպես էր ԽՍՀՄ-ին անվանում Ռեյգանը) տնտեսությանը, որն այդ ժամանակ արդեն գտնվում էր խորը լճացման մեջ, չափազանց դժվար կլինի դիմանալ սպառազինությունների նոր մրցավազքին:

ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում վարելով նման կոշտ քաղաքականություն, Ռեյգանն այն լրացնում էր պարբերական գաղափարախոսական հարձակումներով: Անվանելով ԽՍՀՄ-ը “չարի կայսրություն”, Ռեյգանը 1982թ. հունիսին, ելույթ ունենալով բրիտանական պառլամենտում, կոչ արեց Արևմուտքին “խաչակրաց արշավանք” կազմակերպել կոմունիզմի դեմ: ԽՍՀՄ-ի վերաբերյալ հայտնի դարձավ նաև նրա հետևյալ արտահայտությունը. “Չի կարելի փոխզիջումների գնալ այն մարդկանց հետ, որոնք հերքում են հոգու, անդրշիրիմյան աշխարհի և Աստծո գոյությունը”:

Մոսկվան պատասխանում էր նույն կոշտ ձևով, ընդունելով, փաստորեն, ԱՄՆ առաջարկած սպառազինությունների մրցավազքը, ինչը թույլ էր տալիս Ռեյգանին ևս մեկ անգամ խոսել իր վարչակազմի ընտրած ճիշտ քաղաքականության մասին և, որ ԽՍՀՄ ղեկավարությունը անկեղծ ցանկություն չունի իջեցնելու ռազմական հակամարտության մակարդակը:

Երկու պետությունների միջև հարաբերություններն էլ ավելի սրվեցին, երբ 1983թ. օգոստոսին ԽՍՀՄ տարածքի վրա խորհրդային կործանիչը ոչնչացրեց իր ուղղությունը կորցրած հարավկորեական մարդատար ինքնաթիռը, որի արդյունքում զոհվեց մոտ 300 մարդ, որոնցից 60-ը՝ ամերիկացիներ էին: Հենց այդ ժամանակ նախագահը

հանդես է գալիս այսպես կոչված “ստրատեգիական պաշտպանական նախաձեռնությամբ” (ՄՊՆ; Strategic Defence Initiative), որը նախատեսում էր տիեզերքում հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղադրումը: Այդ համակարգը պետք է ընդունակ լիներ ոչնչացնելու թշնամու բալիստիկ հրթիռները դեպի ԱՄՆ տարածք թռիչքի ժամանակ: Այդ ծրագիրն ամերիկյան մամուլն անվանեց “աստղային պատերազմներ”։ Խորհրդաամերիկյան լարված հարաբերությունները բնորոշ էին Ռեյգանի առաջին նախագահական ամբողջ ժամկետի համար:

Ռեյգանի վարչակազմը մեծ ուշադրություն էր դարձնում Լատինական Ամերիկային: Առաջ քաշելով 1982թ-ին Կարիբյան նախաձեռնությունը (Caribbean Basin Initiative), Ռեյգանը հասկացնել տվեց, որ ԱՄՆ թույլ չի տա սոցիալիստական հեղափոխության գաղափարների, ինչպես նաև Կուբայի ազդեցության տարածումը Կենտրոնական Ամերիկայում և Կարիբյան ավազանում: CIA-ի և հակահեղափոխական ուժերի (“կոնտրաս”) միջոցով նպատակ դրվեց տապալել սանդինիստական (սոցիալիստական) ռեժիմը Նիկարագուայում և պայքարել պարտիզանական շարժման դեմ Սալվադորում: 1983թ-ին ԱՄՆ ռազմական ուժերը տապալում են ձախ ռեժիմը փոքրիկ Գրենադայում, որը սերտ կապեր էր հաստատել ԽՍՀՄ-ի և Կուբայի հետ, իսկ վերջինս նույնիսկ սկսել էր վրա կառուցել կղզու “միջազգային օդանավակայան”։ ԱՄՆ ղեկավարության համար դա եղավ վերջին կաթիլը, որովհետև պարզ էր, որ այդ “միջազգային օդանավակայանը” շուտով կդառնա խորհրդա-կուբայական ռազմական բազա, ինչը Վաշինգտոնը չէր կարող թույլ տալ:

1984թ. սկզբին Ռեյգանի անձնական վարկանիշը հասնում է 54%-ի: Այդ ցուցանիշը, Էյզենհաուերից հետո, ամենաբարձրն էր երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի բոլոր նախագահներից: Զարմանալի չէ, որ նա համոզիչ հաղթանակ է տանում հերթական նախագահական ընտրություններում դեմոկրատների թեկնածու՝ Մոնդեյլի նկատմամբ, ստանալով ձայների 59%-ը (Մոնդեյլը՝ 41%):

1984թ. սկզբին իր ելույթներից մեկում, որը նվիրված էր խորհրդաամերիկյան հարաբերություններին, Ռեյգանը պաշտոնապես հայտարարեց, որ ԱՄՆ ռազմական հզորությունը զգալի չափով ավելացել է, և հիմա արդեն ԱՄՆ պատրաստ է ԽՍՀՄ-ի հետ սկսել բանակցություններ երկու պետությունների միջև հակամարտությունը թուլացնելու համար: Սակայն բանակցություններն սկսվում են միայն այն բանից հետո երբ ԽՍՀՄ-ում 1985թ-ին իշխանության է գալիս Միխայիլ Գորբաչովը:

1985-1988թթ-ի ընթացքում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի առաջնորդները իրար հետ հանդիպում են հինգ անգամ (առաջին հանդիպումը տեղի ունեցավ 1985թ. նոյեմբերին Ժնևում):

1988թ-ի հունիսին Ռեյգանը պաշտոնական այցով ժամանում է Մոսկվա, իսկ դեկտեմբերին Գորբաչովը՝ Վաշինգտոն: Մինչև այդ երկու ղեկավարները հանդիպել էին 1986թ. հոկտեմբերին Ռեյկյավիկում և 1987թ-ի դեկտեմբերին Վաշինգտոնում: Այդ հանդիպման ժամանակ ԱՄՆ և ԽՍՀՄ պայմանավորվեցին միջին և մոտակա հեռավորության ցամաքի վրա տեղադրված հրթիռների վերացման մասին:

1989թ. նոյեմբերի սկզբին տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որտեղ հաջողությունը նորից ուղեկցեց Հանրապետական կուսակցությանը: Նրանց թեկնածուն՝ փոխվարչապետ Զորջ Բուշը ²⁸ համոզիչ հաղթանակ տարավ Դեմոկրատական կուսակցության թեկնածու՝ Մ.Դուկակիսի նկատմամբ:

²⁸ Ըստ Սահմանադրության Ռեյգանի թեկնածությունն այլևս չէր կարող առաջադրվել:

Թեմա 3.7. ԱՄՆ 20-րդ դ. 90-ական թթ. և 21-րդ դ. սկզբին

ԱՄՆ-ի Նախագահները



Ջորջ Հերբերտը Ուոկեր Բուշ – ԱՄՆ 41-րդ նախագահը(1989-1993)



Ուիլյամ (Բիլ) Ջեֆֆերսոն Բլինթոն (1993-2001) – ԱՄՆ 42-րդ նախագահը(1993-2001)



Ջորջ Ուոկեր Բուշ – ԱՄՆ 43-րդ նախագահ(2001-2009)



Բարակ Հուսեյն Օբամա - ԱՄՆ 44-րդ նախագահ(2009-2013,2013-

Ջորջ Բուշի նախագահությունը (1989-1993)

Ջորջ Բուշը Մարտին Վան Բյուրենից հետո առաջին փոխ-նախագահն էր, որը հասնում է նախագահի պաշտոնին համազգային ընտրությունների արդյունքում: Դեմոկրատները նախագահական

ընտրություններում մատնվելով անհաջողության, միևնույն ժամանակ, կարողանում են մեծամասնություն պահպանել Կոնգրեսի երկու պալատներում:

Բուշի վարչակազմը բավականաչափ ուշադրություն չէր դարձնում տնտեսությանը, հիմնական շեշտը դնելով արտաքին քաղաքականության վրա, մանավանդ, որ շուտով միջազգային հարաբերություններում տեղի ունեցան մի շարք կարևորագույն և ցնցող իրադարձություններ:

1989թ. մայիսին Գորբաչովը դառնում է ԽՍՀՄ առաջին (և վերջին) նախագահը: Նույն թվականին վերանում է Բեռլինի պատը, իսկ “սովետական բլոկի” մի շարք երկրներում՝ Լեհաստանում, Չեխոսլովակիայում և Ռումինիայում տեղի ունեցան հեղափոխություններ, որոնք արմատական փոփոխություններ մտցրեցին Արևելյան Եվրոպայի քարտեզի վրա: Չի կարելի չնշել ևս մեկ իրադարձություն, որը նույնպես տեղի ունեցավ 1989թ-ին, բայց արդեն Պեկինում, որտեղ հունիսին կոմունիստական կառավարությունը բանակի և տանկերի օգնությամբ ցրեց երիտասարդության ցույցը Տյանանմին հրապարակում: Ցուցարարները պահանջում էին խոսքի ազատություն և փոփոխություն քաղաքական համակարգում (արդյունքում զոհվում են հազարավոր մարդիկ):

Դատապարտելով չինական իշխանությունների գործողությունները, Բուշի վարչակազմը, այնուամենայնիվ, ձեռնպահ է մնում ավելի վճռական քայլերից, որոնք կարող էին լուրջ վնաս հասցնել ԱՄՆ և Չինաստանի հարաբերություններին:

Վերջապես, 1989թ. դեկտեմբերին Միացյալ Նահանգները ռազմական հատուկ ջոկատների օգնությամբ տապալում են Պանամայի նախագահ-դիկտատոր Մ.Նուրյեզայի իշխանությունը, որն ակտիվ զբաղվում էր թմրաբիզնեսով:²⁹

1990թ. հոկտեմբերին տեղի է ունենում երկու գերմանական պետությունների՝ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի պատմական միավորումը: 1991թ-ի հուլիսի 1-ին իր գոյությունը դադարեցրեց Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը և ԽՍՀՄ-ի գլխավորած ռազմական բլոկը լուծարվեց:

1990թ. օգոստոսին Իրաքը գրավում է Քուվեյթը և հայտարարում նրա բռնակցման մասին: Իրաքի գործողությունները Պարսից ծոցի շրջանում, որը համաշխարհային նավթի պաշարների հիմնական աղբյուրն էր, վտանգի տակ էր դնում ԱՄՆ-ի և մյուս արևմտյան երկրների ռազմավարական շահերը: Ստանալով Կոնգրեսի համաձայնությունը և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի աջակցությունը, ԱՄՆ-ն միջազգային կոալիցիայի հետ միասին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի,

²⁹ Նուրյեզան թաքնվեց Վատիկանի դեսպանատանը, սակայն տասն օրից հետո հանձնվեց: ԱՄՆ-ում նա դատապարտվեց 40 տարվա բանտարկության:

Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի հետ՝ սկսում է Իրաքի դեմ ռազմական գործողություն, որն ստանում է «Փոթորիկ անապատում» (Desert Storm) անվանումը: Այն տեղի ունեցավ 1991թ-ի հունվարի 16-ից մինչև փետրվարի 27-ը, որի արդյունքում Իրաքը պարտվեց և դուրս մղվեց Քուվեյթի տարածքից: Սակայն, հաշվի առնելով հետագա իրադարձությունները, կարելի է ասել, որ ԱՄՆ-ն թույլ տվեց մեծ սխալ, երբ դադարեցրեց ռազմական գործողությունը և փորձ չարեց վերացնելու Սադդամ Հուսեյնի վարչակարգը:

1991թ. հուլիսին Մ. Գորբաչովը և Զ. Բուշը ստորագրում են ստրատեգիական հարձակողական սպառազինությունների կրճատման և սահմանափակման մասին պայմանագիրը (ՍՀՄ-1), որի շարունակությունը եղավ ՍՀՄ-2 ստորագրումը 1993թ. հունվարի 3-ին Մոսկվայում (ՍՀՄ-2 այդպես էլ չվավերացվեց Կոնգրեսի կողմից):

1991թ. դեկտեմբերին փլուզվում է ԽՍՀՄ-ը և խորհրդային համակարգը: Դրա հետ մեկտեղ փլուզվում է և երկբևեռ համակարգը, ավարտվում «սառը պատերազմը», որում հաղթող է դուրս գալիս Արևմուտքը ԱՄՆ-ի գլխավորությամբ և լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսությամբ:

1993թ. ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի միջև ստորագրվում է ազատ առևտրի մասին կարևոր համաձայնագիր, որով նախատեսվում էր 2005թ-ին Արևմտյան կիսագնդում ստեղծել ազատ առևտրի գոտիներ (ՆԱՖՏԱ., North-American Free Trade Area-NAFTA):

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նույնիսկ մեծ հաջողությունները արտաքին քաղաքականությունում չկարողացան փրկել Բուշի վարչակազմը և Հանրապետական կուսակցությունը պարտությունից հերթական նախագահական ընտրություններում: Դրա պատճառը՝ տնտեսական ճգնաժամն էր, որը սկսվեց 80-ական թթ-ի սկզբին և տարածվեց տնտեսության համարյա բոլոր բնագավառների վրա: Աստիճանաբար աճում էր բյուջեի պակասորդը, կրճատվում սոցիալական օգնությունը և ավելանում գործազրկությունը: Այդ ամենը վճռական դեր խաղաց Դեմոկրատական կուսակցության և նրա թեկնածու՝ Արկանզաս նահանգի երիտասարդ նահանգապետ Ուիլյամ (Բիլ) Բլինթոնի հաղթանակի գործում:

ԱՄՆ Ուիլյամ (Բիլ) Բլինթոնի նախագահության տարիներին (1993-2001): Տնտեսական զարգացումը

Իր երդմնակալության ճառում Բլինթոնը խոսեց փոփոխությունների անհրաժեշտության մասին, առաջին հերթին, սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ (անցում դեպի «պահանջարկի տնտեսություն»), ինչպես նաև երկրի ղեկավարման ղեկի մոտ կանգնած մարդկանց պատմական սերնդափոխության մասին: Պետք է նշել, որ

ամերիկյան ժողովուրդը, ընդհանուր առմամբ, չհիասթափվեց իր կատարած ընտրությունից, հաշվի առնելով, որ Քլինթոնի երկու նախագահական ժամկետների տնտեսական վիճակագրությունը միանշանակ խոսում է տպավորիչ հաջողությունների մասին: ԱՄՆ Համախառն Ներքին Արտադրանքն (ՀՆԱ) ունեցավ աննախադեպ աճ (տարեկան միջինն ավելի քան 3%), հաջողվեց վերացնել ֆեդերալ բյուջեի պակասորդը և վերջին 42 տարիների ընթացքում եկամուտները գերազանցեցին ծախսերը:

Հաջողվեց նաև զգալի չափով կրճատել ԱՄՆ պետական պարտքը՝ ՀՆԱ-ի 68%-ից մինչև 57%; սղաճն իջնում է մինչև 2%; գործազրկության մակարդակն իջնում է մինչև 4,5% և այդ ցուցանիշն ամենացածրն էր վերջին 30 տարիների ընթացքում: Արդյունքում ամերիկացիների բարեկեցության մակարդակը դառնում է լավագույններից մեկն աշխարհում: Այդ ամենը թույլ է տալիս պնդել, որ Քլինթոնի վարչակազմի ութ տարվա կառավարումն ամենահաջողներից մեկն էր 20-րդ դարի ամերիկյան պետության տնտեսական պատմության մեջ: Իսկ նախագահի ամենամեծ անհաջողությունը սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ կարելի է համարել Կոնգրեսի կողմից ազգային առողջապահության համակարգի բարեփոխման ծրագրի մերժումը 1994թ-ին: Ծրագիրը մշակել էր հատուկ դրա համար ստեղծված հանձնաժողովը Քլինթոնի կնոջ՝ Հիլարի Քլինթոնի գլխավորությամբ:

Արտաքին քաղաքականությունը

ԻՍՀԱՄ փլուզումից և “սառը պատերազմի” ավարտից հետո, ԱՄՆ շարունակեց ակտիվ արտաքին քաղաքականություն վարել աշխարհի տարբեր մասերում: Ասիայում և Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանում ԱՄՆ, փաստորեն, բոլոր երկրների հետ, բացառությամբ Հյուսիսային Կորեայի, հաստատել էր ամուր դաշնակցային կապեր՝ Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության, Ֆիլիպինների, Թայլանդի, Ավստրալիայի: ԻՍՀԱՄ փլուզումից հետո ԱՄՆ հրաժարվում է իր “չինական խաղաթղթի” քաղաքականությունից և որդեգրում Չինաստանի հետ քաղաքական հարաբերությունների կանոնավորման և առևտրատնտեսական կապերի ինտենսիվ զարգացման ուղի: Դրա սկիզբը դրեց 1994թ-ի նոյեմբերին Քլինթոնի հանդիպումը Չինաստանի նախագահ Ցզյան Ցզեմինի հետ: Նույն թվականի փետրվարին ԱՄՆ չեղյալ համարեց Վիետնամի նկատմամբ 19 տարիների ընթացքում պահպանվող էմբարգոն:

Եվրոպայի հետ հարաբերություններն ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ շարունակում էին մնալ կարևորագույններից մեկը: “Խորհրդային վտանգի” վերացումից հետո, 90-ական թթ-ի սկզբից, Արևմտյան Եվրոպայի երկրներն սկսում են վարել ավելի անկախ

քաղաքականություն, որը, շատ դեպքերում տարբերվում էր ԱՄՆ մոտեցումներից, առաջին հերթին, երբ խոսքը ռազմական ուժերի օգտագործման մասին էր:

Հետաքրքիր է, որ ՆԱՏՕ-ի հիմքում ընկած “ատլանտյան տուն” գաղափարը, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, սկսում է կորցնել իր նշանակությունը բլոկի “հին” անդամների մոտ, բայց, միևնույն ժամանակ, վստահություն է ներշնչում քաղաքական անկախություն ձեռք բերած նախկին խորհրդային բլոկի մեջ մտնող Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մոտ, որոնք աջակցություն են ստանում ԱՄՆ-ից:

ԱՄՆ ակտիվ քաղաքականություն էր վարում նաև Մերձավոր Արևելքում, փորձելով միջամտել արաբ-իսրայելական հակամարտության լուծման հարցում: 1993թ-ի սեպտեմբերին Քլինթոնի աջակցությամբ Իսրայելի վարչապետ Ի.Ռաբինի և Պաղեստինի ղեկավար Յ.Արաֆատի միջև ստորագրվում է “Օսլոյի համաձայնագիրը”, որով Պաղեստինը պաշտոնապես ճանաչում էր Իսրայելին, իսկ պաղեստինցիներն ստանում էին ինքնավարություն:³⁰

90-ական թթ-ի սկզբին սրվում է իրավիճակը Հարավսլավիայում: 1991թ. հունիսին տեղի ունեցած սերբ-սլովենական 10 օրյա պատերազմի, 1991-95թթ.’ սերբ-խորվաթական և 1992-95թթ.’ սերբ-բոսնիական պատերազմների արդյունքում փլուզվում է Հարավսլավիան և նրա նախկին տարածքի վրա ստեղծվում են անկախ պետություններ՝ Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա, Բոսնիա և Հերցեգովինա: ԱՄՆ ակտիվ աջակցության արդյունքում վերջ է դրվում սերբ-բոսնիական հակամարտությանը: Դեյտոն քաղաքում (Օհայո նահանգ) Սերբիայի, Բոսնիա-Հերցեգովինայի և Խորվաթիայի նախագահները ստորագրում են զինադադարի մասին պայմանագիր: Սակայն շուտով սկսվում է այսպես կոչված Կոսովոյի պատերազմը (1998թ. փետրվար - 1999թ. Մարտ) սերբերի և Կոսովոյի ալբանացիների միջև, որն, ինչպես և բոլոր բալկանյան հակամարտություններն ուղեկցվում էր երկկողմ դաժանություններով:

ՆԱՏՕ-ն ԱՄՆ-ի գլխավորությամբ, մեղադրելով սերբերին էթնիկական զտումների մեջ, միջամտեց և 1999թ-ի մարտի 24-ից մինչև 1999թ-ի հունիսի 10-ը պատերազմեց Սերբիայի հետ, որի արդյունքում ՆԱՏՕ-ի ուժերը հաստատում են իրենց հսկողությունը Կոսովոյի վրա:

Ունենալով այսպիսի ակնհայտ հաջողություններ ներքին և արտաքին քաղաքականության մեջ, Քլինթոնը հեշտությամբ հաղթանակ

³⁰ Ռաբինը և Արաֆաթն ստանում են Խաղաղության Նոբելյան մրցանակ: Այդ համաձայնագիրը միանշանակ չի ընդունվում Իսրայելում, որտեղ շատերը Ռաբինին մեղադրեցին դավաճանության մեջ: 1995թ. նոյեմբերի 4-ին նա սպանվում է մի կրոնամոլ ուսանողի ձեռքով:

է տանում 1996թ. նոյեմբերին տեղի ունեցած նախագահական ընտրություններում Հանրապետական կուսակցության թեկնածու՝ Ռիչարդ Դոուլի նկատմամբ (Քլինթոնին կողմ քվեարկեցին 47,4 մլն. ամերիկացիներ, Դոուլի՝ 39,2 մլն.): Քլինթոնն իր վարչակազմում կատարում է միայն մեկ մեծ փոփոխություն՝ պետքարտուղար Ու.Քրիսթոֆերին փոխարինեց Մադլեն Օլբրայթը՝ առաջին կինն ամերիկյան պատմության մեջ, որը զբաղեցրեց այդ պաշտոնը:

Օլբրայթն ԱՄՆ ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու կողմնակից էր: Նրա վճռական դիրքը մեծ նշանակություն ունեցավ Բալկանյան ճգնաժամում: Նա կողմնակից էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետություններին ՆԱՏՕ-ի մեջ արագ ընդգրկելու, ինչին դեմ էր Ռուսաստանը: Պետք է նշել, որ Բալկանյան ճգնաժամի տարիներին Ռուսաստանն այդպես էլ չկարողացավ համոզել Սերբիայի նախագահ Միլոշեվիչին Կոսովոյի հարցում գնալ զիջումների, որի արդյունքում ՆԱՏՕ-ի կողմից ռմբակոծվեցին Սերբիայի տարածքը և Բելգրադը, իսկ Ռուսաստանը, խորը տնտեսական և քաղաքական ճգնաժամի մեջ լինելով, ի վիճակի չէր էական օգնություն ցույց տալ իր պատմական և կրոնական բարեկամ՝ Սերբիային: Բալկանյան ճգնաժամը վատացրեց ռուս-ամերիկյան հարաբերությունները:

90-ական թթ-ի վերջին սկսում են գլոբալ բարձրացնել տարբեր ահաբեկչական կազմակերպություններ, առաջին հերթին, Ալ-Կաիդան, որը ղեկավարում էր սաուդյան միլիոնատեր Ուսամա բեն Լադենը: Նա ահաբեկչական հարձակումներ կազմակերպեց ամերիկյան զինծառայողների վրա Քենիայում և Թանզանիայում: Որպես հատուցում, ԱՄՆ 1998թ. օգոստոսին հրթիռային հարվածներ հասցրեց Ալ-Կաիդայի ճամբարներին Սուդանում և Աֆղանստանում:

ԱՄՆ-ի համար շարունակում էր մեծ գլխացավանք մնալ Իրաքը Սադդամ Հուսեյնի գլխավորությամբ: Հերթական անգամ, երբ Բաղդադը հրաժարվում է իր զինագործարաններից ներս թողնել ՄԱԿ-ի ներկայացուցիչներին, ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան 1998թ. վերջին չորս օրվա ընթացքում ռմբակոծում են Իրաքի տարածքը:

Բիլլ Քլինթոնը Ամերիկայի պատմության մեջ մտավ ոչ միայն որպես նախագահ, ում կառավարման օրոք երկիրը ծաղկման շրջան ապրեց, այլև որպես ղեկավար, որը ներքաշվեց սեքսուալ բնույթի հասարակական և քաղաքական սկանդալի մեջ:

1998թ. հունվարին հետաքննության արդյունքում հասարակությանը հայտնի դարձավ, որ 1995-1996թթ-ին Քլինթոնը սեքսուալ կապի մեջ էր Սպիտակ տան ստաժոր, իսկ հետո Պենտագոնի աշխատող՝ Մոնիկա Լեվինսկիի հետ:

Նախագահը նախ հերքում էր Լեվինսկիի հետ իր սեքսուալ կապը, ինչը հետո թույլ տվեց անկախ դատախազ՝ Քեննետ Սթարին մեղադրել

նրան սուտ վկայություն տալու համար: Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը նախագահի դեմ հարուցում է իմփիչմենտի գործ, որը, վերջ ի վերջո, 1999թ. փետրվարին չի ստանում անհրաժեշտ աջակցություն Սենատում:

Ամեն դեպքում Քլինթոնի հետ կապված այդ սկանդալը (ամերիկացիների մոտ, առաջին հերթին, զայրույթ առաջացրեց ոչ թե նախագահի Մոնիկա Լեվինսկիի հետ ունեցած սեքսուալ կապը, այլ այն, որ Քլինթոնը սուտ վկայություն տվեց) չէր կարող բացասական ազդեցություն չունենալ որչ Դեմոկրատական կուսակցության վրա, ինչը երևաց նախագահական ընտրությունների ժամանակ:

Կարծես թե դեմոկրատների թեկնածու՝ փոխնախագահ Ալբերտ Գորը, հաշվի առնելով Քլինթոնի վարչակազմի, առաջին հերթին, տնտեսական հաջողությունները, պետք է հեշտ հաղթանակ տաներ հանրապետականների թեկնածու՝ Տեխաս նահանգի նահանգապետ, ԱՄՆ 41-րդ նախագահ Ջորջ Ուոկեր Բուշի որդու՝ Ջորջ Բուշ-կրտսերի նկատմամբ: Սակայն ընտրությունների ընթացքն ունեցավ դրամատիկ և անսպասելի վերջաբան: Ծավալվեց թեժ պայքար և ընտրությունների արդյունքում Գորն ստացավ 500.000 ձայների առավելություն: Սակայն ընտրությունների ելքը որոշեցին միայն մեկ նահանգի՝ Ֆլորիդայի ընտրողների ձայները, որոնք ընտրիչների հետ միասին, իրենց նախապատվությունը տվեցին Բուշին:

Մշակույթ, գիտություն և տեխնիկա

1992թ-ին գործողության մեջ դրվեց Ինտերնետը (World Wide Web (WWW)), ինչից հետո կարելի է ասել, որ սկսվում է “էլեկտրոնային դարաշրջանը”, որն արմատականորեն փոխեց ամերիկյան հասարակության սովորական կենսակերպը և սրբեղծեց գործնական և անձնական հաղորդակցության, ֆինանսական և առևտրապատկանական գործունեության, գովազդային ծառայությունների նոր ձևեր: Եթե 1994թ-ին Ինտերնետից օգտվում էի 3մլն. ամերիկացիներ, ապա 1998թ-ին՝ արդեն 100 մլն.::

Էլեկտրոնային մագնստի՝ Բիլ Գեյթսը, որը համարվում է Ինտերնետի սրբեղծողը, շուտով դարձավ աշխարհի ամենահարուստ մարդը: 20-րդ դարի վերջին Ինտերնետը փարածվեց ամբողջ աշխարհով և 21-րդ դարի սկզբին նրանից օգտվողների թիվը հասնում էր 1 մլրդ. մարդու:

Ինտերնետն ընդգրկեց ոչ միայն ամերիկացիների ամենօրյա կենցաղը, այլև գիտությունը, կրթությունը, սպորտը և այլն.: Հնարավորություն առաջացավ դուրս չգալով տնից ծանոթանալ մամուլի հրապարակումներին, կամ գրքերի տեքստերին:

Այդ դարաշրջանի գրողներից կարելի է առանձնացնել Մայքլ Քրայթոնին, Ջոն Գրիշեմին, Սպիվեն Քինգին; նկարիչներից և քանդակագործներից՝ Ջասպեր Ջոնսին, Ռոյ Լիխթենսթայնին, Ռոբերտ Ռաուշենբերգին, Ֆրենկ Սպելլեյին, Քեյթ Հերինգեյնին; ճարտարապետներից՝ Ռոբերտ Վենտուրային և Ռիչարդ Մեյերին; երաժիշկներից և երգիչներից՝ Մայքլ Ջեքսոնին, Մադոննային, Լայոնել Ռիչին, Ուիթնի Հյուսթոնին և ուրիշներին։

90-ական թթ-ի վերջին արդեն ամերիկյան երիտասարդությունն Ինտերնետով կրթություն ստանալու և գրադարանային ֆոնդերից օգտվելու հնարավորություն ստացավ։

Ջորջ Բուշ-կրտսերի նախագահությունը (2001-2009)

Բուշն ամերիկյան պատմություն մեջ երկրորդ նախագահն էր (Ջոն Բ.Ադամսից հետո), որն զբաղեցրեց այդ պաշտոնն իր հորից հետո։ Բացի այդ նա մտավ նախագահների այն ցուցակի մեջ, որոնք հաղթեցին հավաքելով Ընտրիչների ձայների մեծամասնությունը, սակայն պարտվեցին քաղաքացիների կողմից ստացած ձայների արդյունքում (այդ շարքում են նաև Ջոն Բ.Ադամսը, Ռ.Հեյզը և Բենջամին Հարրիսոնը)։

1997թ-ին ամերիկյան նոր պահպանողականների մի խումբ, որի կազմի մեջ մտել էին ԱՄՆ ռազմաարդյունաբերական կոմպլեքսի նշանավոր ներկայացուցիչներ, պատրաստեցին “Նոր ամերիկյան դարի նախագիծը” (Project for the New American Century), որտեղ փորձ էր արվում “Ռեյգանի վարչակազմի արտաքին քաղաքականության մեջ ունեցած հաջողությունների “հիմնական էլեմենտների” հիման վրա մշակել ԱՄՆ նոր արտաքին քաղաքականությունը միաբևեռ աշխարհի պայմաններում։

Այդ “նոր քաղաքականությունն” իր մեջ ընդգրկում էր 1. Հյուսիսատլանտյան դաշինքի ամրապնդումը և նրա ընդլայնումը դեպի Արևելք, 2. համագործակցության ակտիվացում “նորաստեղծ եվրոպական դեմոկրատիաների” հետ և նրանց ցուցաբերվող աջակցությունը ՆԱՏՕ-ի մեջ մտնելու գործում, 3. հրաժարում այն միջազգային պայմանագրերից, որոնք չէին համապատասխանում ԱՄՆ ազգային շահերին, այդ թվում նաև 1972թ-ի ՀՀՊ-ի պայմանագրից, 4. Ազգային հակահրթիռային պաշտպանության համակարգի ստեղծում։

Նոր պահպանողականներից մի քանիսը մտան Բուշի վարչակազմի մեջ, զբաղեցնելով այնտեղ կարևոր պաշտոններ (օրինակ, Ռ.Չեյնին դառնում է փոխնախագահ, Պ.Վոլֆովիցը՝ պաշտպանության նախարարի տեղակալ)։ Հենվելով քաղաքական և ռազմական հզորության վրա, որի հիմքում ընկած էր “Pax Americana” (“Խաղաղություն

Ամերիկայի հովանու տակ”) գաղափարախոսությունը, ԱՄՆ-ն զբաղեցնում է աշխարհում իշխող դիրք:

Բուշի վարչակազմը հասկացնել տվեց ամբողջ աշխարհին, որ ԱՄՆ պատրաստ է օգտագործել ռազմական ուժեր և անհրաժեշտության դեպքում նույնիսկ գործել միայնակ, ինչպես ռեգիոնալ, այդպես էլ գլոբալ մակարդակի վրա, Ամերիկայի շահերին և նրա անվտանգությանը սպառնալիք լինելու դեպքում:

ԱՄՆ ուներ նման քաղաքականություն վարելու հնարավորություն քանի որ այդ ժամանակ ռազմական տեխնոլոգիաների և ռազմական ծախսերի մակարդակով առաջ էր անցել աշխարհի բոլոր երկրներից, այդ թվում նաև իր եվրոպական դաշնակիցներից:

Սակայն ԱՄՆ հզորությունն անգոր էր կանխել 2001թ-ի սեպտեմբերի 11-ի ողբերգական իրադարձությունները, երբ արաբ օդաչուկամիկաձեռները հարձակումներ կազմակերպեցին Նյու-Յորքի Համաշխարհային առևտրային կենտրոնի զույգ շենքերի և Վաշինգտոնում գտնվող Պենտագոնի շենքի վրա, որի արդյունքում զոհվեց ավելի քան 3.000 մարդ:

Այդ ահաբեկչությունների պատասխանատվությունն իր վրա վերցրեց “Ալ-Կաիդա” ահաբեկչական կազմակերպությունն Ուսամա բեն Լադենի գլխավորությամբ: ԱՄՆ պատերազմ է հայտարարում “Ալ-Կաիդային” և Աֆղանստանում իշխանությունն իր ձեռքը վերցրած թալիբներին, իսկ Բեն Լադենը հայտարարվում է Ամերիկայի թիվ 1 թշնամին:³¹

Ստանալով CIA-ից տեղեկություն, որ Բեն Լադենը թաքնվում է Աֆղանստանում, Բուշը պահանջում է Թալիբան կառավարությունից, որպեսզի նրանք Բեն Լադենին հանձնեն ԱՄՆ-ին, սակայն մերժում է ստանում: Ստանալով աջակցություն իր հիմնական դաշնակիցներից և ստեղծելով մեծ կոալիցիա ԱՄՆ 2001թ. վերջին մտնում է Աֆղանստան և տապալում թալիբների իշխանությունը:

2002թ. սեպտեմբերին Սպիտակ տունը հրապարակում է “ԱՄՆ ռազմավարությունն ազգային անվտանգության բնագավառում” փաստաթուղթը, որն ստացավ “Բուշի դոկտրինա” անվանումը: Այդ դոկտրինայում ԱՄՆ գլխավոր թշնամի է հռչակվում միջազգային ահաբեկչությունը, ինչպես նաև այն երկրները և նրանց ղեկավարները, որոնք աջակցում են այդ ահաբեկիչներին: Դոկտրինան հռչակում էր, փաստորեն, ԱՄՆ-ի ռազմական գերիշխանությունն ամբողջ աշխարհում, ընդգծելով, որ Ամերիկան պաշտպանելու է իրեն, իր քաղաքացիներին և

³¹ Երկար ժամանակ նրան չէր հաջողվում հայտնաբերել և միայն 2011թ. մայիսի 2-ին գաղտնի ռազմական գործողության արդյունքում նախագահ Բարաք Օբամայի հրամանով Բեն Լադենը սպանվում է Պակիստանում Աբրթաբադ քաղաքում:

նրանց շահերն ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում, ոչնչացնելով սպառնալիքներն ԱՄՆ-ի սահմաններից դուրս: “Բուշի դոկտրինայի” շարունակություն կարելի է համարել Ներքին անվտանգության նախարարության ստեղծումը:

2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունների արդյունքում երկրում առաջանում է տնտեսական ճգնաժամ: Հսկայական կորուստներ ունեցան ավիացիոն, ապահովագրության և զբոսաշրջիկության կազմակերպությունները, կրճատվեցին քաղաքացիական շինարարության, արդյունաբերության արտադրության և մանրածախ առևտրի ծավալները, ավելացավ (մոտ 1,5 անգամ) գործազրկությունը: Ներքաղաքական և տնտեսական վիճակը հիշեցնում էր շատերին 1992թ., երբ Զ.Բուշ-ավագի կողմից անցկացված և աջակցություն ստացած արտաքին քաղաքականությունն այդպես էլ ի վիճակի չէղավ թուլացնել հասարակության դժգոհությունն այն քաղաքականությունից, որը վարչակազմը վարում էր սոցիալ-տնտեսական բնագավառում: Սակայն 2002թ. վերջին տնտեսական վիճակն սկսում է լավանալ, ինչը թույլ տվեց Հանրապետական կուսակցությանը հաղթել պառլամենտական ընտրություններում և ստանալ մեծամասնություն Կոնգրեսի երկու պալատներում: Այդ ամենն ամրապնդեց վարչակազմի ներքին դիրքերը և ձեռքերի ազատություն տվեց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ:

2002թ. հոկտեմբերին Կոնգրեսը նախագահին Սադդամ Հուսեյնի դեմ ռազմական գործողություններ սկսելու իրավունք տվեց լարված իրավիճակը դիվանագիտական ճանապարհով լուծելու անհաջողության դեպքում: 2003թ. մարտի 20-ին ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան առանց ՄԱԿ-ի սանկցիայի (ՆԱՏՕ-ի մեջ ընդգրկված երկրների մեծ մասը այդ քայլին դեմ դուրս եկավ), մեղադրելով Սադամ Հուսեյնին զանգվածային ոչնչացման զենք ունենալու և թաքցնելու մեջ, ներխուժեցին Իրաք և տապալեցին նրա ռեժիմը: Սակայն, ժամանակն անցնում էր, բայց “թաքցված” զենքն այդպես էլ չէր չհայտնաբերվում, ուստի ԱՄՆ-ում, ինչպես նաև Բրիտանիայում բողոքի այլք բարձրացավ և Հանրապետական կուսակցության և Բուշի ժողովրդականությունը սկսում է նվազել, ինչը և դառնում է տնտեսական անհաջողությունների հետ միասին հանրապետականների պարտության հիմնական պատճառներից մեկը 2008թ-ին:³²

³² Ստախտությունը “թանկ գին” ունեցավ նաև Բլերի համար՝ նա ստիպված եղավ հրաժարական տալ վարչապետի պաշտոնից և հեռանալ լեյբորիստական կուսակցության ղեկավարության ղեկից: Պաշտոնապես պատերազմն Իրաքում ավարտվեց 2011թ-ի դեկտեմբերի 15-ին, երբ նախագահ Օբամայի հրամանով դուրս բերվեցին վերջին ամերիկյան զինվորները:

Բայց, մինչև այդ, 2004թ-ին Բուշը հաղթում է նախագահական ընտրություններում դեմոկրատների թեկնածու՝ Ջոն Բերրիին և ստանում նախագահական երկրորդ ժամկետի իրավունք:

Ամփոփում

Ամփոփելով անցածը, փորձենք անել կարևոր հետևություններ հյուսիսամերիկյան համարյա չորս հարյուր տարվա պատմությունից և հասկանալ, թե ինչպես նախկին հետամնաց և կիսաքաղցած գաղութը կարողացավ դառնալ գերտերություն: Ամերիկյան պատմության բնորոշ դրական և բացասական կողմերը, մեր կարծիքով, հետևյալն են.

1. Երկրի պատմության բոլոր փուլերում մենք տեսնում ենք դինամիկ տնտեսական զարգացում, որի արդյունքում ԱՄՆ-ն ստեղծեց աշխարհում ամենազարգացած տնտեսությունը: Երկրի տնտեսական զարգացման հիմնական պատճառը կայանում է նրանում, որ հենց իր պատմության սկզբից տնտեսության մեջ հաստատվում են շուկայական կապիտալիստական հարաբերությունները, որոնք իրենց իշխող դիրքը պահպանում են մինչև այսօր: Նորագույն պատմության մեջ պետության միջամտությունը տնտեսության մեջ բավական մեծ է, սակայն պետությունը չի իշխում տնտեսական համակարգում, այլ մնում է միշտ այդ համակարգի գործընկերը և օգնականը:

2. Քաղաքական ժողովրդավարության զարգացումը: Արմատները տանում են դեպի եվրոպական քաղաքակրթությունը, սակայն ժամանակի ընթացքում Միացյալ Նահանգներն ինքնուրույն սկսում են զարգացնել ժողովրդավարական սկզբունքները, շատ դեպքերում առաջ անցնելով եվրոպական երկրներից: Ժողովրդավարության զարգացումը հեշտ չէր տեղի ունենում, էլիտան փորձ էր անում հաստատել իր հսկողությունը ժողովրդավարական համակարգի վրա և, արդյունքում, ԱՄՆ-ում ձևակերպվեց համակարգ, որը կարելի է անվանել ժողովրդավարական (դեմոկրատական) էլիտիզմ: Սակայն այն չէր նշանակում իշխանության ժողովրդավարական կառուցվածքների վերացում: Ժողովրդավարական կառուցվածքներն ամերիկյան պատմության բոլոր փուլերում այնքան ամուր էին, որ չէին թույլ տալիս որ հաստատվեն ամբողջատիրական կամ ավտորիտար վարչակարգեր:

3. Անձի քաղաքական և քաղաքացիական իրավունքների արմատավորումը և ընդլայնումը: Մինչև 1860-ական թթ. քաղաքացիական և քաղաքական իրավունքների ընդլայնումը վերաբերվում էր միայն բնակչության արական սեռի սպիտակամորթ մասին: Սկսած 1860-ական թթ-ից, ստրկության վերացումից հետո, այդ իրավունքներն սկսում են տարածվել նաև արական սեռի սևամորթ ներկայացուցիչների վրա: Այդ գործընթացը, ինչպես տեսանք, զարգանում էր դանդաղ և հիվանդագին և ավարտվում է միայն 1970-ական թթ-ին: Երկարատև և լարված պայքարում քաղաքացիական և քաղաքական հավասար իրավունքների համար ամերիկյան կանայք ևս կարողացան հասնել մեծ հաջողությունների, ինչից հետո Միացյալ

Նահանգները քաղաքացիական և քաղաքական իրավունքների հավասարության ցուցանիշով զբաղեցնում է առաջին տեղերից մեկն աշխարհում:

Ամերիկյան պատմության բացասական կողմերը կարելի է համարել

1. Ամենագլխավոր բացասական կողմերից են, իմ համոզմամբ, աղքատության պահպանումը, ինչպես նաև դասակարգային, ռասայական և էթնիկական խմբերի միջև բավական խորը տնտեսական տարբերությունը: Այն փաստը, որ ամերիկյան հասարակության ստորին շերտերն իրենց բարեկեցությամբ ավելի բարձր մակարդակի վրա են գտնվում, քան մնացած երկրների մեծ մասի ստորին դասակարգերը, չի “մեղմացնում” այդ բացասական երևույթը: Միացյալ Նահանգներում գոյություն ունեն հսկայական ռեզերվներ և հնարավորություններ ստորին սոցիալական խմբերի տնտեսական և սոցիալական իրավունքների բարելավման և ընդլայնման համար: Այդ ցուցանիշով ԱՄՆ-ն այսօր լրջորեն զիջում է, գրեթե բոլոր զարգացած երկրներին:

2. Շուկայական հարաբերությունների համատարած իշխանությունը հանգեցնում է այն բանին, որ մարդը աստիճանաբար սկսում է ենթարկվել միայն սպառողական գիտակցությանը, ինչը, իր հերթին, հեռացնում է մարդուն իր հոգևոր սկզբից, և սկսվում է “վազք” նյութական բարիքների համար:

Այդ վազքը հմտորեն կազմակերպվում է շուկայական գովազդի կողմից, որի հիմնական նպատակն է՝ ամեն գնով ձեռք բերել առավելագույն շահույթ: Այդ ամենը բնորոշ է ողջ կապիտալիստական աշխարհին, սակայն ԱՄՆ կարելի է համարել զանգվածային սպառող հասարակության հայրենիք:

3. Որպես բացասական երևույթ կարելի է նշել նաև ԱՄՆ կողմից գերազանցության զգացումը այլ երկրների նկատմամբ, համոզվածությունը երկրի և ժողովրդի “ընտրյալ” լինելու մեջ: Այստեղից էլ գալիս է ամերիկյան քաղաքակրթության մեջ արմատավորված մեսիանիզմը, որը գաղափարախոսական հիմք հանդիսանալով ամերիկյան պետության համար, թույլ է տալիս նրան ամբողջ աշխարհում վարել տնտեսական, քաղաքական և հոգևոր էքսպանսիոնիստական քաղաքականություն:

ԱՄՆ Նախագահները

Ջորջ Վաշինգտոն (1732-1799), ԱՄՆ 1-ին նախագահը (1789-1797)
Ջոն Ադամս (1735-1826), ԱՄՆ 2-րդ նախագահը (1797-1801)
Թոմաս Ջեֆֆերսոն (1743-1826), ԱՄՆ 3-րդ նախագահը (1801-1809)
Ջեյմս Մեդիսոն (1751-1836), ԱՄՆ-ի 4-րդ նախագահը (1809-1817)
Ջեյմս Մոնրո (1758-1831), ԱՄՆ-ի 5-րդ նախագահը (1817-1825)
Ջոն Քուինսի Ադամս (1767-1848), ԱՄՆ 6-րդ նախագահը (1825-1829)
Էնդրյու Ջեքսոն (1767-1845), ԱՄՆ 7-րդ նախագահը (1829-1837)
Մարտին Վան Բյուրեն (1782-1862), ԱՄՆ 8-րդ նախագահը (1837-1841)
Ուիլյամ Հենրի Հարրիսոն (1773-1841), ԱՄՆ 9-րդ նախագահ (մարտ-
ապրիլ 1841)
Ջոն Թայլեր (1790-1862), ԱՄՆ 10-րդ նախագահ (1841-1845)
Ջեյմս Փոլք ((1795-1849), ԱՄՆ 11-րդ նախագահ (1845-1849)
Չաքարի Թեյլոր (1784-1850), ԱՄՆ 12-րդ նախագահ (1849-1850)
Միլլարդ Ֆիլմոր (1800-1874), ԱՄՆ 13-րդ նախագահ (1850-1853)
Ֆրանկլին Պիրս (1804-1869), ԱՄՆ 14-րդ նախագահ (1853-1857)
Ջեյմս Բյուկենեն (1791-1868), ԱՄՆ 15-րդ նախագահ (1857-1861)
Աբրահամ Լինքոլն (1809-1865), ԱՄՆ 16-րդ նախագահը (1861-1865)
Էնդրյու Ջոնսոն (1808-1875), ԱՄՆ 17-րդ նախագահը (1865-1869)
Ուիլյամ Սիմպսոն Գրանտ (1822-1885), ԱՄՆ 18-րդ նախագահը (1869-1877)
Ռեզերֆորդ Հեյս (1822-1881) – ԱՄՆ 19-րդ նախագահը (1877-1881)
Ջեյմս Հարֆիլդ (1831-1881) – ԱՄՆ 20-րդ նախագահը (1881թ. մարտ-
սեպտեմբեր)
Չեսթեր Արթուր (1829-1886) – ԱՄՆ 21-րդ նախագահը (1881-1885)
Գրովեր Բլիվենդ (1837-1889) – ԱՄՆ 22-րդ նախագահը (1885-1889)
Բենջամին Հարրիսոն (1833-1901) – ԱՄՆ 23-րդ նախագահը (1889-1893)
Գրովեր Բլիվենդ (1837-1889) – ԱՄՆ 24-րդ նախագահը (1893-1897)
Ուիլյամ Մաքքինլի (1843-1901) – ԱՄՆ 25-րդ նախագահը (1897-1901)
Թեոդոր Ռուզվելտ (1858-1919) —ԱՄՆ 26-րդ նախագահը (1901-1909)
Ուիլյամ Հովարդ Թաֆտ (1857-1930)—ԱՄՆ 27-րդ նախագահը (1909-1913)
Վուդրո Վիլսոն (1856-1924)—ԱՄՆ 28-րդ նախագահը (1913-1921)
Ուորրեն Հարդինգ (1865-1923թթ.) - ԱՄՆ 29-րդ նախագահ (1921-1923թթ.)
Քելվին Բուվիշ (1872-1933) – ԱՄՆ 30-րդ նախագահը (1923-1929)
Հերբերտ Հուվեր (1874-1964) - ԱՄՆ 31-րդ նախագահ (1929-1933)
Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ (1882-1945)- ԱՄՆ 32-րդ նախագահը (1933-
1945)
Հարի Թրումեն (1884-1972) – ԱՄՆ 33-րդ նախագահը (1945-1953)
Դուայթ Դեյվիդ Էյզենհաուեր (1900-1969) – ԱՄՆ 34-րդ նախագահը
(1953-1961)

Ջոն Ֆիցջերալդ Քեննեդի (1917-1963) -ԱՄՆ 35-րդ նախագահը (1961-1963)

Լինդոն Բեյնս Ջոնսոն (1908-1973)-ԱՄՆ 36-րդ նախագահը (1963-1969)

Ռիչարդ Միլհաուս Նիքսոն (1913-1994)--- ԱՄՆ 37-րդ նախագահը (1969-1974)

Ջերալդ Ռուդոլֆ Ֆորդ (1913-2006)----ԱՄՆ 38-րդ նախագահը (1974-1977)

Ջեյմս (Ջիմմի) Էրլ Քարթեր (1924)-----ԱՄՆ 39-րդ նախագահը (1977-1981)

Ռոնալդ Ռեյխսոն Ռեյգան (1911-2004)-----ԱՄՆ 40-րդ նախագահը (1981-1989)

Ջորջ Հերբերտ Ուոկեր Բուշ (1924)- ԱՄՆ 41-րդ նախագահը (1989-1993)

Ուիլյամ (Բիլ) Ջեֆֆերսոն Բլինթոն (1946) – ԱՄՆ 42-րդ նախագահը (1993-2001)

Ջորջ Ուոկեր Բուշ (1946) – ԱՄՆ 43-րդ նախագահը (2001-2009)

Բարակ Հուսեյն Օբամա(1961) - ԱՄՆ 44-րդ նախագահը (2009-2013, 2013-)

Ամերիկյան նահանգները և պետության ձևավորումը

1. *Դելավեր (1787)*
2. *Պենսիլվանիա (1787)*
3. *Նյու-Ջերսի (1787)*
4. *Ջորջիա (1788)*
5. *Քոննեկտիկուտ (1788)*
6. *Մասսաչուսեթս (1788)*
7. *Մերիլենդ (1788)*
8. *Հարավային Կարոլինա (1788)*
9. *Նյու-Հեմփշիր (1788)*
10. *Վիրջինիա (1788)*
11. *Նյու-Յորք (1788)*
12. *Հյուսիսային Կարոլինա (1789)*
13. *Ռոդ-Այլենդ /1790/*
14. *Վերմոնտ (1791թ. մարտի 4) –ԱՄՆ 14 –րդ նահանգը*
15. *Քենթուկի (1792թ. հունիսի 1) –ԱՄՆ 15-րդ նահանգը*
16. *Թեննեսի (1799թ. հունիսի 1) –ԱՄՆ 16-րդ նահանգը*
17. *Օհայո (1803թ. մարտի 1) -ԱՄՆ 17-րդ նահանգը*
18. *Լուիզիանա (1812թ. ապրիլի 30) -ԱՄՆ 18-րդ նահանգը*
19. *Ինդիանա (1816թ. դեկտեմբերի 11) -ԱՄՆ 19-րդ նահանգը*
20. *Միսսիսիպի (1817թ. դեկտեմբերի 10) – ԱՄՆ 20-րդ նահանգը*
21. *Իլլինոյս (1818թ. դեկտեմբերի 3) -ԱՄՆ 21-րդ նահանգը*
22. *Ալաբամա (1819թ. դեկտեմբերի 14) –ԱՄՆ 22-րդ նահանգը*
23. *Մեն (1820թ. մարտի 15) –ԱՄՆ 23-րդ նահանգը*
24. *Միսսուրի (1821թ. օգոստոսի 10) –ԱՄՆ 24-րդ նահանգը*
25. *Արկանզաս (1836թ. հունիսի 15) - ԱՄՆ 25-րդ նահանգը*
26. *Միչիգան (1837թ. հունվարի 26) - ԱՄՆ 26-րդ նահանգը*
27. *Ֆլորիդա (1845թ. մարտի 3) - ԱՄՆ 27-րդ նահանգը*
28. *Տեխաս (1845թ. դեկտեմբերի 29) - ԱՄՆ 28-րդ նահանգը*
29. *Այովա (1846թ. դեկտեմբերի 28) -ԱՄՆ 29-րդ նահանգը*
30. *Վիսկոնսին (1848թ. մայիսի 29) - ԱՄՆ 30-րդ նահանգը*
31. *Կալիֆորնիա (1850թ. սեպտեմբերի 9) -ԱՄՆ 31-րդ նահանգը*
32. *Միննեսոտա (1858թ. մայիսի 11) - ԱՄՆ 32-րդ նահանգը*
33. *Օրեգոն (1859թ. փետրվարի14) - ԱՄՆ 33-րդ նահանգը*
34. *Քանզաս (1861թ. հունվարի 29) - ԱՄՆ 34-րդ նահանգը*
35. *Արևմտյան Վիրջինիա (1863թ. հունիսի 20)-ԱՄՆ 35-րդ նահանգը*
36. *Նեվադա (1864թ. հոկտեմբերի 31)–ԱՄՆ 36-րդ նահանգը*
37. *Նեբրասկա (1867թ. մարտի 1)---ԱՄՆ 37-րդ նահանգը*
38. *Կոլորադո (1876թ. օգոստոսի 1) ---ԱՄՆ 38-րդ նահանգը*

39. Հյուսիսային Դակոտա (1889 նոյեմբերի 2) –ԱՄՆ 39-րդ նահանգը
40. Հարավային Դակոտա (1889 նոյեմբերի 2) ---ԱՄՆ 40-րդ նահանգը
41. Մոնտանա (1889թ. նոյեմբերի 8) - ԱՄՆ 41-րդ նահանգը
42. Վաշինգտոն (1889թ. նոյեմբերի 11) - ԱՄՆ 42-րդ նահանգը
43. Այդահո (1890թ. հուլիսի 3) ---ԱՄՆ 43-րդ նահանգը
44. Վայոմինգ (1890թ. հուլիսի 10) - ԱՄՆ 44-րդ նահանգը
45. Յուտա (1896թ. հունվարի 4) - ԱՄՆ 45-րդ նահանգը
46. Օկլահոմա (1907թ. նոյեմբերի 16)---ԱՄՆ 46-րդ նահանգը
47. Նյու-Մեքսիկո (1912թ. հունվարի 6)--ԱՄՆ 47-րդ նահանգը
48. Արիզոնա (1912թ. փետրվարի 14)—ԱՄՆ 48-րդ նահանգը
49. Ալյասկա (1959թ. ապրիլի 3) – ԱՄՆ 49-րդ նահանգը
50. Հավայան կղզիներ (1959թ. օգոստոսի 21) – ԱՄՆ 50-րդ նահանգը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1, ԱՄՆ 16-րդ դ. մինչև Քաղաքացիական պատերազմը (1861թ.).....4

Թեմա 1.1. Ամերիկայի վաղ շրջանի պատմությունը (մինչև 1775թ.) 4

 Ամերիկայի առաջին հայտնաբերողները4

 Ամերիկայի հայտնաբերումը և գաղութացումը եվրոպացիների կողմից 4

 Անգլիական գաղութների հասարակա-քաղաքական դրվածքի յուրահատկությունները8

 Առևտրա-տնտեսական հարաբերությունների զարգացումը .. 10

 Ամերիկյան հեղափոխության նախադրյալները 12

 Առաջին Մայրցամաքային կոնգրեսը 14

Թեմա 1.2. Պատերազմ անկախության համար (1775-1783)..... 16

 Ամերիկյան պատմության գործիչները..... 16

 Ռազմական գործողությունների սկիզբը: Անկախության հռչակագրի ընդունումը..... 16

 1776-1782թթ. ռազմական գործողությունները:
 Համադաշնակցության Հոդվածների ընդունումը: Պատերազմի ավարտը 18

Թեմա 1.3. Ամերիկյան պետության ձևավորումը (1783-1789).... 22

 Ամերիկյան նշանավոր պետական գործիչները 22

 ԱՄՆ առաջին 13 նահանգները..... 22

 Միջազգային և ներքին դրությունը Փարիզյան հաշտության պայմանագրից հետո 22

 ԱՄՆ Սահմանադրությունը..... 24

Թեմա 1.4. ԱՄՆ ձևավորման գործընթացը (1789-1801).....	28
ԱՄՆ Նախագահները	28
Զ. Վաշինգտոնի վարչակազմի ներքին քաղաքականությունը	28
Ֆեդերալիստներ և հակաֆեդերալիստներ: Քաղաքական կուսակցությունների ստեղծումը	30
Զ. Վաշինգտոնի առաջին վարչակազմի արտաքին քաղաքականությունը: Երկրորդ նախագահությունը	31
Զ. Ադամսի նախագահությունը.....	33
Թեմա 1.5. Հանրապետականների իշխանության ժամանակաշրջանը (1801-1825)	37
ԱՄՆ Նախագահները	37
Թ. Ջեֆֆերսոնի ներքին և արտաքին քաղաքականությունն առաջին և երկրորդ նախագահությունների ժամանակաշրջանում/1801-1809/.....	37
ԱՄՆ Մոնրոյի նախագահության տարիներին: Տնտեսական զարգացումը: Ֆլորիդայի ձեռքբերումը	42
Միսսուրիի փոխզիջումը	43
Մոնրոյի դոկտրինան	44
Թեմա 1.6. ԱՄՆ բախումների տարիներին (1825-1841)	46
ԱՄՆ Նախագահները	46
Ջոն Բուինսի Ադամսի նախագահությունը (1825-1829): Վիգերը և Դեմոկրատական կուսակցության ստեղծումը.....	46
ԱՄՆ Էնդրյու Ջեքսոնի նախագահության տարիներին (1829-1837): Դեմոկրատների և վիգերի գաղափարական հայացքները երկրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման հարցի վերաբերյալ.....	48

Նախագահ Ջեքսոնի բարեփոխումները.....	50
Ջեքսոնը և “Հնդկացիական քաղաքականությունը”	53
Իրադարձությունները Տեխասում և ԱՄՆ	53
Թեմա 1.7. ԱՄՆ քաղաքացիական պատերազմի նախօրյակին (1841-1861)	55
ԱՄՆ Նախագահները	55
ԱՄՆ 19-րդ դարի 40-50-ական թվականներին: Քաղաքական զարգացումը.....	56
Պատերազմ Մեքսիկայի դեմ (1846-1848թթ.)	58
1850թ. փոխզիջումը.....	60
Քաղաքացիական պատերազմի նախադրյալները և պատճառները: Հանրապետական կուսակցության ստեղծումը, նրա ծրագրի հիմնական դրույթները.....	61
ՄԱՍ 2, ԱՄՆ 19-րդ դ. երկրորդ կեսից մինչև 20-րդ դ. սկիզբը.....	68
Թեմա 2. 1. ԱՄՆ Քաղաքացիական պատերազմի և Վերակառուցման տարիներին (Լիբերալ-Դեմոկրատական հեղափոխություն (1861-1877թթ.).....	69
ԱՄՆ Նախագահները	69
Քաղաքացիական պատերազմը (1861-1865) Լիբերալ- դեմոկրատական հեղափոխության առաջին փուլը: Ռազմական գործողությունները: Պատերազմի ավարտը.....	69
Վերակառուցում (1865-1877) Լիբերալ-դեմոկրատական հեղափոխության երկրորդ փուլը: Հեղափոխության ավարտը և արդյունքը.....	72
Սոցիալ-տնտեսական զարգացումը 19-րդ դ. 70-ական թթ-ին: Վերակառուցման ավարտը	74
Թեմա 2. 2. ԱՄՆ զարգացումը 1877-1900 թթ. (“Ոսկեդար”)	77

ԱՄՆ Նախագահները	77
Սոցիալ-տնտեսական զարգացումը: Մենաշնորհների ժամանակաշրջանը և սոցիալ-դարվինիզմի տարածումը ԱՄՆ- ում: Մոնոպոլիզացման արդյունքները:.....	78
Քաղաքական զարգացումը և քաղաքական պայքարը	83
Արտաքին քաղաքականությունը: Հեյի դոկտրինան և պատերազմ Իսպանիայի դեմ	87
Թեմա 2.3. ԱՄՆ “Առաջադեմ” դարաշրջանում (1900-1914թթ.)	90
ԱՄՆ Նախագահները	90
Առաջադեմ շարժման սոցիալ-տնտեսական գաղափարախոսության ձևավորումը	90
Քաղաքական զարգացումը: Առաջադեմ բարեփոխումները, նրանց նշանակությունը.....	93
Արտաքին քաղաքականությունը	97
Թեմա 2.4. ԱՄՆ առաջին աշխարհամարտի տարիներին:	
Պահպանողականության ժամանակավոր ռևանշը (1914-1921)..	99
ԱՄՆ Նախագահները	99
ԱՄՆ առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918)	99
Փարիզի հաշտության կոնֆերանսը: Վիլսոնի “14 կետերը”	102
Պահպանողականության ժամանակավոր ռևանշը	104
ՄԱՍ 3 ԱՄՆ նորագույն դարաշրջանում /20-րդ դ. երկրորդ կեսից- 21դ. սկիզբ/	106
Թեմա 3.1. ԱՄՆ զարգացումը մինչև տնտեսական ճգնաժամի սկիզբը: Մեծ Լճացումը (1929-1933թթ.)	106
ԱՄՆ Նախագահները	106
Նախագահ Հարդինգի ներքին և արտաքին քաղաքականությունը	106

Կ.Քուլիջի առաջին և երկրորդ վարչակազմերը (1923-1929թթ.)	110
.....	
1929թ. ճգնաժամի նախադրյալները:	
Մեծ դեպրեսիա (լճացում).....	113
Մշակույթը	115
Թեմա 3.2. ԱՄՆ Ռուզվելտի նախագահության	
ժամանակաշրջանում /1933-1945/	117
ԱՄՆ Նախագահները	117
Ռուզվելտի վարչակազմի ներքին և արտաքին	
քաղաքականությունը:	
“Նոր կուրսի” գաղափարախոսությունը	117
Արտաքին քաղաքականությունը	121
Մշակույթ և տեխնիկա	124
ԱՄՆ Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945) .	126
Թեմա 3.3.ԱՄՆ Հ.Թրումենի նախագահության օրոք	
(1945-1953)	130
ԱՄՆ նախագահները	130
Հ.Թրումենի նախագահության սկիզբը	130
Մշակույթը	132
“Սառը պատերազմի” սկիզբը	133
Թրումենի վարչակազմի գործունեությունը մինչև 1953թ.	134
Թեմա 3.4. Էյզենհաուերի նախագահությունը /1953-1961/	139
ԱՄՆ Նախագահները	139
Առաջին վարչակազմի արտաքին քաղաքականությունը	139
Առաջին վարչակազմի ներքին քաղաքականությունը.....	140

Երկրորդ վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը	141
Թեմա 3.5. ԱՄՆ Ջ.Քեննեդիի և Լ.Ջոնսոնի նախագահության ժամանակաշրջանում/1961-1969թթ./	144
ԱՄՆ Նախագահները	144
Ջ. Քեննեդիի ներքին և արտաքին քաղաքականությունը	144
Լ.Ջոնսոնի ներքին քաղաքականությունը 1963-1964թթ.	149
Լ.Ջոնսոնի վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը 1964-1969թթ.	151
Թեմա 3.6. ԱՄՆ 20-րդ դ. 70-80-ական թթ.	155
ԱՄՆ Նախագահները	155
Ռ.Նիքսոնի նախագահությունը (1969-1974): Ռ.Նիքսոնի վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունը ...	155
“Ուոթերգեյթը” և Նիքսոնի հրաժարականը	159
Ջերալդ Ֆորդի նախագահությունը (1974-1977)	160
Կինոարվեստ, գիտություն և տեխնիկա	161
Ջ.Քարթերի նախագահությունը (1977-1981)	162
ԱՄՆ Ռոնալդ Ռեյգանի նախագահության տարիներին (1981-1989): Տնտեսության զարգացումը: Ռեյգանոմիկա	166
Արտաքին քաղաքականությունը	168
Թեմա 3.7. ԱՄՆ 20-րդ դ. 90-ական թթ. և 21-րդ դ. սկզբին.....	171
ԱՄՆ-ի Նախագահները	171
Ջորջ Բուշի նախագահությունը (1989-1993)	171
ԱՄՆ Ուիլյամ (Բիլ) Քլինթոնի նախագահության տարիներին (1993-2001): Տնտեսական զարգացումը	173
Արտաքին քաղաքականությունը	174

Մշակույթ, գիտություն և տեխնիկա.....	177
Ջորջ Բուշ-կրտսերի նախագահությունը (2001-2009).....	178
Ամփոփում	182
ԱՄՆ Նախագահները	184
Ամերիկյան նահանգները և պետության ձևավորումը.....	186

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝

Եպրաքսիա Հովհաննիսյանի

Շապիկի ձևավորումը՝

Սյուզաննա Գրիգորյանի

Տպաքանակը՝ 200

Հանձնված է տպագրության 15.01.2014

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
Հասցեն՝ Երևան, Թումանյան 42
Հեռ.՝ 53-05-52
Web: <http://www.brusov.am>
E-mail: yslu@brusov.am